ԿԻՐԱԿԻ
ՄԱՅԻՍ
2
DIMANCHE
2 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՐԱՉԱԳ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ՝ 180 Ֆ.
Արտասահման՝ Տար. 400 Ֆ. - Հատը՝ 2.50 Ֆ.

57ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.161 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 57e ANNÉE — No 15.161

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

Մայիս 1

Աշխատանքի տօն, ինչպէս ճշդուած է ֆր. Միջազգայնականին, 1889 Յուլիսին, փարիզ։ 19 երկիրներու ներկայացուցիչներու մասնակցութեամբ, բոլորն ալ ընկերվարական։ Ուրեմն աշխատաւոր դասին օրն է։ Դատին, բնականաբար։

Քայլ առ քայլ, սակայն միշտ պահանջատէրի դիրքին մէջ մնալով, յաճախ՝ արիւնալի ցոյցերով եւ զօռեմարտերով, ընդարուկ եւ իրաւազուրկ հոծ զանգուածը՝ բանուոր թէ աշխատաւոր, աստիճանաբար իրաւունքներ եւ արտօնութիւններ ապահովեց։ Առնուազն բազմաթիւ երկիրներու մէջ, այլազան ցամաքամասերու վրայ։

Այն ինչ որ այսօր անվիճելի մենաշնորհները կը մնան աշխատաւոր դասին, ոչ միայն քրտինքով, այլեւ պայքարի նամբաներով ապահովուեցան՝ ցոյցերէն մինչեւ գործադուլները։ Դէմ յանդիման ունենալով իշխանութիւնները, իրենց ձեռք բազուկներով, մեքենաներով։

Հ. Յ. Դաշնակցութիւնը իր հիմնադրութեան օրէն իսկ ճնշուող դասին նեցուկ կեցաւ, ընկերվարական հակումներով։ Առաջին ծրագիրը, խմբագրուած հիմնադիրներէն Ռոստոմի կողմէ, - ներածական բաժին, - դեռ 1892-ին ընկերվարութեան տեսութեան ջատագովը դարձաւ։ Պայքար ընչազուրկ դասակարգին կողմէ, ընդդէմ կեղեքող տարրին, ի խնդիր աշխատող բազուկներու իրաւունքներուն՝ աշխատանքի եւ այլ մարզերու մէջ։

Ինչպէս Մ. Վարանդեան անկեղծօրէն հաստատեց, Արեւմտահայ ազատագրական չարժումը, Յարական Ռուսիոյ հայահալած քաղաքական քայլերը, պատճառներ եղան, որպէսզի Դաշնակցութիւնը անհրաժեշտ թափով եւ եռանգով ի վիճակի չըլլայ նուիրուելու աշխատաւոր դասին դատին։

Բայց դասը մշտ մնաց օրակարգի վրայ։ Եւ գործնական դեռնի վրայ։ Սոֆիայի Գ. Ընդհ. Ժողովին, 1904-ին, Դաշնակցութեան բանաձեւը եղաւ յստակ. - մասնակից բանուորական գործադուլներուն, ուր կան Դաշնակցական խումբեր եւ չարժումները կապ ունին բանուորներուն ընդհանուր կացութեան հետ։

Ուրեմն՝ համատեղ պայքար կեղեքող տարրին դէմ։ Ի չահ աշխատող ձեռքերու։

Հայաստանի անկախ Հանրապետութեան կարճ ժամանակաշրջանը վկայ։ Դեռ արցունքը չամոքած եւ դեռ մահացու վէրքերը չդարմանած, օրուան իշխանութիւնը կէտ առ կէտ սկսաւ գործադրել ընկերվարական ծրագիրը, հողութեամբ եւ տառով։ Ահեղական խաժամուժին մէջ։

Աշխատանքի տօնը կամ օրը, աշխատաւոր դասին դասին նուիրուած է։ Սորտերդնական կերպով կապուած թուականի մը՝ պաշտօնական։ Բայց իրական նութեան մէջ տարուան բոլոր օրերն ու ժամերը պայքարի ցուցանակներ դառնալու սահմանուած են։ Մանաւորաբար այն երկիրներուն մէջ, ուր արհեստակցական միութիւնները կա՛մ անուանական են եւ կա՛մ ալ պարզ զսպանակներն Պետութեան «ժամացոյցին»։ Սպասարկու անոր, ամէն տեղ եւ ամէն վայրկեան։

Եւ դեռ հաստատել, թէ այսօր, մեր ցամաքամասին մեծ մասին վրայ, չեն յարգուիր աշխատող ձեռքերու իրաւունքները։ Խոշտանգումներն ու բռնաբարումները ամենօրեայ երեւոյթներ կը մնան։ Մարդկային տարրական իրաւունքները նոյնպէս։

Այս իսկ պատճառով, Աշխատանքի Տօնը կը մնայ նախ եւ առաջ պայքարի տօն։

Նորանոր նուաճումներու ի խնդիր։

Ժ. Մ.

ԱՆԳԼԻԱ ԵՒ ԱՐԺԱՆԹԻՆ ՎՃՌԱԿԱՄ

Ուրբաթ առաւօտ, բրիտանական վերջնագրէն քանի մը ժամ առաջ, պատերազմը անխուսափելի կը նկատուէր Անգլիոյ եւ Արժանթինի միջեւ, քանի երկու կողմերն ալ մեծ վճռակամութիւն ցոյց կուտային։ Ուրբաթ ժամը 1-ին էր որ վերջ կը դնէր անդլիական պայմանաժամը եւ ոչ մէկ նշան կար խաղաղ կարգադրութեան մը։ Արժանթինի մէջ, պատերազմ սկսելու բոլոր տուեալները կային, բացի ընդհ. զօրակոչէն, որ վերջին հանգրուան է։ Գրաքննութիւն կը հաստատուէր, արտասահմանէն հասնող բոլոր լուրերուն վրայ եւ պաշտօնապէս ալ կը յայտարարուէր, որ «անդլիական որեւէ նաւ կամ օդանաւ որ իր չուրերուն կամ օդային սահմաններուն մէջ դտնուի, հետեւանքները կը քաշէ»։ Այս ամբողջը կը նշանակէր թէ Պուէնոս - Այրէս բացարձակապէս մերժած էր ամերիկացի բնակիչները՝ զօր. Հէյկի վերջին առաջարկները։

Բրիտանական պաշարումը ի զօրու էր եւ նաւատորմը կազմ ու պատրաստ կը սպասէր յարձակելու համար, երբ ժամը հնչէր։

Ամերիկեան առաջարկներու մասին ալ, յստակ բան մը կարելի չէ դիտնալ, քանի որ չորս տարբեր վարկածներ մէջտեղ դրուած են։ Այսպէս Պուէնոս - Այրէսի դիւանագիտական աղբիւրներու համաձայն, առաջարկներն են.- Մալուինները վրայ, անժանթինեան գերիշխանութեան ճանաչում հինգ տարուան փոխանցման չրջանէ մը ետք, անգլեւարժանթինեան բանակցութիւն ճչդրիտ ժամանակացոյցի մը վրայ, երբեակ վարչական կազմ կղզիներուն վրայ, երկու զօրքերն ալ կը քաշուին, նկատի կ'առնուին բնիկներու շահերը։ Ըստ ամերիկացի բարձր պատասխանատուի մը՝ արժանթինեան զօրքը կը քաշուի Մալուիններէն, բրիտանական նաւատորմին գործողութիւնները կը դադրին, երբեակ վարչութիւն, անմիջական խօսակցութիւններ հարցին խորքին վրայ։ Նիւ - Եորք Թայմզ, սա երրորդ ձեւն է որ կը ներկայացնէ։ Արժանթինեան գերիշխանութեան երաշխաւորութիւն չկայ, բնակիչներու փափաք հանրաքուէով, բրիտանական գինուորական սպառնալիքներու դադրեցում, հետզհետէ տեղաւորում անգլեւարժանթինեան վարչութեան մը Մալուինները - Նահանգներու երաշխաւորութեան ներքեւ։ Եւ վերջապէս Լոնտոնի Տէյլի - Թելեկրաֆը կ'ըսէ թէ առաջարկներն են.- արժանթինեան զօրքը քաշել բայց ոչ գինուորական Արժանթինցիներ կը մնան, անգլիական վարչութիւն անժանթինցի տարրերով, բանակցութիւն, որ նկատի առնէ Քելփերներու (բնակիչներ) փափաքները։

Ամէն պարագայի մէջ, որ առաջարկն ալ ճիշդ ըլլայ, Պուէնոս - Այրէս մերժած էր եւ բոլոր կապերն ալ (հեռաձայն, փոխադրական միջոց եւլն.) կտրած Անգլիոյ հետ։ Ուրբաթ առաւօտեան արժանթինեան թերթերէն մէկն ալ արիւնոտ էջի մը վերածած էր, իր առաջին էջը։

Ցիշենք թէ Ապրիլ 24-ի առթիւ, հայ գաղութն ալ իր ցոյցերուն եւ Հայ Դատին միացուցած էր հաւատարմութիւնը երկրին հանդէպ, պատուհաններու վրայ կարելի էր կարդալ՝ «1915, Ապրիլ 24, 20-րդ դարու Ա. ցեղասպանութիւն, Մալուինները արժանթինեան են»։

ԿՐԿԻՆ ԱՋԳԱՅԻՆ ՏՈՒՆԵՐԸ ...

Մոնտ, Ապրիլ 30-ի իր թիւին մէջ փոքր գրութիւն մը հրատարակած էր, խորագրուած՝ «Լքուած հին պանդոկներ» եւ որու առաջին մասին, կը ծանրանար զբօսաւորաբար օթել Պոնիի, այլ անուամբ՝ հայ ազգ. տան վրայ...։ Այցելութիւն մը կազմակերպեր է «Ֆրանսայի գեղարուեստի եւ տեսարժան վայրերու պաշտպանութեան միութեան» 9-րդ թաղամասի ճիւղը, քանի չէնքը «դասաւորուած» է 1976 Ապրիլ 8ին, բայց ցարդ վերանորոգումը չէ եղած։ Այս գեղեցիկ նոր - դասական չէնքը, կը դրէ Տիկին Անտրէ Ժաքոպ, չինուած է 1826-ին, ճարտարապետն էր՝ Ժոլի և ներկայիս, ինչպէս հաստատեցին այցելութեան մասնակիցները քայքայման վիճակի մը մէջ է, հակառակ պարտադրանքին որ, 1977-ին, կը հրաւիրէր տանտէրերը (քարեբախտաբար յօդուածագիրը չի ճշդեր այդ անտէր տունին տէրերուն ինքնութիւնը...) մասնակցելու վերանորոգման։ Ու վերջաւորութեան, կ'եզրակացնէ. - «Եթէ, ինչպէս կարելի է յուսալ, տէրերը համաձայնէին ծախել հետաքրքրուղ լուսամիտ արուեստասէրներու, Պոնի պանդոկը կրնար վերագտնել, չնորհիւ անհատական նախաձեռնութեան, անցեալի իր ամբողջ չքեղութիւնը»։

Դուցէ, իսկապէս լաւագոյն լուծումը կ'ըլլայ, քանի որ Հայերը ցոյց տուին թէ ի վիճակի չեղան (ոչ ալ՝ արժանի, ուրեմն) հայկ. փառաւոր կեդրոնի մը վերածել նման հարստութիւն մը, Փարիզի կեդրոնը։

ՄԵՌՈՂ ԲԱՆՈՒՈՐԸ

Քամին կ'ոռնայ ու տրնակը իր հիմերէն կը ցընցէ
Իբրեւ ահեղ դամբարան։
Ծիւրախտաւոր բանուոր մ'հոն կը վախճանի մաղկըռինչ՝
Խարիւն վրայ հոտեւան։

Յանո՜ւն պատառ մը հացի՝ գործատան մէջ թաղեց ան
Ձառագայթներն հոգիին.
Տըւաւ փերթ փերթ որ ուտեն մեքենաները վիշապ
Մինչեր հուժկու կըռնակին։

Անիւներուն ակռաներն ողնածուծո՜վն օծանեց,
Եւ սըրբեց իր մազերով,
Հընոցին դէմ՝ մերկալանջ, ժահրոտ օդին մէջ՝ մըղձկուկ
Ապրեցաւ միշտ մեռնելով։

Արդ տապալող նոճիի հանգոյն քան մ'է այդ տըղան,
Այդ յա՛ղթ ռամիկն երբեմնի։
Երկաթներու հետ պայքար մ'եղաւ իր կեանքն յարատեւ.
Արդ կը փըշրի գերթ վանի։

Գերեզմանին դեղին հո՛ղն իր աչքերուն վրայ կապոյտ
Սփռեր է Մահն անժըպիտ.
Մեղրամոմի պէս մարմինն անուսիկ կը հալի
Մատերն է վար շիթ առ շիթ։

Ի զո՜ւր գարունն երազեց, եւ հովերուն մէջ ազատ
Կաղնիացումն հասակին.
Ի զո՜ւր տեսիլաց երգով լի շրթունքներն իր երկարել
Աղբիւրներու ջինջ ակին։

Արեւուն տեղ՝ դալկութիւն, շուշաններու տեղ՝ մըրուր
Պըսակեցին ճակատն իր։
Սիրոյ երգին փոխարէն՝ եկաւ փըրփրիլ շըրթունքին
Հըրատապ հազ մը կարմիր։

Արդ կը հազա՜յ, կը հազա՜յ իր զոհի գլուխը դըրած
Ծոցին մէջ մօ՛րն աղեկէ՜զ՝
Որուն կուրցա՜ծ աչքերէն իսկ արտասուք կը բըզխին՝
Հողէն պըտղող ջուրին պէս։

Վար կը կախուի սըճաբէն Յիսուսի խաչը կարմիր,
Բայց ճակատին վրայ չինկած
Շիթ մ'Արիւնէն փրկութեան — որ սառե՜ր է խաչին վրայ —
Ինք կը մեռնի, վաստակած։

Քամին կ'ոռնայ եւ տրնակն իր հիմերէն կը ցընցէ
Իբրեւ ահեղ դամբարան...
Ու սեւ կատուն տրնակին կը մըլաւէ՜ խելայեղ
Ճանկըռտելով շէմքը դրան։

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՄՎ

ՄԱՑԻՍ ՄԻԿԻՆ սմիքը (միջարհեստական աճումի նուազագոյն աշխատավարձ) ամիսը 3.298 Ֆրանքի կը բարձրանայ, այսինքն՝ ժամը 19,03 փոխանակ 18,62–ի, ամսական 173 ժամ 33 աշխատանքի համար։

ՌԸՆՈՑԻ (Ֆլէն) մասնագէտ բանուորներու գործադուլը վերջ գտաւ։ Բանթողները ապահովութիւն ստացան, որ իրենց դէմ պատժական միջոցներ պիտի չառնուին, կարգ մը պահանջներու ալ գոհացում ստացան։ Արտադրութիւնը, սակայն տուժած է գործադուլի այս չարժումէն, քանի 28 հազար կառք, որոնք պէտք է չուկայ հանուէին, չպատրաստուեցան։

ՌԵՄՈՆ ՊԻԻՍԻՒՌ փարիզցի թիթիի տիպարը, մեռաւ սրտի տագնապէ 75 տարեկանին։ Տեւական երկրորդ դեր, բայց այդ երկրորդ դերերու (որոնք յաճախ գլխաւոր դերէն կարեւոր են) լաւագոյն դերասաններէն մէկը, որ աւելի քան 130 ֆիլմերու մէջ խաղացած է, երբեմն նաեւ իր կնոջ՝ Անէթ Փուավրի հետ։ Անկասկած, Պիւիսիէռ ամէնէն ժողովրդական դերասաններէն մէկն էր, նաեւ ձախ գործունեայ չարքային մը։

ՆԻՒԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ»
ԹՐՔԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

Բ.

Երբ 1877 - 78-ի Ռուս եւ Օսմանեան պատերազմը լրացաւ Ռուսերու յաղթանակով, Հիւսիս Արեւելեան շրջանին մէջ գործող ռուսական բանակներու մէջ զբաղուող հայ սպաները, սկսան այդ շրջանի Հայերը գրգռել Թուրքերու դէմ: Նոյն շրջանին Պոլսոյ Հայոց Պատրիարքը, մօտենալով իր Թրքահպատակ ըլլալու պարագան, թշնամիներու հետ համագործակցութեան սկսաւ եւ Փետրուար 18, 1878 թուականին, ցարական իշխանութեան խնդրագիր մը մատուցանեց, որ կը սկսէր «Մեր մեծագոյն ազատարարը» բացատրութեամբ:

Պատրիարքը իր այս խնդրագրին մէջ Ռուսաստանի Ցարէն կը պահանջէր, Արեւելեան Անատոլուի մէջ Հայերու բնակած հողերը մինչեւ Եփրատ գետ միացնել Ռուսիոյ, կամ Պուլկարիոյ նը - ման այդ հողերուն անկախութիւն պարգեւել եւ կամ Հայոց շրջաններուն մէջ հիմնական բարենորոգումներ իրագործել եւ մինչեւ անոնց ամբողջական կատարումը ռուսական բանակներուն Արեւելեան Անատոլուի մէջ մնալը:

Այս կացութեան մէջ Ռուսիա Մարտ 3, 1878-ին, երբ Օսմանեան կայսրութիւնը ստիպուած կ'ըլլար համաձայնութիւն մը ստորագրել, անոր մէջ հետեւեալ յօդուածը տեղ առաւ, որուն հետեւանքով կը յայտնուէր թէ մինչեւ բարենորոգումնե - րու ամբողջացումը ռուսական զօրքերը ետ պիտի չքաշուէին այդ հողերէն: Այսպէս, Ցարական Ռուսիան որ մինչեւ այդ օր անպաշտօն ձեւերով ձեռք առած էր հարցը, հիմա այլեւս հրապարակային ձեւով կը հետաքրքրուէր այդ կացութեան հետ:

Բայց, այս պարագան, այսինքն Ռուսերուն «Հայկական Հարց»ին ուղղակի մօտեցումը պատճառ դարձաւ որ Անգլիացիներն ալ չարժման անցնին:

Անգլիացիներու դիւանագիտական ազդեցութեան հետեւանքով, միայն երկու կողմերու միջեւ ստորագրուած Սան - Սթեֆանոյի համաձայնագրի այս տրա - մադրութիւնը, Յուլիս 13, 1878-ին Պեռլինի համաժողովին ստացաւ միջազգային բնոյթ: Այս համաձայնութեամբ Օսման - եան կայսրութիւնը յանձն կ'առնէր ան - միջապէս սկսիլ հայկական շրջանակներու բարենորոգումներու աշխատանքներուն եւ կ'ընդունէր ձեռք առնուած միջոցները տեւականօրէն տեղեկացնել մեծ պետութիւններուն, ինչպէս նաեւ ենթարկուիլ անոնց յաճախակի հակակշիռներուն:

Այսպէս, այլեւս ոչ միայն Ռուսիա, այլ նաեւ ուրիշ կարգ մը մեծ Պետութիւն - ներ, բայց մասնաւորաբար Անգլիա ձեռք առած կ'ըլլային հայկական խնդիրը: Այս Թուականէն վերջ է որ Անգլիա այլեւս սկսաւ փոխել մինչեւ այդ Օսմանցիներու հանդէպ որդեգրած իր աւանդական քա - ղաքականութիւնը:

Անգլիա զարերէ ի վեր, միշտ կը ջանար Օսմանեան կայսրութեան հողային ամբողջութիւնը պաշտպանել, արդելք ըլլալու համար Ռուսերուն դէպի հարաւ որեւէ մէկ գրոհին:

Սակայն Պեռլինի համաձայնութենէն ու մանաւանդ Կլէտսթընի իշխանութեան գալու օրերէն վերջ, իր այդ քաղաքականութիւնը հիմնովին փոխելով, կ'ուզէր այլեւս Օսմանեան կայսրութիւնը բաժնել Անգլիոյ բարեկամ փոքրիկ եւ տկար պետութիւններու:

Իր հաշուով այս փոքր պետութիւննե - րը իբրեւ թէ պատուար պիտի ըլլային Ռուսիոյ դէմ: Այս նպատակով Արեւել - եան Անատոլուի գլխաւոր քաղաքները՝ Էրզրում, Վան, Տրապիզոն, Անգարա եւ Տիարպաքըրի մէջ անգլիական նոր հիւ - պատոսարաններ կը բացուէին:

Այս պայմաններու մէջ Արեւելեան շըր - ջանները ձեռք անցընելու պայքարը օրէ օր կը զօրանար Անգլիոյ եւ Ռուսիոյ միջեւ:

Ուստի, ամէն տեսակ մարդկային զգա - ցումներ՝ արդարութիւն, խիղճ եւ նուի - րականութիւն մէկ կողմ թողած, ամէն միջոց ի գործ կը դրուէր Թուրք եւ հայ ժողովուրդները իրարու հետ թշնամացը - նելու համար:

Այս նպատակներով է որ նախ Անատո - լուի մէջ «Սեւ խաչ», հայրենիքի պաշտ - պան «Արմենական» եւ այլ կազմակեր - պութիւններ հիմնելով կը ջանային Հայե - րը զինել եւ ապստամբութեան հրաւիրել:

Սակայն, ոչ մէկ ատեն այս կազմակեր - պութիւններու աշխատանքները ուզուած արդիւնքը չէին տուած, այսինքն Հայերը եւ Թուրքերը իրար չէին ինկած:

Այս անգամ կայսրութեան սահմաննե - րէն դուրս, ամբողջութեամբ մեծ պետու - թիւններու հսկողութեան տակ գործող ուրիշ կազմակերպութիւններ հիմնուե - ցան ու անկէ վերջ միայն կարելի եղաւ Անատոլուի մէջ հայկական ապստամբու - թիւններ սկսիլ:

Անատոլուէն դուրս հիմնուած առաջին կազմակերպութիւնը «Հնչակեան Կուսակ - ցութիւն»ն է:

Այս կազմակերպութիւնը 1887 թուա - կանին Ժնեւի քաղաքին մէջ, քանի տարեկանի չուրջ 7 ռուսահայ ու - սանողներու կողմէ հիմնուեցաւ:

Իսկ երեք տարի վերջ, 1890-ին ալ Կով - կասի Թիֆլիս քաղաքին մէջ կազմուեցաւ Հ. Յ. Դաշնակցութիւնը:

Հնչակները իբրեւ սկզբունք, կ'ընդու - նէին որ ազատութիւնն ու անկախութիւ - նը չի տրուիր, այլ կ'առնուի, ուստի կ'ուզէին զինեալ յարձակումներով օտար պետութիւններու ուշադրութիւնը հրա - ւիրել իրենց վրայ: Այսպէսով կը յուսա - յին անոնց օժանդակութիւնը: Նոյնպէս, ըստ Հնչակներու սկզբունքներուն, ապըս - տամբութեան մը ամենայարմար ժամա - նակը պիտի ըլլար այն շրջանը, երբ Օս - մանեան պետութիւնը ստիպուած կ'ըլլար մեծ պետութիւններու հետ պատերազմի մը մտնել: Ուստի, մինչ այդ կը ջանային մեծ պետութիւններու հետաքրքրութիւ - նը միշտ վառ պահել այս նիւթին չուրջ: Այս մտածումներով է որ Հնչակ կուսակ - ցութիւնները սկսան ձեւաւորել Անատո - լուի առաջին ապստամբական չարժում - ները:

1890-ի Յուլիսին Հնչակները Պոլսոյ Գումգափուի թաղին մէջ ցոյց մը կազմա - կերպեցին: Երբ եկեղեցւոյ մէջ կը պա - տարագէր Թրքահայոց Պատրիարքը, Հըն - չակեան քոմիթաճի մը հրապարակ ելաւ ու Օսմանեան կայսր ուղղուած մեզազ - րական յայտարարութիւն մը կարդալով պահանջեց որ Պատրիարքը այս յայտա - րարութիւնը ներկայացնէ Կայսեր: Երբ Պատրիարքը կը հակառակի այս պահան - ջին, խռովարարները եկեղեցի կը մտնեն եւ կը ստիպեն որ Պատրիարքը անմի - ջապէս այդ յայտարարութիւնը Պալատ տանի: Այդ միջոցին կարգ մը Հայեր, ո - րոնք համամիտ չէին նման ընթացքի մը, անմիջապէս կացութիւնը տեղեկացուցին Օսմանեան իշխանութեան: Ձամբու ըն - թացքին Օսմանցի զինուորներ կեցուցին պատրիարքական կառքը: Քոմիթաճիները երբ սկսան կրակել, զինուորներն ալ փո - խադարձեցին ու այս դէպքին հետեւան - քով, ինչպէս վկայած են Հայերը 6 - 7 զինուորներ մեռան եւ տասնեակ մըն ալ վիրաւորուեցան: Նոյնպէս Հայերէն ալ երկու հոգի մեռած են: Հնչակները ապըս - տամբութիւններու պատճառ եղան նաեւ Կեսարիոյ, Եոզկաթի եւ Զօրումի շրջան - ներուն մէջ 1892 - 93 տարիներուն: Նաեւ 1894-ին, Հնչակները անյաջող մահափորձ մը կատարեցին Աչըքեան Պատրիարքի դէմ, որուն ընթացքը զոհացուցիչ չէին գտներ: Նոյն տարին Պիթլիսի Սասուն գաւառին մէջ Հնչակներն ու Դաշնակներ միացեալ ճակատ մը կազմելով ապըս - տամբեցան, իսկամ դիւղերու վրայ յար - ձակեցան: Զինուորներու միջամտութե - նէն յետոյ քոմիթաճիները լեռները քաշ - ուեցան եւ ամիս մը դէմ դրին անոնց: Վերջապէս ապստամբութիւնը կարելի եղաւ զսպել, բայց այդ միջոցին զինեալ դիմադրութեան մէջ գտնուող Հայերէն չուրջ հազար հոգի մեռան:

Այս կացութիւնը, Եւրոպայի մէջ չատ ընդարձակ քարոզչութեան մը պատճառ դարձաւ եւ չատ մը հրատարակութիւն - ներ տեսնուեցան, որոնց մէջ կը յիշուէր թէ «Թուրքերը անզէն խեղճ Հայերը ըս - կըսած են սպաննել»: Նոյն առթիւ ցոյ - ցեր ալ տեղի ունեցան: Այդ դէպքէն վերջ, այդ շրջանները Թուրքերու զին - ուորական ուժերուն հետ ռուս, Ֆրանսա - ցի եւ անգլիացի հիւպատոսներէ բաղկա - ցած խառն յանձնախումբ մը ղրկուեցաւ:

Այս մարմինը իր վեց ամսուան աշխա - տանքէն վերջ կը հասնէր հետեւեալ եզ - րակացութեան.

«Հայերը զինեալ միջամտութիւն կա - տարած եւ Թրքական դիւղերու վրայ յար - ձակած են: Նոյնպէս զինուորներու միջա - մտութեան զէնքով պատասխան տուած են: Թուրք զինեալ ուժերը մարզասիրա - կան վերաբերում ունեցած են բոլոր այն Հայերուն հանդէպ, որոնք չէին մասնակ - ցած ապստամբութիւններուն կամ սիրա - յօժար անձնատուր եղած էին: Իսկ չատ բնական պէտք է նկատել զինեալ դիմադ - րութեան դէմ, զէնքով պատասխանելու պարագան: Կրկին 1895ին Պալը Ալի ընդ - հանուր ներում մը չնորհելով հրաժարե - ցաւ Սասունի ապստամբութեան մասնա - կիցները պատժելէ:

Այս ներումէն երկու ամիս վերջ, Հըն - չակներու ժընեւի կեդրոնին մէկ հրա - հանգով Պալը - Ալիի առջեւ կրկին ցոյց մը կատարուեցաւ եւ յատուկ յուշագիր - ներ ներկայացուեցան Պալը - Ալիի եւ Պոլսոյ դեսպանութիւններուն: Այս գի - րերուն տակ Հնչակեան կուսակցութեան կնիք ու ստորագրութիւնը կը գտնուէր: Այս գրութեան մէջ կը չեշտուէր թէ ու - չացած են բարենորոգումի աշխատանք - ները ու այս պատճառաւ չատ մը պա - հանջներ ալ կը ներկայացուէին, որոնց կարգին կ'ուզէին Արեւելեան շրջանի վեց նահանգներու քաղաքական սահմաններու վերաձեւումը, որուն համար պէտք էր նաեւ Եւրոպայի նահանգապետի մը ընտ - րութիւնը:

Ցուցարարները Գումգափուէն դէպի Պալը - Ալի երթ մը կազմակերպեցին, որուն ընթացքին զէնքեր կը պարպէին օդին մէջ եւ քայլերգներ կ'երգէին: Ձամ - բու ընթացքին ոստիկան զօրաց հարիւրա - պետ մը սպաննեցին: Այս պատճառաւ բա - խումներ տեղի ունեցան, որոնց ընթաց - քին մաս մը ցուցարարներ ձերբակալուե - ցան, իսկ ոմանք ալ եկեղեցիները ապաս - տանեցան:

Այս դէպքին կը յաջորդէ Մարաշի շըր - ջանի մէջ Զէյթունի ապստամբութիւնը, որ սկսաւ Հնչակ կուսակցութեան արտա - սահմանէն ղրկած հինգ մարտիկներու ա - ռաջնորդութեամբ:

Գաւառին մէջ գտնուող թուրք սպայ եւ զինուորներուն բոլորն ալ չուրջ 600 հոգի ամբողջութեամբ սպաննուեցան եւ մըզ - կիթները կրակի տրուեցան: Ձիշդ այն պահուն երբ տեղւոյն վրայ կը հասնէին զինուորական չոկաններ, Պոլսոյ օտար դեսպանատուներու ներկայացուիչները միջամտեցին եւ միջնորդել ուզեցին:

Վեց մեծ Պետութիւններու՝ Ռուսիա, Ֆրանսա, Անգլիա, Աւստրիա, Գերմա - նիա եւ Իտալիա Հալէպի հիւպատոսնե - րու միջոցաւ բանակցութիւններ տեղի ունեցան ապստամբներուն հետ եւ ի վեր - ջոյ զէնքերու յանձնումի պայմանաւ Օս - մանեան Պետութիւնը կրկին ներում չը - նորհեց անոնց: Իսկ արտաքսմանէն եկող հինգ խռովարարները չոգենաւ մը դրուե - ցան եւ երկրէն հեռացան:

8 ամիս վերջ ալ Հնչակ, Դաշնակ եւ Արմենական կազմակերպութիւնները մի - ասնաբար նոր ապստամբութեան մը ձեռ - նարկեցին Վանի մէջ: Նոյն տարուան Օ - գոստոսին ալ, չատ հետաքրքրական դէպք մը պատահեցաւ եւ մեծ չահեկանութիւն առեղծեց Օսմանեան Դրամատան գրա - ւումը: Այդ դէպքը օտար հաստատուե - թեան մը դէմ կատարուած յարձակում մը կարելի է նկատել, քանի որ այդ գը - րամատունը ամբողջութեամբ օտար պե - տութիւններու դրամագլուխներով կազ - մուած էր: 26 Դաշնակ քոմիթաճիներ, ո - րոնց գլուխը կը գտնուէին երեք ռուսա - հայեր, այս օրերուն արտաքսմանի մեր դիւանագիտական հաստատութիւններուն դէմ կատարուած ահաբեկչական չար - ժումներու նմանող, ձեւով մը գրաւած էին գրամատունը: Այս միջոցին պատանդ բռնած էին գրամատան 150 հոգիներոց անձ - նակազմը, որոնց մեծ մասը օտարազգի - ներ էին եւ կը յայտնէին որ եթէ իրենց պահանջները չիրականանայ գրամատու - նը մէջիններուն հետ միասին օդը պիտի հանեն: Ապահովութեան ուժերը չրջա - պատեցին գրամատունը եւ կայսեր հը - րամանով ռուս դեսպանատան թարգման Մաքսիմոֆ սկսաւ տեսակցիլ ըմբոստնե - րուն հետ: Այս բանակցութեան հետե -ւանքով գրամատունը գրաւողները պար - պեցին հաստատութիւնը եւ Ֆրանսական չոգենաւով մը Մարսիլիա ղրկուեցան: Բայց, եւրոպական մամուլը, գրամատան այս ծանօթ գրաւման պարագան, կրկին ներկայացուց իբրեւ հայկական չարդ մը:

(Շար. 2)

Հ. Բ. Ը. Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲ

Հայկական Վերածնունդի Շուրթ

«ԱԼԷՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆ»ԻՆ ՄԷՋ

Հ. Բ. Ը. Մ.Ի Փարիզի երիտասարդաց Ակումբը, երրորդ տարին ըլլալով, կազ - մակերպած էր Հայկական Վերածնունդի Շաբաթ մը, որ տեղի ունեցաւ Միու - թեան «Ալէք Մանուկեան» կեդրոնին մէջ, Ապրիլ 19 - 23: Արդարեւ, խումբ մը երի - տասարդ - երիտասարդուհիներ զեղեցիկ գաղափարը ունեցած էին մշակութային երեկոյթներու ճամբով վերակենդանացը - նել նկարչական, երաժշտական, արուես - տանութեան արուեստը նոր սերունդին մէջ, ցոյց տալու համար, որ Ապրիլեան Եղեռնէն 67 տարի հետք Հայը ներկայ ու կը չարունակէ ստեղծել:

Ձեռնարկներու յայտագիրը կը բաղկա - նար նկարչութեան մրցումէ, դասախոսու - թիւն - ասուլիսէ, դեղարուեստական ե - րեկոյթէ, Ապրիլ 24-ի ոգեկոչումէ եւ ար - տասանութեան երեկոյթէ:

ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Երկուշաբթի, Ապրիլ 19-ի երեկոյեան տեղի ունեցաւ բացումը նկարչական մր - ցում - ցուցահանդէսին, որուն նիւթն էր Հայկական Վերածնունդը: 25 հոգի մա - նակցեցան (6 - 70 տարեկան) մրցումին իրենց լուզաներկ, ջրաներկ գործերով եւ գծագրութիւններով: Կային հետաքրքր - կան աշխատանքներ, ուր երեան կ'ել - լէին մանուկներու երեւակայութիւնը, պատանիներու անկեղծութիւնն ու երի - տասարդներու չնորհը: Յատկանշել ա - նուններ են Անահիտ Սահէչեան, Եզուար Գաբրիէլեան, Քլօա Մանէսեան, Նորայր Ճնտոյեան, Վիքէն Ճաֆէրեան, Կարօ Կարոյեան, Վահէ Թորոսեան: Ցուցա - հանդէսը, որ տեւեց ամբողջ շաբաթ, բացման օրը ունեցաւ չուրջ հարիւր այ - ցելուներ:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻԻՆ - ԱՍՈՒԼԻՍ

Երեքշաբթի, Ապրիլ 20, ժամը 2h-ի սկսաւ դասախօսութիւն - ասուլիսը, ի - րեւ նիւթ ունենալով «Իշխանութեան հա - ցը Սփիւռքի մէջ»: Ներկայ էին չուրջ 70 երիտասարդներ:

Դասախօսը՝ Գեղամ Գեւոնեան, նկատի ցայցուց նիւթը, զայն բաժնելով երեք մե - ծաւոր մասերու: Նախ՝ սահմանումը այ - սու իշխանութիւն բառին՝ ըստ բառա - րաններու, զանազան վարչաձեւերու մէջ այդ բառին ըմբռնումը եւ մեկնաբանու - թիւնը, ապա՝ Սփիւռքի զանազան պե - տութիւններու մէջ գոյութիւն ունեցող կա - ռավարութիւններու յարաբերական իշ - խանութիւնը, անոր տարողութիւնն ու կշիռը, հուսկ՝ Սփիւռքի մէջ կեդրոնաց - եալ եւ կշիռ ունեցող իշխանութիւն մը ունենալու կարելիութիւնը:

Գեղամ Գեւոնեան իր խօսքի առա - բաժնին մէջ անդրադարձաւ տարբեր վար - չաձեւերու մէջ իշխանութեան վերա - կանգնման հարցին, յատկապէս զաղա - փարախօսութեան դերին, որ կարելիու - թիւն կուտայ չաճախ իշխանութեան՝ վա - ւերականացումը փնտռելու ընկերու - թենէն դուրս, օրէնքի գործադրութեան կալուածէն ներս անոր ունեցած միջոց - ներուն՝ բանակ, ոստիկան, կարգապա - ուժ, տնտեսական եւ այլ կարելիութիւն - ներ: Այս տուեալներու լոյսին տակ բա - զատական մը ընելով զինեալ տուաջ, ո - րպէս Սփիւռքի մէջ, յարաբերաբար, Լիբա - նի գաղութին է որ ունի քաղաքական իշ - խանութիւն, այն ալ կը պարտի երկու - սահմանադրական կառոյցին՝ յարմա - նական դրութեան: Շեշտը դնելով ենթ - գեցոյ վրայ, իբրեւ այն հիմնական գոր - ծոութիւնը որ զարերով կենսական գի - տութիւնը դարձած է հայ կեանքին մէջ, իբրեւ խաղացած է հայ կեանքին մէջ, իբրեւ իշխանութիւն, դասախօսը նշեց որ ան այսօր բառին իսկական առումով իշխա - նութիւն չունի, նուազ կը թափանցէ հա - մայնքի կեանքէն ներս, անոր զաղափա - րական ուղղութիւնն ալ անցեալի պար - կերը չէ պարզեր, հոգեւորականներն ալ քաղաքական իշխանութիւն մը դառնա - լու զործիք չեն: Ինչ կը վերաբերի քա - ղաքական կուսակցութիւններուն, դա - սախօսը ներկայացուց անոնց զաղափա - րաբանութեանց եւ գործունէութեանց մէ

ՅԱՍՈՎՁ ԿՈՏՏՎԱԾ

= ՆԱԽՈՐԴԱՀԱՅ =

ՆԱԶԱՐԵԹ ՎԱՆԵՑՅԱՆԻՆ ՎԱԿՎ
ՄԱՍԻՆ ՅԱՅՍՄՈՍ ՈՒՆԻ

Յարգեցեալ ընթերցող, ես ինքնագլուխ ոչ մի գիրք գրած եմ, ոչ ալ գրելու միտք ունեցած եմ երբեք, որովհետև ինծի համար գրելը ամենեն դժուար գործն է եղած միշտ։ Ես միայն ուզած եմ ձեզի պատմել Նազարեթ Վանեցյանի մասին, որ ինծի համար ամենեն սիրելի մարդն էր աշխարհիս վրա։ Ես ուզած եմ ձեզի պատմել անոր մասին, որովհետև ան

Տիկին Լիւսի Աւագեան եւ աղջիկը՝ Լոռէնն եւ ընտանեկան բոլոր պարագաները սրտի խոր կսկիծով կը ծանուցանեն իրենց մօր եւ մեծ - մօր՝

ՏԻԿԻՆ ՀԵՐՄԻՆԷ ԱՒԱԳԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Ապրիլ 29-ին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի երկուշաբթի Մայիս 3, ժամը 14-ին, Փարիզի Ս. Ծովհ. Մկրտիչ Եկեղեցին, ուրկէ մարմինը կը փոխադրուի Սէն Թ'Ուէնի գերեզմանատունը։

Որեւէ մահազդ ղրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Եան'ց Ակումբը կը ծանուցանէ թէ հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ Կիրակի, Մայիս 9-ին, Փարիզի Ս. Ծովհ. Մկրտիչ Եկեղեցին, իր յաւէտ ողբացեալ անդամներու յիշատակին.–

Էտմոն Փէշտըմալճեան	(1969)
Արթօ Աբգարեան	(1971)
Ժորժ Տէր _ Թոմայեան	(1972)
Արամ Գավաֆեան	(1972)
Վահէ Պալթայեան	(1973)
Ատոմ Նազարեան	**(1974)**
Ժորժ Գարակէօզեան	(1975)
Վռամ Գույումճեան	(1978)
Փիէր Պարոնեան	(1979)
Հայկ Էսապալեան	(1980)
Նորայր Երամեան	(1980)

Ի գիտութիւն անոնց յիշատակը յարգողներուն։

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Նիւհէն Եղիա Մալոյեան Վանի հերոս՝ Տաճատ Թերլեմեզեանի *յիշատակին* 100 *ֆրանք կը նուիրէ «Ծառայ»ին։*

Աչխատանքի (Մայիս 1) առթիւ պատճառով, «Ծառայ Միտք եւ Արուեստ»ի Մայիսի թիւը լոյս կը տեսնէ գալ շաբթու (Կիրակի, Մայիս 9)։

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Սահակ Գաբրիէլեանի *մահուան առթիւ եւ ըստ ննջեցեալին ու ընտանիքին փափաքին ծաղիկի ու ծաղկեպսակի փոխարէն եղան հետեւեալ նուէրները, ննջեցեալին սիրած հաստատութիւններուն՝ Սէն - Լուի Ս. Գէորգ Եկեղեցիին, Մարսէյլի Հայ Մշակոյթի Տան եւ «Ծառայ» թերթին։*

Սէն Լուի Ս. Գէորգ Եկեղեցւոյ.– *Տոքթ. եւ Տիկին Զաւէն Գաբրիէլեան եւ զաւակները, ու Տէր եւ Տիկին Գառնիկ Տէրոյեան եւ զաւակը 1000, Ղազարեան Օննիկ 500, Աբրահամ Պօղեան, Պօղոս Ահարոնեան, Բժիշկ Դարբինեան, Ռոժէ Գույումճեան, Վարպապետեան ընտանիք, Կօշնաքեան ընտանիք, Ս. Հօլօփիքեան 200-ական Ֆ., Ռուբէն Խաչատուրեան, Տիգրան Ղազարեան, Ասատուրեան ընտանիք, Թազուհի Գույումճեան, Տիկին Տատիկեան, Ցակոբ Տիրիգլեան, Փիրեան ընտանիք, Ուզունեան Կարապետ, Մի Ոմն, Ժանօ Սարգիսեան 100-ական Ֆ., Նարգուհի Պապուչեան, Գարեգին Խրիմեան, Սերոբ Աղճայեան, Միսաք Միրզէ, Ճառայեան ընտանիք 50-ական Ֆ.։*

Մարսէյլի Հայ Մշակոյթի Տան.– *Տոքթ. եւ Տիկին Զաւէն Գաբրիէլեան եւ զաւակները, ու Տէր եւ Տիկին Գառնիկ Տէրոյեան եւ զաւակը 1000 Ֆ., Պօղոսեան ընտանիք, Մօրիս Ղազարեան 500-ական Ֆ., Սաթենիկ Թիւթիւնեան 250 Ֆ., Տիգրան Պօղեան, Մերուկեան ընտանիք, Անթօ Խաչատուրեան 200-ական, Գէնճիրեան ընտանիք, Ս. Տէր - Զաքարեան, Շալճեան ընտանիք, Յ. Տէրոյեան, Թոնի Մուրատեան, Ցակոբ Տիրիգլեան, Միսաք Միրզէ, Կարապետ Ուզունեան, Ճառայեան ընտանիք, Զաւէն Միլոռնեան, Կարօ Ծովէփեան 100-ական Ֆ., Կօշկակարեան, Սերոբ Աղճայեան, Ց. Ղազարեան, Լիւսէթ Բամպուքեան, Ութուզեան ընտանիք 50-ական Ֆ.։*

«Ծառայ»ին.– *Տոքթ. եւ Տիկին Զաւէն Գաբրիէլեան եւ զաւակները, ու Տէր եւ Տիկին Գառնիկ Տէրոյեան եւ զաւակը 1000 Ֆ., Պօղոսեան ընտանիք, Փասքալ Ղազարեան 500-ական Ֆ., Ցովհաննէս Քալֆայնունի 250, Հ. Մ. Ը. Մ. Աբծիւ 200, Ֆ., Արսէն Տէր - Զաքարեան, Շալճեան ընտանիք, Ց. Տէրոյեան, Թոնի Մուրատեան, Քերոբէ Կարապետեան, Միսաք Միրզէ, Կարապետ Ուզունեան, Կարօ Ծովէփեան 100-ական Ֆ., Կարապետ Տէրտէրեան, Ութուզեան ընտանիք, Ֆիլիփ եւ Գաթի Ղազարեան, Սօնիա Փիլիկեան, Լիւսէթ Փամպուքեան, Այրէ Տիկին Տատիկեան, Ճառայեան ընտանիք, Աբրահամ Խրիմեան 50-ական Ֆ.։*

EN SOUSCRIPTION

Հայոց Պատմութիւն

Histoire des Arméniens

Sous la direction de GERARD DEDEYAN

Maître - Assistant à l'Université Paul - Valéry de Montpellier

Un volume, 700 pages, au format 180 x 230 mm.

Imprimé sur vélin et comportant 32 planches d'illustrations en hors-texte, relié toile.

PRIX DE SOUSCRIPTION JUSQU'AU 24 MAI

169 F. au lieu de 197 F. à Parution

Toute souscription donne droit à une magnifique reproduction rehaussée de couleur d'une carte du XXIII^e siècle de l'Arménie et de la Géorgie publiée en 1766, par les géographes du Roy.

Bulletin de Souscription

NOM: .....

ADRESSE: .....

Code Postal: . . . . / . . . .

A RETOURNER

Accompagné d'un chèque de 169 F. + 30 F. (frais d'envoi)

à LA LIBRAIRIE ORIENTALE — H. SAMUELIAN

51, Rue Monsieur - le - Prince — 75006 Paris — Tél.: 326. 88. 65

«RADIO ASK»

MARDI, 4 MAI

Une Soirée Exceptionnelle

FM 100 Mhz.

Grande - Fête Familiale Dansante

DIMANCHE, 9 MAI

A partir de 15 h.

Organisée par

LA CROIX - BLEUE ARMENIENNE

Section Saint-Maurice de Beynost

Avec la participation de

L'ORCHESTRE «MELODIA - EREVAN»

Salle des Fêtes

de Saint-Maurice de Beynost

BUFFET ARMENIEN — BROCHETTE

Entrée libre

AMBIANCE ARMENIENNE

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԷՍԱԵԱՆ – ԲՈՐԵԿԱՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

տարեկան ընդհ. ժողովը կը գումարուի՝ Շաբաթ Մայիս 8, ժամը 15·30-ին՝ au Centre Culturel Alex Manoogian 118, Rue de Courcelles - 75017 Paris կը հրաւիրուին անոնք ու համակիրները։

×

ԿԱՊ. ԽՍԱՅի Փարիզի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր՝ անդամուհիները, Շաբաթ, Մայիս 8, ժամը 16-ին, Հայ Մշակոյթի Տունը, 17 ռիւ Պլէօ։

OPTIMA Tours

PROCHAINS VOYAGES EN ARMÉNIE

DU 15 AU 29 MAI — DU 12 AU 26 JUIN — DU 14 AU 31 JUILLET

DU 4 AU 17 AOUT VOL SPECIAL DIRECT EREVAN

Nouvauté! Réduction importante pour les jeunes de 16 à 35 ans.

LA MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE DECINES Organise 2 Voyages Directs:

a) LYON / EREVAN / BAKOU / TBILISSI / EREVAN / LYON

b) LYON / EREVAN / LYON

DU 4 AU 17 AOUT

Nouvauté! Réduction importante pour les jeunes de 16 à 35 ans.

SONIA COUMRYANTZ

OPTIMA Tours

Renseignements et Inscriptions:

à Paris:

OPTIMA TOURS

67, Rue Quincampoix

75003 - PARIS

Tél.: 274. 27. 20

à Décines:

Maison de la Culture Arménienne de Décines

15, Rue du 24 Avril 1915 - 69150 DECINES

Tél.: (7) 849. 42. 97

Tous les jours, sauf Lundi, de 10 à 12h. et de 14 à 19h.

VOYAGE ORGANISE PAR LE FOYER CULTUREL DE NICE

AVEC UN VOL DIRECT NICE / EREVAN

DU 25 SEPTEMBRE AU 9 OCTOBRE

Renseignements et Inscriptions:

Pour Nice et les Alpes - Maritimes:

— Monsieur IKEDJIAN Arthur

29, Avenue St. Augustin — 06200 NICE

Tél.: (93) 83. 35. 03 ou (93) 88. 76. 08

— Monsieur GEDIKIAN Vasken

Tél.: (93) 88. 06. 41

Pour le Var:

Monsieur KASSIGUIAN Raffi

8 ,Rue des Ecoles

83710 - MONTAUROUX

Tél.: (94) 76. 44. 23

Lic. A 946 (Agence Agréé INTOURIST)

FOOTBALL

PORTE - DE - BAGNOLET

contre

HOMENETMEN - FRANCE

Dernier Match de Qualification au Championnat

LE DIMANCHE, 2 MAI, A 15 H. 30

au Stade Pershing (Porte de Vincennes

VENEZ NOMBREUX

ԽՈՒՃՈՅԻՑ - ՃԱՇ

NOVOTEL - BAGNOLET

Կազմակերպուած կազ. Ալչի Փարիզի մասնաճիւղին Նովոթէլի սրահներուն մէջ, Շաբաթ Մայիս 15, ժամը 20·00։ Հայկ. ճոխ յայտագիր։ Սեղանները պահուիլ հեռաձայնելով. – 233 41 74 եւ 206 42 50։

ՄԱՐՍԷՅԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

12 - 14 Rue St. Bazile, Marseille 1er

ԹԱՅՄԱՆ 6–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՒ

ՄԵԾ ՃԱՇ

Կիրակի, Մայիս 9-ին, ժամը 13ին, Տարօն եւ Վասպուրական սրահ։

Հայկական մթնոլորտ - գեղարուեստական բաժին - ։

Մասնակցութեամբ՝

- Նարեկացի նուագախումբին։

– Մշակութային Տան «Անի» պարախումբին։

Ճաշարան 80 Ֆ.։

Նախընտրելի է նախապէս սեղանները ապահովել։ Հեռաձայնելով՝ Շալճեան 66 18 80 եւ Զ. Մխոռնեան 90 90 10։

×

MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE MARSEILLE

Grand Repas d'Anniversaire

DIMANCHE, 9 MAI, A 13 H.

Orchestre: NAREGATSI

Troupe de Danses ANI de la M.C.A.

Imprimé sur les Presses du Journal «Haratch»

83, Rue d'Hauteville — 75010 Paris

Commission Paritaire: N° 55935

THEATRE DE L'EMPIRE

41, Avenue de Wagram — 75008 Paris

LE CHANTEUR

NORAIR

en Première partie

L'Opéra — Film

«ANOUSH» (1954)

29 Mai — à 20 h. 30

ՊԱՆԵԼՕ - ՔԱՇԱՆԻ

ՏԱՐԵՎԵՐՋԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Կիրակի, Մայիս 9, ժամը 14·30-ին։

THEATRE MUNICIPAL DE BAGNEUX

Բարձր հովանաւորութեամբ՝

ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

եւ

Պ. ՀԱՆՐԻ ՌԱՎԵՐԱՑԻ

Պաղնէօ-ի քաղաքապետ

Բացման խօսք՝ վարչութեան կողմէ

Պ. Մ. ՄԱՎԻԵԱՆԻ

Գեղարուեստական բաժինը կը վարէ ուսուցչուհի՝

ՏԻԿԻՆ Հ. ՊԱԼԸՔՃԵԱՆ

Արտասանութիւն, երգ, կատակերգութիւն՝ դպրոցի աշակերտութեան կողմէ։ Սիրայօժար մասնակցութեամբ՝ երգչուհի

Պ. ՄԿՐՏԻՉ ՃԷՐՄԱՆԻ

Ճոխ պուֆէ։

Հաճելի անակնկալներ։

Մուտք 20 Ֆրանք։

Հաղորդակցութեան միջոցներ.- փոքր ս'Օրլէանէն առնել 188 ա կամ 188 Պ և իջնել Ռոն - Փուէն տէ Մարթիր։

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ
4
MARDI
4 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՐԱՉ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R. C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ՝ 180 Ֆ.
Արտասահման՝ Տար. 400 Ֆ. - Հատը՝ 2.50 Ֆ.

57րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.162 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 57e ANNÉE — No 15.162

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՄԱՅԻՍ 1-Ը

ԵՐԿՐԷ - ԵՐԿԻՒ

=———=———=

Մինչ Փարիզի մէջ, Մայիս մէկը պա-
ռակոսմի պատկեր մը կը պարզէր, Փոր-
թուկալի մէջ արիւն կը հոսէր բախումնե-
րու ընթացքին։

Փարիզի մէջ, ըստ իր աւանդութեան բանուորական ուժը առանձին կը տողան-ջէր։ Շաբաթ առաւօտ, հազար հոգի հա-ւաքելով Պերժըրոն կ'ուղէր անգամ մը ևս հաստատել իր անկախութիւնը, բայց ինչ որ նոր էր, այս անգամ, այն էր, որ Սի-ժի-թի եւ Սէ-էֆ-տի-թի չէին համաձայներ Լեհաստանի պատճա-ռով եւ երկու արհեստակցական միու-թիւններն ալ առանձին առանձին կը տո-ղանգէին։ Գաւառը աւելի միասնական ընթացք ունէին ցոյցերը, բայց ընդհանրա-պէս միայն՝ երեւութական։

Փորթոյի մէջ է, որ երկու բանուոր սպանուած է եւ 80 հոգի ալ վիրաւոր-ուած են ծանր բախումներու ընթացքին համայնավար արհեստակցական կազմա-կերպութեան չարքայիններուն եւ ոստի-կանութեան միջեւ։ Կռիւ մը ծագած է ցոյցին վայրին պատճառով, երկու սեն-տիքաներու միջեւ, մէկը՝ համայնավար, միսը՝ ընկերվարական։ Ոստիկանու-թիւնը առարկելով, որ ընկերվարական կազմակերպութիւնը նախապէս վերապա-հած էր Տելկասօ հրապարակը, քովընտի փողոցները քշած է համայնավար սենտի-քան, աչք առնելով անխուսափելի բա-խումներ։ Ինչ որ կը պատահէր եւ ոս-տիկանութիւնն ալ չէր վարաներ կրա-կելու։

Մոսկուայի մէջ, ծանօթ տողանցքին ներկայ էր Բրեժնեւ, ինչ որ գլխաւոր դէպքը կը նկատուի քանի որ, օր չկայ որ իր առողջութիւնը միջազգային մա-մուլն ու դեկավարները «չմտահոգէ»։

Լեհաստանի մէջ, հակառակ զօր. Ժա-րուզելսկիի ձեռք առած կարգ մը մեղ-մացուցիչ միջոցներուն (1000 հոգիի ա-զատ արձակում) Սոլիտարիթէ կը յայտ-նէ զաղանի ձայնասփռումով տանեակ հազարաւոր ցուցարարներ փողոց իջեցը-նել եւ կը փորձէր նոյն քաջագործութիւ-նը կրկնել Երկուշաբթի, Մայիս 3-ին, որ Սահմանադրութեան (1791) տարեդարձն է։ Ներքին նախարարութիւնը ճշդած էր, սակայն, զեկոյցով մը որ բոլոր ցոյցերը արգիլուած են, պատերազմական վիճա-կի հետեւանքով։ Սոլիտարնոսթէի ցոյցին առեն, նշանախօսքերն էին «ազատ արձա-կեցէ՛ք Վալեզա», «ո՛չ մենատիրութեան», «հաց չկայ առանց ազատութեան» եւայն.։

× Պոլսոյ մէջ, հակառակ զինուորա-կան իշխանութեան, հրացանաձգութիւն-ներ եղած են եւ ռումբեր ալ պայթած։ Զինեալ բախումները տեղի ունեցած են ծայրայեղ - ձախ (Տեւ Եոլ՝, յեղափո-խական ուղի) շարքայիններու եւ ապա-հովութեան ուժերու միջեւ։ Հինգշաբ-թիէն Ուրբաթ լուսնալիք գիշերը, բա-խումը մէկ ժամէ աւելի տեւած է եւ պատճառած մէկ մեռեալ եւ բազմաթիւ վիրաւորներ։ Օքմէյտանի հրապարակին վրայ, Տեւ Եոլի անդամներ հանրազրեր կը փակցնէին երբ զինեալ ուժեր հասած ու կրակել սկսած են։ Ըստ իշխանու-թեանց 17 հոգի, զորս ոստիկանութիւնը կը փնտռէր, ձերբակալուած են, որոնց մէջ զեկավար մը՝ Քեմալ Կէնճէ։

ՓՈՒԹՊՈԼ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ 45–ՐԴ ԱԽՈՑՆՈՒԹԻՒՆ

«ԱՐԱՐԱՏ»

ԴԱՍԱԽՈՐՄԱՆ ԳԼՈՒԽԸ

—×—

Մայիս 2-ի խաղէն ետք, ախոյեան-թեան գլուխն է Արարատ 11 կէտով։

Նախքան այս խաղը, Ապրիլ 25-ին Երե-ւանի մէջ, 1-ի դէմ 2 կէտով յաղթած էր Դոնեցի Շախտեորին։ Կէտերը նշանակած էին Բարսէղն Մելիքեան (12րդ վայրկեան) եւ Անդրանիկ Խաչատրեան (82-րդ)։

Մայիս 2-ի խաղերու արդիւնքները.-

Պախտակոր - Տորպեդօ (Ք)	0 - 0
ԱՐԱՐԱՏ - ԿՈՒԲԱՆ	2 - 1
(Ա. կիսախաղ՝ 1 - 0)	
Կայրաթ – Նեֆթչի	2 - 0
Դինամօ (Թ) – Շախտեոր	2 - 2
Դինամօ (Մ) - Դնեպր	3 - 0
Սպարտակ (Մ) - Մետալիստ	0 - 0
Դինամօ (Կ) - Տորպեդօ (Մ)	0 - 0
Զերնոմորեց - ԲԿՄԱ	0 - 2

Արարատ դասաւորման գլուխն է 11 կէտով, նոյնքան կէտ ունի Պախտակոր, որու սակայն կը պակսի մէկ յաղթանակ, ուրեմն Արարատէն ետք կուգայ դասա-ւորման մէջ։ Իրենց կը հետեւի 10 կէտով Կայրաթ։

Անգլիացիք Կրակել Սկսան

=———=———=

Մալուիներ ու պատերազմը կը սկսէր Շաբաթ առաւօտ, երբ Անգլիացիք կը ռմբակոծէին գլխաւոր օդակայանը եւ ըստ անգլիական աղբիւրներու անգործածելի կը դարձնէին զայն։ Նոյնը չէր արժան-թինեան կարծիքը ինչ որ ոչ մէկ կարե-լութիւն կուտայ յստակ գաղափար մը կազմելու եղածին մասին։ Կացութիւնը քիչ մը հանդարտ էր կ ի ր ա կ ի, բայց միայն քանի մը ժամ, քանի որ Անգլիացիք կիրակի իրիկուն ծովառում-բով կ'ընկղմէին արժանթինեան նաւ մը (թէեւ Պուէնոս - Այրէս կը հերքէ)։ Ուա-շինկթընի համար, պատահածը վարկի ալ մեծ հարուած մըն է, եւ հիմա փե-րուն է, որ իր միջնորդութիւնը կ'առա-ջարկէ եւ եօթը կէտերէ բաղկացած ծրա-գիր մը։

Մոսկուայէն ետք, Քուպան ալ Արժան-թինի կողքին է, որու վարչակարգը, հի-մակուհիմա բարձի թոզ եղած է, բոլոր համայնավար երկիրներուն համար...։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՆԱԽԱԳԱՀ ՄԻԹԵՐԱՆ չրջապտոյտ մը ձեռնարկեց Լիմուզէնի մէջ, ուր պիտի հանդիպի ժաք Շիրաքի։

ԷՃԷՎԻՏի նոր դատավարութիւնը Յու-նիս 4-ին յետաձգուեցաւ, Անգարայի զին-ուրական ատեանը յաւելեալ քննութիւն մը ուզած ըլլալով։ Ծանօթ է որ Հալքի պարագլուխին դէմ եղած նոր ամբաստա-նութիւնն այն է, որ դէմ գործած է Ապա-հովութեան Ազգ. Խորհուրդի, թիւ 52 հրովարտակին, որ կ'արգիլէ քաղաքական որեւէ բանավէճ։

ՏՐԻՊՈԼԻՍԻ (Լիբանան) Սէն - Միշել մարոնի եկեղեցիին մէջ Լիբանանցի մը սպառնացած է հաւատացեալներուն զէն-քով եւ ձեռնառումբով, բայց ոստիկա-նութիւնը հասած է ու զինքը սպաննած։ Այդ պատճառով ձեռնառումբը սահած ու պայթած է եւ կին մը մեռած է, երկու հոգի ալ վիրաւորուած։

ՍԻԿԻԼԻՈՑ մէջ, համայնավար երես-փոխան մը՝ Փիօ տէ լա Թոռէ սպաննուած է։ Կը կարծուի որ մաֆիային գործն է։

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Երեքշաբթի իրիկուն, կոչումնով մըն է, որ Աղթատախնամ ընկերակցութիւնը կ'ոգեկոչէ իր հիմնադրութեան 90-ամեա-կը։ Այս առթիւ, ստորեւ՝ այն յօդուածը զոր Շ. Նարդունի գրած էր 1966 Յունիս 12-ին, ընկերակցութեան 75-ամեակին առթիւ, տօնուած ճաշով մը (Փոքսարտի ճաշարանը, Յունիս 17-ին) եւ դաշտա-հանդէսով։ Անցեալ տարի, մեր աշխա-տակից բարեկամը՝ Մկրտիչ Գազանճեան, որ երկար տարիներ վաստակաւոր ան-դամներէն եղած է Աղթատախնամի վար-չութեան, երկու յօդուածով հակիրճ պատմականը տուած էր Ընկերակցու-թեան, այս նոյն 90-ամկաին առթիւ։

Փարիզի Հայոց «Աղքատախնամ» Ընկե-րակցութիւնը այս ամիս կը տօնէ տարի-ներու ... իր հարստութիւնը, որու հա-ւատն է այժմ (հիմնուած 1892 Յունիս 1-ին)։

Ներեցէք բառախոյզին, որ այս առթիւ, մանաւանդ ուսին, տարբեր հարստութեան մը ցանկութեամբ՝ կանգ կ'առնէ Հայոց Լեզուին հարստութեան առջեւ ու կ'ըսէ.

- Աղքատ եմ ես, ո՛վ Մեծասքանչ, աղ-քատ եմ ոչ «հատեալ ի յաղթեաց եւ ի յընչից», այլ զրկեալ մը անմահ Մեսրոպ Մաշտոցի չնորհէն, տո՛ւր ինծի քու ճո-խութենէդ, հարստութենէդ, բառերու դանձէդ...

Չի աղքատ է գիտութիւնս այս բառին մասին, ինչպէս աղքատ է Հ. Գաբրիէլ Աւետիքեան՝ երբ կը գրէ. «Աղքատ կը հանենք աղխոֆ բառէն, այսինքն թէեմբլ-լէք, ուռուպայ», բացատրելով թէ խո գիրը ձգելով կ'ըլլայ ածանցեալ՝ աղխատ, այսինքն խեղճ, բան չունող»։ Կամ՝ «կը հանենք աղ բառէն, այսինքն՝ ուտելու աղ ալ չունեցող»։

Եւ դեռ ի՞նչ նման ... աղքատ բացատ-րութիւններ, որոնք կը գլորին կ'երթան մինչեւ պահլաւական ձորը՝ կանչելու հա-մար ա - հու - խատ, որ ըստ Թիրեաքեանի կը նշանակէ «տուն - տեղ չունի»։

Սխա՛լ է, սխա՛լ։ Փարիզի Հայոց Աղ-քատախնամը ա՛ղ ալ ունի, տո՛ւն ալ ու-նի, - եւ ի՞նչ տուն։

Բայց նախ պարպենք բառախոյզին մա-խաղը։

Սկզբնաբար մեր «աղքատախնամ» հայ-րենակիցները Փրանսերէն պիէնֆըզանս կը կոչէին իրենց ընկերակցութիւնը, այժմ՝ էտ սոսիալ, որ աւելի ... ընկեր-վարական է եւ նուազ աղայական, չըսե-լու համար պիէնֆըզան։ Բայց, խոստո-վանինք, երբեք եւ երբեք համապատաս-խան մ ե ր հայերէն բառին, որ նոյնպէս կը մնայ անհամապատասխան արդի ընկերային վարդապետութեանց։

Ես փնտռեցի իմ աղքատ ծանօթութիւն-ներուս մախաղին մէջ թէ ի՛նչ բառ ու-նէին Ցոյները, որոնց հետեւելով՝ Մեծն Ներսէս աղքատանոցներ հիմնեց Հայաս-տանի մէջ։

«...Ըստ գաւառաց գաւառաց չինել աղքատանոցս ի խորչս եւ ի զերծ տեղիս, զի փոխանակ հիւանդանոցացն Յունաց լինեցին ի մխիթարութիւն մարմնոյ վըճ-տացելոցս»։

Կը կարծեմ թէ այս բացատրութեամբ՝ Խորենացի ուզած է բարձրացնել բառին դասակարգը, որ նուազագոյն է ըստ յու-նական ստուգաբանութեան։

Մեծն Ներսէս կ'աշակերտի Կապադովկ-եան դպրոցին, - Բարսեղ Կեսարացինե-րուն, Գրիգոր Նազիանզացիներուն, ո-րոնք պտաւխոնեներ հիմնեցին, մեր լեզ-ուին մէջ թարգմանուած՝ աղքատանոց, պատսպարելու համար մուրացիկները։ Արդարեւ, լեզուի պատմութեան մէջ ա-ռաջին աղքատները մուրացիկներ էին, ինչպէս կը մատնէ համապատասխան յու-նարէն բառը իր սկզբնական նշանակու-թեամբ, - բաղդատութեան համար՝ առէք Հոմերոսի Ոդիսականը, երգ ԺԸ., ուր կը գտնէք նոյն բառին զանազան գործածու-թիւնները, ինչպէս սա, Հիւրմիւզի թարգ-մանութեամբ։

Սիրես ի մոյր զօրհանապաղ յառնել
Շրջիլ ընդ քաղաք, դատարկ անգործ է
բուծանել զայդ որովայն fո զանյագ։

Նոյն բառն է դարձեալ, մուրացիկ, որ կը տեսնուի նոյն երգին առաջին տողին մէջ։ Ուրիշներ նոյն արմատէն կազմը-ւած բանաձեւերը թարգմանած են օտա-րական (Համբարձումեան) կամ հիւր։

Ահա այս բառն է, աղքատ, որ Սո-փոկլէսներու եւ Եւքիդէսներու արհամար-հանքը կրելէ ետք՝ յանկարծ կը նետէ նուաստացման քուրձը, կը հագնի սիրոյ եւ պատուոյ պարեգօտը, զոր իրեն կը չնորհէ Ճիսուս իր երանելութեան մէջ.- «երանի՛ աղքատաց...» (Մատթ. Ե. 3)։

Կը թուի թէ Կապադովկեան դպրոցը այս երանելութենէն ներշնչուեցաւ՝ աղ-քատանոցներ հիմնելու համար Արեւելքի դռներուն առջեւ, ինչպէս ետքէն Հայաս-տանի մէջ։

Փոփերիզմի առաջին ջատագովն եղան, ուրեմն քրիստոնէութիւնը։ Իսկ ամէնէն անկեղծ առաքեալը՝ Հայութիւնը։

Հայը աղքատանոց է հիմներ՝ ուր որ գացեր է։ Եկեղեցի, դպրոց ու աղքատա-նոց։ Ահա երեք բառեր, բաւական՝ գը-րելու համար մեր պատմութիւնը։ Ժամա-նակ մը հոգեւոր կը կոչուէին այդ աղ-քատանոցները, խնամատարական բնա-կարան, ուր կ'ապաստանէին գաղթա-կանները, անպաշտպան ճամբորդները, վերջապէս հիւրեր՝ որ տէր չունէին (հին հայերէնով՝ հիւր կը կոչուէր օտարա-կանը)։

Իմ նպատակս չէ գրել մարդկութեան ընկերային պայմաններուն զարգացման պատմութիւնը, - մեծափոր հատորի մը նիւթ։ Բառերը ուղենիշներ են նման պատ-մաւորականներուն համար։ (*)

Վերջին ստեղծուած բառն է, միշտ ըն-կերային նոր պայմաններու արտայայ-տութիւն, Հանգստեան Տուն, ժողովրդա-կան լեզուով՝ Ծերանոց։

Փարիզի Հայոց Աղքատախնամը հա-րուստ է նման Հանգստեան Տուներով, - երկու տուն՝ Փարիզի չուրջը, մէկ տուն՝ Միջերկրականի եզերքը։ Այժմ ծրագրած է հիմնել Հանգստեան Տուն մըն ալ մեր մաւորականներուն համար։

Մեր անմոռանալի բանաստեղծը, Ա-հարոն Տատուրեան, որ նման օթեւանէ մը մեկնեցաւ դէպի ... քնարան (գերեզ-մանատուն), մահուան գաւիթ կը կոչէր Հանգստեան Տունը։

Շ. ՆԱՐԴՈՒՆԻ

«Յառաջ», 1966 Յունիս 12

(*) Այդ տունը չհիմուեցաւ ատենին։

ՆԻՒԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ»
ԹՐՔԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

Գ.

1905-ին, այս անգամ Դաշնակցութիւնը Ապտիւլ Համիտի դէմ մահափորձ մը պատրաստեց: Յուլիս 21 Ուրբաթ օր երբ կայսրը մզկիթէն կ'ելլէր, չատ զօրաւոր պայթում մը պատահեցաւ անոր կառքին մէջ: Բարեբախտաբար, կայսրը այս մահափորձէն անվնաս փրկուեցաւ, նոյնիսկ առանց որեւէ վէրքի:

Մահափորձի հեղինակներու մեծ մասը ձերբակալուեցան, մին մահուան դատապարտուեցաւ, բայց յետոյ ան ալ ներուեցաւ ու ազատ արձակուեցաւ:

Ինչպէս աւելի առաջ նշած էինք, ըստ Հնչակեաններու Հայոց ըմբռոստանալու յարմարագոյն ժամանակամիջոցը պէտք է ըլլար Օսմանեան կայսրութեան մեծ պատերազմ մը կամ պետութիւններու հետ պայքարի սկսած օրերը: Ուստի, երբ 1914-ին Օսմանեան կայսրութիւնը Ա. Համաշխարհային պատերազմի մասնակից եղաւ անոնք ալ յուսացին որ իրենց ըսպասած ժամը հասած է այլեւս: Հայկական կազմակերպութիւնները անմիջապէս չարժման անցան: Դաշնակ, Հնչակ, Վերակազմեալ Հնչակ ու Ռամկավար կուսակցութիւններու ներկայացուցիչներ Ղալաթիոյ մէջ վարժարան մը հաւաքուեցան, իրենց գլուխը ունենալով Պատրիարքարանէն Գաբրիէլ Ճէվահիրճեան անուն հոգեւորական մը: Այս ժողովի ընթացքին որոշուեցաւ պատերազմի ընթացքին հաւատարիմ մնալ պետութեան, զինուորական պարտականութիւն ընդունել եւ չսարսուիլ արտաքին ազդեցութիւններէ: Սակայն այս պարագան իրականութեան մէջ կառավարութիւնը չփոթեցնելու ձեւ մըն էր, մինչդեռ այդ կազմակերպութիւնները իրենց պաշտօնական հաւաքոյթը 1904-ի Յուլիսին էրզրումի մէջ կատարած ու այդ համաժողովին տուած էին իրենց բուն որոշումը: Այս ժողովը, որուն մասնակցած են Մոսկուայի, Թիֆլիսի, Թեհրանի, Թաւրիզի, Եգիպտոսի, Պալքաններու եւ Անատոլուի զանազան շրջաններու 30-ի չափ ներկայացուցիչները, կարգ մը որոշումներ տրուած էր, որոնց համաձայն ճշդուած էր որ ընդդիմադիր ճակատ մը բացուի Օսմանեան Պետութեան դէմ, անոր քաղաքական ծրագիրները քննադատել Իթթիհատ եւ Թէրաքքիի իշխանութեան դէմ խիստ պայքար մը չղթայազերծել:

Այս նպատակները իրագործելու համար, կ'որոշուէր նախ զինուորագրութեան մերժում եւ չանսալ երբեք այդ ուղղութեամբ տրուած հրահանգներուն: Իսկ անոնք որոնք ստիպուած՝ պիտի ըլլային զինուորագրուիլ, անոնց ալ կը թելադրուէր զէնք եւ զինամթերք սատնալէ յետոյ առանձին առանձին կամ հաւաքաբար միանալ ռուսական բանակին: Նոյնպէս Հայերը զանազան շրջաններու մէջ խռովութիւններ պիտի հանէին գիւղերու եւ քաղաքներու մէջ, որպէսզի այդ տեղերը ապրող Թուրքերը, իրենց ընտանիքները եւ գիւղերը պաշտպանելու համար ստիպուէին հոն մնալ եւ ռազմաճակատ չկարենային երթալ: Որոշուած էր նաեւ երթեւեկութիւնները խանգարել, լրտեսութիւններ ընել եւ այդ պահուն երբ Ռուսերը պիտի սկսէին սահմանները անցնիլ, Հայերն ալ ապստամբելով Օսմանեան բանակը կռնակէն պիտի հարուածէին:

Մինչդեռ Իթթիհատ վէ Թէրաքքի, պատերազմի սկզբնական օրերուն Հայերու մասին մանաւանդ միջոցներ կը խորհէր: Այսպէս օտար պետութիւններու քննիչներուն ներկայացուցած վերանորոգումներու ծրագիրը ընդունուած էր, որուն համաձայն Տրապիզոն, Էրզրում եւ Սիվասի նահանգներու ընդհանուր քննիչի պաշտօնին հոլանտացի Ֆէսթէրէք, Վան, Պիթլիս, Էլազիզ եւ Տիարպաքիրի Ընդհ. քննիչ կ'ընտրուէր նորվեկիացի Հօֆ. 1914-ի Նոյեմբերին, երբ Ցարական Ռուսիա պատերազմ կը հռչակէր Օսմանեան կայսրութեան դէմ, նոյն թուականներուն Դաշնակցականներու «Հնչակ» թերթին մէջ հետեւեալը գրուած էր:

«Հայերը այլեւս ստիպուած են իրենց դիրքը ճշդել եւ կողմերէն մէկուն քով ըլլալ: Հայերը անտարակոյս պէտք է գտնուին Դաշնակից պետութիւններու կողքին, այսինքն՝ Անգլիոյ, Ֆրանսայի եւ Ռուսիոյ քով իրենց տեղը կը գրաւեն եւ իրենց ամբողջ ուժերը կը միացնեն Ռուսիոյ հետ»: Հայերը բացի ռուս բանակներու մէջ պարտականութիւն ստանձնողներէ, պայքարի շրջաններուն մէջ ալ կամաւոր միութիւններ կազմած են: Ասոնք ռուսական զօրքերու հետ միասին պիտի պատերազմէին ու գաղնակից պետութիւններու յաղթանակի ապահովութեան պիտի օժանդակէին:

Ա. Համաշխարհային պատերազմի ընթացքին, Վանի երեսփոխան Վահան Փափազեան հայկական Վէմ հանդէսին մէջ հրատարակած իր մէկ յօդուածին մէջ կ'ըսէ. «Թուրք եւ ռուս պատերազմի ըսկըսելուն, Ռուսերը զօրաւոր եւ անակընկալ հարուածներ պիտի իջեցնեն Թուրքերուն: Ուստի պէտք է Կովկասի կամաւորական միաւորները պատրաստ ու նենալ, որպէսզի ասոնք իրրեւ ռուս բանակներու առաջնորդներ Թուրքիոյ կարեւոր կէտերը պէտք է նախապէս ձեռք անցընեն»:

1915 Փետրուարին, Թիֆլիսի մէջ կատարուած Հայկական Ազգային Համաժողովին մէջ Դաշնակցական ներկայացուցիչը իր տեղեկագրին մէջ կ'ընդգծէր, թէ ինչպէս յայտնի է ռուս կառավարութիւնը պատերազմի սկզբնաւորութեան Թուրքիոյ Հայերը զինելու եւ պատրաստելու, նոյն իսկ հայաբնակ վայրերու մէջ ապըստամբութիւններ կատարելու նպատակով 242·900 ռուբլի տուած էր, ուստի յարմար կ'ըլլայ որ մեր կամաւոր խումբերը Թրքական ուժերու մէջէն անցնելով միանան այդ տեղերու յեղափոխական կազմակերպութիւններուն: Եթէ հնարաւոր ըլլայ Թուրք բանակի թիկունքին, անիշխանական վիճակներ ստեղծել, ռուսական ուժերուն յառաջընթացը դիւրացընելով ապահովել Արեւելեան Անատոլուի գրաւումը»: Ինչպէս կը տեսնուի նաեւ իրենց իսկ փաստաթուղթերուն մէջ քմիթճիները վճռած էին Ա. Համաշխարհային պատերազմի մասնակից Օսմանեան Պետութիւնը կռնակէն զարնելու: Մինչդեռ երբ անոնք կը կարծէին որ Օսմանցիները թակարդի մը մէջ պիտի ձգեն, իրականութեան մէջ հոն ինկողը իրենք էին: Պօրեան անունով հայ գրող մը հետեւեալը գրած է իր մէկ գործին մէջ.

Ցարական Ռուսիան, ոչ մէկ առեն յօժարած է անկախ Հայաստանի մը գոյութեան: Իրականութիւն մըն է թէ Դաշնակցութիւնը, որ կ'աշխատէր, Հայաստանի ազատագրման համար, կը ջանար որ Ռուսիա ձեռք անցընէ Արեւելեան Անատոլուն: Արդարեւ, երբ 1916 տարուան սկիզբներուն ռուսական բանակը կը գրաւէր Էրզրում քաղաքը, ռուսական հրամանատարութեան հաղորդագրութիւններէն մէկուն մէջ արձանագրուած էր որ Հայերը իրաւունք պիտի չունենան բնակելու այդ քաղաքին մէջ:

Վերոյիշեալ որոշումները հայ քմիթճիներու կողմէ անմիջապէս իրագործուիլ սկսաւ: Առաջին ապստամբութիւնը Օլտոսոս 30, 1916 թուականին Զէյթունի մէջ սկսաւ: Այստեղ Հայերը անկախ զինուորական միութիւն մը հիմնել ուզեցին, որուն պաշտօնեաները հրամանատարները իրենց կողմէ ընտրուած պիտի ըլլային:

Երբ կը մերժուէր իրենց այս պահանջը, ըստ նախապէս տրուած որոշումներու, մերժեցին զինակոչի հրամաններուն են թարկուիլ, իրենց զէնքերով լեռ բարձրացան եւ սկսան զինուորներու եւ ոստիկան զինուորներու յարձակիլ: Վանքի մը մէջ պաշնեցին Մարաշի ոստիկան զօրաց հրամանատարը եւ անոր 25 զինուորները: Գիւղերը այրեցին ու աւերեցին, նոյն ծրագիրը գործադրուեցաւ նաեւ Էրզրումի եւ Արեւելեան Պայազիտի մէջ: Այստեղերէն կազմուած զինեալ ուժեր սկսան միանալ Ռուսիոյ մէջ կազմուած հրոսակախումբերու եւ կամաւորական ներու: Պիթլիս եւ Վանի մէջ ալ սկսան նշմարուիլ նոյն դէպքերը:

Նոյն իսկ երբ Ռուսերը անցան սահմանը, Վանի Հայերն ալ գրաւեցին քաղաքը:

Այլեւս ոչ մէկ ապահովութեան միջոց

Ժ. Տէր-Մերկեռեանի
եւ
Մ. Պէրժէ-Փափազեանի
ՆՈՒԱՃՀԱՆԴԷՍԸ

Փարիզի Կալօ սրահին մէջ, Ապրիլ 23-ի երեկոյեան տեղի ունեցաւ Ժան Տէր - Մերկերեանի եւ Միրիամ Պէրժէ - Փափազեանի նուագահանդէսը, զոր կազմակերպած էր Եան'ց Ակումբը իր «Մշակոյթի Շաբաթ»ի շրջագիծին մէջ:

Ջութակահար Ժան Տէր - Մերկերեան ծանօթ անուն մըն է արուեստի աշխարհին մէջ: Բազմաթիւ նուագահանդէսներ տուած է Մորմ. Միութեան զանազան քաղաքները, Եւրոպա, Միացեալ – Նահանգներ, Հարաւային Ամերիկա, Արեւելեան երկիրներ եւ ամէնուրեք մամուլը դրուատանքով արտայայտուած է իր արուեստին մասին: Մարսէյլ ծնած, Մոնթրէալի Երաժշտանոցին մէջ իր արուեստը կատարելագործած Տավիտ Օյսթրախի դասարանի, 1964 - 1980 թուականներուն դասախօս Երեւանի Երաժշտանոցը՝ Տէր - Մերկերեան արժանացած է Հայաստանի ժողովրդական արտիստ կոչումին եւ պետական մրցանակի: Ան դափնեկիր է նաեւ Փրակայի, Մարկրիթ Լոն - Ժաք Թիպօ եւ «Էլիզապէթ Թագուհի» միջազգային մրցանակներու:

Դաշնակահարուհի Միրիամ Պէրժէ - Փափազեան, մօրմէ Հայ եւ հօրմէ Լեհ, 13 տարեկանին աւարտած է Փարիզի Երաժշտանոցը եւ իր անդրանիկ նուագահանդէսը տուած Թէաթր տէ Շան զ'Էլիզէ: 14 տարեկանին ստացած է սենեկային երաժշտութեան Ա. մրցանակը, իսկ տարի մը ետք՝ Մարկրիթ Լոն - Ժաք Թիպօ մրցանակին արժանացած: 17 տարեկանին հանդիպած է ծանօթ դաշնակահար Սամսոն Ֆրանսուայի, որուն աշակերտած է եւ կրած իր ուսուցչին ազդեցութիւնը իր արուեստի ձեւաւորումին մէջ: Միրիամ Պէրժէ - Փափազեան եւս տուած է նուագահանդէսներ եւ գրաւած ուշադրութիւնը ծանօթ նուագախումբերու եւ անուանի արուեստագէտներու: 1978-էն ի վեր տարեկան իր նուագահանդէսները կուտայ Փարիզի Կալօ սրահին մէջ:

Ապրիլ 23–ին զոյգ արուեստագէտները առաջին անգամ ըլլալով միասին բեմ կ'ելլէին բարդ կառուցուածքներով դրուածներու յայտագրով՝ Մոցարթի Սի պէմոլ մաժէօր Ք 378 Սոնաթը, Փրոքոֆիէֆի թիւ 1 օփ· 80 Սոնաթը եւ Սէզար Ֆրանքի Լա մաժէօր Սոնաթը:

Ընտրուած կտորները հաւասար պատախանատուութիւններ կ'ընձեռէին թէ' ջութակին եւ թէ' դաշնակին: Արուեստագէտները կրցան այդ պատասխանատուութիւնը արդարացնել մեկնաբանութեան մէջ: Ժան Տէր - Մերկերեան ցուցաբերեց թէքնիքի անթերի տիրապետութիւն, խոր երաժշտականութիւն եւ յուզակա - նութիւն, յատկանիշներ՝ որոնք վկայ - դոյութիւն ունէր Օսմանեան բանակին - բուն եռեւը: Արտաղրական միաւորները անչարժութեան մատնուած էին Հայերու կատարած յարձակումներուն եւ խափանարարութիւններուն պատճառաւ: Միւս կողմէ կ'աւերէին ճամբաներն ու երթեւեկի միջոցները, որոնք արդէն անբաւարար էին: Հաղորդակցութեան զիծերը վնաս կը կրէին այս յարձակումներէն: Նոյնպէս, երբ հայ հրոսակները իսլամ գիւղերու վրայ տեւական յարձակումներ կը կատարէին, այս պատճառաւ անհանգըստութիւն մը սկսած էր ճակատի զինուորներուն մէջ, քանի որ անոնց խնդիրն ու միտքը իրենց գիւղերով եւ ընտանիքներուն վիճակով կը զբաղէր բնականաբար: Այսպէս, ճամբաներու փակումը, ուրիշ բազմաթիւ խափանարարութիւններ թուրք բանակի ազատ չարժումները սկսած էին խանգարել:

Ռուսերը սահմանը անցնելէ յետոյ, երբ Հայերը Վանը գրաւեցին եւ հայկական վրէժի խմբակներ սկսան խլամ ժողովուրդը սպաննել, Օսմանեան Կառավարութիւնը Հայոց Պատրիարքարանի, հայ երեսփոխաններու եւ հայ զինակիր զանազան յայտարարութիւն ըրաւ եւ յայտնեց որ շատ խիստ միջոցներ ձեռք պիտի առնուին, եթէ Հայերը չարունակեն իրենց ապստամբութիւններով եւ յարձակումներով ոչնչացնել խլամ ժողովուրդը:

Երբ այս յայտարարութիւնը արդիւնք մը չէ տուած, Ապրիլ 24, 1915-ին կառավարութիւնը փակեց հայ կազմակերպութիւններու կեդրոնները եւ ձերբակալեց անոնց գլխաւոր վարիչները: Տեսնելով թէ այս պարագան ալ արդիւնք չէր տուած, Մայիս 27, 1915-ին, որոշում մը տուաւ, որուն համաձայն Հայերը պիտի տեղահանուէին իրենց բնակավայրերէն:

Այս օրէնքը հետեւեալն է.

«Յօդուած Ա.– Պատերազմի միջոցին բանակի բոլոր միաւորներու հրամանատարներն ու անոնց փոխանորդները, զինուորական կեդրոններու հրամանատարները, տեսնեն որ ժողովուրդին կողմէ կառավարութեան հրամաններուն դէմ սաստում տեղի կ'ունենայ, երկրին անդորրութիւնը կը խանգարուի, զինուորական միջամտութիւններ կը տեսնուին, ընդվզումներ ցոյց կը տրուին, հայրենիքի ապահովութիւնը վտանգուած կ'ըլլայ, ստիպողաբար արտօնուած են անմիջապէս զինուորական ուժերով խիստ կերպով զսպել այդ յարձակումները եւ ընդվզումները:

Յօդուած 2.– Զինուորական հրամանատարները կրնան տեղահան ընելով ուղարկել այն շրջանները փոխադրել այն ժողովուրդը, երբ այդ շրջանները զինուորական տեսակէտէ անհրաժեշտ է բանակին համար, կամ այլ պատճառներով կրնան տեղահան ընել այդտեղի ժողովուրդը լրտեսելու կամ այլ պատճառներով վնասակար կը նկատուի երկրին համար:

Յօդուած 3.– Այս օրէնքը ի գործ կը դրուի հրատարակուած թուականէն սկսեալ Մայիս 27, 1915:

(Շար. 3)

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայ Նախկին Ռազմիկներու եւ Դիմադրականներու Բարեկամական Դաշնակցութեան Նիւ Մասնաճիւղի ընդհանուր ժողովը գումարուեցաւ Ապրիլ 18-ին, Հայոց Եկեղեցւոյ սրահին մէջ: Ներկայ էին մեծ թիւով նախկին ռազմիկներ եւ պատմագրականներ, ինչպէս նաեւ տեղւոյն կրօնական Ընկերակցութեան նախագահը՝ Վահան Ալման: Նոր անդամներ արձանագրուեցան: Տարեկան անդամավճարը որոշուեցաւ 100 Ֆրանք: Ընկերական մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ ժողովը եւ կատարուեցաւ նոր վարչութեան ընտրութիւնը, երկու տարուան համար:

Նոր վարչութիւնը կը պարզէ հետեւեալ պատկերը՝

Յարութիւն Գիւրկեանն՝ պատուոյ նախագահ, Եղիա Մալոյեան՝ նախագահ, Պօղոս Ժամկոչեան՝ քարտուղար, Մարկոս Գիւտէնեան՝ գանձապահ, Միքայէլ Շիրինեան, Հանրի Պալեան՝ խորհրդական:

ՀԱՑ ՆԱԽԿԻՆ ՌԱԶՄԻԿՆԵՐՈՒ ԵՒ ԴԻՄԱԴՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԻՒ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԱՎԱՇԱՑ ԿՈՏՎԱԾՈ

= ՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ =

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻ

=———=———=

Ստորագրեալս «Մարտիրոս Ղազարոսի Ղազարեան» հիմնարկեալ ընտանեկան պատուհասի մը ենթարկուելով եւ ամուսնոյս ու զաւկանցս մահուան պատճառած ծախքերը հոգալու անկարող գտնուելով, կը յայտնեմ հանրութեան, որ ես ալ ամուսնոյս պէս ոչ մէկ կապ ունիմ վերոյիշեալ ընտանեկան հիմնարկին հետ, եւ ոչ ալ պատասխանատու եմ անոր ստանձնած պարտքերուն համար։

Կ. Պոլիս, Նոյեմբեր 21-ի երեկոյեան, ժամը 7 1/2-ին, Ազգ. Ընկերական Ժողովարանի սրահին մէջ, Ազգ. Ընկերական Ժողովարանի Ընդհանուր Ատենապետ Տ. Գրիգոր Զօհրապ Էֆ.ի նախագահութեամբ, Ազգ. Ընկերական Ժողովարանի Ընդհանուր Ատենադպիր Տ. Գրիգոր Զարդարեան Էֆ.ի կողմէ կարդացուելու համար ներկայացուած տարեկան տեղեկագրութիւնը։

Ընդհանուր Ատենապետ Տ. Գրիգոր Զօհրապ Էֆ. ներկայացուցած տեղեկագրութեան մէջ կը յիշէ Ազգ. Ընկերական Ժողովարանի հիմնարկութեան պատմութիւնը, որ կատարուած է 1913 թուականին։ Ան կը յիշէ նաեւ Ազգ. Ընկերական Ժողովարանի Ընդհանուր Ժողովի նախագահներուն անունները, որոնք են՝ Տ. Գրիգոր Զօհրապ Էֆ., Տ. Գրիգոր Զարդարեան Էֆ., Տ. Գրիգոր Զարդարեան Էֆ., Տ. Գրիգոր Զարդարեան

Ի ՑԻՇԱՏԱԿ

Տէսինէն Տէր եւ Տիկին Գուրգէն Պօյաճեան, իրենց հանգուցեալ ծնողաց՝ Յովհաննէս եւ Հայկուհի Պօյաճեանի, ու Գրիգոր եւ Նարկիզ Քէօլէեանի անթառամ յիշատակներուն, 100 Ֆ. կը նուիրեն Ֆրանսահայ Կապ. Խաչի Տէսինի մասնաճիւղին, 100 Ֆ. Ֆրանսահայ Կապ. Խաչի Պէլֆոնթէնի օդափոխութեան կայանին եւ 200 Ֆ. «Ծառաչ»ի բարգաւաճման:

×

Լա - Սէն – Սիւռ - Մեռէն Տիկին Վ. Կարապետեան նահատակաց եւ իր ընտանիքին ննջեցելոց յիշատակին 1000 Ֆ. կը նուիրէ Փարիզի Ս. Ժողհ. Մկրտիչ Եկեղեցւոյ (ստանալ «Ծառաչ»էն) եւ 50 Ֆ. «Ծառաչ»ին:

ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Մարսէյլ - Պօմոն - Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ թաղականութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ Տիկին Եսա - վերի ու զաւակներուն եւ իր պարագաններուն, Միքայէլ Եավերի մահուան առթիւ:

ՄԱՐՍԷՅԼԻ
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ
12 - 14 Rue St. Bazile, Marseille 1er
ԲԱՑՄԱՆ 6–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻԻ
ՄԵԾ ՃԱՇ
կիրակի, Մայիս 9-ին, ժամը 13ին,
Տարօն եւ Վասպուրական սրահ:
Հայկական մթնոլորտ - գեղարուեստական բաժին - :
Մասնակցութեամբ՝
- Նարեկացի նուագախումբին:
– Մշակութային Տան «Անի» պարախումբին:
Ճաշազին 80 Ֆ.:
Նախընտրելի է նախապէս սեղանները ապահովել: Հեռաձայնելով՝ Հ. Շալճեան 66 18 80 եւ Զ. Մխլոնեան 90 90 10 :

×

MAISON DE LA CULTURE
ARMENIENNE DE MARSEILLE
Grand Repas d'Anniversaire
DIMANCHE, 9 MAI, A 13 H.
Orchestre: NAREGATSI
Troupe de Danses ANI de la M.C.A.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ալֆորվիլի Ս. Պօղոս - Պետրոս Եկեղեցւոյ հոգաբարձութիւնը չնորհակալագրութեամբ առացած է հետեւեալ իւզագլինները Ծաղկազարդի առթիւ.- Տիկին Պետիկեան Մատլէն 500 Ֆ., Տէր եւ Տիկին Յակոբ Աղաճեան 400 Ֆ., Տէր եւ Տիկին Ազատ եւ Քլօտ Կէրնին, Այրի Տիկին Գալիքեան, Այրի Տիկին Շնորհիկ Յակոբեան, Տէր եւ Տիկին Տէր - Ներսէսեան, Այրի Տիկին Վարդուհի 200-ական Ֆ., Այրի Տիկին Աբշալոյա Գէորգեան, Տիկին Մուրատեան Ազատուհի, Տիկին Շահրի - եան, Տիկին Պաղտասարեան Պէաթրիս 100-ական Ֆ., Այրի Տիկին Աատուրեան, Այրի Տիկին Տարօեան, Տիկին Զապէլ Տէր - Խաչատուրեան, Այրի Տիկին Մարիամ Փաշաեան, Տէր եւ Տիկին Կարապետ Աբգարեան, Այրի Տիկին Քէչէճեան, Տէր եւ Տիկին Պէօրիքեան 50-ական Ֆ.:

ՀԱՅԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ «ԾԱՌԱՉ» ԹԻՒ 15
ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ
ՍՓԻՒՌՔԻ ՎԷՊԸ
հանիցս տպուած, միշտ՝ ապառաժ
ԳԻՆ՝ 70 ՖՐԱՆՔ
Թղթատարով 80 Ֆ
Դիմել՝ «ԾԱՌԱՉ»ի

«RADIO ASK»
MARDI, 4 MAI
Une Soirée Exceptionnelle
FM 100 Mhz.

LA JAF, L'UCFAF, LE COMITE CULTUREL DE LA SORBONNE
GRAND AMPHITHEATRE DE LA SORBONNE
47, Rue des Ecoles — 75005 Paris
DIMANCHE, 16 MAI, A 17 H.
CONCERT
En Hommage au Compositeur
AVÉDIS MESSOUMENTZ
Avec la participation de:
— L'Ensemble Instrumental de Romans — Dirigé par A. SIRANOSSIAN
— Groupe Instrumental «SAYAT NOVA» — Dirigé par J.-P. NERGARARIAN
— Chorale «ANI» — Dirigée par H. ADJEMIAN
— L'Ensemble de Danses «NAVASSART» — Le Trio Traditionnel Arménien
Anna Karakaya (Chant) — Elia et Arto Pehlivanian (Kanoun et Dahoul)
CHAKÉ BENGUIAN (Chant) - ANDRÉ OVIGNY (Violon) - SEBOUH APKARIAN (Chant)
Avec l'aimable participation de:
LYNE DOURIAN (Opéra de Paris) — ASTRIG DEDEYAN (Opéra de Bordeaux)
Pianiste: Kouyoumdjian Avo
PRIX DES PLACES: DE 25 A 100 F,
— Location: Centre UCFAF - JAF; Cité du Wauxhall, 75010 Paris - Tél.: 208. 76. 49
Université Sorbonne Nouvelle (Com. Cult.) 13, Rue Santeuil, 75005 Paris Tél. 570.12.90
Yan's Club; 5, Ave. Reille - 75014 Paris — Cité Universitaire; 57, Bd. Jourdan
75014 Paris, Tél.: 589. 55. 53 — Librairie Paloyan; 9, Rue de Trévise, 75009 Paris
Tél.: 523. 24. 97 — Dedeyan (Chaville) Tél.: 750. 46.93 — Davidian (Bagneux)
Tél. 665. 81.53 — Benlian (Issy-les-Moulineaux) — Café Philippe (Alfortville)
Pehlivanian (Sevran) Tél.: 384. 31. 28 — Djizmedjian (Bois-Colombes) Tél.: 781.09.72

Grande - Fête Familiale Dansante
DIMANCHE, 9 MAI
A partir de 15 h.
Organisée par
LA CROIX - BLEUE ARMENIENNE
Section Saint-Maurice de Beynost
Avec la participation de
L'ORCHESTRE «MELODIA - EREVAN»
Salle des Fêtes
de Saint-Maurice de Beynost
BUFFET ARMENIEN — BROCHETTE
Entrée libre
AMBIANCE ARMENIENNE

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ
ԷՍԱՅԵԱՆ – ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
տարեկան ընդհ. ժողովը կը գումարուի՝ Շաբաթ Մայիս 8, ժամը 15·30–ին՝ au Centre Culturel Alex Manoogian 118, Rue de Courcelles - 75017 Paris կը հրաւիրուին անոնք ու համակիր – ները:

×

ԿԱՊ. ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր անդամուհիները, Շաբաթ, Մայիս 8, ժամը 16-ին, Հայ Մշակոյթի Տունը, 17 rue Պլէօ:

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ՊԱՆԵԼՕ – ՔԱՇԱՆԻ
ՏԱՐԵՎԵՐՋԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԸ
կիրակի, Մայիս 9, ժամը 14·30–ին:
THEATRE MUNICIPAL DE BAGNEUX
Բարձր հովանաւորութեամբ՝
ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
եւ
Պ. ՀԱՆՐԻ ՌԱՎԵՐԱՑԻ
Պաղեէօ–ի Քաղաքապետ
Բացման խօսք՝ վարչութեան կողմէ
Պ. Մ. ՄԱՎԻԵԱՆԷ
Գեղարուեստական բաժինը կը վարէ ուսուցչուհի՝
ՏԻԿԻՆ Հ. ՊԱԼԸՃԵԱՆ
Արտասանութիւն, երգ, կատակերգութիւն՝ դպրոցի աշակերտութեան կողմէ:
Սիրայօժար մասնակցութեամբ՝ երգիչ Պ. ՄԿՐՏԻՉ ՖԷՐՄԱՆԻ
ձոխ պիւֆէ:
Հաճելի անակնկալներ:
Մուտք 20 ֆրանք:
Հաղորդակցութեան միջոցներ.- Փորթ ո'Օրլէանէն առնել 188 ա կամ 188 պի եւ իջնել Ռոն - Փուէն տէ Մարթիր:

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ
ԱՆԻԷՌ - ՊՈՒԱ - ԳՈԼՈՄՊԻ
եւ չրջանի մասնաճիւղին
ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹԸ
Մայիս 9, կիրակի ժամը 16–ին:
CENTRE ROBERT LA VERGNE
11, Rue Robert La Vergne — Asnières
4 Routes — Derrière Darty
ՏԻԿԻՆ ՄԱՐՕ ԱՏՈՒՐԵԱՆ կը խօսի եւ կը վարէ հանդէսը:
ՆՈՐԱՑԲ
կ'երգէ եւ կը նուագէ (նոր երգացանկով) կ'արտասանէ Օրիորդ՝
ՌՈՒԲԻՆԱ ԱԶԱՐԵԱՆ
կը ներկայացուի գունաւոր հայերէն ֆիլմ: Պատրաստուած՝
ՅԱԿՈԲ – ԳՐԻԳՈՐԻ կողմէ:
Պտոյտ՝ Փարիզ – Մոսկուա - Երեւան - եւ Նոր Կեսարիա - Կեսարացիներով:
Մուտքերու մասնակցութիւն՝ 20 Ֆ.:
Հաղորդակցութիւն.–
— Autobus 165 — Porte Champerret jusqu'au 4 Routes
Métro: Gabriel Péri, prendre l'Autoubus 140 et descendre à 4 Routes.

ԾԱԽՈՒՈՒ ՅԱՐԿԱԴՐՈՒԹԻՒՆ
ՍԱՐՍԷԼԻ ՄԷՋ
Զորս յարկանի չէնքի մը առաջին յարկը:
Ննջարանք, երեք սենեակ, խոհանոց, առանձին բաղնիք լոզարանով, արտաքնոց, տաք ջուր եւ կեդրոնական ջեռուցում: Նաեւ քաւ:
Այլ մանրամասնութիւններու եւ այցելութեան համար հեռաձայնել ամէն օր, ժամը 17–էն սկսեալ.–
280. 02. 58

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ
Նախաձեռնութեամբ՝
Շրջանային Վարչութեան եւ Փարիզեան Շրջանի բոլոր մասնաճիւղերուն
ՄԵԾ ՊԱՐԱՒԱՆԴԷՍ
HOTEL GEORGE V
Ի Նպաստ՝
ՊԼԻՖՈՆԹԷՆԻ ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆԻՆ
ՅՈՒՆԻՍԻ 12–ԻՆ

DÉBAT - INFORMATION

Sur
LE MOUVEMENT NATIONAL ARMENIEN POUR L'A.S.A.L.A.
JEUDI, 6 MAI, A 20°H.°30
84, Rue de Grenelle — 75007 Pari

ԽՆԴՈՅՔ – ՃԱՇ

NOVOTEL - BAGNOLET

Կազմակերպուած կապ. Խաչի Փարիզի մասնաճիւղին Նովոթէլի սրահներուն մէջ, Շաբաթ Մայիս 15, ժամը 20·00: Հայկ. ճոխ յայտագիրը: Սեղանները պահովել հեռաձայնելով. – 233 41 74 եւ 206 42 50 :

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԼՈՒՐՏ

ՅՈՒԼԻՍ 20 – 24

Կազմակերպութեամբ՝
Ֆրանսայի Հայ Կաթողիկէ Ժողովրդապետութիւններու Նախարարհ.-թեամբ՝
ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿ. ԿԱՊՐՈՑԵԱՆի
Ֆրանսայի Հայ Կաթողիկէ Առաջնորդ
Մասնակցութեամբ՝
Պուրճ Համմուտի Ս. ՓՐԿԻՉ երգչախումբի
Արձանագրութեանց համար դիմել.- ՓԱՐԻԶ.- Անտոն վրդ. Թիւթիւնճեանի: Հեռ.- 278 31 93
ԱՒՈՒՎԻԼ.– Աթանաս վրդ. Քէչճեանի: 985 15 56
ԼԻՈՆ, , ՎԻԷՆ.– Գէորգ վրդ. Զապարեանի: 47 28 65
ՍԷՆ ՇԱՄՈՆ.– Կոմիտաս վրդ. Զարգճեանի: 22 09 86
ՎԱԼԱՆՍ.– Գէորգ վրդ. Զանոյեանի: 43 78 23
ՄԱՐՍԷՅԼ.– Սարգիս վրդ. Դաւիթեանի: 48 19 60
Տեղերը սահմանափակ ըլլալով կը խնդրուի Մայիս 31-էն առաջ արձանագրուիլ:

ԿԱՐՄԻՐ ԽԱՉ ՄԱՆԿԱՆՑ ԲՈՅՆ

ՍԷՆԹ ՕՆՈՐԻՆ - ՏԷ - ՓԷՐԹ

Ծուլիս եւ Օգոստոսին կ'ընդունուին 6 - 13 տարեկան մանուկներ, առանձին կամ ընկերակցութեամբ իրենց ծնողքներուն:
Արձանագրութեան համար դիմել Հայ Կարմիր Խաչի գրասենեակը, երկուշաբթի օրերը, ժամը 17 - 19,
32, Rue de Trévise — 75009 Paris
եւ կամ ժամադրուիլ, հեռաձայնելով.-
985· 36· 53
Մանկանց Բոյնը բաց է ամբողջ տարին:

×

ԵՐԵՔ ՕՐ ՄԱՆՑԻ ԱՓԵՐՈՒԻՆ
ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ
ՄԱՆԿԱՆՑ ԲՈՅՆԻՆ ՄԷՋ
29, 30 եւ 31 Մայիս
Արձանագրուիլ, հեռաձայնելով.-
- ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 985· 36· 53
- ՍԱՂԱԹԷԼԵԱՆ 854· 35· 74
- ՕՀԱՆԵԱՆ 631· 81· 94

«ՅԱՌԱՉ»Ի ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆԸ

ՄԱՐՏԻ 10–ԷՆ Ի ՎԵՐ

Մահազդ	250 (294)
Հոգեհանգիստ	125 (147)
Շնորհակալիք	125 (147)
Հարսնիք, Նշանտուք	150 (176·40)
Ծնունդ	150 (176·40)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 17·6% թէ·վէ·Ա. (տե'ս փակագիծի մէջ ընդհ. գումարը):

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին վարչութեան:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ
5
MERCREDI
5 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ԱՐԱՐԱՏ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա: Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ: 180 Ֆ.
Արտասահման: Տար. 400 Ֆ. - Հատը: 2.50 Ֆ.

57ՐԴ ՏԱՐԻ — ԹԻԻ 15.163 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 57e ANNÉE — No 15.163

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ ՀԵՌԱԽՕՍ

ԵՐԵՒԱՆ (ԱՐՄԷՆՓԷՍ ԱՊՐԻԼ 20 – 27)

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԻՏԵՐՒԱԿԱՒԵՐԻ ՅՈՒՇԱՐՁԱՆԻՆ

Ապրիլ 24ի առաւօտէն սկսեալ Երեւանի եւ մօտակայ շրջաններու հազարաւոր բնակիչներ եւ Սփիւռքէն հիւրեր այցելած են եղեռնի զոհերու յիշատակի համալիրը եւ ծաղիկներ դրած Ծիծեռնակաբլուրի բարձունքին վեր խոյացող յուշարձանին: Այցելած են հիմնարկութիւններու, ձեռնարկութիւններու ներկայացուցիչներ, պիոներական եւ մշակոյթի մարզերու ծանօթ դէմքեր, ուսանողներ, աշակերտներ որոնք պահ մը կենալով բազին առջեւ, լուռթեամբ յարգած են նահատակներու յիշատակը: Ժամը 10-ին, յուշարձանին ծաղիկ դրած են Հայաստանի Համայնավար Կուսակցութեան կեդրոնական կոմիտէի Ա. քարտուղարը՝ կարէն Դեմիրճեան, նախագահ Բարկէն Սարկիսով, վարչապետ Ֆադէյ Սարգսեան, կուսակցական եւ պետական այլ դէմքեր:

×

ՅՈՑՆ ՇԱՐԺԱՐՈՒԵՍՏԱԳԷՏՆԵՐՈՒ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Քանի մը օրով Հայաստան այցելած է յոյն չարժարուեստագէտներու պատուիրակութիւն մը եւ հանդիպում ունեցած Հայաստանի չարժանկարի վարպետներու, բեմադիրներու, դերասաններու եւ երաժիշտներու հետ: Ցուցադրուած են յունական եւ հայկական ժապաւէններ: Հիւրերը այցելած են թանգարաններ եւ տեսարժան վայրեր, մօտէն ծանօթացած են «Հայֆիլմ» արուեստանոցի աշխատանքներուն:

×

ՁԱՐԵՆՑԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

Երեւանի Ալ. Մփանիկեան գրադարանին մէջ բացուած է ցուցահանդէս մը, նուիրուած եղիչէ Զարենցի, անոր ծննդեան 85-ամեակին առթիւ: Ցուցադրուած են գիրքեր, նկարներ եղիչէ Զարենցի կեանքին ու գործին նուիրուած աշխատութիւններ: Առանձին տեղ մը յատկացուած է Զարենցի առաջին գիրքին՝ «Երեք երգ տխրադալուկ աղջկան» խորագրով, լոյս տեսած 1914-ին Կարսի մէջ: Ներկայացուած են Երեւան, Մոսկուա, Թիֆլիս հրատարակուած պոէմներըը, բանաստեղծութիւնները, բալլադներըը: Ուշադրութեան արժանացած են 1923-ին Պոլիս տպագրուած «Պոէմներ», 1945-ին Պէյրութ լոյս տեսած «Դանթէական առասպել», 1946-ին Հալէպ հրատարակուած «Գիրք ճանապարհի», 1954-ին Պէյրութ տպագրուած «Ամբոխները խեղաթափուած» գիրքերը եւ այլն: Վերջին երեք տասնամեակներուն Զարենցի երկերը ունեցած են բազմաթիւ հրատարակութիւններ, որոնցմէ ամէնէն ամբողջականը Հայաստանի Ակադեմիայի լոյս ընծայած երկերու վեց հատորնոց հաւաքածոն է:

×

Գ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՆՈՒԷՐՆԵՐԸ ԵՐԵՒԱՆԻ Ալ. ՄԻԱՍՆԻԿԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ

Երեւանի Ալ. Մփանիկեան գրադարանը ստացած է Լոնտոն անգլերէն հրատարակուած 20 հատորնոց երաժշտական հանրագիտարանը եւ հայագիտութեան, Հայոց պատմութեան ու արուեստին վերաբերող այլ գիրքեր, զորս գրադարանին նուիրած է Գ. Կիւլպէնկեան հիմնարկութիւնը: Տարիներու ընթացքին հիմնարկութիւնը յիշեալ գրադարանին նուիրած է հազուագիւտ եւ թանկագին բազմաթիւ գիրքեր, ալպոմներ եւ այլն:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՄԻԹԵՐԱՆԻ ՃԱՌԸ

=———=———=

Կէռլի ճառը հաւանաբար այդ անունով ալ մնայ. Նախագահ Միթերանի քաղաքական թղթածրարին մէջ, քանի բոլորը համաձայն են անոր տալու համար «պատմական» բնոյթ:

Նախագահը կոչ մը ըրաւ ժողովուրդին միասնականութեան եւ չեչոտը դրաւ հակահարեկչական պայքարին վրայ, որ «անզիջող պիտի ըլլայ»:

Համակամութիւն, ապահովութիւն, ազգ. միութիւն այն դաղափարներն են, որոնք կը տիրապետեն Նախագահին ճառին մէջ.- «Ոչ ոք դուրս կը մնայ, ո՛չ մտքիս, ո՛չ գործիս մէջ, Ֆրանսայի ներկայէն, ոչ ոք դուրս կը մնայ Ֆրանսայի ապագայէն»: Միթերան տեսակ մը հաշուեկշիռ ալ կը ներկայացնէ իր նախագահութեան առաջին տարեդարձի նախօրեակին երբ կ'ըսէ.- «Նախ հարկ եղաւ ամէնէն ստիպողականով զբաղիլ, ժողովուրդին ամէնէն աղքատ խաւերուն գլուխը ջուրէն դուրս պահելու համար: Ատիկա կը նշանակէր զարկ տալ սպառումին: ... Համակամութիւն, կը նշանակէ նաեւ զեղչել գործազրկութիւնը, կառավարութեան առաջին հեռանկարը»: Ահաբեկչութեան մասին ալ վճռական է «այս ներածուած ապրանքը, հանրային իշխանութենէ կ'իյնայ հսկել անոր վրայ: Ես իսկ կը ստանձնեմ ահաբեկչութեան դէմ պայքարին ղեկը, անխնայ ձեւով հիմնական ազատութեանց յարգանքին մէջ»:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԺԱՆ - ԼՏԵՒՆ ՀԱԼԻԼԻ առեւանգուած (?) գրադէտը յանկարծ մէջտեղ ելաւ, երեքշաբթի առաւուան 2-ին չուրջ. երբ Փորթ Մայօ էր եւ կառք մը կը փորձէր կեցնել Քոնքորտ պանդոկին առջեւ: Անցորդ մըն է որ գինքը կ'առնէ ու տունը կը տանի եւ գրադէտը կը հեռաձայնէ նախ մամուլի Փր. գործակալութեան նախքան հարցաքննուիլը ոճրային ոստիկանութեան կողմէ երկու ժամ: Տակաւին ոչ ոք համոզուած է որ գրադէտը իսկապէս առեւանգուած ըլլայ «յեղափոխական Զոկատ»ներու կողմէ եւ շատ աւելի մեծ է թիւը անոնց, որոնք կը խորհին թէ կատակ մըն էր կամ ծանուցումի ձեւ մը, որ իբեն համար ալ ծուղակ մը եղաւ երբ մեծ համեմատութիւններ առաւ եւ չգիտցաւ ինչպէս դուրս ելլել...:

ՎԱՐՇԱԻԱՑԻ մէջ ծանր բախումներ տեղի ունեցած են երկուշաբթի օր, երբ հակառակ արգելքին տասնեակ հազարաւոր Լեհեր փողոց լքած ու ցոյց երած են ի պատասխան Սոլիտարութէսի կոչին: Քաղաքացիական կրակ բացած է եւ ծանր միջադէպեր պատահած են: Ցուցարարները կը պոռային «ապատ արձակեցէք Վալեզան, բանտարկեցէ՛ք Ժարուզելսքին»: Կը կարծուի որ բաւական ձերբակալութիւններ կատարուած են:

ԱԼԺԵՐԻՈՑ Արտաքին նախարարը՝ Պլեն Եաեա, որ Իրան կ'երթար պաշտօնական այցելութիւն մը կատարելու համար, մեռաւ, փոխադրող օդանաւին մէջ, որ ճգմուած է Թրքական սահմանին վրայ: Նախարարը օդանաւային արկածէ մը ազատած էր 1980–ին, երբ Մալի կ'երթը: Ըստ Իրանի արտաքին նախարարութեան, Ալժերացին դաւի մը զոհ գացած է, որովհետեւ հեռը փոստաթուղթեր ունէր ու կ'ամբաստանուի Իրաք:

ԼԸ ՄՈՆԴԻ նոր տնօրէնը ընտրուեցաւ առջի օր, յանձին Անտրէ Լօրէնտի, որ Օգոստոսին կրնայ յաջորդել Ժաք Ֆովէլի: Բայց այս ընտրութիւնը վերջնական բնոյթ կ'առնէ երբ իրենց քուէն տան նաեւ պաշտօնէութեան միւս ճիւղերը (այս քուէարկութիւնը կը վերաբերէր միայն խմբագիրներուն, բայց վճռական դեր ունի) եւ վերջապէս՝ անանուն ընկերութեան արտակարգ ընդհ. ժողովը: Լրկնածութիւնը, առաջին անգամ, առաջարկած էր եօթներու կոմիտէն (Պէօվ - Մեռի, Ժ. Ֆովէլ, Ֆ. Ժիւլիէն, Ժ. Սովաժօ, Ժ. Շվէօպէլ, Ժ. Մ. Տիւհոն եւ Ֆ. Սիմոն):

ԹՈՒՐՔ ԻՄԱՄ ՄԸ բռնուեր է առջի օր, Ֆրանքֆուրթերական սահմանագլուխը 510 հազար Ֆրանքով, զոր կը փորձէր իր երկիրը անցընել: Դրամը հանգանակութենէ մը գոյացած է, Ֆրանսայի արեւելքը աշխատող Թուրք բանուորներու մէջ եւ սահմանուած էր նպաստելու այն քաղաքական խմբակցութեանց, որոնք զօրավիգ են Պէլէնթ Էճեվիտի:

ՄԱԼՈՒԻՆԵՐՈՒ պատերազմը բաւական զոհեր պատճառած է եւ մասնաւորաբար ընկղմած արժանթինեան մարտանաւին

չէ ինքնին, որքան այն քաղաքավարութիւնը զոր ստիպուած ես ունենալ չատախօսին չատախօսութիւնը իր երեսին չզարնելու համար:

Ահաւասիկ ուրիչ մըն ալ նստած է դիմացդ ու չատ անկարեւոր բան մը կը պատմէ անվերջանալի նախադասութիւններով: Ամբողջ գործդ ձգած ես ու զինքը մտիկ կ'ընես: Այդ պահուն մէկ հարցում միայն կայ մտքիդ մէջ. ե՞րբ պիտի վերջացնէ ու պիտի երթայ: Ան չի վերջացներ: Միայն թէ հինգ վայրկեանը անդամ մը կը հարցնէ.

- Չեզ ժամավաճա՞ռ կ'ընեմ արդեօք:

Եւ դուն հինգ վայրկեանը անդամ մը կը ստիպուիս ժպտիլ.

- Ո՛չ, բնաւ, խնդրեմ, չարունակէ - ցէք:

Ան կը չարունակէ աչխարհի իր այդ ամէնէն անչահ խօսակցութիւնը: Կը խօսի, կը խօսի, յետոյ յանկարծ կը կենայ.

- Չեր գլո՞ւխը կը ցաւցնեմ արդեօք:

Ինչեր չէիր տար մեծաչուխդ «այո» մը ըսել կարենալու համար: Բայց կը ժըպտիս.

- Ո՛չ, ոչ, խնդրեմ, ընդհակառակն, կ'ըսես:

Եւ այս այսպէս երկար կը չարունակուի, մինչեւ որ խօսակիցդ յանկարծ ժամացոյցին կը նայի, տեղէն կը ցատքէ ու կ'ըսէ.

- Ներողութիւն, ես ժամանակ չունիմ, պէտք է մեկնիմ:

×

Ճար չկայ: Պիտի համակերպիս: Որովհետեւ չես կրնար հրապարակաւ գանգատիլ: Եթէ գանգատիս այդ անչրջահայեաց չատախօսներէն, գարձեալ դո՛ւն պիտի տուժես: Սրտակից ընկերներդ, քեզ մօտէն ճանչցող լաւ բարեկամներդ, որոնց հետ սիրով պիտի ուզէիր գլուխ գլխի մնալ քիչ մը, պիտի կարծեն որ խօսքը իրենց է, պիտի մերժեն դանդազիլ դիմացդ, պիտի վախնան քեզ ժամավաճառ ընելէ, հեռաձայնէն անդամ պիտի խօսին հազիւ քանի մը բառերով: Ի զուր պիտի առարկես թէ ժամանակդ յարմար է իրենց հետ քանի մը հաճելի խօսք փոխանակելու: Պիտի չհաւատան: Քաղաքավարութեանդ պիտի տան: Սըրտիդ մէջինը պիտի չտեսնեն:

Այո՛, ճար չկայ: Պիտի լռես: Պիտի համակերպիս: Մէկ աչքդ միշտ պիտի մնայ ժամացոյցին վրայ:

Ռ. Հ.

ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԻՆԳ ՄՆԱՑԱԾ...

=———=———=

Երբեմն ծանօթ մը, կամ անծանօթ մը, կը հեռաձայնէ.

- Չեզ տեսնել կ'ուզեմ, մինչեւ քանի՞ հոն էք:

- Մինչեւ չորս: Չորսին պէտք է մեկնիմ: Կարեւոր ժամադրութիւն մը ունիմ:

- Շատ լաւ: Պիտի դամ անպայման:

Կուգայ: Բայց քանիի՞ն: Ժամը չորսին հինգ մնացած: Դուռը կը բանայ, կը տեսնէ որ տակաւին հոն ես, չունչ մը կ'առնէ ու կը նստի դիմացդ: Վերջապէս: Մինչեւ քիչ առաջ դիտէր որ ժամը չորսին պիտի մեկնիս, հիմա կը մոռնայ այլեւս: Ու կը սկսի չաղակրատութեան: Կը սկսի իր խնդիրը յուզել ամենայն մանրամասնութեամբ եւ աւելորդաբանութիւններով: Ի զուր ժամացոյցիդ կը նայիս նախ գաղտնի, ու հետզհետէ չեչտուղ նայուածքներով: Ի զուր անհամբերութեան նշաններ ցոյց կուտաս, կարճ «այո» ու «ոչ»երով կը պատասխանես իր երկարաչունչ նախադասութիւններուն: Մարդը բան չի հասկնար, կամ չհասկնալ կը ձեւացնէ: Կարծես թէ իր խիղճը չատ հանգարտ է: Չէ՞ որ ըսիր թէ մինչեւ չորս, ժամանակ ունիս եւ չէ՞ որ ան ալ արդէն չորսէն առաջ եկաւ:

Ժամը չորսուկէսին, երբ արդէն դուն կէս ժամուան յապաղում մը արձանագրած ես, չես դիմանար ու ներողութիւն կը խնդրես, կը յիշեցնես որ ստիպուած ես մեկնիլ, վերջապէս քաղաքավար կերպով ճամբայ ցոյց կուտաս մարդուն: Ան քանի մը թանկագին վայրկեաններդ ալ կը գողնայ տասն անդամ չնորհակալու - թիւն յայտնելով ու պատճառած տաղտուկին համար ներողութիւն խնդրելով: Ելլելէ առաջ ժամացոյցին կը նայի ու կ'աւելցնէ, խիստ քաղաքավար.

- Բայց աճապարեցէք, ուշ մնացիք դուք:

×

Ամէնէն անհանդուրժելին այդ վերջին նախադասութիւնը չէ՞ արդեօք: Քեզի այնպէս կը թուի թէ այդ պահուն քթիդ կը խնդայ: Այո՛, չատախօսի մը կողմէ ձերբակալուիլը այնքան յուսահատական

մէջ, ուր 1000 նաւաստի կար: Ասոնց առնուազն կէսը կորսուած կը նկատուի: Փերուէն եաք, Սպանիա իր միջնորդութիւնը առաջարկած է, հաւատարիմ ըսպանական համակամութեան: Թաս դրծակալութիւնն ալ առաջին անդամ ըլլալով սպառնաց Մեծն - Բրիտանիոյ եւ Միացեալ - Նահանգներուն, որպէսզի վերջ տան իրենց «աչխարհակալ քաղաքականութեան»:

ԷՍՄՆԸ կրկին պիտի սղէ Մայիս 12ին, չուրջ 6 սանթիմ «գեր»ը:

ՔՍԱՆԹԻի մէջ չուրջ 200 ապարակապանի ըմբոստական չարժումը, ապատեւիականացման վճիռի մը դէմ, կրկին կը լարչ թուրքեւյոյն յարաբերութիւնները: Ա յս պիւղայիները որոնք ծագումով Թուրք են բայց յունական վարչակարգի տակ կ'ապրին, սկսած են իրենց դաչտերը հերկել հակառակ այդ ապատեւիականացման եւ Ցոյներն ալ կը մեղադրեն Թուրքերը որ զրգռութիւններ կ'ընեն, օգտագործելով մահմետական փոքրամասնութիւնը ապօրինի նպատակներու համար: Թուրքերն ալ կը մեղադրեն Ցոյները որ կը հալածեն մահմետական փոքրամասնութիւնը եւ կը բռնաբարեն 1923ի Լօզանի դաչնագիրը (որ, ինչպէս ծանօթ է, Թուրքերը «բծախնդրօրէն» կը յարգեն Թուրքիոյ մէջ...):

ՆԻՒԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ»
ԹՐՔԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

Դ.

Պատերազմի մը միջոցին, ոչ միայն թշնամիներու հետ համագործակցութիւն կատարողները, այլ նաեւ այսպիսի արարքի մը կասկածի գոյութիւնն իսկ բնական կը նկատուի զանազան նախայիջոցներ ձեռք առնելու համար: Նոյն բանը կատարած են նաեւ Դաշնակից Պետութիւնները: Բայց, անշուշտ թէ Օս – մանցիներու այս կարգադրութիւնը Դաշնակից պետութիւններու շահերուն դէմ էր: Ուստի այս պատճառով է որ նախ անոնց կողմէ իբրեւ քարոզչութեան նիւթ չհաղորդուեցաւ այդ պարագան:

Օսմանեան կայսրութիւնը իր չատ տկար մէկ պահուն համաշխարհային պատերազմի մը մտած էր: Լինելութեան պայքար մըն էր իր տուածը: Մինչ իր բանակներուն եռեւ տասնեակ հազարաւոր մարդիկ կ'ըմբոստանային, թալան, յարձակում, վիրաւորումներ, սպանութիւններ իրարու կը յաջորդէին: Այս պայմաններուն մէջ այդ պետութեան ապրումը կամ ոչնչացումը խնդրոյ առարկայ կը դառնայ: Այն տեղն բնական է կառավարութիւնը կը պարտաւորուի իր ամբողջ կարելիութիւնները գործածել եւ վարիչները տախսուած կ'ըլլան ամէն միջոց ձեռք առնել, ըմբոստութիւնները կանխելու եւ պետութեան պաշտպանութիւնը ապահովելու համար: Պատմութեան բոլոր շրջաններուն մէջ, այս պայմաններու մէջ գտնուող ոչ մէկ կառավարութիւն կարելի չէ խորհիլ որ տարբեր ձեւով չարժած ըլլայ: Աւոր ամենաթարմ օրինակը ութ – ւած են Ամերիկայի Միացեալ - Նահանգները, որ Բ. Համաշխարհային պատերազմի ընթացքին, իր խաղաղական ափեբուն վրայ ապրող, ճափոնական ծագումով իր հայրենակիցները, չատ աւելի անկարեւոր պատճառներով արգելափակած են: Ռուսիա նոյնպէս Երիմի մէջ ապրող բոլոր Թուրքերը Սիպիր քշած է:

Կարգ մը հայ պատմագիրներ իրենց արտայայտութիւններուն մէջ կը չեշտեն, որ Հայեր երբեք չեն ըմբոստացած պետութեան դէմ, այլ աքսորի որոշումէն վերջն է որ զինեալ դիմադրութեան ակըսած են: Մինչդեռ Օսմանեան Պետութիւնը 1914-ին պատերազմի մտած է եւ աքսորի օրէնքը 1915-ի Մայիսին հրատարակուած է:

Լաւագոյն փաստը, զոր կարելի է ցոյց տալ Հայերու աքսորի օրէնքէն առաջ Թուրքերու դէմ չարժած ըլլալու մասին, Հայկական Ազգային Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպարի Նոյեմբեր 30, 1918 թուականին Փարիսայի Արտաքին Գործոց Նախարարին ու նաեւ միւս պետութիւններու նախարարներուն կատարած դիմումն է, ուր կ'ըսէ.

«Ինչպէս ձեզի ալ ծանօթ է Հայերը առաջին օրէն ի վեր մասնակից եղած են այս պատերազմին:

Բոլոր ճակատներու վրայ, անոնք դաշնակից պետութիւններու կողքին պայքարած են: Պատերազմի առաջին օրերէն ի վեր Փրանսական Լեգէոններու մէջ ծառայող հայ զինուորները յաղթանակներ արձանագրած են:

Ինչպէս որ կը վկայեն նաեւ Փրանսացի հրամանատարները, զօրավար Ալէնպիի յաղթանակին մէջ Հայերը կարեւոր բաժին ունեցած են: Նոյնպէս բացի Կովկասի ռուսական բանակին մէջ գտնուող 150·000 հայ զինուորներէ, Անդրանիկ եւ Նազարպէկովի հրամանին տակ 40·000 հայ կամաւորներ մասնակցած են հայկական նահանգներու ազատագրման պայքարին եւ համայնավար կարգերու հաստատումէն մինչեւ Զինադադարի ստորագրութեան օրերը անոնք թուրք բանակին դէմ իրենց պայքարը չարունակած են:

Ուրեմն հիմա, եթէ կը փափաքիք, հայ ահաբեկչական կազմակերպութիւններու երկրորդ պնդումը անգամ մը եւս ձեռք առնենք: Անոնց համաձայն, իբրեւ թէ 1915-ին Թուրքերը մէկուկէս միլիոն Հայեր ոչնչացնելով ցեղասպանութիւն մը կատարած են: Նախ այս թուանշանը պէտք է յստակել: Երբ այդ թուականներուն հրատարակուած վիճակագրութիւնները աչքէ անցընենք, կը տեսնենք որ Օսմանեան պետութեան սահմաններուն մէջ ապրող ամբողջ Հայերու թիւը՝ ըստ Թօքսլիի 1900 թուականին հրատարակուած մէկ գործին 1·300·000, Քօնթասօնի 1913ին հրատարակուած աշխատութեան համաձայն 1·360·000, Ֆրանսիս տը Փրէսանսէի «Ըզվիւ տէ տէօ Մօնտ» հանդէսին մէջ հրատարակուած մէկ գրութեան համաձայն 1·200·000, Վիթալ Կինէի յօդուածներուն համաձայն ալ, որոնք չատ մը եւրոպական վիճակագրութիւններու աղբիւր կը նկատուի, կը տեսնենք որ այդ թիւը 1·400·000 է:

Այսինքն, Օսմանցիները եթէ իրապէս ուզած ըլլային բոլոր Հայերը սպաննել, նորէն կարելի չէր մէկ ու կէս միլիոն Հայու մեռած ըլլալու պարագայ մը, քանի որ այդ շրջանին ամբողջ երկրին մէջ ապրող Հայերու թիւը մէկ ու կէս միլիոնէն աւելի քիչ է: Անշուշտ այսօր մէկ մէկ հայկական կազմակերպութիւն կրնայ պնդել որ Օսմանցիները մինչեւ վերջին Հայը սպաննած ըլլան այս երկրին մէջ:

Ցեղասպանութիւնը, մարդկային հաւաքականութեան մը նպատակաւոր ձեւով ամբողջութեամբ սպաննուած ըլլալու յանցանքն է: Սակայն մինչեւ հոս մեր պատմածներէն ալ յայտնի կ'ըլլայ որ Օսմանեան պետութիւնը երբեք նման որոշում մը տուած չէ եւ այսպիսի կիրարկումի մը չէ ձեռնարկած:

Մեռնող Հայերը կամ պետութեան դէմ պինեալ ըմբոստացողները եւ կամ Ցարական Ռուսիոյ բանակներուն միացող կամաւորներն են:

Իսկ աքսորի ընթացքին ալ, աննպաստ օդը, ժանտատենդը, փոխադրամիջոցներու անբաւարարութիւնը, պարենաւորման կամ զգեստաւորումի պակասը, հայ գաղթականները թալանելու համար հրոսակներու կատարած յարձակումները պատճառ եղած են որ մաս մը ուրիշ Հայեր ալ իրենց կեանքը կորսնցնեն:

Սակայն այդ միջոցին, Արեւելեան Անատոլուի մէջ հայ հրոսախումբերու եւ կամաւոր խումբերու իսլամ ժողովուրդին դէմ ի գործ դրած ահաբեկումները, վիրաւորուող եւ մեռնող իսլամ ժողովուրդին ալ կացութիւնը պէտք չէ անտեսել: Այս մարդոց ալ, առանձին առանձին, կամ հաւաքաբար քաշած տանջանքները անպայման Հայերուն քաշածներէն աւելի քիչ չէ եղած:

Այս աքսորի միջոցին, հակառակ կառավարութեան խիստ պատուէրներուն, կարգ մը ապօրինի ընթացքներ ալ տեղի ունեցած են: Բայց ասոնց պատասխանատուութիւնը ճիշդ չըլլար Օսմանեան կառավարութեան վրայ բեռցնել, քանի որ այսպիսի ընթացքի մէջ գտնուողներու դէմ անհրաժեշտ օրինական յետապնդումները կատարուած եւ անոնց արժանի պատիժները տրուած են:

Կարճ խօսքով, որեւէ ձեւով կատարուած հայկական ցեղասպանութիւն մը խնդրոյ առարկայ չէ եղած, այլ պատերազմի ու անոր ստեղծած պայմաններու բերմամբ, Թուրքերու եւ Հայերու միջեւ փոխադարձ իրար մեռցուցած ըլլալու կացութիւն մը գոյութիւն ունեցած է:

Փրանսացի հոգեւորական Թուչէ, 1916ի Փետրուարին, իր մէկ բանախօսութեան ընթացքին կ'ըսէ.

«1915-ի սկիզբներուն կ'ենթադրուեր որ 500·000 Հայեր մեռցուած են: Այս թուանշանը մենք չափազանցուած կը գտնենք: Սակայն այս դէպքերը հայ յեղափոխականներու իսլամ ժողովուրդը մեռցնելու ձեռնարկներէն յետոյ սկսած է: Հայերու բնակարաններուն մէջ գտնուած ռուսական զէնքերն ու ռումբերը բացայայտորէն ցոյց կուտան կացութիւնը: Հայերը երբ Ռուսերու հետ համագործակցել սկսած են, պէտք է դիտնայինք թէ ինչպիսի հետեւանք մը պիտի ունենար իրենց այդ արարքը:

Իսկ Փրանսացի ծանօթ պատմաբան Ալպէր Սօրել ալ իր կարգին դէպքը հետեւեալ խօսքերով կը բացատրէ.

Թուրքիա այս կացութեան մէջ եւ վերանալին առջեւ, ըրած է այն ինչ, որ բոլոր ժողովուրդները պիտի ընէին ու անվրդովելի տարրերը հեռացուցած է պատերազմական շրջաններէն: Բայց որոշ է, որ փոխադրական միջոցներու անբաւարարութեան, արդիական պայմաններու պակասին պատճառաւ ահռելի վախճան մը ունեցած է աքսորը եւ Ցարական Ռուսիոյ հովանաւորութեան տակ Հայաստանի մը կազմութեան՝ անխելք ցնորքի մը հետեւանքով անմեղ մարդիկ անմառանալի ցաւեր քաշած են:

Ցետոյ, չատ մը Օսմանեան նահանգներու մէջ, ուր Հայերը ապահովութիւնը խանգարող որեւէ ընթացքի մէջ չէին գտնուած, այդ շրջաններուն մէջ անոնց մասին որեւէ միջոց ձեռք առնել պէտք չէ տեսնուած: Օրինակի համար Պոլսոյ մէջ բնակող 77·735 Հայերէն, միայն 2345 հոգի ձերբակալուած են, որոնք յեղափոխական չարժումներու մասնակցած ըլլալով ամբաստանուածներ էին, միւսները իրենց առօրեան բնականոն ձեւով չարունակած եւ իրենց գործերը չարունակած են խաղաղ մթնոլորտի մէջ:

Ուստի այս պարագան ցոյց կուտայ, որ ձեռք առնուած բոլոր միջոցները ստեղծուած կացութիւններու պարտադրած հետեւանքներն էին եւ անոնք չեն կիրարկուած բոլոր Հայերուն համար:

Աքսորի օրէնքին յայտարարութենէն ետք, Յուլիս 10, 1915 թուականին, Օսմանեան Պետութեան Ներքին Գործոց Նախարարութիւնը, 34 յօդուածներէ բաղկացած կանոնագիր մը հրատարակելով, ճշդած է, պատերազմական վիճակի առակարգ պայմաններուն պատճառաւ տեղահանուած Հայերու պատսպարումը, պարենաւորումը եւ անոնց ինչքերուն, կալուածներուն եւ հողերուն համար անհրաժեշտ ձեւակերպութիւնները:

Ներքին գործոց Նախարարութեան այս կանոնագրութիւնը անգամ մը եւս կը յայտնէ, թէ որքա՜ն մարդկային վերաբերում ցոյց տրուած է տեղահանուած Հայերուն եւ անոնց ինչքերուն եւ կեանքի ապահովութեան համար ինչպիսի միջոցներ ձեռք առնուած են:

Կրկին, Ներքին Գործոց Նախարարութեան Օգոստոս 18, 1915 թուակիր եւ 302 համար մէկ հրամանագրին մէջ ալ ճշդուած էր որ ուրիշ վայրեր փոխադրուող գաղթական Հայերը, կրնային միասին տանիլ իրենց դրամներն ու չարժուն հարստութիւնները եւ ոչ մէկը իրաւունք ունէր արգելք ըլլալ ասոր:

4րդ բանակի հրամանատարը, Մարտ 28 1916 թուականին զօրախումբերուն ղրկուած իր հրահանգով կը ճշդէր, որ գաղթական Հայերու կառքերն ու կենդանիները կարելի է գնել, բայց անոնք պէտք չէ վնաս կրեն: Ուստի կը կազմուի «Առուծախի Յանձնախումբեր», որոնք կ'որոշեն այդ ապրանքներու իրական արժէքները եւ ըստ այնմ պէտք է վճարել փոխարժէքները:

4-րդ բանակի հրամանատարութիւնը դարձեալ, ներքին խառնակութիւններու ընթացքին, նոյնիսկ զինուորներուն օժանդակելու համար ալ ըլլայ, կ'արգիլէր ժողովուրդին դէպքերու միջամտութիւնը եւ հրամանագրով մը կը յայտնէր, որ մահուան պիտի դատապարտուէին բոլոր անոնք, որոնք Հայերուն որեւէ վնաս կը հասցնեն:

Ներքին Գործոց Նախարարութեան կողմէ, աքսորի վերաբերեալ Դեկտեմբեր 17, 1916 թուականով վարչապետութեան ներկայացուցած զրութեան բովանդակութիւնն ալ հետեւեալն է.

«Մինչեւ 1916 Հոկտեմբերի վերջը 702·900 Հայեր տեղափոխուած են, որոնց բոլորին պատսպարան եւ անունդ հայ թայֆած է եւ հիւանդ եղողներն ալ դարմանուած: Էրզրումի արեւելեան շրջաններէն ու Տրապիզոնի ծովեզերքներէն եկող գաղթականները ծովու եւ ցամաքի ճամբով հասած են Օրտուի արեւմտեան շրջանները եւ Գասթամոնու: Էրզրումի Արեւմտեան եւ հարաւային շրջաններէն ե ւ Տրապիզոնի հարաւային կողմերէն եկողներն ալ Սվազի եւ Թօքատի ճամբով Անգարա, Սվազ, Կեսարիա ճամբով եկողներն ալ Կեսարիա եւ Նիղտէ, Էրզրումի արեւելեան եւ հարաւ արեւելեան շրջաններէն եկողները Քեմահի ճամբով Էլազըղ, Մալաթիա եւ Մարաշ, Վան եւ Պիթլիսէն եկողները Տիարպաքըրի ճամբով, Տիարպաքըր, Ուրֆա, Այնթապ ու մասամբ ալ Ատանա ղրկուած են:

Այս գաղթականական աշխատանքներուն համար 1915-ին ծախսուած գումարն է 25 միլիոն, մինչեւ Հոկտեմբեր 16-ի վերջ, 80 միլիոն ղրուշ եղած է: Այս փաստաթուղթի բովանդակութիւնն ալ կը յայտնէ որ պատերազմի ընթացքին, Օսմանեան պետութիւնը իր ունեցած հազար տեսակ դժուարութիւններուն մէջ իսկ, իր պահանջներէն խնայած ղրամներուն մէկ մասը յատկացուցած է այդ գաղթականներու կարիքին:

Իսկ աւելին այս տեղահանութեան միջոցին ամերիկեան բազմաթիւ բարեսիրական հաստատութիւններ Հայերուն տուած օժանդակութիւն կատարած են: Ուրեմն խորհեցէք պետութիւն մը, որ որոշած ըլլայ խումբ մը մարդոց ամբողջական ոչնչացումը եւ այդ միջոցին թոյլ տայ Ամերիկեան Օժանդակ Մարմիններու ներկայացուցիչներուն որ գտնուին այդ դէպքերու վայրը:

Դիւրին գործ չէ այսքան անարամաբար նախապնդում մը տեսնել:

(Շար. ՟)

ՄԱՐՍԷՅԼԻ Հ. Մ. Ը. Մ. – ԱՐԾԻԼԸ ՓՈԽ - ԱԽՈՅԵԱՆ

Կիրակի, Ապրիլ 25-ին վերջ գտաւ 1981 - 1982 Փուլթպոլի եղանակը Տիսքրիք ազգային Փրովանսի Փրոմոթիոն տ'Օնէօր Ա. Ազգային մարզադաշտին: Հ. Մ. Ը. Մ. Արծիւ մարզական համաձայնութեան ասպ խումբը իր դաշտին վրայ կ'ընդունէր դասաւորման առաջինը՝ Ժի. Էս. Մոնթբրսոն: Ցաղթանակ մը երկու կէտ տարբերութեամբ եւ ախոյենութեան տիտղոսը կ'ինքնաշխատ հայկական գոյներով: Ափսոս, մեր ազգը ստիպուած եղան գոհանալ հաւասար խաղով մը (0 - 0) եւ դրաւել ընդհանուր դասաւորման երկրորդ տեղը միայն: Ճակատագրական, բոլոր պայմանները, լրացուած էին, Ապրիլ 25-ը ընելու համար տօնական խմբութեան օր: Գեղեցիկ եւ պայծառ օր մը, հազարէ աւելի երկրպագուներ, նեղ տեղախտում: Եթէ երկու անհրաժեշտ կէտերը չկրցան արձանագրել, դրեթէ ամբողջ խաղը տիրապետելէ յետոյ, պատճառը պարզապէս իրենց ձախաւեր նշանառութիւններն են. երկու անպատմ գնդակը զարկին ձողին եւ մէկէ աւելի անգամներ անկարող եղան հեշտ գնդակները կնիքի վերածել: Այս արդիւնքը ապէտ մը անշուշտ, քանի դրաւելով ընդհանուր դասաւորման երկրորդ տեղը, իրաւունքը կու հասի յաջորդ եղանակին մրցելու մէկ դասակարգ աւելի բարձր, այսինքն՝ Տիվիզիոն տ'Օնէօր Ռեժիոնալ, բայց և այնպէս տօնախմբութիւնը պիտի ըլլար լրիւ եթէ Հ. Մ. Ը. Մ. Արծիւը յաղթէր:

Հ. Մ. Ը. Մ. Արծիւը այս շրջանին ունեցաւ 22 խաղ, որոնց 11-ը յաղթեց, 3ը կորսնցուց եւ արձանագրեց 8 հաւասար խաղ: Բոլոր մրցումներուն նշանակեց 31 կէտ եւ ստացաւ 29 կէտ: Կէտ արձանագրողներուն մէջ առաջին կարգին կը գտնուի Ֆիլիփ Ղազարեան 11 կէտով: Նախ Ֆրանսայի բաժակի մրցաշարքին մէկ Հ. Մ. Ը. Մ. Արծիւը հասաւ մինչեւ վերջին շրջանը, պարտուելով Ամժաքսիոյ դէմ (Ազգ. Ախոյենութեան 2-րդ Տիվիզիոնի ակումբ): Իսկ Փրովանսի բաժակի մրցաշարքին մէջ ուժերորդ աստիճանին միայն պարտուեցաւ:

Եղանակի ընթացքին այս բոլոր մրցումներուն մասնակցեցան 22 խաղացող. Բերդպահներ՝ Պօղոսեան, Թումիքեան, Մաթիջուլեան եւ Ժիւլիէն: Պաշտպաններ՝ Սիզնալ, Տէօքմէճեան, Փորթալէս, Տէր Մեսրոպեան, Լօրան Փափազեան, Կրուսան, Կիւրկէկեան, Ժիլպէռ Փափազեան: Կիսապաշտպաններ՝ Կէօնճեան, Կամպոլեան, Էշահանեան, Թոնտա: Յարձակպներ՝ Նազարէթեան, Ղազարեան, Տամլամայեան, Թէրզիպաշեան, Թիւրքինեան եւ Տէր Աբրահեան:

Արդարեւ, համեմատաբար օրինակելի եղանակ մը որ կուգայ պահելու այս վերջին տարիներուն կատարուած չանքերը խումբը առողջ դիծերու վրայ դնելու եւ կիրարկելու դէպի երիտասարդութիւն քաղաքականութիւնը: Այս աշխատանքը եւ քաղաքականութիւնը մարմին առած Աչոտ Վարդանեանի նախագահութեան շրջանին ու այսօր իր երիտասարդ յաջորդը՝ Արման Պատէեան կը շարունակէ յաջողութեամբ: Անշուշտ, այս յաջողութեամբ գնահատելի արդիւնքներուն մէջ, մեծ բաժին ունի խումբին մարզիչը՝ Յովսէփեան որ բերաւ իր ձեռնհասութիւնը, փորձառութիւնը, ըմբռնիմը իր ճիգերն ու զոհողութիւնները, ինչպէս նաեւ Տնօրէն Մարմնին, տուին պատուած արդիւնքները:

Կը շնորհաւորենք մարզիկները, մարզիչը եւ տնօրէն մարմինը:

ԿԱՐՕ ՑՈՎՍԷՓԵԱՆ

ՅԱՍՎԱԾ ԿՈՏՎԱԾՈ

ՆՈՎԵԼԱՅԻ ՎԵՊ

ԱՆՈՒՇ ՅԱՐՈՒԹՅՈՒՆԻ

Նոյեմբերի 18-ի առաւօտեան ե. ր. ու. ուժերու մարտկոցները Հ. Ի. Ը. Ա. Ս. Ի. ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆ ԱՌԹԻՒ ՄԸ ՀՂԱՑՆԷՆ ԱՆՈՒՇ ՅԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՀԱՆԱՅԻՆ ՏՈՒՆԸ ԵՒ ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ ՀԱՅՐԱՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆԴԷՍ ՄԸ ՆՇԱՆԱԿԷՆ ՆԱԵՒ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՄԵԾ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ ՀԱՅՐԱՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆԴԷՍ ՄԸ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ ՀԱՅՐԱՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՆԴԷՍ ՄԸ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

Նոյեմբեր 18-ի առաւօտեան Հ. Ի. Ը. Ա. Ս. Ի. ՆԱԽԱԳԱՀ ՊԱՐՈՆ ՎԱՀԱՆ ՏԷՐ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆ ԱՌԹԻՒ ՄԸ ՀՂԱՑՆԷՆ ԱՆՈՒՇ ՅԱՐՈՒԹՅԱՆ ՎԱՀԱՆԱՅԻՆ ՏՈՒՆԸ ԵՒ

ՇԱԽԻԼԻ ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Մասնակցութեամբ

ՅԱՂԹԱՆԱԿ նուագախումբի

Հայկական ճաշեր :

Շաբաթ Մայիս 15ին ժամը 20·30-էն սկսեալ, Շաւիլի Սալ տէ Ֆէթը, Սթալինկրատ փողոց :

ԽՆԱՋՈՑՔ - ՃԱՇ

NOVOTEL - BAGNOLET

Կազմակերպուած Կապ. Խաչի Փարիզի մասնաճիւղին Նովոթէլի սրահներուն մէջ, Շաբաթ Մայիս 15, ժամը 20·00 : Հայկ. ճոխ յայտագիր : Սեղանները ապահովել հեռաձայնելով. — 233 41 74 եւ 206 42 50 :

ՄԱՐՍԷՅԼԻ
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆ

12 - 14 Rue St. Bazile, Marseille 1er

ԲԱՑՄԱՆ 6–ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՒԹԻԻ

ՄԵԾ ՃԱՇ

Կիրակի, Մայիս 9-ին, ժամը 13ին,

Տարօն եւ Վասպուրական սրահ :

Հայկական մթնոլորտ - գեղարուեստական բաժին - :

Մասնակցութեամբ՝

- Նարեկացի նուագախումբին :

– Մշակութային Տան «Անի» պարախումբին :

Ճաշագին 80 Ֆ· :

Նախընտրելի է նախապէս սեղանները ապահովել : Հեռաձայնելով՝ Հ· Շալճեան 66 18 80 եւ Զ· Միլոռնեան 90 90 10 :

MAISON DE LA CULTURE
ARMENIENNE DE MARSEILLE

Grand Repas d'Anniversaire

DIMANCHE, 9 MAI, A 13 H.

Orchestre: NAREGATSI

Troupe de Danses ANI de la M.C.A.

ՀԱՑ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ
ԱՆԻԷՌ - ՊՈՒԱ - ԳՈԼՈՄՊԻ
եւ շրջանի մասնաճիւղին

ՏԱՐԵԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹԸ

Մայիս 9, Կիրակի ժամը 16–ին :

CENTRE ROBERT LA VERGNE

11, Rue Robert La Vergne — Asnières

4 Routes — Derrière Darty

Տիկին ՄԱՐՕ ԱՏՈՒՐԵԱՆ կը խօսի եւ կը վարէ հանդէսը :

ՆՈՐԱԳԻՐ

Կ'երգէ եւ կը նուագէ (նոր երգացանկով) Կ'արտասանէ Օրիորդ՝

ՌՈՒԲԻՆԱ ԱԶԱՐԵԱՆ

Կը ներկայացուի գունաւոր հայերէն ֆիլմ : Պատրաստուած՝

ՅԱԿՈԲ – ԳՐԻԳՈՐԻ կողմէ :

Պատմ՝ Փարիզ – Մոսկուա - Երեւան - եւ Նոր Կեսարիա - Կեսարացիներով :

Մասնակցութիւն՝ 20 Ֆ· :

Հաղորդակցութիւն՝

— Autobus 165 — Porte Champerret jusqu'au 4 Routes

Métro: Gabriel Péri, prendre l'Autobus 140 et descendre à 4 Routes.

ԿԱՊՈՑ ԽԱՉ

Նախաձեռնութեամբ՝
Շրջանային Վարչութեան
եւ Փարիզեան Շրջանի
բոլոր մասնաճիւղերուն

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

HOTEL GEORGE V

Ի Նպաստ՝
ՊԷԼՖՈՆԹԷՆԻ ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ
ԿԱՑԱՆԻՆ

ՅՈՒՆԻՍ 12–ԻՆ

LA F. R. A., NOR - SEROUND
et LE COMITE DE SOUTIEN A HAMPARTSOUM SASSOUNIAN
APPELLENT LES ARMENIENS A UNE

GRANDE MANIFESTATION

LE MERCREDI, 5 MAI, A 18 H. 30

Heure d'ouverture du procès de SASSOUNIAN à Los Angeles.

Le rassemblement aura lieu à 18 H. 30 Place St. Augustin (Métro: St. Augustin)
et le cortège se dirigera vers l'Ambassade des Etats - Unis (Place de la Concorde)

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ· ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղը ընդհ· ժողովի կը հրաւիրէ բոլոր անդամուհիները, Շաբաթ, Մայիս 8, ժամը 16-ին, Հայ Մշակոյթի Տունը, 17 ռիւ Պլէօ :

DÉBAT - INFORMATION

Sur

LE MOUVEMENT NATIONAL ARMENIEN
POUR L'A.S.A.L.A.

JEUDI, 6 MAI, A 20'H.'30

84, Rue de Grenelle — 75007 Pari

EN SOUSCRIPTION

Հայոց Պատմութիւն

Histoire des Arméniens

Sous la direction de GERARD DEDEYAN

Maître - Assistant à l'Université Paul - Valéry de Montpellier

Un volume, 700 pages, au format 180 x 230 mm.

Imprimé sur vélin et comportant 32 planches d'illustrations en hors-texte, relié toile.

PRIX DE SOUSCRIPTION JUSQU'AU 24 MAI

169 F. au lieu de 197 F. à Parution

Toute souscription donne droit à une magnifique reproduction rehaussée de couleur d'une carte du XVIII[e] siècle de l'Arménie et de la Géorgie publiée en 1766, par les géographes du Roy.

Bulletin de Souscription

NOM: .....

ADRESSE: .....

Code Postal: .....

A RETOURNER

Accompagné d'un chèque de 169 F. + 30 F. (frais d'envoi)

à LA LIBRAIRIE ORIENTALE — H. SAMUELIAN

51, Rue Monsieur - le - Prince — 75006 Paris — Tél.: 326. 88. 65

TRANSTOURS

ORGANISE PLUSIEURS VOYAGES POUR L'ANNEE 1982

Spécial ARMENIE

Une semaine en avion à Erevan
et une semaine en CROISIÈRE à bord du TARASS CHEVTCHENCO

du 29 Juillet au 14 Août (*aller avion, retour bateau*).

du 14 au 31 Août (*bateau-avion*)

Prix, tous compris : Cabine 4 personnes : 4770 F., 2 personnes : 5600 F.

ԵՒ ԱՊԱՀՈՎԵՑԷՔ ԶԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ ԱՃԻ 6 ԽՈՒՄԲԵՐՈՒՆ :
ԵՐԹ ՈՒ ԴԱՐՁ ՕԴԱՆԱՒՈՎ

ԱՐՄԵՆԻԱ Հիւրանոց, Ա· կարգի սպասարկութիւն :

Ցուլիս 10 - 28 Լենինկրատ (4 օր), Մոսկուա եւ Երեւան (9 օր) :

Օգոստոս 7 - 21 Քիեվ – Երեւան :

Սեպտեմբեր 4 – 18 Քիեվ – Երեւան :

Հոկտեմբեր 4 - 19 Մոսկուա – Երեւան :

Դեկտեմբեր 20-էն Յունուար 4՝ Մոսկուա – Երեւան :

Մեկնում ՄԱՐՍԷՅԼԷՆ (երթ-ուդարձ օդանաւով)

Օգոստոս 7-էն 20, Մոսկուա, Երեւան - Սեպտեմբեր 4-էն 17, Մոսկուա, Երեւան :

Արձանագրութեանց համար՝ Կ· ՈՒՆՃԵԱՆ

TRANSTOURS 25, rue d'Argenteuil, 75001 Paris tél. 261. 58. 28

ուր կարելի է ներկայանալ ամէն օր, կէսօրէ ետք ժամը 15–էն 18 :

ՄԱՐՍԷՅԼ՝ Դիմել Զ· ԱԼԻՔՍԱՆԵԱՆԻ՝
11, rue du Bassin, SAINT-JULIEN tél. 93. 04. 90 - (42) 83. 31. 55

ՎԱԼԱՆՍ՝ Ն· ԳԱՍՊԱՐԵԱՆԻ՝
9, rue Sully

ԼԻՈՆ՝ ՇԷՄԻՏԻԴԵԱՆԻ՝
16, Rue Chardonnet, 69120 VAULX en VELIN, tél. 868. 53. 05

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

THEATRE DE L'EMPIRE
41, Avenue de Wagram — 75008 Paris

LE CHANTEUR

NORAIR

en Première partie

L'Opéra — Film

«ANOUSH» (1954)

29 Mai — à 20 h. 30

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապ· Խաչի Կրքնոպլի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է Պ· Մահակ Քիւրաճեանէ 200 Ֆ· իր մօր Խնկուհի Քիւրաճեանի մահուան 4-րդ տարելիցին առթիւ, Այրի Տիկին Թօրոսեանէ 50 Ֆ·, Տէր եւ Տիկին Մարտիրոսեան 50 Ֆ· :

Centre Culturel
Nourhan Fringhian

6, AVE. BOURGAIN, ISSY-LES-MOULINEAUX

Իսկի Ֆրէնկեան Մշակութային կեդրոնին վարչութիւնը յայտնում կը ներկայացնէ հետեւեալ ժապաւէնները :

2·- ՇԱԲԱԹ, ՄԱՅԻՍ 8, ժամը 16·30-ին՝

FESTIVAL DE DESSINS ANIMES

Մուտքը ազատ է փոքրիկներու համար

3·- ՈՒՐԲԱԹ, ՄԱՅԻՍ 14, ժամը 20·30-ին՝

« LITTLE BIG - MAN »

Grande - Fête Familiale Dansante

DIMANCHE, 9 MAI

A partir de 15 h.

Organisée par

LA CROIX - BLEUE ARMENIENNE

Section Saint-Maurice de Beynost

Avec la participation de

L'ORCHESTRE «MELODIA - EREVAN»

Salle des Fêtes

de Saint-Maurice de Beynost

BUFFET ARMENIEN — BROCHETTE

Entrée libre

AMBIANCE ARMENIENNE

ՊԱՆԵԼՕ – ՔԱՇԱՆԻ

ՏԱՐԵՎԵՐՁԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԸ

Կիրակի, Մայիս 9, ժամը 14·30-ին

THEATRE MUNICIPAL DE BAGNEUX

Բարձր հովանաւորութեամբ՝
ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆի
եւ
Պ· ՀԱՆՐԻ ՌԱՎԵՐԱՑԻ
Պանեէօ–ի Քաղաքապետ

Բացման խօսք՝ վարչութեան կողմէ
Պ· Մ· ՄԱՎԻԵԱՆԷ

Գեղարուեստական բաժինը կը վարուցչուհի՝
Տիկին Հ· ՊԱԼԸՔՃԵԱՆ

Արտասանութիւն, երգ, կատակերգութիւն՝ պլորոցի աշակերտութեան կողմէ
Սիրայօժար մասնակցութեամբ՝ երգչուհի
Պ· ՄԿՐՏԻՉ ՃԷՐՄԱՆի

Ձոխ պիւֆէ :

Հաճելի անակնկալներ :

Մուտք 20 ֆրանք :

Հաղորդակցութեան միջոցներ· Փորթ ո'Օրլէանէն առնել 188 ա կամ 188 պ եւ իջնել Ռոն - Փուէն տէ Մարթիր :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Ալֆորվիլի Ս· Պօղոս - Պետրոս եկեղեցւոյ հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ ստացած է՝- Իւզպէկներ– Տէր եւ Տիկին Նօտարեան Ցակոր 500 Ֆ·, Տիկին Ազատի Թագուհեան իր տղան եղբօր հոգիներուն համար 250, Տիկին Նօտարեան, Պ· Զիբրիեան 200, Տիկին Շիրինեան Ազատի 150, Տէր եւ Տիկին Գալայճեան 150, Տիկին Մարգարեան, Տէր եւ Տիկին Եաղճեան, Այրի Տիկին Կիմիւշեան, Պ· Փէհլիվանեան 100ական, Այրի Տիկին Արէքսազ Քէպէկեան, Տէր եւ Տիկին Մալճեան, Տիկին Պուրք-Հեան, Տիկին Ազատեխ Օսկանեան, Տիկին Կուրսեան Սիրանույշ 50–ական Ֆ· :

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ
6
JEUDI
6 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R. C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ : 180 Ֆ.
Արտասահման : Տար. 400 Ֆ. - Հատը : 2.50 Ֆ.

57րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.164 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 57e ANNÉE — No 15.164

ԱՀԱԲԵԿՈՒՄ

ՓՈՍԹԸՆԻ ԹՈՒՐՔ ՀԻՒՊԱՏՈՍԸ ՍՊԱՆՆՈՒԱԾ

ԱՐԱՐՔԻՆ ՏԷՐ ԵՂԱԾ ԵՆ ԱՐԴԱՐԱԴԱՏ ՄԱՐՏԻԿՆԵՐԸ

Ֆրանսական ձայնասփիւռը Շորեքշաբթի առաւօտ կանուխ, կարճ ձեւով կը հաղորդէր որ Պոսթընի մէջ սպաննուած է նոյն թուրք պատուակալ հիւպատոսը՝ Օրհան Կինտիւզ եւ թէ արարքին տէր եղած են Յեղասպանութեան Արդարադատ Մարտիկները:

Անմիջապէս հետաձայնելով ատեանք հետեւեալ մանրամասնութիւնները.- Օրհան Կինտիւզ սպաննուած է իր կառքին մէջ, երեքշաբթի իրիկուն, տեղական ժամով 6·45-ին, երբ տունը կը վերադառնար փակելէ ետք նուէրներու վաճառատունը, զոր ունէր (ի դէպ, Մարտ 22-ին, այս նոյն հաստատութեան դէմ եղեռնափորձ մը կատարուած էր, բայց հիւպատոսը արդէն մեկնած էր: Լուրը տուած էինք «Յառաջ» Մարտ 26-ի թիւով): Օրհան Կինտիւզ կառքը կեցուցած էր ոստիկանութենէն 400 մեթր անդին երբ երիտասարդ մը, որ մարզիկի համազգեստ կը կրէր, մօտեցած է իրեն եւ երկու տարբական-ակով, մին՝ 9 մմ, միւսը 357 (մակնեում) ինը փամփուշտ պարպած է դէմքուն եւ մարմնին: Պատուակալ հիւպատոսը տեղն ու տեղը մեռած է: Երիտասարդը կրցած է փախիլ, թէեւ վազքին մէջ ինկած է իր ժաքէթը:

Կինտիւզ աւագ հարիւրապետ էր թըրքական բանակին մէջ, մինչեւ 1954 երբ կը հրաժարի: Ամերիկա կը գաղթէ 1963-ին, հիմնադիրն է թուրքեւամերիկեան մշակութային միութեան եւ Թուրքիոյ պատուակալ հիւպատոս 1971 Հոկտեմբերէն ի վեր, Պոսթընի եւ չրջանի: Երկու տարիէ կը զանգատէր ամերիկեան ոստիկանութեան որ բերանացի թէ գրաւոր սպառնալիքներ կը ստանար եւ երկու չաբաթ առաջ կրկին ոստիկանութեան դիմած էր, տարճանակ կրելու իրաւունք ստանալու համար:

Ամիս մը առաջ ալ, դերման պահակ շուն մը առած էր, որ քանի մը օր առաջ իր տիրոջ տան մօտ անցորդ մը խածած է, որ անշուշտ բուռն բողոք մը ներկայացուցած է...:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԱՃԱՊԱՐԱՆՔ...

Վահէ Խախամեանի անմեռ յիշատակին:

Դժբախտութիւն է որ երբեմն կորսընչելիք բնաւ ժամանակ չունիս ճիշդ այն պահուն երբ ուրիշ մըն ալ ընելիք բան չունի եւ կ'ուզէ ժամանակ սպաննել:

Հակառակն ալ կը պատահի, նոյնքան դառն: Սրտակից բարեկամի մը կը հանդիպիս, կ'ուզես քանի մը խօսք փոխանակել, միասին սուրճ մը ըմպել: Կ'աճապարէ: Բարեւելու ժամանակն իսկ կորսընցնել չուզեր: Ներողութիւն կը խնդրէ ու կը հեռանայ, հազիւ որպիսութիւն հարցուցած:

Բարեկամ մը ունէի: Լաւ ու սիրելի բարեկամ մը: Հիմա մեռաւ, լոյսերու մէջ պառկի: Մեռաւ ինքնաչարժի արկածի մը զոհ երթալով: Զոհ գնաց արագութեան: Ինչը չէր կառքը քշողը: Ուրիշ մը: Զոհ գնաց այդ ուրիշին արագութեան: Ուրիշին աճապարանքին:

Բայց իր ներաշխարհին մէջ չատ աւելի աճապարանք կար, չատ աւելի արագութիւն, քան աշխարհի ամէնէն արագընթաց կառքին չարժակին մէջ: Իր կարճատեւ ամբողջ կեանքը կ'անցնէր հեւքոտ վազքի մը սպառումին մէջ: Վազելով խմբագրատուն կուգար, նստիլ անդամ չէր ուզեր: Եթէ նստէր, բազկաթոռին ծայրը միայն կը նստէր: Ու կը խօսէր այնքան արագ, որ երբեք չէր յաջողեր մէկ նախադասութիւնը: Մէկը չամբողջացուցած, մէկ բառը լրիւ չարտասանած, միւսին կ'անցնէր, չնչասպառ: Յօսելու, պատմելու իսկ ժամանակ չունէր վատնօրէն: Դերատանութիւն չէր ըրածը: Խուճապ մը կար իր հոգիին մէջ: Որքա՜ն չատ բան ունէր ընելիք, Աստուած իմ, եւ որքա՜ն քիչ ժամանակ ունէր մի՛ւժամանակ: Երբ ան կը խօսէր, կը կարծէի որ ե՛ս պիտի խեղդուէի: «Շունչ առ, բարեկամ, պահ մը հանդչէ» կ'ըսէի չատ յաճախ: «Ի՞նչպէս առնեմ, կը պատասխանէր անկեղծօրէն, ի՞նչպէս հանդչիմ, ժամանակ չկայ»: Նորէն ալ կէս ժամ, ժամ մը կը նստէր դիմացս, որովհետեւ գիտեմ որ կը համակրէր մեզմէ, մեր խմբագրատունէն, որուն մըթնոլորտը չատ սիրելի էր իրեն: Գիտեմ, ինչեր զոհելու պատրաստ չէր հանդստօրէն նստելու ու զրուցելու համար: Բայց իր ներքին ու անդիտակից աճապարանքը կառչած էր անդամ մը անոր օձիքէն: Ան կը լսէր իր ընելիքը, կուտար եթէ տալիք բան մը ունէր, կը ստանար եթէ առնելիք մը ուներ, հրաժեշտ կ'առնէր, «կը տեսնե՞ս խղճալի վիճակս» ըսել ուզող նայուածքով մը կը նայէր ու կը հեռանար վազելով սանդուխին աստիճանները վար:

Երբ կը մեկնէր, կը զգայի որ ես ալ սպառած էի առնուազն իրեն չափ: Երկար չունչ մը կ'առնէի: Բայց չէի զարմանար: Գիտէի որ կը մեռնէր եթէ չաճապարէր: Ստեղծուած էր աճապարելու համար:

Հիմա երբեմն զինքը կը բաղդատեմ այն միւսներուն հետ, որոնց ներաշխարհը աճապարանք չի ճանչնար: Անոնք միսթիք անտարբերութեամբ մը կը նային իրենց աչքին առջեւէն հանդարտ գետի մը նման հոսող – գացող ժամանակին: Կարծէք ժամանակ կոչուած այդ գետն ալ իրենց համար, իրենց նման չի չարժիր բնաւ, չի հոսիր: Նոյնիսկ եթէ կը չարժի, այդ չարժումը անոր խորութեան մէջ է, ընդերքին մէջ, եւ չի տեսնուիր դուրսէն: Եւ այսպէս, մարդը եւ ժամանակը, կարծես դարձած ըլլային երկու անչարժներ, կը ծուլանան յաւիտենութեան երազին յանձնուած: Ոչ մէկ խլրտում այդ երկու անչարժներուն միջեւ, իրարու միանալու, իրարու հասնելու, կամ գիրար քաշկըռտելու ոչ մէկ խոյանք մէկուն կամ միւսին կողմէ: Ոչ մէկ անհամբերութիւն, ոչ մէկ բաբախում, ոչ մէկ յոգնութիւն: Ո՛չ իսկ ձանձրոյթը՝ անչարժութեան, անփոփոխութեան, նոյնութեամբ տեւելու տաժանելի յոգնութեան:

Այո՛, հիմա երբեմն կը բաղդատեմ այս երկու տեսակ մարդիկը ու կը զարմանամ: Կը բաղդատեմ զանոնք. ամապատրաստները եւ անոնց դիմաց, առատ ժամանակ ունեցողները: Անոնք որ բազկաթոռի մը ծայրը միայն կը նստին, ու անոնք որ կը թաղուին բազկաթոռին խորը: Անոնք որ կէս կը թողուն նախադասութիւնը, եւ անոնք որոնց նախադասութիւնը կ'երկարի անվերջանալիօրէն: Անոնք որ կը վազեն առանց իրենց ոտքը նոյն իսկ հողին դպցնելու, եւ անոնք որոնց ոտքը գետնէն չի բարձրանար:

Կը բաղդատեմ զանոնք ու ես ինծի կը հարցնեմ. այս երկու տեսակ մարդոցմէ ո՞վ ուր կը հասնի աւելի առաջ: Մէկը կը վազէ, միւսը չի չարժիր: Հակառակ առտու մէկն քայլափոխին կրկին իրարու դիմաց կ'ելլեն ահաւասիկ, ինչպէս խճողեալ երթեւեկով ճամբուն վրայ իւրաքանչիւր հինգ վայրկեանը անդամ մը կը հանդիպես քիչ առաջ քովէդ սուրացած գացած կառքին: Կը բաղդատեմ զանոնք. ո՞վ կը հրէ մէկը եւ կը բռնէ միւսը: Ո՞վ մէկուն հոգին կը ծեծէ անտեսանելի հովերով ու կը խաղաղեցնէ միւսին ջուրերը: Եւ այդ երկուքէն ո՞րը չհասած պիտի ըլլայ մըրցումը, երբ երկուքին ալ կուրծքը նոյն պահուն պիտի դպչի աւարտական ժապաւէնին:

Հարցումներ, հարցումներ, հարցումներ:

Ռ. Հ.

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՑԻՊ

ԵՐԵՒԱՆ (ԱՐՄԷՆՓՐԷՍ ԱՊՐԻԼ 20 – 27)

ՐԱՖՖԻԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԵՐԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՆ ԵՐԵՒԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԻՆ

Հայաստանի Ակադեմիայի մէջ, յատուկ հանդիսութեամբ մը, զրականութեան եւ արուեստի թանգարանի տնօրէնութեան յանձնուած են Րաֆֆիի անձնական քանի մը իրերը՝ արծաթեայ բանուածքով ձեռնափայտը, ապակէ կաղամբը մեռադէ կափարիչով, նկարի չըրջանակ մը՝ զարդարուած կիսաթանկագին ակերով, ինչպէս նաեւ իր երէց զաւկին՝ Արշակի կնոջ, Արաքս Րաֆֆիի նամակը՝ ուղղուած թանգարանի տնօրէնութեան, այդ մասունքներու նուիրատուութեան մասին: Ցիշեալ իրերը եւ նամակը Արաքս Րաֆֆի յանձնած է ակադ. Գալուստ Գալոյեանի, երբ այս վերջինը Փետրուարին այցելութեամբ կը գտնուէր Լոնտոն: Թանգարանին տնօրէնը՝ Սահակեան Ալաջալեան, ընդունելով նուէրները երախտագիտութեան խօսք ուղղած է Արաքս Րաֆֆիի:

×

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԵՆԵԿԱՑԻՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ 5-ՐԴ ՓԱՌԱՏՈՆԸ ՎԵՐՋ ԳՏԱԾ Է

Երեւանի մէջ տեղի ունեցած սենեկային երաժշտութեան 5-րդ փառատօնը վերջ գտած է: Քանի օր հանդէս եկած են Մոր. Միութեան լաւագոյն խումբերը, որոնց կարգին՝ Հայաստանի սենեկային բոլոր նուագախումբերը, ինչպէս նաեւ Արեւմտեան Գերմանիոյ ծանօթ «Կէոկերտ քառեակ»ը: Մենակատարած են դասական հեղինակներու, ինչպէս նաեւ տարբեր սերունդներու պատկանող երաժիշտներու նոր գործեր: Մասնակցողներ պարգեւատրուած են Հայաստանի Մշակոյթի Նախարարութեան վկայականներով:

ԷԼԵԿՏՐՈՆԻԲԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ընթացիկ հնգամեակին Հայաստանի բնակարանային եւ արդիւնաբերական շինարարութիւնը ամբողջովին կ'անցնի էլեկտրոնիքի վերահսկողութեան տակ: Երեւանի մէջ արդէն կը բանի ինքնաւար տեղեկատուական հաշուիչ կեդրոնը, որ շինարարութեան մէջ տարեկան քանի մը միլիոն ռուբլի կը խնայէ: Այդ համադրոյթի նորհիւ Հայաստանի տասը մեծագոյն շինարարական ձեռնարկութիւններ անցած են հումքի, նիւթերու եւ թէքնիքի օգտագործման խնայողական համակարգին: Հայաստանի կառավարութիւնը մեծ ուշադրութիւն կը դարձնէ ժողովրդական տնտեսութեան մէջ էլեկտրոնիքի արմատաւորման: Հաշուիչ մեքենաներու հսկողութեամբ կը բանին էլեկտրական թէքնիքի, քիմիայի, տասնամեայ տեղեկատուութեան, թեթեւ արդիւնաբերութեան ձեռնարկութիւններու արտադրական բաժինները:

×

ԿԻԽՍԹԱՒ ՖԼՕՊԵՐԻ ԳՈՐԾԵՐԷՆ ՀԱՒԱՔԱԾՈՅ ՄԸ ԼՈՅՏ ՏԵՍԱԾ

«Սովետական Գրող» հրատարակչականը լոյս ընծայած է Կիւսթաւ Ֆլօպէրի գործերէն հատընտիր մը (հայերէն), ուր տեղ գտած են «Զգացական դաստիարակութիւն», «Սուրբ Ժուլիանոս Ասպետ – Լեգենդ առասպելը», «Մի պարզ հոգի» եւ «Հերովդիա» երկերը, գրոս բնագրէն Թարգմանած է Աբրահամ Ալիքեան: Հայ ընթերցողին առաջին ծանօթութիւնը Ֆլոբերեան գրականութեան հետ տեղի ունեցած է 1793-ին՝ Նոր Նախիջեւան հրատարակուած Ֆինելոնի «Տելեմաքի արկածները» վէպով: Հայաստանի մէջ Ֆրանսական գրականութիւնը մեծ ժողովրդականութիւն կը վայելէ: Անձնական գրադարաններու մէջ կարելի է տեսնել Պալզաքի երկերու հատընտիրներով, Վոլթէռի, Անաթոլ Ֆրանսի, Թիւլ Վէռնի եւ այլ գրողներու գործերը: Թարգմանութիւններ կատարած են Վահէ Միքայէլեան, Լ. Մարութեան, Աբրոն Տայեան, Հրաչ Բուջիկեան եւ Արման Կոթիկեան:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՄՈՎ

Ա.ՐԺԱՆԹԻՆԵԱՆ մարտանաւին զոհերուն թիւը կարելի չէ եղած ճշդել, քանի ծանօթ չէր ազատածներու ճշգրիտ թիւը: Ըստ Պուէնոս - Այրէսի 260 անհետացած կայ, ինչ որ կը նշանակէ թէ չուրջ 800 նաւաստի փրկուած է: Արժանթինցիք ալ ընկղմած են անգլիական ռազմանաւ մը եւ 30 նաւաստի մեռած է: Ափկա չատ ազդած է Անգլիացիներուն վրայ եւ Տիկին Թաչըը տագնապի նիստ մը գումարած է կառավարութեան անդամներուն հետ: Բրիտանացիք տրամադրէր չեն որ մէկ Անգլիացի մեռնի Մալուիներ համար եւ պետական դէմք մը ըսած է արդէն, պահանջելով անմիջական հրադադար մը, այս գնացքով աւելի չատ մեռեալ պիտի ըլլայ քան՝ բնակիչ այդ կղզիին մէջ:

Ժ. ԷՏԵՈՆ - ՀԱԼԻԼ ինը ժամ հարցաքննութենէ ետք ոստիկանութեան կողմէ, տուն կրցաւ վերադառնալ: Հակառակ իր առեւանգումին բազմաթիւ մութ կէտերուն, կարելի չէր գինքը վար դնել, քանի իր ընտանիքին փաստաբանը, առաջին առած էր նման վտանգի մը կանխաւ դատավար կոդմի (փաստի սիվիլ) դերք բռնելով: Ափկա կ'արգիլէ որ ոստիկանութիւնը չարունակէ գինքը հարցաքննել: Այլեւս ոչ ոք կը թուի հատատալ գրագէտին առեւանգումի պատմութեան, մանաւանդ մամուլը, որ մեծ վերապահութիւն ցոյց կուտայ մինչ Ջոքի տիէճ տը Փարի նպատակ ունենալով բնաւ կարեւորութիւն չտալ, յաջողած է ճիշդ հակառակը՝ երբ երկու էջերու վրայ «ոչդէպքը» խորագրին տակ կը գրէ.- «Եթէ Ժ. Էտեոն Հալիլ կ'ակնկալէր հոս գալ նել իր թերթօնին վերջին մասին տեղեկատուութիւնը, յուսախաբ պիտի ըլլայ, վասնզի «Քոթիտիէն»ի մէջ, պատրաստ ենք էջեր լեցնելու լուրերով, բայց ոչ խաբեբայութեամբ մը, ուրեմն՝ կատակ մէջ...»: 2 էջ տրամադրելով այս քանի մը տողերուն, թերթը ամէնէն մեծ «դէպքին» կը վերածէ իր մկրտած «ոչդէպքը»:

ԼԵՀԱՍՏԱՆի մէջ լուսարձակը վերահաստատուեցաւ ժամը 21-էն 5: Կ'ըսուի թէ երկուշաբթի օրուան ցոյցերուն առթիւ 1000 հոգի ձերբակալուած է եւ վաղը խորհրդային սահմանին մօտ վայր մը փոխադրուած է:

ՆԻՒԹԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ»
ԹՐՔԱԿԱՆ ՀԵՌԱՏԵՍԻԼԷՆ

Ե.

SAMEDI, 15 MAI — A PARTIR DE 20 H. 30
Avec l'Orchestre «ARTANAG» **Buffet Arménien**
Salle de Fêtes de Chaville — Rue Stalingrad

LA JAF, L'UCFAF, LE COMITE CULTUREL DE LA SORBONNE
GRAND AMPHITHEATRE DE LA SORBONNE
47, Rue des Ecoles — 75005 Paris
DIMANCHE, 16 MAI, A 17 H.

CONCERT

En Hommage au Compositeur

AVÉDIS MESSOUMENTZ

Avec la participation de:
— L'Ensemble Instrumental de Romans — Dirigé par A. SIRANOSSIAN
— Groupe Instrumental «SAYAT NOVA» — Dirigé par J.-P. NERGARARIAN
— Chorale «ANI» — Dirigée par H. ADJEMIAN
— L'Ensemble de Danses «NAVASSART» — Le Trio Traditionnel Arménien
Anna Karakaya (Chant) — Elia et Arto Pehlivanian (Kanoun et Dahoul)
CHAKÉ BENGUIAN (Chant) - ANDRÉ OVIGNY (Violon) - SEBOUH APKARIAN (Chant)
Avec l'aimable participation de:
LYNE DOURIAN (Opéra de Paris) — ASTRIG DEDEYAN (Opéra de Bordeaux)
Pianiste: Kouyoumdjian Avo
PRIX DES PLACES: DE 25 A 100 F.

— Location: Centre UCFAF - JAF; Cité du Wauxhall, 75010 Paris - Tél.: 208. 76. 49
Université Sorbonne Nouvelle (Com. Cult.) 13, Rue Santeuil, 75005 Paris Tél. 570.12.90
Yan's Club; 5, Ave. Reille - 75014 Paris — Cité Universitaire; 57, Bd. Jourdan
75014 Paris, Tél.: 589. 55. 53 — Librairie Paloyan; 9, Rue de Trévise, 75009 Paris
Tél.: 523. 24. 97 — Dedeyan (Chaville) Tél.: 750. 46.93 — Davidian (Bagneux)
Tél. 665. 81.53 — Benlian (Issy-les-Moulineaux) — Café Philippe (Alfortville)
Pehlivanian (Sevran) Tél.: 384. 31. 28 — Djizmedjian (Bois-Colombes) Tél.: 781.09.72

ՆՈՒԷՐ

Տէր եւ Տիկին Մովսէս Մազմանեան, իրենց առջինեկ թոռնիկին՝ Յասմիկ Մանուէլեանի ծնունդին ուրախ առթիւ, 100 Ֆրանք կը նուիրեն «Ցառաջ»ի բարեգործութեան:

ՄԱՐԴ-ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Շաբաթ, Մայիս 15, ժամը 20-ին, նախաձեռնութեամբ հայ նախկին Ռազմիկներու եւ Դիմադրականներու Միութեան:

YAN'S CLUB
5, Avenue Reille — 75014 Paris

կը դասախօսէ.-

ԵՐԵՒԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՕՍ

Երկրաբան՝

ԴՆԴ. ՊԵՐՃ ՊՕՇՆԱՔԵԱՆ

Նիւթ.- «Հայաստանի մասնակցութիւնը հայրենական մեծ պատերազմին եւ Հայաստանի բնական հարստութիւնները»:

Տեղերը ապահովել հեռաձայնելով Գ. Պարգըճեանի.-

770 - 07 - 25

Ճաշագին 120 Ֆ.:

Centre Culturel
Nourhan Fringhian
6, AVE. BOURGAIN, ISSY-LES-MOULINEAUX

Իսիի Ֆրէնկեան Մշակութային սըրահին վարչութիւնը կը ներկայացնէ ՈՒՐԲԱԹ, ՄԱՅԻՍ 14, ժամը 20.30-ին՝

« LITTLE BIG - MAN »

ՃԱՇ

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Կազմուցած Ծաչի Տէսինի վարչութիւնը ճաշ մը կը կազմակերպէ միայն կիներուն համար, Շաբաթ, Մայիս 15, Տէսինի Մշակոյթի Տան մէջ: Մուտքը 40 Ֆ.: Երեկոյեան ժամը 8-էն սկսեալ:

Հ Ա Յ
ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆԵՐ

Ամտիլիի, Մոնմորանսիի եւ Սէն - Ռաֆայէլի մէջ:
Երրորդ Տարիքի Անձերու Համար:
Հանգստաւէտ պայմաններու մէջ, Ընտանեկան հարազատ մթնոլորտ, Բժշկական տեւական հսկողութիւն եւ խնամք: Քաղաքներու ժխորէն եւ ապականած օդէն հեռու՝ բնութեան ծոցին մէջ, հանելի եւ մաքուր միջավայր:

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE

Maisons de Retraite

à Andilly, Montmorency et St. Raphaël
Pour les Personnes du Troisième-Age
Confort moderne, Ambiance familiale, Surveillance et soins médicaux permanents, Cadre paisible, dans la nature, loin de la pollution et des bruits de la ville.
S'adresser à l'A.A.A.S
77, Rue La Fayette — 75009 Paris
Tél.: 878. 02. 99 et 281. 17. 80

Ա ՅՏ

ՍԷՆ - ՌԱՖԱՑԷԼԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆ

Շաբաթ, Մայիս 15, նախաձեռնութեամբ Կապ. Ծաչի Մարսէյլի Հոյս Մասնաճիւղերուն՝ քաղաք, Գամոն, Սէն - Ժերմէն, Պուէլ. Օտտօ: Այդ օրուան պատարագներու ճաշը կը տանձնեն խանութները: Անոնք որոնք կը փափաքին այցելել Թող բարեհաճին դիմել իրենց Հոյնի վարչութեան անդամներուն, տեղեկանալու համար երթեւեկի պայմաններու եւ ժամադրութեան:

MAISON DE LA CULTURE ARMENIENNE
9, Rue de Madrid - 94140 Alfortville

EXPOSITION DE PEINTURE

SONIA et PUZANT TOPALIAN
JACQUES ASLANIAN
Les 14 - 15 - 16 Mai

VERNISSAGE ET RENCONTRE
AUTOUR DE LA PEINTURE
Avec les Artistes
Le 14 Mai, à partir de 21 h.

— ENTREE LIBRE —

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ
13
JEUDI
13 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՅԱՐԱՏ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R. C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ՝ 180 Ֆ.
Արտասահման՝ Տար. 400 Ֆ. - Հատը՝ 2.50 Ֆ.

57ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.170 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 57e ANNÉE — No 15 170

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՕՂՈՎ

ՊԱՊԸ, Չորեքշաբթի օր, Փորթուգալ մեկնեցաւ, ուր չորս օրուան այցելութիւն մը կը կատարէ: Զանազան քաղաքներ պիտի շրջի եւ չիւմաներ ունենայ ընկերային բոլոր դասակարգերուն հետ՝ գիւղացի, բանուոր, երիտասարդ, համալսարանական: Հասած օրն իսկ, կ'այցէ Մայր - Տաճարն ու Հանրապետու - թեան նախագահին հետ տեսնուելէ ետք, իրիկունը Ֆաթիմա պիտի երթայ, ուր կը մնայ Հինգշաբթի: Մայիս 13-ը կրկնակ տարեդարձներ են, քանի, 1917 Մայիս 13-ին է, որ երեք հովիւներ վեց անգամ կոյսը տեսան Ֆաթիմայի մէջ եւ անցեալ տարի, Մայիս 13-ին էր, որ մահափորձ կատարուեցաւ Ցովհ. Պօղոս Բ.ի դէմ: Փորթուգալի մթնոլորտը, սակայն, շատ հանդարտ չէ: Մայիս 1-ի Փորթոյի միջադէպերէն ետք, նոր բախումներ պահած են, այս անգամ Լիզպոն, համայնավարամէտ սենաիքային ընդհ. գործադուլին առթիւ եւ մէկ մեռեալ ու երեք վիրաւոր կայ: Ամէն պարագայի մէջ, ընկերկին, նոյնիսկ եթէ չէ «իւրացուցած» մեխականերու յեղափոխութիւնը, մեծ ազդեցութիւն կը պահէ երկրի մը մէջ, ուր ժողովուրդին 98%-ը կաթոլիկ է եւ 90%-ը՝ հաւատացեալ: Մանաւանդ ազդեցիկ է ուսման մէջ, ուր իր վարչութեան ներքեւ են 500 կրթական կեդրոններ:

ՖԱՏԻՄԱՅԻ նոր դատը տեղի պիտի ունենայ Ցունիս 3-ին: Ինչպէս ըսուեցաւ ամբաստանութիւնն այն է, որ ապօրինի չիւմաներ ունեցած է օտար մամուլի հետ եւ քննադատած Թուրքիոյ ներկայ վարչակարգը Նորվեկիոյ աշխատաւորական կուսակցութեան թերթին տուած մէկ տեսակցութեան ընթացքին:

ՖԼՈՐԻ ՎԱՑՕՍ ծագումով հրեայ գերմանագիր գրագէտը, մեռաւ 65 տարեկանին Նուէյտի մէջ, ուր հաստատուած էր 1949-էն ի վեր, Պեռլինէն գաղթելէ ետք 1934-ին: Մեծ գրիչներէն մէկը կը նկատուի գերմանական գրականութեան:

ՄԻԱՑԵԱԼ - ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ նախկին նախագահը՝ Ճիմի Գարթըը քանի մը օրէ փարիզ է, ուր յաջորդաբար ընդունուե - ցաւ Եւրոպա մէկ ճայնասփիւռի կայանի «մամուլի ակումբին» կողմէ կիրակի իրիկուն, յետոյ՝ Նախագահ Միթերանի, զոր շատ համակրելի գտած է եւ յայտնած թէ մեծ հիացում ունի անոր նկատմամբ: Եւրոպա մէկ կայանէն, պատասխանեց դէմառորաբար երեք հարցերու մասին.- ա) Մալուինեներու հարցին անդրադառնալով, յայտնեց թէ չի կարծեր որ ներկայ պատերազմը տարածուի, այլ սինքն՝ Արժանթինէն եւ Անգլիայէն զատ, հասնի այլ պատերազմիկներու: բ) Աֆղանիստանը, կ'ըսէ Գարթըը, անկասկած մեծ դեր խաղաց Սորհ. Միութեան եւ Միացեալ – Նահանգներու յարաբերութեանց մէջ, բայց Ռուսերը երբեք պիտի չկարենան տիրապետել Աֆղաններուն: գ) Մերձաւոր Արեւելքի մասին նախկին նախագահին կարծիքն այն է, որ Պեկին եւ Մոսկուա պէտք է ընդունին զօրաւոր միջնորդութիւն մը իրարու մօտեցնելու համար կողմերը եւ այդ միջնորդը կրնայ Ամերիկան ըլլալ:

ՄԱԼՈՒԻՆԵՐՈՒ խնդրին մէջ, Չորեքշաբթի օր, տիրող կարծիքն այն էր որ անգլիական ցամաքահանում մը անմիջական է: Դիւանագիտական փորձերը կը շարունակուին բայց ցարդ արդիւնք չեն տուած: Անգլիա նաեւ զօրանոցի վերածած է Էլիզապէթ Բ. զբօսանաւը: Լոնտոնի մէջ, բուռն բանավէճ մը ծագած է Տիկին Թաչըրի եւ Ջայն - Հեռատեսիլի (ՊԻ. ՊԻ - ՍԻ) կայանի տնօրէնին միջեւ, առաջինը մեղադրելով միւսը որ Արժանթինի ի նպաստ լուրեր կը տրուին, մինչ երկրորդն ալ կը պատասխանէր թէ դաս չունի առնելիք: Ամէն պարագայի մէջ, ոչ ոք խանդավառ է այս պատերազմով, զոր «յիմար պատերազմ» որակած է Ռեկրնի շրջուն դեսպանը՝ զօր. Վերնոն Ուալթըրս:

ՎՐԱՍՏԱՆԻ համայնավար կուսակցութեան ղեկավարութիւնը արտակարգ նիստ մը գումարած է, Մայիս 5-ին, ուր կարգ մը միջոցներ ձեռք առնուած են բարձրացընելու համար բնակչութեան զաղափարաբանական եւ քաղաքական գիտակցութիւնը, կը զրէ տեղւոյն կուսակցական պաշտօնաթերթը՝ Զարիա Վոստոկա: Իր ելոյթին մէջ ալ, Ա. քարտուղարը՝ Շեվարնաձէ, որ նաեւ փոխ - անդամ է Սորհ. Միութեան քաղաքական բիւրոյին, մտահոգութիւն յայտնած է ոճրագործութեան աճումին եւ իշխանութեանց նկատմամբ յարգանքի յարաճուն նուազումին առթիւ: Այս կարծրացման կողքին, սակայն, վրացի երեք պատմաբաններ, որոնք ձերբակալուած էին Թիֆլիս, Մայիս 1-ին, որովհետեւ այլախոհի մը, Տիկին Կոստաւայի ազատ արձակումը պահանջած էին (ձերբակալուած եւ դատապարտուած 1978-ին) ազատ արձակուած են հինգ օրուան արդելափակումէ ետք, պաշտօնակիցներու դիմումին վրայ:

ԻՏԱԼԻՈՑ մէջ համայնավար կուսակցութիւնը նախաձեռնակ եղած է, անցեալ Հոկտեմբերին, հանրային կարծիքի լայնածաւալ քննութեան մը, պատասխանը գտնելու համար սա հարցումին՝ «ի՞նչ կը խորհին Իտալացիք ահաբեկչութեան մասին»: Մէկ միլիոն հարցարաններ 25 կէտերէ բաղկացած, բաժնուած են 34 դաւառներու մէջ: 136·000-ը վար դրուած են եւ քննուած: Մերժում, անչուշտ, ահաբեկչութեան, մեծամասնութեան կողմէ բայց նաեւ խնդրոյ առարկայ է Պետութեան գործելակերպը: Ամերիկացի զօրավարին ազատ արձակումէն առաջ կատարուած այս քննութիւնը, որոշ դասակարգի մը մօտ կատարուած է սակայն, քանի որ հարցաքննուած անձերու կէսը բանուորական ծագում ունի, 26-էն 45 տարեկան է եւ 70%-ը՝ առևտրական ոեռի կը պատկանի:

ԼԵՀԱՍՏԱՆԻ մէջ օտար թղթակիցները գլխաւոր թիրախները դարձած են իշխանութեանց: Առջի օր, արդէն փերսոնա նոն կռաթա (անբաղձալի) հռչակուած էին ամերիկացի երկու դիւանագէտներ, որոնք այցելած էին գիտութեանց Ակադեմիայի մէկ հետազօտողի: Այս վերջինին ալ ձերբակալուած է այն ամբաստանութեամբ, որ Ամերիկացիներուն յանձնած է քնագիր մը, ուր ճշդուած են բարոյական այն կանոնները, զորս պարտին յարգել մտաւորականները պատերազմական վիճակի ատեն, ուր հրաւէր կայ նաեւ մերժելու որեւէ գործակցութիւն պաշտօնական մամուլին հետ: Հեռատեսիլը, միւս կողմէ, երկար յայտագիր մը նուիրած է Ռատիօ – Ֆռի - Եուրոփի, ծանրանալով անոր վնասաբեր գործունէութեան վրայ: Մամուլի Ֆրանսական միութեան ալ համաձայն, չուրջ 6 լրագրողներ՝ Ֆրանսացի, ամերիկացի եւ անգլիացի արտաքին նախարարութիւնն կանչուած են, իրենց գործունէութիւնը համապատասխան չըլլալով իրենց կանոնադրին...

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԿԵՂԾ ԱՂՕԹՔ

Մօտաւորապէս քսանըհինգ տարի առաջ անմոռանալի հարուած մը ստացած էինք մեր ընտանիքին չարքերէն ներս. տակաւին հազիւ քսան տարեկան չատ սիրելի զարմիկ մը հողին յանձնեցինք անողոք հիւանդութեան զոհ տալով: Անբացատրելի մըն էր այդ, որքան մեզի, նոյնքան մանաւանդ իր ծնողքին համար, որուն մէկ հատիկն էր:

Տխուր, շատ տխուր էր թաղումը: Երբեք չեմ մոռցած, չեմ ալ կրնար մոռնալ այն պահը, երբ բրիչով հող կը լեցնէինք իր բազմաչարչար մարմինը անդին վա - խադրող քանի մը փայտէ կտորին վրայ: Ընդվզում կար մեր սրտին խորը, մեր միտքը չարչարող հազարումէկ հարցումներ կային, բողոք կար բնութեան անի - մաստ խաղերուն դէմ: Հարիւրի մօտ բարեկամներ ու մերձաւորներ կը բաժնէին մեր այդ տառապանքը, արցունքներ կը հոսէցնէին իրենց աչքերէն: Նոյնքան տխուր կ'երեւէին այն վեց քահանայ հայրերը որոնք կը կատարէին թաղման արարողութիւնը:

×

Ցաւիտենութեան չափ երկար թուեցաւ ինծի արարողութիւնը: Սիրտս կը սեղմըէր, «ժամ առաջ վերջանայ ամէն ինչ» կ'ըսէի ես ինծի: Եւ սակայն երբ ամէն ինչ վերջացաւ, չկրցանք անմիջապէս բաժնուիլ ողբացեալին քովէն: Իր խելա - կորոյս մօրը ու հօրը հետ քիչ մը ետ դանդաղեցանք ծաղիկներու տակ անտե - սանելի դարձած հողակոյտին քով: Փիչ մը ետ արտասուեցինք: Ու յետոյ ընելիք ուրիշ բան չմնաց, եթէ ոչ բռնել դերեզ - մանատան դրան ճամբան:

Երբ դանդաղօրէն կը յառաջանայինք դէպի դուռ, յանկարծ տեսարան մը ցընցեց զիս: Մեր վեց քահանայ հայրերը, որոնք տակաւին քանի մը վայրկեան առաջ կարծես կ'արտասուէին մեզի հետ, կեցած էին գերեզմանատան երկաթեայ դրան քով եւ զուարթ բան մը պատմելով իրարու, քրքիջներ կ'արձակէին: Չեմ գիտեր թէ ինչ էր իրենց այնքան զուարթութիւն պատճառող նիւթը, բայց կը խնդային, կը կատակէին, իրարու խօսք կը հասցնէին: Մօտեցանք: Սպասեցի որ դադրեցնեն իրենց խնդուքը, քիչ մը կոճկըլին մօտեցող սա տառապանքի յուշարձանին առջեւ, յարգանք ցոյց տան ծնողքի մը տառապանքին: Աւա՛ղ, այդպէս չըրին, չարունակեցին իրենց զուարթ խօսակցութիւնը: Բան մը չփոխուեցաւ իրենց դէմքին վրայ:

Եւ մենք իրենց քովէն անցանք գացինք չնշմարել ձեւացնելով իրենց անկիրթ այդ անտարբերութիւնն ու անզգամութիւնը:

×

Այդ օրը ես ինծի ըսի. տառապանքդ միայն քե'զի կը պատկանի, կրակը միայն քո'ւ կրակդ է: Ուրիշներուն մասնակցութիւնը քաղաքավար դիմակ մըն է պարզապէս, խորք չունի, վաղանցուկ է, մակերեսային:

Ասիկա հոգեբանական ճշմարտութիւն մըն էր զոր պէտք էր ընդունիլ առանց դայթակղելու:

Բայց այդ օրը ես ինծի ըսի նաեւ հետեւալը. մեր հոգեւորականներուն մէկ մասը կատարեալ խեղկատակներ են, անճարակ ու անհասատ դերասաններ, որոնք ոչ միայն քուլիսի մէջ, այլ նոյնիսկ բեմին վրայ չեն յարգեր իրենց ստանձնած դերերը: Պզտիկ ճիպ մը չեն վատներ իրենց հետ նոյնանալու համար, աւելին՝ չեն մտածեր այդ դերին հետ նոյնանալու անհրաժեշտութեան մասին: Կը կարծեն որ, եթէ բեմէն իջած են, այլեւս ոչ ոք ուշադրութիւն կ'ընէ անոնց, չեն ապրեցըներ այն սրբութիւնը, որուն ներկայացուցիչը ըլլալու կանչուած են Աստուծոյ կողմէ:

Ասիկա ալ ճշմարտութիւն մըն էր, զոր չէի կրնար ընդունիլ առանց դայթակղելու:

×

Հիմա վաղուց հող դարձած է խեղճ զարմիկս: Տարիներ վերջ հող դարձան նաեւ անոր խեղճ ու անմխիթար ծնողքը: Շատ բան մոռցուեցաւ երեք հոգիէ բաղկացեալ այդ խեղճ բոյնին ողբերգութենէն: Բայց ահաւասիկ աչքերուս առջեւ կը մնայ խնդացող վեց քահանաներուն տգեղ պատկերը, որովհետեւ մինչեւ այսօր կը կասկածիմ որ անոնց աղօթքը կեղծ էր եւ չկրցաւ բարձրանալ մինչեւ երկինք:

Ռ. Հ.

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՑՈՒՅՑ

ԵՐԵՒԱՆ (ԱՐՄԷՆՓՐԷՍ ՄԱՑԻՍ 3 - 5)

«ՀԱՑՈՑ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ»

ԵՒ

«ՀԱՑՐԵՆԻ ԵՐԿԻՐ»

ԺԱՊԱՒԷՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

«Հայֆիլմ» արուեստանոցին մէջ վերջ գտած են «Հայոց բարձունքներ» չարժանկարի նկարահանումները, որոնք կը ներկայացնեն Հայաստանի տնտեսական եւ մշակութային նուաճումները: Նոր ժապաւէնը ձեւով մը չարունակութիւնն է Հայաստանի մասին «Հայրենի երկիր» չարժանկարին, որ պատրաստուած էր 1945-ին: Այդ չարժանկարին բնագիրը գրած էր բեմագիր Ալեքսանդր Դովժենկօ, որ ի մէջ այլոց կ'ըսէր. «Եթէ պատմութիւնը չըլլար Հայաստանի համար խորթ մայր եւ դարերու ընթացքին չկործանէր անոր քարերը, ապա հոս շատոնց արդէն կը գտնուար ճարտարապետութեան թանգարանութիւն մը, ոչ թէ անոր հնադարեան դերեզմանատունը: Բայց չատ է քարտաշ ժողովուրդը, անմահ է ճարտարապետի տաղանդը: Կը կենդանանան քարերը: Կը լսուին Զուարթնոցը, Էջմիածինը, Անիի կերտողներու ծոռներու մուրճերու զրնգուն զարկերը: Եկած է նոր ժամանակ, կը մօտենայ ճարտարապետութեան ոսկեդարը: Արդէն վերակառուցուած է Երեւանը, անճանաչելի են անոր տուներուն հրապարակները, զրօսայգիները, ճարտարապետ Թամանեանի հոյակապ օփերան...»: Ի դէպ, այդ չարժանկարին երաժշտութիւնը գրած է Ա.չոտ Սաթեան, որուն «Մարտիկի երգը» (առաջին անգամ հնչած՝ չարժանկարին մէջ) մինչեւ հիմա տարածուած է ժողովուրդին մէջ:

×

ՄԿՐՏՉԵԱՆ ԵՂԲԱՑՐՆԵՐՈՒ
ՆՈՐ ՇԱՐԺԱՆԿԱՐԸ

Երեւանի Շարժանկարի Տունը ցուցադրուած է Մհեր եւ Ալբէր Մկրտչեան եղբայրներու «Հին օրերի երգը» ժապաւէնը, որուն ցուցադրութիւնը արտօնուած է Սորհ. Միութեան պատասխանատուներուն վրայ: Մհեր Մկրտչեան ծանօթ եւ վաստակաւոր դերասան է, որ 60 չարժանկարներու մէջ դերեր ստանձնած է, որոնցմէ չորսը՝ իր կրտսեր եղբօր՝ Ալբէրի ժապաւէններուն մէջ: Այս հինգ - երրորդ անգամն է, որ երկու եղբայրները կը համագործակցին:

ԵՂԵՌՆԻ 67-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԹԻԻ

Թէ Իշխան Զաբրակալուեցաւ

ԶՕՀՐԱՊ ԷՖԷՆՏԻ

Գրեց՝ Ա. ՊԵՅԼԷՐԵԱՆ (Պատմ. Գիտ. Տոքթ.)

Այս է խորագիրը այն յօդուածին որ լոյս տեսած է Պոլսոյ Իթթիհատական շրջանի (1908 - 1918) կարեւոր օրաթերթերէն «Եէնի Կազէթա»յի Բ. էջին վրայ:

Քանի մը տարիէ ի վեր Թուրք կառավարութիւնը ամէն տարւոյ սկիզբը պէր - քօյկներ կամ յօդուածներ հրատարակել կուտար հայկական ցեղասպանութեան մասին Ապրիլ ամսոյ մէջ տեղի ունենալիք հայկական ցոյցերուն հակազդելու եւ օտար պետական շրջանակներն ու հան - րային կարծիքը «լուսաբանելու» մտահո - գութեամբ: Թէեւ այս պրոպիւնները պաշտօնապէս կառավարութեան կողմէ չեն հրատարակուած բայց ուշադիր ըն - թերցողի մը համար բնաւ դժուար չէ նը - պատակին թափանցել երբ բովանդակու - թիւնը կարդայ: Թուրք կառավարու - թիւնը նախ վերահրատարակել տուաւ 1916 – 1919 տարիներու մէջեւ Իթթիհա - տականներու կողմէ լոյս ընծայուած լոկ փրոփականտի ծառայող բայց պատմագի - տական ոչ մէկ հիմ ունեցող քանի մը գրքեր որոնց մասին մենք ալ առիթով այս թերթին մէջ անդրադարձած էինք (*): Կը թուի թէ այս գրամագլուխը այսօր սպա - ռած է եւ այս պատճառաւ երկու տարիէ ի վեր փոքր «պրոշիւռ»ներու կամ նամակ - ներու շնորհիւ Թուրք կառավարութիւնը կը ջանայ Արեւմուտքի քաղաքական դէմ - քերուն եւ գիտնականներուն հայկական հարցի առընչութեամբ ունեցած համո - զումները չիոթութեան մատնել եւ իր տեսանկիւնէն դիտել տալ: Այս առիթով հոս յիշենք թէ թէպէտեւ ոչ բազմաթիւ, բայց մինչ ալ կը գտնուին օտար «պատ - մաբաններ» որոնք յանուն «պատմական ճշմարտութեան» հայկ. հարցին դոյու - թիւնը կը ճգնին ժխտել ինչպէս եղեռնին դրդապատճառները: Այս գիտնականներու վերջինը, Լոս - Անճըլըսի դասախօս Հը - րէսածին Սթանֆօրտ Շօ'ն է որ Թրքուհի կնոջը հետ լուրջ աշխատանք կը տանի: Եւ այսօր իր տեսակէտը Թրքական տե - սակէտին գլխաւոր յենարան կը ծա - ռայէ:

Վերջերս Թուրք «գիտական» մարմինի մը կողմէ գրութիւն մը ղրկուեցաւ բազ - մաթիւ օտար պաշտօնական անձնաւորու - թիւններու եւ լրագրողներու, որուն բո - վանդակութեան մասին առանձին պիտի անդրադառնանք յետագային: Մինչ այդ կը թարգմանենք հին Թրքերէն հետեւեալ յօդուածը, որ հրատարակուած է գլխա - ւոր աղբիւրէն անմիջապէս յետոյ Օսմանեան կայսրութեան մայրաքաղաք՝ Պոլսոյ մէջ:

Եէնի Կազէթայի այս թիւը կը կրէ Հիճրէթի (արաբական տոմար) 13 Րէպի - իւլ Էվվէլ 1337 թուականը (2): Նոյն այս թերթին մէջ ուրիշ կարճ գրութիւն մը եւս կը գտնենք ուր Եէնի Կազէթայի խմբագրապետը (3) տպաւորիչ ներբո - ղականով մը Եղեռնի զոհ գացող երեւելի երեսփոխան՝ Գրիգոր Զօհրապի գովքը կը հիւսէ նկարով մըն ալ միասին: Այս մասը եւս թարգմանաբար կը հրատարա - կենք: Այս գրութեան մէջ անհրաժեշտ տեղնուած բոլոր ծանոթագրութիւնները մեր կողմէ կատարուած են:

×

«Զօհրապ էֆէնտի ձերբակալուած դի - շերը Սերթըը ս'Օռհան ակումբին մէջ Թալէաթ փաշայի և Հալիլ պէյի (4) հետ թուղթ խաղացեր է եւ խաղն ալ մինչեւ կէս գիշեր տեւեր է: Զօհրապ էֆէնտի երբ մեկնելու համար ոտքի կ'ելլէ, Թա - լէաթ փաշա եւս ոտքի կ'ելլէ եւ հայ ե - րեսփոխանին մօտենալով զայն այտէն կը համբուրէ (5): Թալէաթի այս բացառիկ խանդաղատանքը չիոթութեան կը մատ - նէ Զօհրապը որ կը հարցնէ.

- Ինչո՞ւ այս խանդաղատանքը: Թա - լէաթ փաշան ալ կը պատասխանէ:

- Ներեցէք եկաւ: (6)

Զօհրապ տակնուվրայ եղած ակումբէն դուրս կ'ելլէ: Նախարարին այս համբոյ - րը իրեն տարօրինակ նախազգացում մը պատճառած էր:

Գիշերը մեղմ էր (*): Հայ երեսփոխանը հետիոտն իր տունը քալել սկսաւ: Ան չուշացաւ նշմարելու թէ մէկը իրեն կը հետապնդէր: Իոլորովին վստահ ըլլալու համար միւս մայթը անցաւ: Հետապնդող անձը եւս միւս մայթէն իրեն հետե - ւիլ սկսաւ: Զօհրապ քայլերը արագա - ցուց: Անծանօթ անձը եւս նոյնը ըրաւ: Զօհրապ այլեւս չկրցաւ համբերել եւ դառնալով անծանօթ անձին սա հար - ցումը ուղղեց:

- Արդեօք կը հետապնդուի՞մ:

- Այո:

- Ինչո՞ւ համար:

- Այդպէս հրաման ստացած եմ:

- Գիտէ՞ք թէ ես ով եմ:

- Անտարակո՛յս, դուք Զօհրապ էֆէն - տին էք:

- Բայց սխալմունք մը կայ հիմա Ներ - քին նախարարէն (7) բաժնուեցայ:

- Կրնայ ըլլալ· բայց ինծի տրուած հր - րամանը կտրուկ է ու ստիպուած եմ զայն կատարել:

Զօհրապ էֆէնտի երբ իր տան առաջ հասաւ հոն եւս ուրիշ ոստիկան մը գտաւ: Երկու ոստիկանները իր տան սանդուխ - ներուն առջեւ իր ճամբան փակեցին: Երեսփոխանը հարցուց:

- Ձեր ստացած հրամանները ի՞նչ են:

- Ստիպուած ենք ձեզ ձերբակալել:

- Հիմա՞ – անմիջապէ՞ս:

- Այո՛:

- Եթէ չփափաքիմ ձեր հետ գալու:

- Պիտի պարտադրուինք ձեզ բռնի տա - նելու:

- Զէ՞ք գիտեր թէ ես երեսփոխան մըն եմ:

- Գիտենք: Բայց մեր ստացած հրա - մանը վճռական է: Ճամփէքը յետոյ Զօհ - րապ էֆէնտիին կ'ըսէ թէ վաղը պիտի ղրկուի (8) եւ կրնայ իրեն անհրաժեշտ իրեղէնները առնել: Այն տեղ հայ երես - փոխանը կացութիւնը կ'իմացնէ իր ընտա - նիքին: Աճապարանօք ճամբորդութեան պայուսակ մը կը պատրաստուի: Խեղճ երեսփոխանը հեծկլտալով լացող կնոջմէն եւ աղջիկէն բաժնուեցաւ եւ իր նման ձերբակալուող (Վարդգէս) էֆէնտիին հետ Անատոլուի ճամբան բռնեց»:

×

Եէնի կազէթայի Գրիգոր Զօհրապի մասին միւս գրութիւնը եւս կը ներկայացնենք որուն խորագիրն է.

«Ամերիկեան երեւելի անձ մը»

Լրագիրները չարաբաստիկ ագռաւի խնդրին մասին ազատօրէն գրելու սկսան: Կառավարութիւնը հարցաքննիչ յանձնա - ժողովներու միջոցաւ ագռաւի ընթացքին հալածանք կատարող պաշտօնեաները ձերբակալելու եւ զանոնք հարցաքննելու սկսելէն ի վեր այս ագռաւ եւ չարչերու միջոցին իրենց մարմինները ոչնչացնող արժէքաւոր անձերուն անուններն ալ յիշուելու սկսան...

Նախկին Ներքին Գործոց նախարար եւ Գոնիայի նախորդ կուսակալ ձէլալ պէյ (9) իր գրած մէկ յօդուածին մէջ այս արժէքաւոր անձերէն մէկուն անունը կը յիշուի: Անունը յիշուող այս անձն է՝ Զօհրապ էֆէնտի:

Զօհրապ էֆէնտին մեր երկրին կարող օրէնսդէտներէն մին էր: Ակէ զատ կարող լրագրող մըն էր եւ գրականու - թեան ալ ձիրք ունէր: Հայերէն լեզուով բազմաթիւ գրական գործերու հեղինակն էր (10):

Օսմանեան Փարլամէնթի Ա. շրջանին ան՝ (Գրիգոր Զօհրապի կ'ակնարկէ ան - շուշտ) ապացուցած էր որ մեր երկրի ա - մենակարող հեռուորներէն մին էր: Ցե - տագիմական չարժումի (11) ժամանակ Զօհրապ էֆէնտի իր տունը հրաւիրելով պահած անձ մը, իր աքսորուած եւ առանց հարցաքննուելու մահուան դատապար - տուած ու սպաննուած աւեն պետական բարձր պաշտօն մըն ալ կը վարէր (12): Այս պարագան ալ քանի մը օր առաջ մա - մուլի մէջ լոյս տեսնող լուրերէն հաս - կըցանք:

Սահմանադրաւեան շրջանին երբ առա - ջին անգամ ըլլալով մամուլի մխիթիւնը հիմնուեցաւ, Զօհրապ էֆէնտի հայերէն լեզուով լոյս տեսնող թերթերուն իբր ներկայացուցիչ մասնակցած էր»:

×

Այս պրոպիւններուն մէջ ընթերցողնե - րուն ուշադրութիւնը կը հրաւիրենք երկու կարեւոր կէտերու շուրջ: Նախ պէտք չէ մոռնալ որ երբ այս պրոպիւնները լոյս տեսած են եէնի կազէթա օրաթերթին մէջ, Թալէաթ - էնվէր իրենց գլխաւոր արբանեակներուն հետ հազիւ թէ Պոլսէն կէս դիշերը անց գերմանական ընդծովեա - յով մը փախած էին: Բ. այս պրոպիւն ուրիշ մէկ յատկանշական կողմը այն է թէ ոչ մէկ ակնարկութիւն կայ Հայոց «դաւաղրութիւններու» մասին, որոնք այ - սօր իբր արդարացուցիչ փաստ կը ներկա - յացուին ցեղասպանութիւնը ժխտելու համար թուրք պաշտօնական կամ անպաշ - տօն անձերու կամ մարմիններու կողմէ:

Հետեւաբար երբ այսօր Թուրքիա մա - նաւանդ թուրք մամուլը անընդհատ կը ջանայ պատմական ճշմարտութիւնները խեղաթիւրել, հետաքրքրական գտնելով վերի զոյգ պրոպիւնները, որոնք Պոլսոյ թուրք մամուլին մէջ լոյս տեսած են ա - տենօք, ուզեցինք ընթերցասէր հասա - րակութեան ուշադրութեան յանձնել: Արդարեւ երբ այսօր մեծ եղեռնին 67-րդ տարին լրացաւ եւ աշխարհի չորս ան - կիւնները՝ Լոս - Անճըլըսէն մինչեւ Սբե - ւելք, Վանդուվըր - Թորոնթօ - Մոնրէա - լէն մինչեւ հեռաւոր Աւստրալիա ցրուած Հայու բեկորները կառչած դեռ իրենց ինքնութեան եւ պահանջներուն կը ջանան հակառակ իրենց ոչ ալ միշտ նպաստա - ւոր պայմաններուն վերապրիլ իբր մէկ ազգ եւ մէկ ժողովուրդ, հետաքրքրական է բնականաբար գիտնալ թէ 65 տարի ա - ռաջ Պոլսոյ մէջ Թուրքեր ալ կային՝ նոյնիսկ Իթթիհատական, որոնք հիմակուան նման չէին ջանար ամէն միջոցի եւ խար - դաւանանքի դիմելով պատմական դէպքե - րը վերիվայր շրջել եւ մեծ ոճիրը ու - րանալ:

---

(1) Տես՝ «Ծառաչ», Ապրիլ 27, 1979, թիւ 14369 եւ Ապրիլ 27 - 29, 1979, թիւ 14·370:

(2) Որ կը համապատասխանէ մեր Դեկ - տեմբեր 17, 1918 թուին:

(3) Ապտուլլահ Ջեւտիւ:

(4) Օսմանեան Փարլամէնթի նախագահ որ մեռաւ 1946 թուականին Պոլսոյ մէջ:

(5) Ձիշդ Յուդայի մատնութեան նման:

(6) Թրքերէն՝ իչիմտէն կէլտի:

(7) Թալէաթ պէյ: Թալէաթ պէյ, փա - շա տիտղոսը ստացաւ 1917 տարւոյ Փետ - րուար ամսոյ սկիզբը, երբ մեծ վեզիր նշանակուեցաւ:

(8) *Սէվք հաբմէջ* ղրկուիլ կը նշանա - կէ: Ոչ տարագրութեան եւ ոչ ալ աքսորի խօսք կայ:

(9) Ձէլալ պէյ Թալէաթի աքսորի հր - րամանին չհնազանդեցաւ: Այս պատճառաւ Գոնիայի Հայերը նախ չաքսորուեցան: Յե - տոյ Թալէաթ պաշտօնանկ ըրաւ այս ան - հնազանդ կուսակալը: Իրեն յաջորդեց Սեբաստիոյ նահանգին կուսակալ Մուամ - մեր որ իրեն յանձնուած պաշտօնը (տա - րագրութիւնը) բծախնդրօրէն կատա - րեց:

(10) Չենք գիտեր թէ ինչո՞ւ խմբագիրը չի յիշեր թէ Գրիգոր Զօհրապի գործերը հիմնբրբերէն լեզուով եւս լոյս տեսած են: Երկար տարիներ առաջ մենք զանոնք հին բրբերէն լեզուով կարդացած ենք եւ ի - րօք գրական գոհարներ են: Թարգմանու - թիւնը շատ յաջող կատարուած է թէեւ դժբախտաբար չենք յիշեր թէ ո՞վ կա - տարած էր այդ թարգմանութիւնը:

(11) 1909-ի գարնան:

(12) Այս անձը Հալիլ պէյն է, որուն մասին վերեւ անդրադարձանք:

(*) Մայիս 1915-ի վերջն է: Ճշդե՛նք ինչ որ շատ կարեւոր է, տարագրութեան օրէնքը մեծ վեզիր Սայիտ փաշային յըղ - ուած, Բարլամէնթէն վաւերացուած քայլ Օսմանեան պաշտօնաթերթին մէջ դեռ չէր հրատարակուած: Միւս օրը լոյս տե - սաւ:

ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐԸ

ՄԻԱՑԵԱԼ - ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՇՐՋԱՆ

ԼՈՍ ԱՆՃԸԼԸՍ

Ցոյց՝ թրքական հիւպատոսարանին առ

Ապրիլ 23-ի առաւօտեան, չ. 8. ֆ «Վարանդեան» Կոմիտէութեան կազմա - կերպութեամբ բազմօրի ցոյց մը կատար - ուած է Լոս Անճըլըսի թրքական հիւպա - տոսարանին առջեւ, ուր աւելի քան 30 հայ երիտասարդներ ցուցապատկերներ բռնած են՝ թուրք կառավարութիւնն ա - նոր քաղաքականութիւնը դատապար - տող պրոպիւններով:

Նոյն օրը, Քալիֆորնիոյ նահանգապետ Էմմոնա Ճ. Պրաունի հրամանագրով Ա - պրիլ 23-ը «անցեալի չարդերու զոհերու յիշատակի յարգումի օր» հռչակուած ըլլալով, նահանգային պաշտօնական բոլոր շէնքերուն վրայ դրօշակները կէս բարձրացած են, ի յարգանս զեղասպանու - թեան զոհերուն: Այս երեւոյթին պիտի թուրք հիւպատոսին բողոքները ի դերեւ ելած են:

Երիտասարդական հանդիսութիւն

Երեկոյեան ժամը 9-էն սկսեալ երի - տասարդական հանդիսութիւն մը տեղի ունե - ցաւ «Փերահեան» վարժարանի սրահին մէջ մասնակցութեամբ 2000 հոգիի: Հանդի - սութիւնը կազմակերպած էին Հ. Յ. Դ. «Տա - շնակցութիւն Ուսանողական Միութիւնը, Հ. Ե. Դ. Նահապետական Միութիւնը եւ Հ. Մ. Ը. Մ. Ը: Յայտ - նի դերը վարած է ընկ. Վահէ Եազուպեան: Լուսապատկերներու ցուցադրութեամբ եւ երաժշտութեամբ ներկայացուած է Հա - յոց ժողովուրդին տառապանքը: Ներկայ - եան են կազմակերպիչ մարմիններու, Ամե - նայն Հայոց Միջազգային քոլէճի, Քալիֆոր - նիոյ Հայ Ուսանողութեան, Սասմա - Պաշտպան Ցանճնախումբի, «Ասպարէզ» օրաթերթի ներկայացուցիչները եւ ներ - կայ հանդիսատեսի մեծ բազմութիւն մը:

Քաղաքական հաւաքոյթ

Ապրիլ 24-ի կէսօրին, աւելի քան 12 - Հայեր խաղաղ ցոյց մը կատարած են կազմակերպութեամբ հայ քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչնե - րու բաղկացած Միացեալ Ցանճնախումբի: Թափօրը ճամբայ եղած է «Ռոզ եւ Ա - Փիլիպոս» վարժարանի բակէն եւ ուղղ - ւած դէպի քաղաքային քոլէժի մարզ - դաշտը: Հոս, փողը օգնած մը, իր ներ - քարշ տալով «կեցուցէք հայ ահաբեկիչ - ները եւ ցեղասպաչտները» պրոպիւնը կ - րող պատառ մը, թափէք կատարած դաշտի չորս կողմը: Ցուցարարները զի - րոյթի գոչիւններով դիմատորած են օգ - նաւը, որ վարձուած էր Թրքական կառա - վարութեան կողմէ: Հաւաքոյթին ցու - ցումը կատարած է Մխիթար Մխիթարեան՝ չեշտելով որ «հայ ժողովուրդը պիտի ա - ռեցնողներուն, զինք ակարացած համա - րողներուն ու իրեն դէմ աշխատանք տա - նողներուն պիտի պատասխանէ իր չոր - քերու խտացումով եւ քաղաքական պա - քարի միջոցներու հզօրացումով»: Ներ - առած է Հնչակեան կուսակցութեան ներ - կայացուցիչ Հէրի Տիրամէրեան՝ նշելով թէ «Թուրք կառավարութիւնը պէտք է դադնի ցեղասպանութիւնը եւ վերադար - ձընէ հայկական հողերը իր էութեան ա - մբողջ, այնքան ատեն որ Թուրքիա չդա - դնէր իր պատասխանատուութիւններէն, իրեն դէմ պիտի գանէ դիտակից հայ ե - րիտասարդութիւն մը, որ երբեմն իր ելոյթներով պիտի ըլլայ պայքարի դաշտ Միջ - կուսակցական Միացեալ Ճանճնախում - բին կողմէ խօսք առած է Ռուբէն Փափազեան եւ դիտել տուած՝ որ մա - րիլ 24-ը դարձած է վերանորոգման եւ արդարութիւն որոնելու վճռակամութեան վերահաստատման օր»: «Մենք ներ - ըսած է ան, - ինծի չսորվեցուցին ատե - թուրք ժողովուրդը եւ վրէժխնդիր ըլլա - յու թուրք կառավարութենէն պարտք - թիւն պահանջել»: Լոս - Անճըլըսի Ֆե - դերալ Խորհուրդի անդամ Ջեյ Եթ - լաւքի խօսք առնելով ըսած է, թէ «ա - ժողովուրդը՝ որ ցեղասպանութեան ե - կատարէ եւ յետագային զայն ի'որանա

ՅԱՅՎԱԾ ԿՈՏՎԱԾ

= ՀԱՏՈՒԱԾ =

ՍԱՐԳԻՍ ՎԱՐՈՒԺԱՆԻ ՎԱԳՆԱՍՅԱՆ

– Ու ասելիք էն հուսկին: Ո՞ր ուղղությա՞մ էլ չերթաք, կամ ձեր ինչ ուզեք, ես ինչ անեմ, ես ինչ չանեմ, ես ինչ ասեմ, որ ձեր ուղղությա՞մ չերթաք: Ո՛չ ոքը: Ամեն մեկը ինքնիրեն ասում է, որ ինքնուրույն է, ոչ ոքի կարիքը չունի, ոչ ոքի խորհուրդը չի պետք: Ամեն մեկը ինքնիրեն ասում է, որ ինքը ամեն ինչ գիտի, ամեն ինչ կարող է, ամեն ինչ կարող է անել, ամեն ինչ կարող է ասել, ամեն ինչ կարող է ուզել: Ես ինչ եմ ասում ուրեմն: Ես ինչ եմ ասում, որ ես ինքս ինձ ոչ ոքի չեմ խորհուրդ տալիս: Ես ինքս ինձ ոչ ոքի չեմ խորհուրդ տալիս, որ ինձ ոչ ոքի խորհուրդ տա: Ես ինքս ինձ ոչ ոքի չեմ խորհուրդ տալիս, որ ինձ ոչ ոքի խորհուրդ տա, որովհետև

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տիկին Զարուհի Նշանեան, Ալին Էթ - մէքճեան, Տոքթ. եւ Տիկին Սերժ Էթմէք - ճեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի իրենց քրոջ, մօր եւ մեծ – մօր՝

Տիկին ԱՐՏԵՄ Էթմէքճեանի

մահուան տարելիցին առթիւ, Կիրակի, Մայիս 16, ժամը 10·30-ին Պօմոնի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին։

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

à Vendre

MACHINES RECTILIGNE DE TRICOT
Numéros: 10 et 6

S'adresser à Mme. BEDROSSIAN
35, Rue Emile Devaux — 75019 Paris

Téléphone: 205. 78. 87

Կ'ՈՒԶՈՒԻ

Մեքենայի վրայ աշխատող կարուհի մը, փլուի համար։ Մնայուն աշխատանք։

Անձամբ դիմել։-

ETS. CALDIRAC
65, Rue Melay — Escalier A
75003 — PARIS
Métro: Strasbourg - Saint - Denis

Ա Յ Ց

ՍԷՆ – ՌԱՖԱՑԷԼԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆԸ

Շաբաթ, Մայիս 15, նախաճեռնութեամբ կապ. Խաչէ Մարսէյլի Հոգեհանգստեան՝ քաղաք, Պօմոն, Սէն - ծոմ, Պուլվ. Օսման։ Այդ օրուան պատարագներու ճաշը կը տանձնեն խանջուհիները։ Անոնք որոնք կը փափաքին այցելել թաղ բարեհաճին դիմել իրենց ընկերուհիներուն, անհրաժեշտ ըլլալու համար երթեւեկի պայմաններու եւ ժամադրութեան։

ԱՆԱՐԱՏ ՅՂՈՒԹԵԱՆ
ՀԱՑ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

Բարձր Հովանաւորութեամբ՝
ԳՐԻԳՈՐ ԵՊՍ. ԿԱՊՐՈՑԵԱՆԻ
Էքզարք
Ֆրանսայի Հայ Կաթողիկէ Համայնքին

ԿԻՐԱԿԻ, ՄԱՅԻՍ 16, ժամը 16-ին
CENTRE HOSPITALIER VALVERT
Boulevard des Libérateurs
13011 — MARSEILLE

Grand - Bal

DE LA CROIX-BLEUE ARMÉNIENNE DE CHAVILLE
SAMEDI, 15 MAI — A PARTIR DE 20 H. 30
Avec l'Orchestre «ARTANAG» Buffet Arménien
Salle de Fêtes de Chaville — Rue Stalingrad

MAISON DE LA CULTURE ARMENIENNE
9, Rue de Madrid - 94140 Alfortville

EXPOSITION DE PEINTURE

SONIA et PUZANT TOPALIAN
JACQUES ASLANIAN
Les 14 - 15 - 16 Mai

VERNISSAGE ET RENCONTRE
AUTOUR DE LA PEINTURE
Avec les Artistes
Le 14 Mai, à partir de 21 h.

— ENTREE LIBRE —

ՀԱՅ-ՀԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Շաբաթ, Մայիս 15, ժամը 20-ին, նախաճեռնութեամբ հայ նախկին Ռազմիկ - ներու եւ Դիմադրականներու Միութեան։

YAN'S CLUB
5, Avenue Reille — 75014 Paris

կը դասախօսէ՝-

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՕՍ

երկրաբան՝

ԳՆԴ. ՊԵՐՃ ՊՕՇՆԱՔԵԱՆ

Նիւթ՝- «Հայաստանի մասնակցութիւնը հայրենական մեծ պատերազմին եւ Հայաստանի բնական հարստութիւնները»։

Տեղերը ապահովել հեռաձայնելով Պ. Գ. Պարգըրճեանի՝-


770 - 07 - 25

Ճաշագին 120 Ֆ.։

Meubles Ghazarian

4.000 m² de mobiliers présentés en ambiance

Z.I. Vitrolles
à 20km de Marseilles
tél. (42) 89.27.47
ouvert le dimanche après-midi



visitez une des plus belles expositions de France

"Բացառիկ գեղչ «Ցառաջ»ի բաժանորդներուն"

ԽՆՋՈՅՔ - ՄԱՀ

NOVOTEL - BAGNOLET
10, Avenue de la République - Bagnolet
Métro: Gallieni

Կազմակերպուած կապ. Խաչէ փարիզի մանանճիւղին Նովոթէլի սրահներուն մէջ, Շաբաթ Մայիս 15, ժամը 20·00-էն մինչեւ լոյս։ Հայկ. ճոխ յայտագիր։ Սեղանները ապահովել հեռաձայնելով՝-

233 41 74 եւ 206 42 50

Հայկական մթնոլորտ, երգ, նուագ, պար, Իտալիայէն հրաւիրուած «Հորի - զոն» խումբին կողմէ։

Կ'երգէ ՕՐ. ՀԵՐՄԻՆԷ ԵՐԻՑԵԱՆ (Վիէննայի օփերայէն)

Ճաշագին 150 Ֆ.։

Ժամը 22էն ետք՝ մուտք 30 Ֆ. պիճֆ։

SEVAN VOYAGES — SABERATOURS — VOYAGES WASTEELS
vous proposent

VOYAGES EN ARMÉNIE

PROCHAINS DÉPARTS
du 12 JUIN au 25 JUIN
du 19 JUIN au 27 JUIN
ainsi que:
DU 10 JUILLET AU 23 JUILLET
DU 31 JUILLET AU 13 AOUT DU 14 AOUT AU 27 AOUT
DU 04 SEPTEMBRE AU 17 SEPTEMBRE
DU 18 SEPTEMBRE AU 1er OCTOBRE DU 02 OCTOBRE AU 15 OCTOBRE

Renseignements et Inscriptions:

A PARIS:
LEVON BAGHDASSARIAN
SABERATOURS
31, rue d'Argenteuil
75001 PARIS
tél. 261 - 51 - 13
M° Pyramides

A LYON:
VAROUJAN SARKISSIAN
SEVAN VOYAGES
48, Cours de la Liberté
69003 — LYON
Tél.: (7) 860. 13. 66

A MARSEILLE:
JACQUES CHELELEKIAN
WASTEELS
87, La Canebière
13001 — Marseille
Té.: (91) 95. 90. 12

ՁԱՇ

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի Տէսինի վարչութիւնը ճաշ մը կը կազմակերպէ միայն կիներուն համար, Շաբաթ, Մայիս 15, Տէսինի Մշակոյթի Տան մէջ։ Մուտքը 40 Ֆ.։

Երեկոյեան ժամը 8-էն սկսեալ։

ՀԱՅԱՆ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ

ՍՓԻՒՌՔԻ ՎԷՊԸ

խանիքս տպուած, միշտ՝ սպառած

Գին՝ 70 ՖՐԱՆՔ
Թղթատարով 180 Ֆ
Դիմել՝ «ԾԱՌԱՋ»

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Հայ Ուսանողաց Օգնութեան Միութիւնս շնորհակալութեամբ ստացաւ, Օր. Էլմոնէ Ճիվէլէկեանէ 100 Ֆ. ողբացեալ Բարգէն Թէրզեանի մահուան առթիւ, նաեւ 1981 - 1982-ի տարեշրջանին համար, Տէր եւ Տիկին Ց. Յարութիւնեան 250 Ֆ., Տէր եւ Տիկին Ժ. Տամլամեան 150 Ֆ.։

Imprimé sur les Presses
du Journal «Haratch»
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

«ԾԱՌԱՋ»Ի

ԸՆԹԱՑԻԿ ԱԶԳԱՐԱ ՍԱԿԱԳԻՆԸ

ՅՈՒՆՈՒԱՐ 10-ԷՆ Ի ՎԵՐ

Մահազդ	250 (294)
Հոգեհանգիստ	125 (147)
Շնորհակալիք	125 (147)
Հարսնիք, Նշանուխ	150 (176·40)
Ծնունդ	150 (176·40)

Բոլոր ազգերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 17·6% թէ·կէ·Ա· (տե՛ս վաճառքի մէջ ընդհ· գումարը)։

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին վարչութեան։

ՈՒՐԲԱԹ
ՄԱՅԻՍ
14
VENDREDI
14 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՅԱՍՊԻՐ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ : 180 Ֆ.
Արտասահման : Տար. 400 Ֆ. - Հատը : 2.50 Ֆ.

57րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.171 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 57e ANNÉE — No 15.171

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՆԱԽԱՐԱՐԱՑ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆՈՐ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

=——=——=

Իր հերթական նիստին ընթացքին, Մայիս 12-ին, Ֆրանսական կառավարութիւնը կարգ մը որոշումներ տուաւ, որոնք որոշ իրատեսութիւն մը կը մատնեն ընթերվարական ըմբռնումներուն մէջ:

Ապագայ Յուլիս մէկէն սկսեալ Արժէքին Վրայ Աւելցուած Տուրքը (Թէ - Վէ - Ա) 17,60-էն կ'անցնի 18,60-ի, ինչ որ պէտք է 3,1 միլիառ րեռէ Պեռութեան, բայց պիժամանակ նոյն Թէ - Վէ - Ա-ն 7%-էն 33-ի կ'իջնէ ուռեռեղէնի վրայ: Բնական տուրքը (թախս տ'ապիթասիոն) 1 Յունուար 1982-էն իսկ, 60-ը անց այն անձերուն համար, որոնք եկամուտի աղբիւր չեն վճարեր: Այս Յունուար 800 միլիոն ֆրանքի կը նստի պեռութեան: Ազգայնացած Հաստատութեանց 3 միլիառ ֆրանքի նուէր մը կ'ըլլայ եւ 6 միլիառ օժանդակութիւն պանքային ճիւղին: Արհեստական տուրքը (թախս փրոֆէսիոնել), ինչպէս յայտնուած էր գործադրութեան Ապրիլ 16-ին, 5 միլիառ ֆրանքի նուազում մը պիտի արձանագրէ 1982-ին եւ 6 միլիառ 1983-ին:

Միւս կողմէ նարնջագոյն քաոթին 40%-ը գործատէրը պիտի վճարէ Հոկտ. 1-էն սկսեալ եւ 50%-ը 1983 Հոկտեմբեր 1-էն: Ցարդ ընդհ. ձեւով 23 Ֆ. էր փոխադրութեան հատուցումը (մամուլի մէջ՝ արդէն իսկ 111 Ֆ. է բաւական առնէ): Ան-իկա կը նպաստէ ոմանց, բայց կը վնասէ անոնց որոնք կառքով գործի կ'երթան եւ այլեւս հատուցում պիտի չստանան:

Ցարդ մը որոշումներ ալ արուած են պատասուորներու իրաւունքները աւելցնելու աշխատավայրերուն մէջ: Նախարար Ուռ կը նախատեսէ բաւական թոյլտուութիւններ, խտացուած չորս օրինագիծերու մէջ:

Այս բոլորը անշուշտ դեռ Ազգ. Ժողովի քուէն պէտք է անցնի, բայց հոն ալ մեծամասնութիւնը ծանօթ է:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՄՈՎ

ՊՈՊԸ Լիզպոնէն Ֆաթիմա հասած էր Հոկտեմբերի իրիկուն եւ կէս գիշերին Սրբազանը կ'աղօթէր, չնորհակալութիւն յայտնելու համար Կոյսին, որ ճիշդ տարի մը առաջ զինքը փրկած էր Սզճայի հարուածէն, երբ կղերականի զգեստ հագած երիտասարդ մը փորձած է վրան խոժել: Ծովհ. Պօղոս Բ. ուխտաւոր կարծած է ու դէպի անծանօթը կը դառնար, երբ ապահովութեան սպասարկու-ներ պաշտօնեաները անմիջապէս բռնեցին զինք: Հինգշաբթի առտու դեռ հատու-ու կենտ լուրեր կային միայն, բան որոնց դարպիա անձ մըն է ենթական, որ ձեռքը դաշոյն մը ունէր եւ կ'ուզէր սպան-նել Պապը: Կ'բուէր թէ Սպանացի է:

ՅՈՒԳՈՒԼի Եւրոպայի բաժակներուն բաժակը չահեցաւ Գարչելոնայի խումբը, 1-ի դէմ երկու կէտով պարտութեան մատնելով Լիէժի խումբը:

ՖՐԱՆՍԱՅԻ 600 զինուոր եւս ղրկուե-ցան Լիբանան, ամբողջացնելու համար Միացեալ Ազգերու ուժերը:

ՄԱԼՈՒԻՆԵՐՈՒ մէջ Անգլիացիք ար-ժանթինեան երկու օդանաւ վար առած են:

ԱՆԳԱՐԱ ժամանած է Միացեալ - Նա-հանգներու Արտաքին նախարարը՝ զօր. Հէյկ, որ խվրէնի հետ պիտի քննէ երկու երկիրներու յարաբերութիւնները: Հէյկ, ապա, Աթէնք պիտի անցնի:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԸ Միլանոյի մէջ

=——✝——=

ՄԻԼԱՆՕ («Յառաջ»).- Խաչքարերու ցուցահանդէսը որ պատրաստուած էր Հայ արուեստին նուիրուած Գ. Սիմբոլիումին առթիւ, Վիչէնցայի եւ Պուսթօ Արսեցիոյի մէջ ներկայացուելէ յետոյ, այժմ կը ցուցադրուի Միլանօ հնաբանական թանգարանին մէջ: Ցուցադրութիւնը կազմակերպուած է Միլանոյի քաղաքապետութեան Մշակութային բաժանմունքին կողմէ, գործակցութեամբը Թանգարանի տնօրէնութեան, Միլանոյի Հայ Մշակոյթի ուսումնասիրութեան կեդրոնին եւ Իտալիոյ Հայ Մշակութային Միութեան:

×

Պաշտօնական բացումը կատարուեցաւ Մայիս 6-ին, երեկոյեան ժամը 17·30-ին ընտիր բազմութեան մը ներկայութեան որու մէջ կը նշմարուէին բազմաթիւ իտալացիներ որոնք միշտ համակրանք եւ հետաքրքրութիւն ցոյց տուած են հայ մշակոյթի արտայայտութիւններուն հանդէպ:

Թանգարանին տնօրէնն՝ Տօքթ. Էրմանո Ալան, որպէս հիւրընկալ, իր բացման խօսքին մէջ վեր առաւ ցուցահանդէսին նշանակութիւնը, նամանաւանդ որ ան կը կայանայ նոյն այն վայրին մէջ ուր ամիսներ առաջ կանգնեցաւ իրական խաչքարը զոր Միլանոյի քաղաքին նուիրեց խորհ. Հայաստանի կառավարութիւնը ի նշան երախտագիտութեան Իտալիոյ՝ այլ մանաւորապէս Միլանօ քաղաքին ցուցաբերած քաջալերանքին համար իտալահայ մշակութային ձեռնարկներու նկատմամբ:

Իտալիոյ Հայոց Միութեան նախագահ՝ Տօքթ. Օննիկ Մանուկեան պատասխանեցաւ Տօքթ. Ալանին, չնորհակալութիւն յայտնեց քաղաքապետութեան եւ Թանգարանի վարչութեան, եղած համակրանքին ընդունելութեան համար, չեշտելով որ այստեղ ցուցադրուած խաչքարը, նմանահանութիւններն ու նկարները կը հանդիսանան ամէն մի Հայու ներկայութիւնը՝ Իտալիոյ հիւրընկալ եւ ասպնջական հողին վրայ:

Ապա խօսք առաւ Փրոֆ. Ալբակօ Նովէլլօ որ ներկայացուց խաչքարերու խորհուրդն ու իմաստը հայկական իրականութեան մէջ, նշելով որ անոնք միայն դերեզմանաքարեր չեն, այլև կը հանդիսանան հայ արհեստաւորին, արուեստագէտին, չինականին ապրումները իր պատմութեան եւ առօրեայ կեանքին զանազան շրջաններուն, ըլլան անոնք ուրախ կամ տխուր:

Ապա ներկայ հասարակութիւնը հետաքրքրութեամբ շրջեցաւ ցուցադրուած նկարներուն եւ խաչքարերու նմանահանութիւններուն (քալք) չուրջ յայտնեցուած բացատրութիւններուն:

Ցուցահանդէսը բաց կը մնայ մինչեւ Մայիս 25, որմէ վերջ կը փոխադրուի Մարսէյլ:

Հ. Բ.

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ՊՆԱԿԸ ՏԵՍԻՔ

=——=——=

Մեր եկեղեցիին մեծ ծօներէն վերջ երկու – երեք օր մէկ նախադասութիւն միայն կը լսենք մեր չուրջիններէն. «Ես այս տարի գացած էի այսինչ եկեղեցին. եկեղեցին բերնէ բերան լեցուն էր, աննախընթաց բազմութիւն կար»:

Իրաւ ալ մեր Ժողովուրդը հաւատացեալ Ժողովուրդ է, կը լեցնէ մեր սուրբ տաճարները, կը հետեւի արարողութիւններուն, կը վերանայ, աղնիւ ապրումներ կը յանձնուի: Այս բոլորէն վերջ կը վերանորոգուի, յաճախ ուժ եւ չնորհ կը ստանայ, զոհունակութեամբ տուն կը վերադառնայ:

Բայց տօնական օրերու այդ խանդավառութենէն չաբաթ մը վերջ հոսկէ - հոնկէ դանդատներ կը սկսին հասնիլ: Գանգատներ՝ արբատեղիներու մէջ յաճախ Աստուծոյ ծառայողներուն կողմէ գործուած ինչ - ինչ խայտառակութիւններէ: Ինչէ՞ր չեն պատմուիր սրտցաւօրէն: Կը սկսինք զարմանալ, կը գայթակղինք, կը բարկանանք: Չենք ուզեր հաւատալ. չափազանցութիւն է, թշնամութիւն է, կը խորհինք: Բայց ոչ: Ուրիշ վկայութիւններ ալ կը հասնին չուտով: Սրտցաւ հաւատացեալներ, մաքրակրօն ու աւանդապահ ազգայիններ լրենց դէմքը կը ծամածռեն, նողկանք կ'արտայայտեն եւ երբեմն ալ իրենց խօսքը կ'աւարտեն սա չատ մտահոգիչ նախադասութեամբ.

«Անգամ մըն ալ եկեղեցի ոտք պիտի չդնեմ»:

×

Բարեկամ մը ունիմ, որ տօնական օրերու ընթացքին օտար եկեղեցի մը երթալ կը նախընտրէ այն օրէն ասդին երբ նոյնանք զգաց մեր եկեղեցիներուն ներքին կամ դուրսը կատարուած մեծապատիւ «մուրացկանութենէն»: Պնակներ, պնակներ, պնակներ, եւ անոնց գլուխը՝ պոռացող - կանչող, եթէ պէտք ըլլայ թեւէդ բռնող – քաշող «ազգայիններ»: Այս տեսարանը նողկանք պատճառած էր իրեն: Ո՛չ թէ անոր համար որ դրամ տալ չէր սիրեր: Ընդհակառակն ես ականատես վկան էի թէ ինչպէս առատաձեռն նուիրատուութիւններ կ'ընէր մեր բոլոր վարժարաններուն, հիւանդանոցներուն ու եկեղեցիներուն: Սակայն անհանդուրժելի կը գտնէր եկեղեցիի մէջ այդ կերպով կատարուած այդ տգեղ մուրացկանութիւնը: Իրեն այնպէս կը թուէր որ ատիկա ցեխարճակում էր հոգեկան որբազան արժէքներու վրայ, անվայել էր, Աստուծոյ կամքին հակառակ:

Անկէ վերջ, տօնական օրերուն միշտ խուսափեցաւ մեր եկեղեցին երթալէ: Գուցէ չտեսնելու համար այդ գայթակղեցուցիչ պատկերը...:

×

Այսպիսի արդիւնքի մը դիմաց չեմ զարմանար: Հոգեկան ապրումներու չէնքը այնքան նուրբ ու դիւրաբեկ կառոյց ունի, որ ան մէկ անդամէն ու ամբողջովին կրնայ փուլ գալ, եթէ փոքրիկ քար մը խաղցնենք անոր այս կամ այն անկիւնէն, կամ չունչի մը չափ թեթեւ փչենք անոր հիման վրայ: Ամբողջ չէնքը մէկ վայրկեանի մէջ վար կ'իջնէ ու իր տեղը կը թողու ափ մը մոխիրի:

Ճիշդ է որ այդպէս ըլլալու չէր: Մեր հաւատքը այնքան զօրաւոր պէտք է ըլլար, որ չցնցուէր մէկ երկու պատասխանատուներու անխորհուրդ սայթաքումներէն: Բարիքի, բարեգործական, աղնիւ չարժուձեւերու նկատմամբ մեր հաւատքը կը ցնցուի՞ աչխարհի վրայ չար մարդիկ տեսնելով: Չի ցնցուիր: Նոյնպէս պէտք չէր որ մեր չերմեռանդութեան մեր եկեղեցասիրութեան, մեր աւանդասիրութեան մէջ բան մը փոխէինք, տեսնելով այս կամ այն քահանային, եկեղեցիի այս կամ այն ծառային անբաւարարութիւնը, սայթաքումը:

Բայց իրողութիւնը այն է որ, - եւ թեբեւս ալ ատիկա բարեբախտ կարգադրութիւն մըն է - հոգեւոր ապրումները չեն կրնար «խաղաղ դոյակցութեամբ ապրիլ» լղճուկութեան եւ զռեհկութեան հետ: Վերացողը չի հանդուրժեր իր չուրջ ստորնացողներ տեսնելու, որովհետեւ եթէ վերացողը չի խանգարեր ստորնացողը, ստորնացողը, ընդհակառակն, լրիւ կը լղճայ վերացողին հոգեվիճակը: Այս երկուքը չեն կրնար քով քովի մնալ: Երկուքէն մէկը պէտք է հեռանայ զայրոյթով ու գայթակղութեամբ: Եւ յայտնի է անշուշտ թէ ով պիտի ըլլայ հեռացողը:

×

Արեւագալի օրերուն քահանայ մը իր եկեղեցիին մէջ, արարողութեան վեհանչուն մէկ վայրկեանին սապէս կը կրկնէր անդադար.

- Ասչը համբուրեցէք, պնակը տեսէք: Ասչը համբուրեցէք, պնակը տեսէք:

Ջերմեռանդ հաւատացեալ մը ի՞նչ կը զգայ արդեօք թուքակային այսպիսի տգեղ յանկերգի մը դիմաց:

Ռ. Հ.

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ ՀԵՌԱՑՈՂ

ԵՐԵՒԱՆ (ԱՐՄԷՆՓրԷՍ ՄԱՑԻՍ 8 - 10)

ԴՈՐՊԱՏԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԼՍԱՐԱՆՆԵՐԷՆ ՄԷԿԸ՝ Խ. ԱՒՈՎԵԱՆԻ ԱՆՈՒՆՈՎ ԿՈՉՈՒԱԾ Է

Տարտուի (նախկին Դորպատ, Էստոնիա) Համալսարանի լսարաններէն մէկուն սպիտակ բարձր կամարներուն տակ դրուած է Խաչատուր Աբովեանի մարմարէ կիսանդրին. պատերուն փակցուած են անցեալ դարու առաջին կէսի փորագրանկարներ: Այդ լսարանը կոչուած է Խաչատուր Աբովեան, որ եղած է Դորպատի համալսարանի առաջին հայ ուսանողը: Համալսարանը պատրաստուելով իր 350-ամեակին, խնամքով կը պահպանէ այն բոլոր նիւթերը եւ առարկաները, որոնք կապուած են իր անուանի սաներուն հետ: Համալսարանին կից բացուած գիտութեան պատմութեան թանգարանին մէջ հաւաքուած են այդ անուանի աչակերտներու ձեռագիրները, դասախօսութիւններու համառօտագրութիւնները, տարրալուծարանի այն սարքերը՝ որոնցմէ օգտուած են անոնք: Գրադարանին մէջ կը պահպանուին մշակութային բազմաթիւ մասունքներ. հոն այցելուները կրնան տեսնել պարսկական երգերու այն փոքր հաւորը, զոր Աբովեան նուիրած է Համալսարանին: Ներկայիս Տարտուի Համալսարանին մէջ կ'ուսանին 30 ազգերէ ուսանողներ, որոնց մէջ բազմաթիւ Հայեր՝ որոնք կը հետեւին բժշկութեան, բանասիրութեան, անտեսագիտութեան, իրաւաբանութեան ճիւղերու:

ՓՈՍԹՊՈՍ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ 45-ՐԴ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Դասաւորման պատկերը հետեւեալն էր Մայիս 12-ին (օրուան խաղերէն առաջ), գլուխն են.- Արարատ, Պախտակոր եւ Դինամօ Մինսք 12 կէտով: Արարատ ու - նեցած է 10 խաղ, 5 յաղթանակ, 2 հաւասար, երեք պարտութիւն եւ նչանակած - ատացած (կօլ - ավըրէյճ) 12/12: Այս արդիւնքը կը յաջորդէ Արարատի հանդիպումներուն Դնեպրի հետ (Մայիս 8) ուր հաւասար մնացած է եւ Մետալիստի (Մայիս 12) որմէ պարտուած է հակառակորդի դաշտին վրայ 0-ի դէմ 1 կէտով:

Ընդհանուր դասաւորման մէջ, երեք առաջիններուն կը յաջորդեն.- Դինամօ (Կ), Դինամօ (Թ), Կուբան, Զենիթ, Դնեպր, ՌԿՄԱ, Տորպեդօ, Դինամօ (Մ.), Զերնոմորեց, Շախտեար: Վերջինն է Տորպեդօ (Մ.) 5 կէտով:

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ
ԱՒԵՏԻՍ ՄԵՍՈՒՄԵՆՑԻ
ՅԻՇԱՏԱԿԻ ՅԵՐԵԿՈՅԹԻՆ ԱՌԹԻՒ

Գրեց՝ ՀՐԱՆԴ ԱՃԷՄԵԱՆ

Մայիս 16–ին, Սորպոնի մեծ ամփի - թատրոնին մէջ տեղի կ'ունենայ Ֆրան - սահայ Մշակութային եւ Երիտասարդաց Միութիւններու եւ Սորպոնի Մշակութային կոմիտէի կազմակերպութեամբ յար - դանքի ցերեկոյթ մը, նուիրուած երա - ժիշտ Աւետիս Մեսրոպեանցի յիշատա - կին:

Բառին իսկական առումով արուեստա - գէտ մըն էր Մեսրոպեանց, որ իր կեանքի աւելի քան կէս դարը ապրեցաւ Ֆրանսա, առաւելաբար փարիզեան շրջանը, ոչ մի - այն հասնող սերունդներուն հայերէն երգ սորվեցնելով ու անոնց մէջ հայ երաժշ - տութեան սէրը արթնցնելով, այլեւ յօրի - նելով, երկնելով ու ստեղծելով երաժըշ - տական մեծ ու փոքր գործեր, որոնք ան - կասկած իրենց յատուկ տեղը պիտի ու - նենան հայկական երաժշտական դանձա - րանին մէջ:

Մեծ եղեռնէն մնացած որբ մըն էր Մե - սրոպեանց՝ որ իր ծննդավայր Արաբկիրէն Տէր Զօր, Հալէպէն Ֆրանսա, ուր եցաւ և իր ճակատին քրտինքովը, առանց ափ եր - կարելու ասոր կամ անոր, հասաւ իր սի - րած արուեստին մէջ նախանձելի բարձ - րութեան մը: Կեանքը ապրեցաւ տառա - պանքով, Հայութեան անորոշ ճակատա - գրով: Եղեռնի ու աքսորի տխուր յիշա - տակները խորապէս ազդած էին իր հո - գիին վրայ եւ այդ վիշտը կարմիր թելի մը նման կը ցոլանար իր եւ իր յօրինում - ներուն մէջ:

Աւետիս Մեսրոպեանց (Մելքոնեան) հա - մեստ էր ու հեռու ցուցականութենէ: Նկարագիր մը՝ որ յատուկ է իսկական արուեստագէտի: Ան չեզաւ իր յօրելեանը կազմակերպող դէմքերէն մէկը. չեզաւ նաեւ իրենց ապրանքը ճկուն լեզուով ծա - խել դիտցող արուեստի մարդոցմէ: Մե - սրոպեանց վեր մնաց այդ բոլորէն, զնա - հատեց սկսնակներու առաջին քայլերը, քաջալերեց յառաջադէմ ուժերը ու դէր - ման տաղանդները: Իր առօրեայ մտա - հոգութեանց առանցքը դարձուց հայ ե - րաժշտութեան նուիրուած երիտասարդ ուժերու երեւումը, հայ ազգային երա - ժըշտութեան վերաբերող հարցերը, անոր տոհմիկ նկարագրի ու յատկանիշներու պահպանումն ու զարգացումը եւ այդ բո - լորի միջոցով մեր ժողովուրդի ազգային նկարագրի անաղարտ ապահովումը:

Մեսրոպեանցի կեանքը եղաւ անվերջա - նալի երկունք մը: Հեռու մնաց ինքնացու - ցադրութեան բեմերէ ու իր առանձնասեն - եակը քաշուած տքնեցաւ, անդուլ ու ան - դադար ստեղծեց, արտադրեց, յօրինեց, հաւաքեց, մշակեց, դաշնաւորեց ու հայ երաժշտութեան գանձարանը հարստացուց ինքնատիպ, դոյզրիկ եւ արժէքաւոր մե - ղեդիներով:

Երաժշտական պատկառելի վաստակ մը կը թողու Մեսրոպեանց մեզի: Կը բաւէ յի - շատակել քանի մը թիւեր իր ստեղծագոր - ծութենէն՝ ցոյց տալու համար անոր վաս - տակին պատկառելիութիւնը եւ մանա - ւանդ այլազանութիւնը՝ 4 համանուագ, 3 օփերա, 1 քնարական ողբերգութիւն, 3 օփէրէթ, 2 բեմադար, սենեկային երա - ժըշտութեան բազմաթիւ գործեր, բազ - մաթիւ մեներգներ ու խմբերգներ, դպրո - ցական 50 երգերու շարք մը եւայլն: Բացի ասոնցմէ, Մեսրոպեանց շնորհակալ գործ կատարած է տարբեր շրջաններու ազգագրական երգերը հաւաքելով:

Ան խնամքով հաւաքած ու թուղթին յանձնած է Աբարկիրի, Զմշկածագի, Տա - բօնի, Եգեսիոյ, Շապին Գարահիսարի ժո - ղովրդական մեղեդիները, զանոնք քաղե - լով հին սերունդի վերջին ներկայացու - ցիչներու դողդոջ շրթներէն. մեղեդիներ՝ որոնք անբաժանելի մասը կը կազմէին մեր մշակոյթին եւ զորս պէտք էր կո - րուսած փրկել: Այս խմաստով ալ յիշեալ շրջաններու հայրենակիցները երախտա - պարտ պէտք է զգան իրենք զիրենք Մե - սրոպեանցին, որ այդ երգերու եւ մեղեդի - ներու ձայնագրութեան մէջ անաղարտ պահելով տոհմիկ նկարագիրը, նրբու - թիւններն ու թովչանքը, կենդանացու - ցած է զանոնք ստեղծող ժողովուրդի կենսական ոգին:

Համառօտ այս տողերով, անշուշտ, կարելի չէ խոր վերլուծումի ենթարկել Մեսրոպեանցի երաժշտական վաստակը, այսուհանդերձ վեր առնելու համար անոր վաստակին նկարագրային քանի մը յատ - կանշական գիծերը ըսենք, որ Մեսրոպեանց իր իւրաքանչիւր յօրինումի մէջ՝ ըլլայ ան երգ, նուագ, խմբերգ, նուագախումբի համար գրուած մեծ կամ փոքր գործ, սիրտ ու հոգի դրած է: Իրեն համար գո - յութիւն չունէր փոքր չափի կամ ծա - ւալուն գործ, կարեւորը ստեղծագործու - թիւնն էր, որ անպայման ծնունդը պէտք է ըլլար երկունքի մը: Ճաշախ կը նկա - տենք, որ դպրոցական մանուկներու սահ - մանուած երգի մը (50 երգերու շարքին բոլոր բառերն ալ ինք գրած է) կ'ընկե - րանայ խորունկ կառուցուածքով նուագի բաժին մը: Երեւոյթ մը՝ որ երեւան կը հանէ երաժշտին լրջութեան դիտակցու - թիւնը արուեստին հանդէպ: Իր ստեղծա - գործութիւններուն աղբիւրը ժողովուրդն է ու անոր երգը: «Երբ կ'աշխատիմ, - կ'ըսէ ան, - իմ ներշնչումը կը ստանամ հայ ժողովրդական երգերու ակունքէն, որ բացարձակ անհրաժեշտութիւն է տոհ - միկ երաժշտութիւն ստեղծելու համար: Եւ բոլոր անոնք՝ որ կը հեռանան այդ ան - հուն գանձէն, իրենց արտադրութիւնը կը դառնայ անհաղորդ մեր ժողովուրդին հա - մար»: Ինչ կը վերաբերի Մեսրոպեանցի ծա - ւալուն գործերուն՝ համանուագ, օփերա կամ սենեկային երաժշտութիւն, պէտք է նշել, որ անոնց մէջ կը ցոլանան Արեւել - քի եւ Արեւմուտքի զօրեղ ընդելուզումով շաղախուած երանգներ:

Մեսրոպեանց հարուստ մեղեդիներով հիւսուած իր մեներգները գրած է Պետ - րոս Դուրեանի, Դերենիկ Զարիւճեանի, Յովհաննէս Թումանեանի, Մարօ Մար - գարեանի, Նարպէյի, Ռոզա Պետրոսեա - նի, Վահրամ Մաւեանի, Հ. Ղեւոնդ Ալի - շանի եւ այլ բանաստեղծներու բառերով, զորս սորվեցուցած է ոչ միայն Նոր Սե - րունդի Փարիզի եւ Իսիի մասնաճիւղերու անդամներուն, այլեւ Իսիի «Սրիմեան» ղպրոցի աշակերտներուն՝ հայերէնի դա - սերու առընթեր: Իր շրջանին ղպրոցը ու - նեցած է մինչեւ 120 աշակերտ: Հոս, յատուկ պէտք է յիշել, որ այդ աշակերտ - ներէն ոչ ոք ներկայ էր Մեսրոպեանցի յու - պարկաւորութեան: Այս ալ՝ ուրիշ ոգ - ևորութիւն մը:

1950-ական թուականներու Փարիզի մը - չակութային եւ արուեստի կեանքի աչ - խուժութիւնը շատ բան կը պարտէր Մե - սրոպեանցի, որուն օփէրէթները՝ «Ղարա - բաղի Մելիքներ», «Տէր Գոռնակ», «Ոսկի հէքեաթ» եւ այլ գործեր, իսկական վա - յելքներ եղած են հանդիսականներուն հա - մար, որոնք երկար ատեն լեցուցած են սրահները:

Մեսրոպեանցի երգերը առաւելաբար հընչեցուցած ու տարածած են Լիլի Տուրեան, Շաքէ Պէնկեան, Մկրտիչ Պօղոսեան, Աւետիս Քիւրիւէլեան, Աստղիկ Քէօսէեան, Աստղիկ Տէտէեան եւ ուրիշներ, որոնք բեմերէն եւ զանազան առիթներով հա - ւաքոյթներու ընթացքին մեկնաբանած են արուեստագէտին գործերը: Հայաստան 1980-ին էր, որ արժանին հատոյց, այն ալ չնորհիւ Թոմանի երաժշտանոցի տը - նօրէն Ալեքսանտր Սիրանոսեանի ջանքե - րուն: Սիրանոսեանի ղեկավարութեամբ Երեւանի Փիլհարմոնիք նուագախումբը հնչեցուց Մեսրոպեանցի Ա. Համանուագը, որուն մասին դրուատանքով արտայայ - տուեցան Հայաստանի երաժիշտները: Հայաստանի անուանի երգչուհիներէն Գոհար Գասպարեան եւս, զանազան ա - ռիթներով, հնչեցուցած է Մեսրոպեանցի երգերէն նմոյշներ: Ամէնէն ծանօթ եր - գերէն յիշենք՝ Ծիծառնիկը, Գիւղի երգը, Քեզնից ինձի եար չըլնի, Գարուն, Յետ մահու եւայլն:

Մեսրոպեանցի ամէնէն յատկանշական եւ կոթողային գործը կը մնան այն 4 համա - նուագները, որոնք կը ներկայացնեն հայ ժողովուրդի պատմութիւնը՝ սկիզբէն մինչեւ մեր օրերը: Հեղինակը զանոնք կո - չած է՝ Նայիրեան Համանուագ Ա.- Հե - թանոսական, Նայիրեան Համանուագ Բ.- Նեղերական, Նայիրեան Համանուագ Գ.- Դիւցազնական եւ Նայիրեան Համանուագ Դ.- վերածնունդ: Բազմամարդ նուագա - խումբի եւ երգչախումբի համար գրուած այս գործին մեկնաբանութիւնը, ինչպէս յաճախ կը կրկնէր ողբացեալ երաժիշտը, կրնայ իրականացնել միայն Երեւան, որ կը յուսանք օր մը կը յարգէ հայ երա - ժըշտութեան այս նուիրեալին վսեմաքե - կոթողային գործ մըն է նաեւ «Մխիթար Սպարապետ»ը, որուն ձայնագրութիւնը մնաց սեւագիր վիճակի մէջ: Թող Մայիս 16-ի յուշի ցերեկոյթը կարելիութիւն ըն - ծայէ հրատարակելու Մեսրոպեանցի գոր - ծերէն գէթ մաս մը, որմնգմէ միայն քա - նի մը նմոյշներ լոյս տեսած են ցարդ:

Ահաւասիկ քանի մը անկապ տողերով համառօտ պատկերը այն հսկայ աշխա - տանքին, զոր տարած է Աւետիս Մեսր - պեանց իր ամբողջ կեանքի ընթացքին, տալով շատ բան իր ազգին՝ արուեստի ճամբով, եւ շատ քիչ հակադրուած ու գնահատուած անկէ: Մեր ժողովուրդը պիտի կարենա՞յ գնահատել այս խոս - կան արուեստագէտը եւ զոնէ, անգամ - ուան մը համար, գործադրել այն ցաւա - լի խօսքը՝ որ մերը եղած է ընդհանրա - պէս, թէ՝ «գնա՛, մեռիր, եկո՛ւր՝ սի - րեմ»: Այլ խօսքով, իրենց ծննդավայրի - րու ժողովրդական երգերը հաւաքած ու կենդանացուցած երաժիշտին յիշատակը, Մայիս 16-ին, պիտի կարենա՞ն յարգել իրենց ներկայութեամբ բոլոր անոնք՝ ո - րոնք անոր ողջութեան մնացին անտար - բեր, բացակայեցան անոր յուղարկաւո - րութենէն եւ որեւէ ձեւով չվերցան աջ - տայայտել անոր իրենց երախտապարտ - թիւնը:

Վերջացնենք մեր մտորումները «Մի հառաչանք» վերնագրով Յովհաննէս Թու - մանեանի մէկ բանաստեղծութեան հիման վրայ Մեսրոպեանցի գրած երգին բառե - րով, որոնք այնքան կը յարմարին ողբաց - եալ արուեստագէտին, որ պատկառելի վաստակով մը փակեց իր աչքերը 1981 Հոկտ. 11-էն 12 լուսնալիք գիշերը: Խօսքը կուտանք Մեսրոպեանցի՝ Թումանեանի բառերով.

Եթէ մի օր, աւո՛յ ընկեր,
Գաս այցելու իմ շիրմին,
Ու նորաբոյս վառ ծաղիկներ
Տեսնես փռուած չորս կողմին,

Դու չը կարծես թէ հասարակ
Ծաղիկներ են ոտիդ տակ,
Կամ թէ գարունն է այն բերել,
Իմ նոր տունը զարդարել:

Նրանք չերգած իմ երգերն են,
Որ սրտումըս ես տարայ,
Նրանք սիրոյ այն խօսքերն են,
Որ դեռ չասած ես մեռայ:

Նրանք իմ ջերմ հառաչներն են,
Այն աշխարհիցս ուղարկուած,
Որի ճամբէն էս առջեւ
Գերեզմանով է փակուած:

Ցարգանք յիշատակին անոր՝ որուն կեանքը պատարագ մը եղաւ հայ երա - ժըշտութեան բագինին առջեւ:

ԴԱՒՈՅԻ
ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԻՆՉՊԷՍ ՍՊԱՆՆԵՑԻ ՋԻՆՔԸ

Գրեց՝ ՏԱՃԱՏ

ԽՄԲ.- «ԾԱՒԱՋ».- Դաւո-ի ահաբեկիչ Տաճատ Թէրլէմէզեանի յուշերը՝ դաւա - ճանին սպանութեան մասին իր իսկ կող - մէ, ահաբեկումէն (1908 Մարտ 10), 34 տարիներ ետք, կ'արտագրեմ «Վասպու - րականը եւ իր տարագիր զաւակները» հատորէն, հրատարակութիւն Համա - վասպուրականի Հայրենակցական Միու - թեան (Մ. Ն.) 1942, տպ. Հայրենիք, Պոսթըն:

×

Ճետագայ դէպքերը անմիջականօրէն նաեւ կապուած են իմ պատանեկական կեանքիս հետ եւ կը գրաւեն 45 օրերու շրջան մը, 1908 Յունուար 25, Մարտ 10, հին տոմարով: Շատ շատեր կը հետաքըր - քըրուին յեղափոխական օրերու մեր այդ դժբախտ պարագաներու իսկական պատմութեամբ եւ կը փափաքին լսել զայն: Ես այս գրութեանս մէջ, առաջին անգամ ըլլալով, պիտի ջանամ ներկա - յացնել փաստերն ու եղելութիւնները ճիշդ այնպէս, ինչպէս որ պատահեր են, առանց ճիպ թափելու զանոնք վերլուծե - լու եւ եզրակացութիւններ հանելու ա - նոնցմէ:

×

Ա.- ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

Երբ 1908 Յունուար 25-ի ուրբաթ օրը կէսօրէ վերջ լուր տարածուեցաւ թէ Ա - գեստանի մէջ խուզարկութիւններ տեղի կ'ունենան Թուրք կառավարութեան կող - մէ, Քաղաքամիջի չուխան անմիջապէս զգուշացաւ, եւ տղամարդիկս փութացինք Ա.գեստան վերադառնալ: Երբ Ասչ - փողց հասանք, անհաւատալի եւ անըմբռ - նելի տեսարանի մը հանդիպեցանք: Աչ - քերուս տեսածներուն հաւատալս չէր գար: Տասնեակ մը կառքեր բեռնաւոր - ուած հարիւրաւոր մօսիկի հրացաններով եւ հարիւրաւոր տասնհարուածեան (մաու - զեր) ատրճանակներով կը պարպուէին Թուրքերու կողմէ եւ ոստիկանատուն կը փոխադրուէին: Տասնեակ մը այլ սայլե - րու վրայ կը դնուէին անհաշիւ մնոուկ - ներով լեցուն փամփուշտներ, յեղափո - խական զինուորական հագուստներ եւ զինուորական ամէն տեսակի կազմածներ: Մի քանի հարիւր Թուրք զինուորներ ամ - բողջ հրապարակը շրջապատած էին. հը - րացանները ուղղուած մուխինները, զէն - քերը ձեռքերնին բռնած, պատրաստ կը - րակելու որեւէ պատահականութեան պա - րագային:

Հակառակ այս վտանգին, չուկայէն վերադարձող հարիւրաւոր հայ տղամար - դիկ կը բոլորուէին զինուորական չղթա - յի շուրջը: Շշմած մնացեր էինք: Զգի - տէինք թէ ի՞նչ էր պատահած. նորանոր կառքեր եւս կը հասնէին շրջապատուած ձիաւոր զինուորներով: Զգիտէինք թէ ի՞նչ էր պատահած. միայն գիտէինք որ յեղափոխական գոյքեր էին բերուածնե - րը, եւ կը պատկանէին Դաշնակցական - ներուն, որովհետեւ անոնք միայն կա - րող էին ունենալ այդ կարգի պատրաս - տութիւններ այդ օրերուն: Բայց ի՞նչպէս Թուրքերու ձեռքն էին անցած անոնք: Ժողովրդի մէջ նկատեցի իմ խմբի ըն - կերներէն Մանուէլ Ոսկերիչեանը, որ դեռ դպրոցական, չուկան չէր իջներ: Անոր հետաքրքրութիւնս գոհացնելու համար պատասխանեց թէ «Դհէրցի Դաւօն է դա - ւաճաներ»: Անհաւատա՛լի լուր, ի՞նչպէս Դաւօն կարող է մատնել այս զէնքերը՝ դոր ձեռք բերելուն մէջ անիկա անպատ - մելի դեր էր կատարած:

Անմիջապէս մեկնեցանք հրապարակէն, եւ պատուիրելով Մանուէլին որ մեր խումբի անդամներուն լուր տար որ - ուած վայրը հաւաքուիլ: Եւ որպէս մեր խմբի խմբապետ, փութացի կ. կոմիտէի մօտ՝ իմանալու մեր ընելիքներու մա - սին:

Կարգադրուած էր գիշերով տեղափո - խել բոլոր այն պահեստները, որոնց մա - սին կասկած կար թէ դաւաճանը կրնայ տեղեկութիւն ունենալ: Մենք վստա - հէինք թէ յաջորդ առտու դարձեալ խու - զարկութիւն տեղի պիտի ունենար: կո - միտէն անմիջապէս քանի մը փոքրիկ եւ վարժ խումբեր նշանակած էր հետա - պընդելու եւ սպաննելու համար Դաւօն: Ես, Տիգրան Մանդակունեանը եւ Ցարու - թիւն Վասիլեանցեանը դիմեցինք կ. կո - միտէին որ մեզ ատրճանակ տան Դաւօն հետապնդելու համար, բայց մերժուե - ցանք, պատանի եւ անփորձ ըլլալնուս պատճառաւ: Մեզի յանձնարարուեցաւ չե - խուզարկութիւններ կատարել եւ լուր տալ իրենց:

(Շար. 1)

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Անկայունութենէ աւելի կայուն բան չկայ այս աշխարհի մէջ:

ՍՈՒՖՖ

ԱԿԱՆԱՏԵՍԻ ՅՈՒՇԵՐԷՆ

Հակառակ անհերքելի փաստերու եւ բացարձակ ճշմարտութիւններու, հակառակ ժամանակակից օտար անձնաւորութիւններու վկայութիւններուն, Թուրքը կը շարունակէ անպատկառօրէն ուրանալ այն ահաւոր ոճիրները, զորս գործեց 1915-ին ու անոր յաջորդող տարիներուն, թնաջնջելու համար համօրէն հայ ժողովուրդը:

Անիկա ոչ միայն չընդունիր իր մեղապարտութիւնը, այլ նաեւ լինքզինքը արդարացնելու համար, կը համարձակի յերիւրծոյ առասպելներ հնարել, իր գործած ոճիրները վերագրելով Հայերուն:

Սակայն եւ այնպէս, ցեղասպանութեան այդ թուականը, հակառակ 67 տարիներու անցեալ մը ունենալուն, տակաւին կը վերապրողներ, այդ դէպքերուն ականատես վկաներ, որոնց յիշողութեանը մէջ անջնջելի կը մնան սպանդէն զարհուրելի տեսարանները:

1915-ի ամառն էր. Մեծ Եղեռնի արիւնազանգ թուականը:

Ուրֆայէն դէպի հարաւ, Մէսքէնէէն ի՛նքզինքն երկարող ճամբաներուն վրայ աշխատող հայ գինուորներս, առանձին օր ականատես կ'ըլլայինք անցնող կարաւաններուն աղեխարշ տեսարանին եւ մեր աչքերը կը տամկանային ի տես հայ ժողովուրդի ողբալի վիճակին. թէեւ մեր կացութիւնն ալ համեմատաբար նուազ արգահատելի չէր:

Հայկական նահանգներէն, Սեւ ծովու ափերէն, Փոքր Ասիոյ հայաբնակ գաւառներէն տեղահան եղած Հայերու իրերայաջորդ կարաւաններն էին նեռուած՝ ապրզրութեան ճամբաներուն վրայ, որպէս ոչխարի հօտեր դէպի սպանդանոց, հեծեալ ոստիկաններու ու բանակէն արձակուած մարզապաններու հսկողութեան տակ նշանակ՝ Չարդի ու թալանի սպասող խուժանի ամենօրեայ յարձակումներուն հարաւի ուղղութիւնը բռնած ամխներէ ի վեր անդադար կը քալէին արեւածագէն մինչեւ մայրամուտ:

Աբեւի կիզիչ ճառագայթներուն տակ, բաղկացած կիներէ, աղջիկներէ ու մանչերէ ալեհեր մարդոցմէ, բոկոտն ու ցընցոտիպատ, քաղցէն ու ծարաւէն հիւծած, ճամբու տաժանքէն ուժասպառ, անճանաչելի դարձած մարդկային այդ խըճողակները, որոնց համբանքը հեռուհեռէ կը նօսրանար Չարդերու առեւանգումներու ու մահացու հիւանդութիւններու հետեւանքով, բիրերով, հրացանի կոթով ամէն կը քշուէին դէպի անապատները, ջրառատ մարտակերպ դաշտերը:

×

Որ մը մայր մը իր երկու երախաներով, ծծկերը կռնակը միւսին ձեռքէն բռնած, յայտնապէս քաղցէն ու ծառաւէն հիւծած, քալելէն պարտասած, չէր կրնար հետեւիլ կարաւանին. երախաները նոյն — պէս անօթի ու ծարաւ, կը հեծկլտային կողկողաձայն ու մայրը ոչինչ ունէր զանոնք կերակրելու:

Դաժան ոստիկանը, որ ինկած էր այս կնոջ ետեւէն, կը գոռգոռար, բրտօրէն կը հրէր ու կը հարուածէր հրացանի կոթով, որպէսզի արագացնէ քայլերը ու միանայ կարաւանին. սակայն թշուառ կինը բոլորովին ուժասպառ, անտրտունջ կ'ընդունէր հարուածները, առանց կարենալ փութացնելու քայլերը. ինչ որ դժգոհութիւն կը պատճառէր ոստիկանին, որ զայրացած՝ հրացանի կոթով երեք ուժգին հարուածներ եւս կուտար, մէկը անոր դլխուն, միւսը կռնակը կապուած մանկիկին, հարուած մըն ալ ահէն ճչացող երախային, դիտապարտ փախելով երեքը միասին:

Ասպա սուպզելէ յետոյ իր գործած ոճիրը, երիցս մարդասպան ոստիկանը կը հեռանար, բերնէն դուրս չպրտելով հետեւեալ խօսքերը.

- Իչ կեավուր տահա էֆսիհ օլսուն. երեք անհաւատ եւս պակաս թող ըլլայ:

Կ. Ս.

Փարիզի Աղոտասխնամ Ընկերակցութեան 90-ամեակը

Մայիս 4-ին, Փարիզի Ինթէռ – Քոն - Թինանթալ պանդոկի հիւրասրահին մէջ տեղի ունեցաւ ճաշ մը, Աղքատախնամ Ընկերակցութեան 90-ամեակին առթիւ, նախագահութեամբ տարեցներու ենթանախարար՝ Ժոզէֆ Ֆրանչեսքիի: Հաւաքոյթը իր ներկայութեամբ կը պատուէր Կաթ. պատուիրակ՝ Սերովբէ Արք. Մանուկեան:

Ախորժաբերներէ եաք, ճաշը կը սկսէր ժամը 20·30-ի չուրջ, երաժշտական մըթնոլորտի մը մէջ զոր կ'ապահովէր Պեր - նար Տէվէճեան իր նուագախումբով: Գեղարուեստական բաժնին կը մասնակցէին երգիչ Վիգէն եւ «Նայիրի» պարախումբը:

Ճաշի աւարտին Գիւտ Եպիսկ. կը կարդար Ամենայն Հայոց Վազգէն Կաթողիկոսի կոսի տուած կոնդակը 1981 Դեկտեմբեր 15-ին, ընկերակցութեան 90-ամեակին առթիւ եւ ուղղուած Կաթ. պատուիրակ՝ Սերովբէ Արք. Մանուկեանի: Հոն, Վազգէն Ա. կը չեշտէր, ի մէջ այլոց - «Բարեսէր միութեանդ վարչութեան գովելի ջանքերու շնորհիւ, Ֆրանսայի մէջ հիմնուած՝ Անտիլիի, Մոնմորանսիի եւ Սէն - Ռաֆայէլի Զեր հոգատարութեան ու խնամքին ներքեւ գործող երեք ծերանոցները, նոյնպէս Զեզի համար, Ֆրանսահայութեան պատիւ բերող բարեսիրական հաստատութիւններ են, ուր բազմահարիւր տարեց մայրիկներ ու հայրիկներ, իրենց կեանքի վերջին տարիները կ'ապրին հայաշունչ խաղաղ ու ապահով պայմաններու մէջ: ... Այս բարեպատեհ առիթով, Մեր երախտագիտութիւնը կը յայտնենք հիւրընկալող Ֆրանսացի մեծահոգի ժողովուրդին եւ իր մարդասէր պետական իշխանութեանց, որոնք մարդասիրական մշտական հոգածութեան կը ցուցաբերեն Ֆրանսահայ ծերանոցներու նկատմամբ»:

Ընկերակցութեան նախագահը՝ Ժակ Գալճեան կարճ ելոյթով մը, շնորհակալութիւն յայտնեց Ժոզէֆ Ֆրանչեսքիի, որու հետաքրքրութիւնը հայութեան հանդէպ Ալֆորվիլի թէ ազգ. գեհենի վրայ ամէն գնահատանքի արժանի է: Այս առթիւ յայտնեց նաեւ «ռատիօ - Ազգ»ի պաշտօնական ծնունդը:

Տարեցներու ենթանախարարը խանդավառ ճառ մը արտասանեց, համեմատած արամատութիւններով: Նախ ճշդեց թէ ի՞նչ հանգամանքով կը խօսի՝ իբրեւ քաղաքապե՞տ, իբրեւ նախարա՞ր, ո՛չ, չեշտեց Ժոզէֆ Ֆրանչեսքի, «իբրեւ ձեր ամէնէն անկեղծ բարեկամը: Սիրոյ հին պատմութիւն մը կայ Հայերուն եւ իմ միջեւ»: Ալֆորվիլի քորսիքացի քաղաքապետը, հարց տուաւ նաեւ՝ Հայերն ե՞ն որ Քորսիքացիներէն կը սեռին, թէ Քորսիքացիները՝ Հայերէն... : Պատմեց թէ նամակ մը ստացած է Թրքական դեսպանատունէն, ուր կ'ըսուի իբրեւ թէ Հայերու ճնշումին տակ, Նափոլէոն ուզած էր տապալել Թուրքիան: Անդրադառնալով, ապա, Աղքատախնամ ընկերակցութեան եւ անոր 90-ամեակին, յիշեց թէ ներկայիս Ֆրանսայի մէջ եօթնուկէս միլիոն անձ կայ՝ 65 տարեկանէն վեր, որոնց 3-ուկէս միլիոնը՝ 75-էն վեր են եւ 430·000 ալ 85-էն վեր: Այս թիւերը պիտի կրկնապատկուին մինչեւ դարուս վերջ եւ ասիկա կարեւոր հարց մըն է: Ուրեմն հանգստեան տուները պէտք է հանգստաւէտ ըլլան եւ համապատասխան այօդուան աշխարհին: Ցայտնեց թէ նպաստաւոր ընթացք պիտի տրուի եղած դիմումներուն եւ Սէն - Ռաֆայէլի Թղթածրարը լաւ ճամբու մէջ է: Ենթանախարարը չեշտեց Հայերու մշակոյթի պահպանման անհրաժեշտութիւնը, ի սպաս քաղաքակրթութեան եւ յայտնեց թէ խօսած է կրթական նախարարին հետ, հայերէնի դասընթացքներ հաստատելու համար, հայաշատ շրջաններու հանրային դպրոցներուն մէջ եւ թէ Ա. Սաւառի նպաստաւոր կարծիք յայտնած է:

Այս յայտարարութիւնը մեծ խանդավառութիւն ստեղծեց ներկաներուն մօտ եւ խանդավառութիւնը աւելի մեծցաւ երբ Ժ. Ֆրանչեսքի իր ելոյթը վերջացուց «կեցցէ՛ անմահ Հայաստանը» հայերէն խօսքերով:

×

Երեկոյթը, մեչտ երաժշտական մըթնոլորտի մէջ եւ թոմպոլայով մը վերջ գտաւ ժամը 2-ին մօտ:

ՇՐՋ. ԹՂԹԱԿԻՑ

Լրատու տրտնջոցի

Ալէն Պարսամեան, թոռը՝ դրագէտ Մկրտիչ Պարսամեանի եւ Տոքթ. Արամ Ճինճեանի, նկարչական իր գործերը կը ներկայացնէ Մայիս 17-էն Ցունիս 30:

BANQUE NATIONALE DE PARIS

Cergy — Pontoise

Parvis de la Préfecture

Ծնած 1947-ին, Նէօյի, Ալէն Պարսամեան, նախ զբաղած է լուսանկարչութեամբ, ապա հետզհետէ նկարչութեան նուիրուած է: Այս առաջին անձնական ցուցահանդէսին, կը ներկայացնէ 56 իւղաներկ եւ 14 գծագրութիւն:

ԿԵԱՆՔԸ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ՏՈՒՆԷՆ ՆԵՐՍ

Ալֆորվիլի մէջ Հայ Մշակութային Տուն մը հաստատուելէն ի վեր ազգային մշակութային կեանքը կենդանութիւն մը առած է: Հոն հիմնական աշխատանք կը տարուի որպէսզի աճող սերունդը դիտակցի թէ հայ մշակոյթը կը պահէ իր երիտասարդութիւնը ժամանակներուն ընդմէջէն: Ան ունի երգի, պարի եւ երաժշտութեան դպրոցներ, ժողովրդական արուեստի, Քոչարիի, մխիթարի եւ ժամանակակից հայկական պարի ու աւանդական հայ երաժշտութեան արուեստանոց – ներ, ինչպէս նաեւ լուսանկարչութեան աշխատանոց եւ թատերախումբ մը, (որոնց իւրաքանչիւրին աշխատանքին պիտի անդրադառնանք յետագային), ունի նաեւ հայերէն լեզուով դիրքերու դպրան մը, որ կը կարդադրուի որպէսզի ընթերցասէր հասարակութեան տրամադրութեան դրուի:

×

Ամէն Շորեքշաբթի 70-է աւելի երախաներ կը հաւաքուին այնտեղ, իրենցմով կը զբաղի հաստատութեան տնօրէնուհին եւ օգնական վարիչները, որպէսզի զիրենք զգայնացնեն հայ լեզուի, Հայոց պատմութեան եւ աշխարհագրութեան, անոնց մտքին մէջ դրոշմելով - անոնց ճանչցնելով հայ ազգին պատկանելու հաճոյքն ու հպարտութիւնը: Ահաւասիկ այսպէսով, ան կը քաջալերէ երիտասարդ տաղանդները ու նեցուկ կը կանգնի անոնց, որպէսզի արտայայտեն իրենց պիտութիւնն ու չնորհները ու հետեւաբար կը տարածէ եւ կը զարգացնէ մշակութային արժէքները, որոնք մարմնացումն են մեր դարերու քաղաքակրթութեան: Քաջալերելի են բոլոր անոնք որոնք յանձն առած են վարել այս դժուար աշխատանքը:

ՏԱԼԻԹԱ.

ՍՊԻՏԱԿ ՋԻԱՒՈՐԸ

= ՀԱՄԱՍՏԵՂ =

ՄԱՍ ՉՈՐՈՐԴ

ԴԷՊԻ ԳԱՐԱՏԱՂԻ ԼԵՌՆԵՐԸ

- Յալիլ, տղաս, ձեր մէջ չարժում մը որ տեսած ենք, անմիջապէս ուզած ենք յարաբերութեան մէջ մտնել, օգնելու եւ չարժումը ոտքի կեցնելու համար: Շարժման զեկավարներու գիտակցութիւնը չի բաւեր. ժողովուրդն է, որ պիտի ըմբռնէ ու իր գոհը պիտի բերէ այդ չարժման: Այդ գիտակցութիւնը պակաս է քիւրտ ժողովուրդին մէջ: Այդ գլխաւոր պատճառներէն մէկն է ձախողութեան: Քրտական պատմութեան մէջ եղած այս փոքր չարժումները եւ նոյնիսկ ձախողութիւնները արդէն բաւական հող պատրաստեցին: Այս ձեր չարժումը չպէտք է ձախողի եւ չի ձախողիր, երբ համալ մը կուգայ Պարսկաստանէն ու խումբին մէջ կը յայտնուի:

«Վարդանը, որ Վարդաձորի կռուին մէջ է, Տոքթ. Նայիրեանը, որ այժմ Պարսկաստան է, Մուրատը, որ այս օրերուն 300 գինուորներով կ'ուզէ սահմանն անցնիլ՝ Վարդաձորի կռուին հասնելու համար, այս մեր բոլոր ընկերները երբ լմցան, որ այս անգամ Շէյխի սըզան՝ Յալիլը չարժման մը գլուխ անցած է, ուզեցին յարաբերութեան մէջ մտնել: Ահա թէ ինչո՞ւ այս տեղ է Զէրզի կիրոսը եւ քիչ մնաց պարապ տեղը մեր գլուխը վրայ տայինք:

«Ես Վարդաձորի լեռնէն վար իջայ: Կ'ուզէի երթալ Գարափուռար ուրիչ կարեւոր աշխատանքի մը համար, որ պիտի պարզեմ քիչ յետոյ»:

Յալիլ սկսաւ պարզել իր նախնական աշխատանքները եւ ըսաւ, որ ինք պիտի աշխատէր յարաբերութեան մէջ մտնել հայ ֆէտայիներուն հետ եւ այդ ուղղութեամբ պիտի ուղէր խօսիլ Սեներքերիմին հետ: Որ, բոլոր վտանգները աչքին առնելով պիտի տեսնուի յայտնի ու անյայտ քիւրտ ցեղապետներուն հետ, անոնց աջակցութիւնները կապելու նոր չարժման: Արդէն Գարափուռարի պէս վտանգաւոր վայրի մը մէջ ստեղծուած է զաղտնի խումբ մը, աջակցութեամբ իր զպրոցական ընկեր Ալիին, որ այնտեղ քրքական պաշտօնեայ է:

– Մենք դեռ երկար ճամբայ ունինք կտրելիք, Կիրոս էֆէնտի: Կարելի չէ բաղդատել հայկական չարժման հետ, որ իր եռեւ հերոսական պատմութիւն մը ունի: Հայ մտաւորականութիւնն է, զըլխաւորած է այդ չարժումը: Ունիք մտմուլ եւ հեղինակներ եւրոպական խմաւով: Իսկ մենք տակաւին նոր կը մտածենք հրատարակել զաղտնի թերթ մը, արաբական տառերով: Մեր մէջ նոյնիսկ առաջարկողներ կային, որ այդ թերթը հրատարակուի հայկական տառերով: Կրնաս երեւակայել, Կիրոս էֆէնտի, կը մտնեմ գեղապետին, որ հետաքրքրուած է միմիայն աւարով: Անգամ մը նոյնիսկ կեանքս վտանգեցի, երբ քիւրտ գեղապետ մը ուզեց բռնել զիս ու կատաւարութեան յանձնել:

– Մի կարծեր, տղաս, որ մենք դժուարութիւն չունեցանք մեր չարժման նախնական շրջանին: Մեր առաջին թըշնամին նոյնինքն Հայն էր, որ կը մատնէր: Անոնք մատնած են ձմեռ ժամանակ զաղտնի տուներու մէջ պատսպարուած ֆէտայիները: Մատնած են զէնքերու պահեստանոցներ, իսկ մենք առանց խնայելու՝ մահով պատժած ենք զանոնք: Ուէչ բանի առջեւ չպէտք է տնտնալ երբ նպատակ մը կայ իրագործուելիք: Դուք չուտով կը գտնէք ձեր ճամբան, եթէ մի քանի տէրօրներով սարսափ ձգէք ցեղապետներուն մէջ, ըսել կ'ուզեմ անոնց՝ որոնք թրքասէրներ են ու վնասակար կ'ըլլան ձեր չարժման: Աւելի լաւ ճամբու վրայ էք, երբ կը մտածէք զաղտնի թերթ ալ հրատարակել: Հա, իմացայ, որ վերջերս տեսակցութիւն մը ունեցեր ես Հաճի Մուսայի հետ: Այո՞, - հարցուց Կիրոս անհամբեր հետաքրքրութիւն դնելով իր ձայնին մէջ:

(Շար. 563)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տիկին Շաքէ Մայիսեան եւ զաւակները՝ Բարսեղ եւ Անի կը ծանուցանեն թէ Հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի, Կիրակի, Մայիս 16, Փարիզի Ս. Ցովհ. Մկրտիչ Եկեղեցին, իրենց ամուսնոյն եւ հօր՝

ՆԱԶԱՐԷԹ ՄԱՑԻՍԵԱՆԻ

մահուան Բ. տարելիցին առթիւ:

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն:

=——✝——=

Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի Ընդհանրական ժողովը կը ծանուցանէ թէ Հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Կիրակի, Մայիս 16, Փարիզի Ս. Ցովհ. Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ, ի յիշատակ Վարժարանին հանգուցեալ հիմնադիրներուն, բարերարներուն, խնամակալներուն, տնօրէններուն, ուսուցիչներուն եւ սանուհիներուն:

Կ'ՈՒԶՈՒԻ

Մեքենայի վրայ աշխատող կարուհի մը, փլուի համար: Մնայուն աշխատանք:

Անձամբ դիմել՝-

ETS. CALDIRAC

65, Rue Melay — Escalier A

75003 — PARIS

Métro: Strasbourg - Saint - Denis

ԿԱՊՈՑՏ ԽԱՉ

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Փարիզաբնակ մանուկներուն արձանագրութիւններուն համար, դիմել Տիկին Լ. Ֆորլանի՝-

Հեռաձայն՝ 254 - 81 – 79

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ կը կազմակերպէ

ԳՐԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՑԹ ՄԸ

Նախագահութեամբ՝

ՄԱՌՒ ԱՒՄԱՃԵԱՆԻ

Նուիրուած՝ բանաստեղծներ՝

ԱՇԱՐՈՆԻ ԵՒ ՋԱՆԳՈՒԻ

կը խօսին՝

ՎԱՐԴԱՆ ԵՂԻՇԷԵԱՆ (Ահարոն)

եւ

ՍԵՐՈՎԲԷ ՄՈՒՐԱՐԵԱՆ (Զանգու)

Մայիս 23, Կիրակի, ժամը՝ 16-ին
au Centre Culturel Alex Manoogian
118, Rue de Courcelles - 75017 Paris

Կ'արտասանեն՝

Տիկին Ա. Կարապետեան, Տիկին Սրմենուհի Բալուեան: Պ. Պ. Ն. Պըշտիկեան, Վ. Նաւասարդեան:

Մուտքը ազատ է:

Grand - Bal

DE LA CROIX-BLEUE ARMÉNIENNE DE CHAVILLE

SAMEDI, 15 MAI — A PARTIR DE 20 H. 30

Avec l'Orchestre «ARTANAG» Buffet Arménien

Salle de Fêtes de Chaville — Rue Stalingrad

OUVERTURE D'UN MAGASIN

BOIS DÉTAIL - BRICOLAGE

FACE PORTE «G»
DU PARC DES EXPOSITIONS

ԲԼՎԱՆԵԱՆ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

FORESTIERE DE L'EST

Contreplaqué	Colle
Aggloméré	Clous - Vis
Latté	Quincaillerie
Sapin	Petit outillage
Chevrons	Meubles
Tasseaux	en bois blanc
Moulures	Étagères Kit

5, Rue du 4 Septembre - Vanves - Tél. 736. 96. 02

20 bis, Av. Lowendal - Paris 15ème - Tél. 734. 70. 75

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Լիոնի Հայ. Առաք. Եկեղեցւոյ Ազգ. Մխիթեան վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ գումարները՝- Տէր եւ Տիկին Ճ. Պահատուրեան 500 Ֆ. Զգաւորաց, Տիկին Ճուհար Ադըլեան 400 Ֆ. Եկեղեցւոյ, Պ. Թորոսեան (Շասէն) 150 Ֆ. Եկեղեցւոյ, Տէր եւ Տիկին Գարագիւլահեան 200 Ֆ., Տիկին Նուարդ Խժտահարեան 50 Ֆ. Նահատակաց առթիւ Եկեղեցւոյ, Տէր եւ Տիկին Գանպէրեան փոխան Ծաղկեպսակի Եկեղեցւոյ, Հայ Դատին, Տէսնի Մշակու-թային Տան, Սէն Մօրիսի դպրոցին եւ «Ցառաջ»ին 100-ական Ֆ.:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Իսիի մասնաճիւղը շնորհակալութեամբ ստացած է 500 Ֆ. Տէր եւ Տիկին Ցովակիմ Պօղոսեանէ, իրենց զաւկին Յարութիւնի մահուան Ա. տարելիցին առթիւ, ինչպէս նաեւ Այրի Տիկին Սիրանոյշ Գարակէօզեանէ 100, եւ 100 Ֆ. ալ Իսիի Հայ Մշակոյթի Տան:

Imprimé sur les Presses
du Journal «Haratch»
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ՃԱՇ-ԲԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Շաբաթ, Մայիս 15, ժամը 20-ին, նախաձեռնութեամբ հայ նախկին Ռազմիկներու եւ Դիմադրականներու Միութեան:

YAN'S CLUB

5, Avenue Reille — 75014 Paris

կը դասախօսէ՝-

ԵՐԵՒԱՆԻ

ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՕՍ

երկրաբան՝

ԳՆԴ. ՊԵՐՃ ՊՕՇՆԱՔԵԱՆ

Նիւթ՝- «Հայաստանի մասնակցութիւնը հայրենական մեծ պատերազմին եւ Հայաստանի բնական հարստութիւնները»:

Տեղերը ապահովել հեռաձայնելով Գ. Պարզբճեանի՝-

770 - 07 - 25

Ճաշագին 120 Ֆ.:

Samedi, 15 Mai, à 19 h.

Téléphonez au: 416. 11. 33

JEAN-CLAUDE DELACROIX

Répond à toutes les questions que vous vous posez, en direct, sur l'antenne de:

«Radio - Ask»

FM. 100 Mhz.

ԽՈՒՋՈՅՔ - ՃԱՇ

NOVOTEL - BAGNOLET

10, Avenue de la République - Bagnolet

Métro: Gallieni

Կազմակերպուած Կազ. Խաչի Փարիզի մասնաճիւղին Նովոթէլի սրահներուն մէջ, Շաբաթ Մայիս 15, ժամը 20·00-էն մինչեւ լոյս: Հայկ. ճոխ յայտագիր: Սեղանները ապահովել հեռաձայնելով՝-

233 41 74 եւ 206 42 50

Հայկական մթնոլորտ, երգ, նուագ, պար, Իտալիայէն հրաւիրուած «Հորդ-գոն» խումբին կողմէ:

Կ'երգէ ՕՐ. ՀԵՐՄԻՆԷ ԵՐԻՑԵԱՆ (Վիէննայի օփերայէն)

Ճաշագին 150 Ֆ.:

Ժամը 22էն ետք՝ մուտք 30 Ֆ. պիճֆ:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԱՑԱՑՈՒՄ

Ի նպաստ Լիոնի Հայոց Եկեղեցւոյ նորոգութեան եւ հովանաւորութեամբ տեղւոյս հոգեւոր հովիւ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՋԱՔԱՐԵԱՆԻ

Լիոնի հայերէն խօսուն թատրոնը կը ներկայացնէ Ուրբաթ, Ցունիս 4-ին երեկոյեան ժամը՝ 8·45-ին՝ «Տայը կարապետ»ը կամ «Ամերիկահայ փեսացուն» Սիկալ սրահին մէջ:

60 Ավրնիւ տը Սաֆս, Լիոն 6-րդ

Տոմսերը ապահովելու համար դիմել Լիոնի Հայոց Եկեղեցին, կամ խազացող անդամ, անդամուհիներուն:

LA JAF, L'UCFAF, LE COMITE CULTUREL DE LA SORBONNE

GRAND AMPHITHEATRE DE LA SORBONNE

47, Rue des Ecoles — 75005 Paris

DIMANCHE, 16 MAI, A 17 H.

CONCERT

En Hommage au Compositeur

AVÉDIS MESSOUMENTZ

Avec la participation de:

— L'Ensemble Instrumental de Romans — Dirigé par A. SIRANOSSIAN

— Groupe Instrumental «SAYAT NOVA» — Dirigé par J.-P. NERGARARIAN

— Chorale «ANI» — Dirigée par H. ADJEMIAN

— L'Ensemble de Danses «NAVASSART» — Le Trio Traditionnel Arménien

Anna Karakaya (Chant) — Elia et Arto Pehlivanian (Kanoun et Dahoul)

CHAKÉ BENGUIAN (Chant) - ANDRÉ OVIGNY (Violon) - SEBOUH APKARIAN (Chant)

Avec l'aimable participation de:

LYNE DOURIAN (Opéra de Paris) — ASTRIG DEDEYAN (Opéra de Bordeaux)

Pianiste: Kouyoumdjian Avo

PRIX DES PLACES: DE 25 A 100 F,

— Location: Centre UCFAF - JAF; Cité du Wauxhall, 75010 Paris - Tél.: 208. 76. 49

Université Sorbonne Nouvelle (Com. Cult.) 13, Rue Santeuil, 75005 Paris Tél. 570.12.90

Yan's Club; 5, Ave. Reille - 75014 Paris — Cité Universitaire; 57, Bd. Jourdan 75014 Paris, Tél.: 589. 55. 53 — Librairie Paloyan; 9, Rue de Trévise, 75009 Paris

Tél.: 523. 24. 97 — Dedeyan (Chaville) Tél.: 750. 46.93 — Davidian (Bagneux)

Tél. 665. 81.53 — Benlian (Issy-les-Moulineaux) — Café Philippe (Alfortville)

Pehlivanian (Sevran) Tél.: 384. 31. 28 — Djizmedjian (Bois-Colombes) Tél.: 781.09.72

RESTAURANT **EREVAN**

ՀԱՑԱՏՈՒՆ **ԵՐԵՒԱՆ**

Իր առանձնական ճաշացուցակով եւ սովորական հաճելի մթնոլորտով՝ կը սպասարկէ Ձեզի:

RESTAURANT EREVAN

26, RUE BERGÈRE - 75009, PARIS

TÉL. 770. 85. 81

ՄԻԱՑՆ ՇԱԲԱԹ ԻՐԻԿՈՒՆՆԵՐԸ

ՎԻ ՔԸ ՔԸ 'ԻՆ

Ընկերակցութեամբ՝ ՍԻՄՈՆԻ

ժամը 21·30-էն սկսեալ կը ներկայանայ իր հայկ. ժողովրդական երգերով, զուարթացնելով ձեր երեկոյթը:

Fermé le Mardi — Փակ է երեքշաբթի

TRAITEUR EREVAN

29, RUE BERGÈRE – 75009 PARIS

TÉL.: 523. 44. 75

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՄԱՅԻՍ
15-16
SAMEDI-DIMANCHE
15-16 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՅՐԱՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ՝ 180 Ֆ.
Արտասահման՝ Տար. 400 Ֆ. - Հատը՝ 2.50 Ֆ.

57րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.172

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

57e ANNÉE — No 15 172

ՊԱՊԻՆ ԴԷՄ ՄԱՀԱՓՈՐՁԸ ԵՒ ՓԱԹԻՄԱ

=——=——=

Պապը սպաննել փորձողը սպանայլ արթայ մըն է, Յուան - Ֆերնանդէզ Քրոն, ամաղամոլ եկեղեցւոյ անդամ, որ ձերբակալուած պահուն ալ սկսած է պոռալ հակալուած վաթիկան Բ. ժողովը, անկց՛ի պապը, անկց՛ի համայնավարութիւնը»: Ինքնեկրիսք Եկեղեցին, որու պլուխն է Լիթիվը եպիսկոպոսը, ճշդեց անմիջապէս իր ենթական տեսակ մը այլասիոհ է: Ի արեական հակայ մըն է, որու յանախ հանդիպեր է Քոթիտիէն տը Փարիի աշ - խատակիցը եւ իր վկայութիւնը կը բերէ թերթին սիւնակներուն մէջ, Ուրբաթ առաւ: Ջայն կը նկարագրէ որպէս բացարեակապաշտ եւ ծայրայեղ անձ մը, որ երու չարաթ առաջ խոստովանած էր «ի ւաոյ, մեծ հարուած մը պիտի տամ...»: Ֆաթիմա, ծանօթ է, տեսակ մը խորհրանիչ է հակահամայնավարութեան : ատիթ է կրկին, որ մամուլը լայն տեղ ալ անոր «երեք գաղտնիքներուն», ոյց միայն երկուքը ծանօթ են: Լը Ֆիգարօ, Լիպերասիոնն իսկ լայն տեղ կուան այս հարցին, ըստ որուն 1917, Մայիս 13ին եւ անկէ ետք ամէն ամսու 13ին ինչու Հոկտեմբեր Կոյսը երեւցած է Ֆաթիմա, երեք փոքրիկներու՝ Լուչիա 10 տարու, Ֆրանչիսքօ 8 տարեկան եւ Ճաչինթա 7 տարեկան եւ պատգամէն ա, երեք գաղտնիք ալ փոխանցած: Ա- առինը կը վերաբերի գժոխքին ուր կ'իյնան թեղմ մեղաւորներուն հոգիները եւ ապեն չատ հոգիներ պիտի փրկուին ե- ՀՀ զինքը լսեն: Երկրորդը կ'ոգեկոչէ յաղթ պատերազմին վերջը բայց եթէ ապրիլ չդարձին մեղանչելէ Տիրոջ դէմ, նոր պատերազմ մը կը սկսի Պիոս ԺԲ-ի գրի, եւ չատ աւելի սարսափելի կ'ըլ - լայ: Ցեսոյ կայ երրորդը, որ ցարդ չէ յայտնուած: Անիկա կրնար յայտնուիլ Սկսյն 1960-էն ետք, Ցովհ. ԻԳ., Պօղոս Ց-Ցովհ. Պօղոս Ա. եւ Ցովհ. Պօղոս Բ. Ենթացած են բայց չեն յայտնաբե - ցած...: Մոնտի աշխատակիցը կ'ակնարեկ չուկներու եւ անհրաժեշտ կը նկատէ պալիս ըսուի, վերջ տալու համար երկ- պիի կացութեան: Լիպերասիոն իրեն աւոյի հեղինակ ու քիչ մը չար ոճով ֆիլոգրական մը նուիրած է, ուր կ'ըսէ ի այլոց թէ Ֆաթիմա, սկիզբէն իսկ, ասծուած է հակահամայնավար պատեազմի մը որպէս մեքենայ:

× Քրոն հարցապնդող դատաւորին կը ներկայանար Ուրբաթ օր:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՄՈՎ

ՏՈՒՐՔԵՐՈՒ մէկ երրորդ կանխավը - ալի երկրորդ մասը, որու վճարման ժամանակամիջոցը Մայիս 15 է, երկարաձգուած մինչեւ Մայիս 18, 15-ը՝ չաբաթավերջի զուգադիպելով:

ՊՈՒԷՆՈՍ - ԱՅՐԷՍի մէջ օտար լրա - գրողներ կ'առեւանգուին եւ կ'արգելափակուին «անծանօթ» խմբակներու կող - էն, որոնք կրնան գաղտնի սպասարկու - թենց անդամ ըլլալ: Վեց լրագրողներ առեւանգուած ապա ազատ ձգուած են, երեք ուրիշներ ալ արտաքսուած են: Ա- առեւանգուած թղթակիցներ անպլիացի եւ ամերիկացի են: Այս վերջինը առեւանգը - ած է երբ դուրս կ'ելլէր արտաքին նա - խարարութենէն եւ երեք ժամ ետք, փո- ոցը ձգուած մօրչ մերկ: Երկրէն ար - ագսուած են երկու Նորվեկիացի եւ մէկ նուէյացի:

ԼԻԲԱՆԱՆի մէջ սուրիա - պաղեստին - ան բախումներէն 60 հոգի մեռած է եւ ցիները չէին դադրած Ուրբաթ օր:

ԱՆԳԱՐԱՁի խէնպողա օգակայանը լ- ած առեն, Մխոցեալ - Նահանգներու Արտաքին Նախարարը՝ կարճ ճառ մը խո- ած է եւ չէչած այդ առիթէ.- «Այն անհրաժեշտ դերը զոր ունի Թուրքիա Ատլանտեան Զինակցութեան ծոցը»:

ԻՐԱՆԱՀԱՅ ԼՈՒՐԵՐ

ԵՐԵՍՓՈԽԱՆ ՀՐԱՅՐ ԽԱԼԱԹԵԱՆԻ ՅԱՆԴՈՒԳՆ ՃԱՌԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԱՌՋԵՒ

Թեհրանի մեր պաշտօնակից «Ալիֆ»ի Ապրիլ 29-ի եւ Մայիս 2-ի թիւերէն կ'իմանանք, թէ Պարսկաստանի խորհրդարանին մէջ հիւսիսային շրջանի Հայոց - թեան ներկայացուցիչը՝ Հրայր Խալաթեան, Ապրիլ 29–ին յանդուգն ճառ մը կարդացած է ներկայացնելով հայ ժողովուրդի համառօտ անցեալը, Հայերու դէմ կատարուած ցեղասպանութիւնը, պարսկահայութեան եւ Թեհրանի ու հիւսիսային շրջաններու հայ բնակչութեան դժուարութիւնները, հոգերը եւ պահանջները: Հայ երեսփոխանը ճառը բաժանած է երկու գլխաւոր մասերու: Առաջին մասին մէջ խօսած է հայ ժողովուրդին դէմ կատարուած ցեղասպանութեան մասին, յիշելով ՄԱԿ-ի Մարդկային Իրաւանց ենթայանձնախումբի ծանօթ 30-րդ պարբերութեան հարցը եւ չեշտը դնելով Իրանի խլամ հանրապետութենէն հայ ժողովուրդի ակնկալութեան վրայ: Հը - բայր Խալաթեան ըսած է.-

«Հայ երիտասարդները մասնակցել են իսլամական յեղափոխութեան եւ այս ճանապարհին զոհեր են տուել, ներկայումս նաեւ կռւում են ճակատներում՝ իրենց իսլամ եղբայրների կողքին՝ նախայարճակ Իրաքի ուժերի դէմ: Եւ ճակատների թիկունքում եւս հայ աշխատաւորները, արհեստաւորները, գիւտարարները, ճարտարապետները եւ հայ հասարակական միտքը՝ իսլամ եղբայրների հետ համաքայլ աշխատում են տնտեսական անկախութեան եւ ինքնաբաւութեան մարզում, որպէսզի սիրելի Իրանը մէկ անգամ ընդմիշտ ձերբազատուի դերմեծ ուժերից կախում ունենալուց:

«Հայութիւնը սրտի խորքից ընդունում է Իրանի իսլամական հանրապետութեան ոչ - արեւմուտք, ոչ - արեւելք քաղաքականութիւնը: Հայ ժողովուրդը ճնշուած եւ տանջուած մի ժողովուրդ է, որը մի- այն ծանր պայքարների միջոցով է կա - րողացել պատմութեան ընթացքում պահպանել իր կրօնական եւ ազգային ինքնութիւնը եւ անկախութեան ձգտող ժողո - վուրդների առաջին շարքում գտնուելով՝ շարունակել իր պայքարը: Եւ Հայութիւնը նոյն էութեան եւ իր իւթայատուկ վիճակի բերումով մասնակցել է Իրանի բոլոր ազատագրական պայքարներին եւ Բահման 22-ի յեղափոխութեան մէջ մասնակցել է նաեւ նոյն խանդավառութեամբ, ու նուիրումով, եւ որեւէ զոհաբերութիւն չի խնայել:

«Հայերը, ինչպէս Պաղեստինցիները եւ այլ ճնշուած ու իրենց հայրենիքից բռնի կերպով քշուած ժողովուրդները, մի շարք սպասելիքներ ունեն Իրանի իսլամական հանրապետութիւնից: Հայերը ամբողջո - վին գիտակցելով Իրանի դժուարութիւն - ներն ու խնդիրները, առանց այն որ ու - զեն ամենափոքր վնասը հասնի Իրանի շահերին, պահանջում են շարունակել պայքարը, համաչխարհային ճնշող ուժերի եւ նրանց գործակալների դէմ, քանի որ գերմեծ ուժերը միշտ իրենց գործակալ կառավարութիւնների ու աբթանեակներն միջոցով աշխատել են Իրանի իսլամական յեղափոխութիւնը չեղել իր իսկական ընթացքից եւ կախեալ դրութեան մէջ դնել նրան»:

Այնուհետեւ Հրայր Խալաթեան անդրադարձած է պարսկահայ գաղթօջախներու եւ զանազան շրջաններու հայ բնակչութեան հարցերուն եւ դժուարութիւններուն :

«Հայոց Թեմի Թեմական Խորհուրդի մի - ջեւ գոյութիւն ունեցող համաձայնագրութիւնը: Հայոց լեզուն Հայութեան կըրօնի ու դաւանանքի հիմքն է կազմում եւ հայ երեխաները երբ խօսել են սկսում, մայրենի լեզուով առաջին աղօթքն են կարդում, եկեղեցիներում նոյն լեզուով են աղօթում եւ գաղթօջախներում նաեւ մայրենի լեզուով են խօսում ու դաս տուո - րում: Հետեւաբար եթէ այս ընթացքում արգելքներ առաջացուեն խարխուլ վիճակի կը մատնուեն Հայութեան կրօնական ու մշակութային հիմքերը:

- «Զարքեշ, Մալիդիէ, Հեշմաթիէ շրջանների եւ Թեհրանի այլ մասերի Հայութիւնը տեղի քաղաքապետարանների կապակցութեամբ դժուարութիւններ ունեն, որ յոյսով ենք կը վերացուեն պատասխանատուների օժանդակութեամբ:

- «Ռաշթ, Ինզելի, Գորգան եւ Սարի քաղաքների եւ Իրանի հիւսիսային բոլոր շրջանի Հայութիւնը խնդիրներ ունի գերեզմանատների, աղօթատեղիների եւ կրօնական ու մշակութային այլ հաստատութիւնների կապակցութեամբ, եւ պատկան հիմնարկութիւններից սպասում է, որ պէտք եղած դիւրութիւնները արուեն եւ հովանաւորուեն այդ ուղղութեամբ իրենց առած քայլերը:

- «Համադանի, Բախթարանի, Արաքի, Ղազուինի, Մաշհադի եւ Իրանի հիւսիսային շրջանների այլ քաղաքների Հայութիւնը նաեւ խնդիրներ եւ դժուարութիւններ ունի, որ յոյսով եմ ինչքան չուտ լուծուեն:

- «Վարժարանների եւ աշխատանքի անցնելու խնդրի վերաբերեալ դեռեւս որոշ հաստատութիւններ կրօնական փոքրամասնութիւններին զրկում են իրենց օրինական իրաւունքներից, յոյսով եմ այս խընդիրը եւս վերանայման կ'ենթարկուի:

- «Այս բոլորից բացի՝ որոշ անհատներ եւ անգամ մի շարք պատասխանատուներ, կոպիտ եւ բիրտ վերաբերմունք են ցոյց տալիս հայ կանանց հանդէպ, եւ յետա - գայինն անհանգստութիւն եւ դժգոհութիւն են ստեղծում:

- «Ի հարկէ այս դիտողութիւններով հանդերձ տեղին է շնորհակալութիւն յայտնել նաեւ երկրի պատասխանատուներին, որովհետեւ բազմաթիւ պարագաներում պատասխանատուները դրական վերաբերմունք են ցուցաբերել եւ ցուցաբերում են եւ բազմաթիւ խնդիր ու դժուարութիւններ պատկան պատասխանատուների օգնութեամբ մինչ այժմ լուծուել են»:

Իր ճառի վերջաւորութեան Հրայր Խալաթեան, առաջարկելէ ետք, թէ ինչպէս Ապրիլ 24-ը արձակուրդի օր հռչակուած է հայկական բոլոր վարժարաններու համար, նոյնպէս եւ արձակուրդ տրուի հայ աշխատաւորներուն եւ դրասենեակներու հայ պաշտօնեաներուն, եզրակացուցած է.

«Ապրիլ ամսուայ առիթով, որ նահատակման ամիս է, իմ պարտականութիւնն եմ համարում, մեծարել ազատութեան եւ անկախութեան ճանապարհին զոհուած բոլոր նահատակների յիշատակը եւ ողջունել նրանց անմեղ հոգիները:

«Հայ ժողովուրդը նաեւ նահատակութեան ուղին որդեգրած, Իրանցիների նահատակութեան ուղին որդեգրած մի ժողովուրդ է եւ ամէն տարի Ապրիլ ամսում, համաշխարհային Ա. Պատերազմի ընթացքում Արեւմտ. Հայաստանում զոհուած մէկ ու կէս միլիոն նահատակների յիշատակին նուիրուած մի արարողութիւն եւ քայլարշաւ է կատարում:

«Նահատակները ժողովուրդների ներշնչման աղբիւրն են եւ անազատ ժողովուրդների պայքարի մղիչ ազդակը, մեր պարտականութիւնն է որ՝ յարգենք նրանց կտակը եւ աշխարհի բոլոր իրաւազրկուածների հետ ձեռք - ձեռքի՝ պայքարենք ազատութեան եւ անկախութեան ձեռք - բերման եւ համաշխարհային ճնշող ուժերի կործանման համար»:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒ ԱԶՆԻՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

=——=——=

Մամուլին, մանաւանդ օրաթերթերուն կրած շարունակական յաւելումները - թուղթ, աշխատավարձ, ընկերային տուրք, թղթատար, առաքում - ստիպեցին փրանսերէն օրաթերթերը, որ յաջորդական յաւելումներ ընեն իրենց գիներուն վրայ, դեռ բանի մը շաբաթ առաջ :

«Ցառաջ», որու միակ եկամուտը կ'ապահովեն բաժանորդագրութիւններն ու ծանուցումները, կ'ուզէ դեռ շրջան մը խուսափիլ յաւելում կատարելէ: Բայց անհրաժեշտ է, որ մեր բաժանորդները գիտակցին թերթիս վարչութեան դժուարութեանց եւ կանոնաւորաբար վճարեն իրենց բաժանորդագրութիւնը, գոնէ մասամբ դիւրացնելու համար թերթիս գործը :

«Ցառաջ»ի վերիրատարակութիւնը (յետ պատերազմեան շրջանի) սկսած ըլլալով Ապրիլ 8-ին (1945), Ապրիլ 8–ին ալ վերջացաւ մեր բաժանորդներու մէկ կարեւոր մասին շրջանը: Ջերմապէս կը խնդրենք, որ վերանորոգեն իրենց բաժանորդագրութիւնը, առանց սպասելու յատուկ դիմումի:

Մասնաւոր շնորհակալութիւններ մեր այն բաժանորդներուն, որոնք միշտ իրենց կանխիկ ու կանոնաւոր վճարումներով ապահոված են թերթիս կանոնաւոր հրատարակութիւնը :

Շնորհակալութեամբ
Վարչութիւն «ՑԱՌԱՋ»Ի

ԿԵՆՔ «ՂՎՎՓՎԱՂՈՎԱՐՈՒ»

ՊԱՏՐԱՍՏՎԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՃԱՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՏԱՐՊԱՁԵՒ

=——=——=

Ֆաբրիկատոր Հայաստանի Տիրապետության Ժամանակ Ստեղծված Տիրապետական Ընկերությունների Մասին

Տիրապետական Ընկերությունների Ստեղծումը Հայաստանում Տիրապետության Ժամանակ Ունեցել Է Մեծ Նշանակություն Տիրապետության Համար։ Տիրապետությունը Ստեղծել Է Տիրապետական Ընկերություններ Հայաստանում Տիրապետության Համար։ Տիրապետական Ընկերությունները Ստեղծվել Են Տիրապետության Կողմից Տիրապետության Համար։ Տիրապետական Ընկերությունները Ունեցել Են Տիրապետության Համար Մեծ Նշանակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Հունվարի 6-ին Հայաստանի Գրողների միությունում տեղի ունեցավ Հուշարձանի հանգամանքը քննարկող հանդիպում։ Զեկուցում կարդաց պատմական գիտությունների դոկտոր Ա. Ղազինյանը։

Հուշարձանի հանգամանքի հարցը ծագել է դեռևս 1913-ին, երբ Երևանի Ֆրանսիական դպրոցի ուսուցիչ Ֆրանսուա Ֆրեդերիքը հայտնաբերել է Հուշարձանը։ Ֆրեդերիքը հրատարակել է նաև Հուշարձանի նկարը։ Հետագայում հարցը քննարկել են Ն. Մառը, Ա. Թամանյանը, Ա. Ալիխանյանը, Ա. Զարյանը, Ա. Շահինյանը, Ա. Տարոնյանը, Ա. Սահինյանը, Ա. Ղազինյանը և ուրիշներ։ Հուշարձանի հանգամանքի հարցը քննարկվել է նաև Գրողների միության կազմակերպած հանդիպումներից մեկում։

Զեկուցողը ներկայացրեց Հուշարձանի հանգամանքի հարցի պատմությունը, ներկայացրեց հուշարձանի նկարագրությունը, ինչպես նաև հուշարձանի վերաբերյալ գրականությունը։ Ա. Ղազինյանը նշեց, որ Հուշարձանի հանգամանքի հարցը ամենից առաջ կապված է Հայաստանի պատմության հետ։ Հուշարձանի հանգամանքի հարցը կապված է նաև Հայաստանի տնտեսության հետ։ Հուշարձանի հանգամանքի հարցը կապված է նաև Հայաստանի մշակույթի հետ։ Հուշարձանի հանգամանքի հարցը կապված է նաև Հայաստանի ժողովրդի հետ։

Զեկուցողը նշեց, որ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի ոչ միայն գիտական շրջանակներում, այլև լայն հասարակության մեջ։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև մամուլում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև հեռուստատեսությամբ։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև ռադիոյով։

Զեկուցողը նշեց, որ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև դպրոցներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև համալսարաններում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև գիտական ինստիտուտներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև թանգարաններում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև գրադարաններում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև արխիվներում։

Զեկուցողը նշեց, որ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև ընտանիքներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև ընկերական շրջանակներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև աշխատավայրերում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև զինվորական միավորներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև ճամբարներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև հանգստյան տներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև առողջարաններում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև զբոսայգիներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև այգիներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև պուրակներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև հրապարակներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև փողոցներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև տրանսպորտում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև ավտոբուսներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև տրոլեյբուսներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև տրամվայներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև մետրոպոլիտենում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև երկաթուղային կայարաններում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև օդանավակայաններում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև նավահանգիստներում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև գետային նավերում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև ծովային նավերում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև սուզանավերում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև տիեզերանավերում։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Լուսնի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Մարսի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Վեներայի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Յուպիտերի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Սատուրնի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ուրանի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Նեպտունի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Պլուտոնի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Արեգակնային համակարգի մյուս մոլորակների վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալֆա Կենտավրոսի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Պրոքսիմա Կենտավրոսի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Բետելգեյզեի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ռիգելի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Սիրիուսի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Կանոպուսի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Արկտուրուսի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Վեգայի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Կապելլայի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալդեբարանի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Անտարեսի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ֆոմալհաուտի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Դենեբի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալտայրի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալբիրեոյի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Միզարի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալկորի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալիոթի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալկաիդի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալնիլամի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալնիտակի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալնիլամի վրա։

Զեկուցողը նշեց, որ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալնիտակի վրա։ Հուշարձանի հանգամանքի հարցը պետք է քննարկվի նաև Ալնիլամի վրա։

Այրի Տիկին Լեւոն Շիրինեան, Տէր եւ Տիկին Ժաք Մուրատեան եւ զաւակը՝ Ա-լեքսանտր, Տէր եւ Տիկին Միշէլ Հար-բութեան եւ զաւակը՝ Սիբիլ, Ռոզա եւ Ներսէս Տակառեան, ինչպէս նաեւ Շիրին-եան, Տէվէճեան, Տակառեան, Մուրատ-եան, Հարբութեան ընտանիքները սրտի խոր ցաւով կը ծանուցանեն իրենց ամուս-նոյն, Հօր, մեծ - հօր, քեռայրին, եղբօր, հօրեղբօր, մօրեղբօր, ազգականին եւ խնամիին՝

ԼԵՒՈՆ ՇԻՐԻՆԵԱՆԻ
(Սեբաստացի)

մահը, որ պատահեցաւ Զորեքշաբթի դի-շեր, Մայիս 12-ին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Երկուշաբթի, Մայիս 17, ժամը 14ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, 15 ռիւ ժան – կուժոն, ուրկէ մարմինը կը փոխադրուի Պանեէօ - Ֆոմիւնյոլ գե-րեզմանատունը ամփոփուելու համար ըն-տանեկան դամբարանը:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

«ՅԱՌԱՋ».- Մեր ցաւակցութիւնները Տիկին Լեւոն Շիրինեանի, զաւակներուն, ինչպէս նաեւ Տակառեան եւ Տէվէճեան ընտանիքներուն:

Գրիգոր Կուրպէթեան, Եւա, ժաք Ա-բիս Կուրպէթեան խոր կսկիծով կը ծա-նուցանեն իրենց աղջկան եւ քրոջ՝

ՍԻՐԱՆՈՇ ԿՈՒՐՊԷԹԵԱՆԻ

կսկծալի մահը, որ պատահեցաւ Մայիս 11-ին:

Համաձայն ողբացեալին կամքին, մար-մինը յանձնուեցաւ գիտութեան, յօգուտ մարդկութեան:

«ՅԱՌԱՋ».- Մեր ցաւակցութիւնները Կուրպէթեան ընտանիքին:

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Հինգշաբթի, Մայիս 20
ՏՕՆ Է ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԿՐԻՍՏՈՍԻ

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ
ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՕՐ

Այս առթիւ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Մայր եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10-ին կը մատուցուի Պատարագ:

Նոյն օրը յատկացուած է նաեւ Հայ Մանուկներու Հաղորդութեան:

Փարիզի եւ շրջաններու բոլոր դըպ-րոցներու աշակերտներն ու Հաղորդու-թեան համար պատրաստուած մեր մա-նուկներն ու ծնողքները կը հրաւիրուին մասնակցելու պատարագին եւ Սուրբ Հաղորդութեան:

SAMEDI, 29 MAI — A 20 H. 30

UNIQUE RÉCITAL A PARIS
DU CHANTEUR ARMENIEN

NORAIR

Avec son ORCHESTRE (8 exécutants)

En Première Partie: Crown Production présente un Opéra - Film (1954)

ANOUSH

Théâtre de l'Empire — 41, Avenue de Wagram

Location:
— **Librairie PALOUYAN;** 9, Rue de Trévise,Paris 9e — Tél:. 523. 24. 97
— **Restaurant HAGOP;** 9, Rue du Nil, Paris2e — Tél.: 296. 37. 41
— **AZAD;** 136, Rue d'Aboukir Paris 2e — Tél.: 233. 87. 87
— **Retaurant EREVAN;** 29, Rue Bergère, Paris 9e — Tél.: 523. 44. 75
— **Restaurant SASSOUN;** Issy - les - Moulineaux — Tél.: 638. 78. 58
— **VIDEO - SON;** 49, Rue Victor Hugo, 94140 Alfortville — Tél.: 375. 26. 89
— **VIDEO - SON;** 21, Rue Jules Michelet,92700 Colombes
— **Mme. DJEKNAVORIAN;** Paris, Tél:. 501.98. 89

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տէր եւ Տիկին Արտաշէս Սարեան իրենց եղբօր՝ Հրանդ Սարեանի մահուան 4-րդ տարելիցին առթիւ կը նուիրեն.- 100 Ֆ. Պանեէօ - Ֆաշանի Հայկ. Դպրոցին, 100 «Յառաջ»ի բարգաւաճման, 100 Ֆ. Իմմի-բլի Հայրենակցական Միութեան, սոս-նալ «Յառաջ»էն:

U.G.A.B. - JEUNES
SAMEDI, 15 MAI — A PARTIR DE 22 H.

Soirée - Disco

Centre Culturel Alex Manoogian
118, Rue de Courcelles — 75017 Paris

Participation aux frais:
— 25 F. Membres — Etudiants
— 35 F. Membres ou Etudiants
— 50 F. Non - Membres

TENUE CORRECTE EXIGÉE

à Vendre

MACHINES RECTILIGNE DE TRICOT
Numéros: 10 et 6

S'adresser à Mme. BEDROSSIAN
35, Rue Emile Devaux — 75019 Paris

Téléphone: 205. 78. 87

«TERRES LOINTAINES»

Ապրիլի թիւը, որ յատկացուած է Հա-յերուն, ինչպէս հաղորդած էինք, կա-րելի է ստանալ հետեւեալ հասցէէն.-

15, VILLA MOLITOR — 75016 PARIS
Téléphone: 288. 25. 45

Samedi, 15 Mai, à 19 h.

Téléphonez au: 416. 11. 33
JEAN-CLAUDE DELACROIX
Répond à toutes les questions
que vous vous posez,
en direct, sur l'antenne de:

«Radio - Ask»

FM. 100 Mhz.

Radio-Trait-d'Union

RADIO ARMENIENNE
Région Lyonnaise
Tous les Dimanches — de 10h. à midi
Sur FM. 89.50 Mghz.

Կիրակի, Մայիս 16-ին.-

Լիոն - Տէսինի Հ. Մ. Ը. Մ.ի մասին եւ Հազարամեայ Հայաստանը (սքաժը):

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ
ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Փարիզաբնակ մանուկներուն արձանա-գրութիւններուն համար, դիմել Տիկին Լ. Ֆորլանի.-

Հեռաձայն՝ 254 - 81 – 79

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՄԱՐՍԷՅԼ.- Տէր եւ Տիկին Տաքթ. Զա-ւէն Գաբրիէլեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Գառնիկ Տէրոյեան եւ զաւակը շը-նորհակալութիւն կը յայտնեն բոլոր ա-նոնց որոնք փոխան ծաղկեպսակի նուէր-ներով, անձամբ, գրաւոր թէ մամուլով ցաւակցութիւն յայտնեցին իրենց հօր եւ մեծ - հօր՝

ՍԱՀԱԿ ԳԱԲՐԻԷԼԵԱՆի
մահուան առթիւ:

MARBRERIE FUNÉRAIRE

CHARLES GAMAIN

Tél.: 389. 72. 61

CIMETIERE DE LA FONTAINE
Saint Martin — 94460 Valenton

ՀԱՅԵՐԷՆ ԿՐ. ԽՕՍՈՒԻ

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄՇԱԿ. ՄԻՈՒԹԻՒՆԸ
Ե Ւ
ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԻՒՆԸ
(ԺՄՖ)

Ուրբաթ, Մայիս 21, ժամը 20:30ին Մշակոյթի եւ արուեստի կեդրոնին մէջ:

6, Cité Wauxhall — Métro: République

Կը կազմակերպեն
ՇԱՏ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ
ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ
Նիւթ ունենալով՝
ՄԱՇՏՈՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆի
ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ
Ե Ւ
ՄԱՏԵԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Բանախօս՝

ԲԱԲԳԷՆ ՁՈՒՔԱՍՋԵԱՆ

Մաշտոց Մատենադարանի Տնօրէնի տեղակալ:

Կը նախագահէ ու բանախօսը կը ներկայացնէ՝

ՓՐՈՖ. ԺԱՆ - ՓԻԷՌ ՄԱՀԷ

Արեւելեան լեզուներու ամպիոնի վարիչ:

Մուտքը ազատ է:

LA GRÈCE A LA CARTE
VOUS PROPOSE

PARIS - ATHÈNES - PARIS
1150 F.

DEPARTS DU: - 23/5 - 30/5 - 13/6 - 20/6

1390 F.
DEPARTS:
02/5 - 09/5 - 06/6 - 27/6
SEPTEMBRE

1490 F.(*)
JUILLET - AOUT
(*) SUPPLEMENT 200 F.
DU 31/7 AU 10/8

AINSI QUE TOUTES PRESTATIONS
(HOTELS - CIRCUITS - CROISIERE)
AU DEPART D'ATHENES

Pour tous Renseignements:
ARPI BODURYAN — ANITA TACHDJIAN

V. V. S.

5, Place A. Malraux - 75001 Paris

Tél.: 296. 37. 70

LIC.: 1539

OPTIMA Tours

PROCHAINS VOYAGES EN ARMÉNIE

DU 15 AU 29 MAI — DU 12 AU 26 JUIN — DU 14 AU 31 JUILLET
DU 4 AU 17 AOUT VOL SPECIAL DIRECT EREVAN

Nouvauté! Réduction importante pour les jeunes de 16 à 35 ans.

LA MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE DECINES Organise 2 Voyages Directs:

a) LYON / EREVAN / BAKOU / TBILISSI / EREVAN / LYON
b) LYON / EREVAN / LYON
DU 4 AU 17 AOUT

Nouvauté! Réduction importante pour les jeunes de 16 à 35 ans.

SONIA COUMRYANTZ
OPTIMA Tours

Renseignements et Inscriptions:

à Paris:
OPTIMA TOURS
67, Rue Quincampoix
75003 - PARIS
Tél.: 274. 27. 20

à Décines:
Maison de la Culture Arménienne de Décines
15, Rue du 24 Avril 1915 - 69150 DECINES
Tél.: (7) 849. 42. 97
Tous les jours, sauf Lundi,
de 10 à 12h. et de 14 à 19h.

VOYAGE ORGANISE PAR LE FOYER CULTUREL DE NICE
AVEC UN VOL DIRECT NICE / EREVAN
DU 25 SEPTEMBRE AU 9 OCTOBRE

Renseignements et Inscriptions:

Pour Nice et les Alpes - Maritimes:
— Monsieur IKEDJIAN Arthur
29, Avenue St. Augustin — 06200 NICE
Tél.: (93) 83.35.03 ou (93) 88.76.08
— Monsieur GEDIKIAN Vasken
Tél.: (93) 88. 06. 41

Pour le Var:
Monsieur KASSIGUIAN Raffi
8 ,Rue des Ecoles
83710 - MONTAUROUX
Tél.: (94) 76. 44. 23

Lic. A 946 (Agence Agréé INTOURIST)

Imprimé sur les Presses du Journal «HAR ATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ
18
MARDI
18 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՀԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա՝ Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ՝ 180 Ֆ.
Արտասահման՝ Տար. 400 Ֆ. - Հատը՝ 2.50 Ֆ.

57ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.173 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 57e ANNÉE — No 15.173

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՐՈՂՈՎ

ՇԱՐԺԱՆԿԱՐԻ Քաննի փառատօնը, Շրդ, բացուեցաւ առջի օր Վառէնի դի - մաց ֆիլմով, որու հեղինակն է խաղացի յայտնի քմահրը՝ էթթոռէ Սքոլա: Լուսովի - նոյ ծԶ.ի փախուստի փորձի պատմու - թիւնն աւելի, շրջանի մը մտայնութեան պարագրութիւնն է զոր ուզած է ընել հեղինակը: Այս փառատօնին մեծ նորու - թիւնը, սակայն, Թրքական շարժանկարի մը ներկայացումն էր, քանի առաջին անգամն է: Դեռ կայ ֆիլմին եւ մանա - ւանդ անոր հեղինակին պարագան: Նախկին դերասան, յետագային բեմա - դիր՝ Եըլմազ Կիւնէյ 101 տարի բանտար - կութեան դատապարտուած էր եւ բանտին մէջ էն որ իր օգնականին միջոցաւ «արձակուցած» է ժապաւէնը: Յետոյ փա - խած, այսօր Գան է, ուր հարիւրաւոր թուրքեր ալ ցոյց մը ըրած են Քառասէ - գին վրայ շարժանկարի ներկայացման առթիւ: Ֆիլմը՝ Եոլ (ուղի) կը ձգտի նման դնել երկրի մը որ Քաշիմի դիրքին է: Պատմութիւնն է հինգ բան - ապրկեալներու, որոնք առժամեայ արտօ - նութիւններ կը ստանան ու իւրաքանչի - իւր (մէկը՝ Քիւրտ է) իր գիւղը կ'եր - թայ: Տոմինիք ժամէ կը խօսի, ինչպէս՝ ար - իւր քննադատներ, այս շարժանկարին համին, բայց ինք չեշտը կը դնէ, անոր համաթուրք քարոզչական բնոյթին վը - րայ, քանի դրուագիւնն իսկ կը խորագրէ՝ «ինչպէ՞ս կարելի է թուրք ըլլալ» ու կը պատ է մէկ այլոց թէ այս ֆիլմով կիւնէյ արտաքին ամբաստանագիր մը եւ ան - տի հակաքարոզչութիւն մըն է զոր կ'ընէ թուրքիոյ դէմ: Այս փառատօնին ուրիշ մէկ նորութիւնն էր հինական ֆիլմի մը ներկայացումը: Նախքան Քրանսական ֆիլմերը, որոնց ցուցադրութիւնը կը ըս - կսէր երկուշաբթի, ներկայացուեցաւ նաեւ բրիտանական ֆիլմ մը:

ՔԻՒՐ ՄԱՐՊԼՕՖԻ լիբանանեան թերթին անօրէնը՝ Ապու Զահր յայտարարած է թէ ահաբեկչական արարքը, որ Ապրիլ 22-ին անցորդ կին մը սպաննեց եւ տասն - եակ ուրիշներ ալ հաշմանդամ դարձուց, նախապէս պիտի կատարուէր Զայնաս - փիւրի Տունին դէմ: Ըստ իրեն որոշումը արուած էր Դամասկոս, պայթումէն 48 ժամ առաջ, խիստ գաղտնի ժողովի մը ընթացքին որու մասնակցեր է նախագա - հին եղբայրը՝ Ռիֆաաթ էլ Ասատ: Գոր - ծողութիւնը կատարողը երեք հոգինոց բանակում մըն է, ըստ Զահրի, որոնց ա - նուններն ալ պիտի տայ, ի մտոյ: Ներ - կայիս խիստ պաշտպանութեան ներ - քեւ է:

ՍԻՔՐՈՑԷՆԻ գործադուլին ելք մը տալու համար, բանակցութիւններ տե - ղի ունեցած Շաբաթ եւ Կիրակի, բաւա - կան տարօրինակ եւ նոր դրութեամբ մը, քանի հարկ եղաւ հեռատեսիլի 7 գործիք - ներ տեղադրել 7 սրահներու մէջ, ուր տեղ գրաւած էին անօրէնութիւն եւ զա - նազան սենեակներ: Այս ձեւը մեկ - տեղութիւնը գործած էր. տրուած ըլ - լալով որ աշխատանքի ընդհ. համադա - կցութիւնը (Սէ - Ժէ - Թէ) կը մեր - ժէր կողք կողքի նստիլ ազատ Սենեակա - ներու համադաշնակցութեան հետ, զոր գործադրութեան հլու - հպատակները կը նկատէ: Թէեւ կարգադրութեան այս վի - ճակը դրութենէն ոչ ոք գոհ էր, բայց կա - ցութիւնը փոխելու միակ ձեւը նկատ - ուած էր: Երկուշաբթի օր, սենեակները (Սէ - Ժէ - Թէ-ն մեծամասնութիւն է) բանուորներուն պիտի ներկայացնէին ա - ռաջարկները՝ 3,50% յաւելում եւ ամսա - կան նուազագոյն 200 Ֆ., մինչ պահանջն էր 400 Ֆ. ամսական:

ՖՈՒԹՊՈԼԻ Ֆրանսայի բաժակը դէմ առ դէմ կը հանէր, Շաբաթ օր, Փարի Սէն - Ժերմէն եւ Սէն Թ'Էթիէն եւ այս վերջինը 1-ի դէմ երկու կէտով կը յաղ - թէր, երբ վերջին վայրկեանին Փարի Սէն - Ժերմէն կը հաւասարեցնէր արդիւնքը: Ֆութպոլի Ֆրանսական դաշնակցութեան որոշումով, կը մնար յաղթականները բաժնել 5-ական փենալթիով, ինչ որ բա - ւական առեն կարելի պիտի չըլլար, դաշտ խուժած անկարգապահ բազմութեան մը պատճառով: Մինչ Հանրապետութեան Նախագահը, աջին ունենալով Փարիզի քաղաքապետը, համբերութեամբ կը ըս - պասէր, որ վերջին արարը խաղացուի, բարձրախօսէն կոչեր կ'ըլլային որ ժողո - վուրդը պարպէ մարզադաշտը եւ ոստի - կանական ուժեր կարելին կ'ընէին ժամ առաջ տեղ բանալու համար: Ի վերջոյ, ամէն ինչ կարգի կը մտնէր, բայց հինգա - կան փենալթիէն, Սէն Թ'Էթիէնի խմբա - պետը վերջինը չէր յաջողեր եւ Փարի Ս. Ժերմէն յաղթական կը հռչակուէր, քանի 2 – 2 արդիւնքէն ետք, ինք յաջողած էր նաեւ հինգ փենալթիները մինչ «կա - նանչները» միայն՝ չորս: Այս հանգի - պումը «պատմական» կը նկատուի Ֆութ - պոլի բաժակին համար քանի երկար ա - տեն է որ փարիզեան որեւէ խումբ բա - ժակի չէր հասած, խումբին նախագահն ալ արդէն, խանդավառութենէն դաշտը կը համբուրէր...:

ՌԸՆՈՒԻ Ֆլէնի գործատան մէջ Սէ - ժէ - Թէ-ն բաւական զգալի ձախողու - թիւն մը արձանագրեց վերջին ընտրու - թիւններու ընթացքին ի նպաստ Սէ - Էֆ - Տէ - Թէ-ի: Աչխատանքի ընդհ. դաշ - նակցութիւնը ձայներու 9,2%-ը կորսն - ցուց եւ միաժամանակ՝ մեծամասնու - թիւնը:

«ՔՈԹԻՏԻԷՆ ՏԸ ՓԱՐԻ», որ որեւէ բարեացակամ դիրք չունի վարչակարգին նկատմամբ, այլեւս յաճախ կորսնցնելով իսկ անաչառ եւ առարկայական նկարա - գիրը, որով ծանօթ էր երբեմն՝ Ֆիլիփ Թէսոնը, հանրային կարծիքի քննութիւն մը հրապարակած էր երկուշաբթի օր, ուրկէ կը պարզուի որ Միթերանի «սակը» կը բարձրանայ 56%-էն 64-ի, նաեւ Մօ - ուարի՝ 53-էն 58-ի:

ՖՐԱՆՍԱՑԻ Արտաքին նախարարը՝ Շէ - սոն, որու ամէն մէկ ելոյթը փորձանք կը բանայ ընդհանրապէս (թէեւ հարկ է դիտնալ թէ իր ըսածները իսկապէս կա - փեր են թէ ոչ դիւանագիտական բարձր խաղեր...) անգամ մը եւս աղմուկ հա - նեց այս չաբաթավերջին Ֆիկարո - Մա - կազինի, հրապարակած մէկ գաղտնի ներ - քին չրջաբերականի պատճառով: Իրրեւ հետեւանք իր նախարարութեան՝ Ամե - րիկայի անօրէնին մէկ տեղեկագրին Մալուինները առընչութեամբ, Շէսոն չրջաբերական մը կը հանէ «խորհրդա - ժողութիւններ Մալուինները վրայ», ուր կ'իւրացնէ հոն տրուած հականգլիա - կան արտայայտութիւնները, ի մասնաւո - րի նախկին մեծ պետութեան ինքնագոհ նկարագիրը եւ բնազդային արհամար - հանքը լատիններու (ռասթաֆուէռ գըր - ուած է չրջաբերականին մէջ, ինչ որ արտաքին նախարարութեան մը բառա - մթերքին հետ խոտոր կը համեմատի...): Նախարարը երկուշաբթի հակայարձակ - ման կ'անցնէր, ըսելով որ հոն գործած - ուած բառերը իրմէ չեն (առորագրու - թիւնը իրն է եւ ձեռագիրը) եւ թէ ան - ընական ու այլանելի է, որ նման գաղտ - նի նոթ մը ճամբան չեղի...

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

ՊՈՍԹԸՆԷ'Ն ԵՏՔ

ԽՄԲ. – «*Հայրենիք*» Մայիս 11-ի թիւին մէջ արտատպած է «*Ճուսմհուրիյէթ*»ի այս խմբագրականը, ուր մէկէ աւելի «շահեկան» խորհրդածութիւններ կան...

×

Պոսթընի չրջանին հիւպատոսնիս Օր - հան Կիւնտուզի սպանութիւնը ցաւալի դէպք մըն է, որ կուգայ անգամ մը եւս ապացուցանելու թէ հայկական տէրորը պիտի չդադրի: Երկու ամիս առաջ Օր - հան Կիւնտուզի սենեակը ռումբ մը տե - ղադրուած էր եւ դիպուածով կրցաւ վերջին պահուն ապատիլ: Ըսել է որ ոճ - րագործները կրկին յարձակումի անցան եւ իրենց նպատակին հասան:

Ցաւալի դէպքին վրայ մինչ Անգարա իր այլեւս քլիչէ դարձած հակազդեցու - թիւնը կ'արտայայտէր, երկու պետու - թիւններու պատասխանատուներու միջեւ աւանդութիւն դարձած ձեւակերպու - թիւնները կատարուած են: Ամերիկայի Անգարայի մեծ դեսպանը Արտաքին նա - խարարութիւն կանչուած է: Թուրքիոյ Ուաշինկթընի մեծ դեսպանն ալ Արտա - քին Նախարարութեան մօտ սովորական դարձած դիմումները կատարած է: Թուրքիա իր «դաշնակից Ամերիկայ»էն պահանջած է որ պաշտպանութեան աւե - լի ազդու միջոցներ ձեռք առնուին. Ամե - րիկան ալ ըսած է, իր կարգին, որ ան - տարակոյս ձեռքէն եկածը պիտի ընէ: Ահաբեկիչները պախարակած եւ իր ցաւը յայտնած է:

– Միայն թէ Թուրքիոյ Արտաքին նա - խարարութեան բացատրութիւններուն մէջ կէտ մը կայ, որ վիճելի է: Ըստ Ան - կարայի Պոսթընի մահափորձին նպա - տակն է «հանրային կարծիքին ապացու - ցանել, թէ դատի մը քարոզչութիւնը ը - նելու համար Եւրոպայի մէջ ձեռնարկը - ւած ահաբեկումները անցած են Ամե - րիկա»: Մինչդեռ հայկական ահաբեկու - մին նախապէս Ամերիկայէն սկսելով ա - րեւմտեան Եւրոպա տարածուած ըլլալը պիտանալու համար արխիւներ խառնելու հարկ չկայ: Դէպքերը տակաւին թարմ են յիշողութիւններու մէջ, եւ այս տե - սակ մոռացումները ներելի չեն:

Դէպքին մէկ տարբեր երեսն ալ երկու պետութիւններու միջեւ եղած դիւանա - գիտական յարաբերութեանց հանրային կարծիքը գոհացնելէ հեռու ըլլալն է: Ի - րականութեան մէջ Ամերիկայի պատաս - խանատուութիւնը մեծ է: Որովհետեւ այս ահաբեկչութիւնը «Ամերիկա, Քրան - սա, Լիբանան» առանցքին չուրջ կազ - մակերպուած է: Ամերիկա աչխարհի չորս ծայրերը տարածուած եւ զանազան առիթներով իր կարողութիւնը ապացու - ցած կեդրոնական լրատու կազմակեր - պութեան (Սէ. Ի. Ա.) մը ունի: Այս կազմակերպութեան «Ամերիկայի դաշ - նակիցներուն դէմ եղող քաղաքական գաղտնի ցանցը» չկարենալ մէջտեղ հա - նելը, կամ այս մասին որեւէ տեղեկու - թիւն ունեցած չըլլալը մտածել՝ անկա - րելի է: Հայկական ահաբեկումին դոր - ծած ոճիրները իբր պարզ ոստիկանական եւ կամ դաշնակցային սպահովութեան հարց նկատելը սխալ մըն է: Դէպքին քաղաքական ծաւալին որքան կարեւոր եղած ըլլալը պէտք է անպատճառ Ամե - րիկացիներուն յստակ կերպով հասկցը - նել:

Սէ. Ի. Ա.ն միայն իր երկրին մէջ չէ, այլ Մէջին - Արեւելքի մէջ ալ շատ տա - բածուած եւ արմատացած գործելակերպ մը ունի: Այս մօտեցումով, Ամերիկայէն սկսելով Քրանսա եւ Մէջին - Արեւելք երկարող հայ ահաբեկչական կազմակեր - պութիւններուն աչխատանքի ձեւը, յա - կախետները եւ մելիթանները ճշդել չատ ալ դժուար գործ մը չէ:

Մեր «Դաշնակից Ամերիկա»ն հայ ահա - բեկիչներուն դէմ ակամայ շարժիլը եւ խնդիրը դիւանագիտական փրոթոկոլի կա - նոններու եւ պարզ ոստիկանութեան մար - գին մէջ տեսնելը, պիտի չբաւէ հարցը լուծելու:

Ժամանակը եկած է որ Անգարա այս ուղղութեամբ ամէն տեսակի տնօրինում - ներու մասին խորհի:

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ ՀԵՌԱՏԵՍԻԼ

ԵՐԵՒԱՆ (ԱՐՄԷՆՓրԷՍ ՄԱՑԻՍ 11 - 13)

«ԳԻՔՈՐ» ԺԱՊԱՒԷՆԸ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ԱՐԺԱՆԱՑԱԾ

Տալին տեղի ունեցած չարժանկարի համամիութենական փառատօնին մանկա - պատանեկան ժապաւէններու Բ. մրցա - նակը չնորհուած է «Գիքոր»ը պատրաս - տողներուն: Ցովհաննէս Թումանեանի պատմուածքի հիման վրայ նկարահան - ուած ժապաւէնը Սերգէյ Իսրայէլեանի բեմադրական անդրանիկ գործն է: Ան երեսնամեայ վաստակ մը ունի իբրեւ նը - կարահան ծանօթ բեմադրիրներու տասըն - եակ չարժանկարներու:

×

ՓՐՈՖ. ՍՈՒՐԷՆ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՍՏԵՂԾԱԾ ԽԱՂՈՂԻ ՆՈՐ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Բարձր դնահատանքի արժանացած են Սուրէն Պօղոսեանի ստեղծած «Ներկենի», «Մեղրաբոյր» եւ «Ներկառատ» խաղողի նոր տեսակները, որոնք առատ բերք կու - տան, կը դիմանան հիւանդութիւններու եւ կը տոկան սառնամանիքներու:

Գիւղատնտեսական գիտութիւններու համամիութենական ակադեմիայի եւ Ի - տալիոյ խաղողի ու գինիի ակադեմիայի թղթակից անդամ Փրոֆ. Սուրէն Պօղոս - եան կը համարուի խաղողի տեսակներու հիմնադիրներէն մէկը Հայաստանի մէջ: Ան ստեղծած է խաղողի տասնեակ տե - սակներ, որոնցմէ չատեր բերքատուու - թեամբ կը գերազանցեն սովորական տե - սակները: Անոնցմէ են, օրինակ, «Սեւա - նի»ն, «Գեղարդ»ը, «Մասիս»ը: «Մեծա - մօր»ի իւրաքանչիւր ողկոյզը կը կշռէ մօտ մէկուկէս քիլօ:

Գիտնականին ստացած տեսակները բազ - միցս մրցանակներու արժանացած են մի - ջազգային ու համամիութենական ցուցա - հանդէսներու մէջ: Անոնցմէ պատրաստը - ւած գինիները մօտ 30 ոսկէ եւ արծաթէ մետալներ նուաճած են միջազգային մըր - ցումներու ընթացքին:

×

ՅԱԿՈԲ ՀԵՔԵՔԵԱՆԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԸ ՄՈՆԿՈԼԻԱ

Մոնկոլիոյ մայրաքաղաք Ուլան Պաթո - րի մէջ բացուած է Հայաստանի լուսան - կարչական արուեստի վարպետներէն Յա - կոբ Հեքեքեանի գործերու ցուցահանդէ - սը, ուր ներկայացուած են բազմաթիւ լուսանկարներ՝ հայ ժողովուրդի տնտե - սութեան, գիտութեան եւ մշակոյթի կալ - ուածներէ ներս արձանագրած նուաճում - ները ցոյցնող: Այցելուներու ուշադրու - թիւնը դրաւած են «Բիւրականի ատոմ - հեռադիտակը», որ Արեւելեան Գերմանիա մրցանակի արժանացած է, «Սեւանի ձկ - նորսները», որ համամիութենական մըր - ցումներուն կարգ մը պարգեւներով պնա - հատուած է, Մարտիրոս Սարեանի դի - մանկարը, Հայաստանի բնանկարները, հին Երեւանի դաղտրիկ անկիւնները եւ այլ նկարներ:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԸ ԼՈՒՍԱՆՑՔԻՆ

ՍՈՂՈՄՈՆԷՆ ՄԱԼՎԻՆԱՍ ԱՆՑՆԵԼՈՎ ՓՈՔԼԱՆՏԷՆ

Կարելի՞ է Հայ ըլլալ ու մնալ անտարբեր որեւէ հարցի նկատմամբ, մանաւանդ երբ կը վերաբերի հողի:

Ապրիլ 2-ին էր, երբ ամբողջ աշխարհին հետ ես ալ իմացայ, որ Ադժանթին վէնքի ուժով զրաւած է կղզիներ, որոնք իրեն պատկանելով հանդերձ, աւելի քան հարիւր քառասուն տարիէ ի վեր կը մնային բրիտանական տիրապետութեան ներքեւ:

Առաջին զգայնութիւնը, որ իր կարգին յամաքահանում կատարեց Հոգեկան աշխարհիս մէջ, գոհունակութիւնը եղաւ: Փիչ մը վերջ միայն անդրադարձայ ըզգացուած այդ թեթեւութեան զարմանալի հանգամանքին: Ի՞նչ կապ կրնայի ունենալ այդ նուաճումին հետ, ի՞նչ էին այդ երկու երկիրները ինծի համար: Անմիջապէս հաստատեցի, որ անբնական բան մը կար այս բոլորին ետին, մանաւանդ որ Հոգեկան կապեր ունէի Անգլիոյ հետ, աւելի՛ Շէյքսփիրին, Քրլոտոֆըը Մառլոյին Պիկ Պէնին կամ Թայմզ օրաթերթին: Տարիներ առաջ մեծապէս տպաւորուած չէի՞ այն մանրամասնէն, որուն մէջ կար հարցում մը, թէ Հնդկաստանի ու Շէյքսփիրի միջեւ ընտրութիւն մը կատարելու պարտաւորութեան առջեւ ո՞րը պիտի նախընտրէին կրթացեալ Անգլիացիները նորան չափազանց մեծամասնութիւնը անվարան ուզած էր պահել Թատերագիրը քանաստեղծը:

Իսկ Ադժանթի՞նը, ի՞նչ է այս երկիրը, որուն լեզուն չեմ հասկնար նոյնիսկ:

Ուրե՞մն ...

Ուրեմն ինչո՞ւ այս կողմնակցութիւնը – նը, ինչո՞ւ չատերու պէս չկրկնել՝ «Չի նատան ու Ճարսն պատերա՞զմ կ'ընեն, ինծի ի՛նչ ...»:

Պոպի Սե՞նատն է պատճառը: Մեծն Բրիտանիոյ զաղթատիրական հին ուժ մը ըլա՞լը, թէ, թէ՛ նաւերը, որոնք Արաբատ չեն կրնար բարձրանալ ...:

Երբ առաջին անգամ լսեցի Մալուին անունը ու չուտով հասկցայ, որ Մալվինաս կը կոչուէր ան՝ արժանթինեան հնչիւնով, Ֆոքլանտա՝ անգլիականով, անմիջապէս նախընտրութիւնս դնաց Մալվինասին ու բառը այնքան յարմար նկատեցի երգի մը, ինչպէս Նաթալին, – Օռլի-ն, ինչպէս Սան – Ֆրանսիսքօն, առանց մոռնալու անշուշտ Երեւան – Էրեբունին: Ժիլպեռ Պեքօ չէ՞ր կրնար հայցել, որ տանէին զինք հեռու, հեռու, ովկիանոս – ներէն անդին, մինչեւ Մալվինաս, մինչեւ այդ խոպան արշիպեղագոսը ...

Խոպա՞ն ...

Անհատական կղզիներ, որոնք տասն եւ չորս հազար քիլոմեթր անդին կը գտնուին եւ որուն համար Մեծն Բրիտանիա կ'ուզէ մոռնալ, ի՞նչ կարեւորութիւն, թէ անբնակելի են անոնք, անջրդի, հազարումէկ հովով բնակուած ...

– *Պէտք է Ադժանթին ենթարկուի ՄԱԿ-ի 502 որոշումին ու ետ քաշէ իր ուժերը ...*

Կը տեսնէ՞ք, թէ յանկարծ որքա՛ն հեղինակաւոր չեզոք մը կը տառնայ խեղճ ՄԱԿ-ը: Պէտք է Ադժանթին քաշուի, որովհետեւ ոչ մէկ հարց կարելի է լուծել բռնի ուժով, մանաւանդ որ տարիներ առաջ արդէն յայտարարուած է, թէ աշխարհի վրայ վերջ գտած է գաղութարարութիւնը:

Թիւ 502 որչո՞ւմ ...: Արդէն այդքան մեծ թիւով որոշո՞ւմ հաստատած է այդ կազմակերպութիւնը: Բայց հարց է, թէ այդ որոշումներէն քանի՞ն գործադրուած են, երբ նոյնիսկ ե՛ս կը հանչնամ թիւերը մէկ քանիին որոնք կը մնան անպէտք ու անգործածելի ամբարտաւան ժողովուրդի մը համար:

Բայց Ադժանթին պէտք է պարպէ Իրեն պատկանող կղզիները ու վերադառնայ բանակցութիւններու, որոնք, ինչ հոգ, թէ հարիւր յիսուն տարի եւս կըզգնան տեւել: Ամէն բանի մէջ պէտք է ձեւն ու խորքը ներդաշնակուին, ինչպէս քեր – թուածի մը պարագային կամ սիրարա – նութեան: Իրաւունք առնալու ի՞նչ ձեւ է այս, պարոնները ...

Անհատական բարկացած երկու ժողո – վուրդներ, ռազմանաւեր, օդանաւակի – ներ, ամբաձիղ մարտանաւեր: Մինչ մէ – կու բարկութեան մէջ կատաղութիւնն է որ կը ցայտայ, միւսինին մէջ քնարա – կանութիւն կայ, յուզականութիւն, կայ հատառք: Կայ իսկական հայրենասիրու – թիւն: Տեղ մը կայ վիրաւորուած բար – դոյթ մաշած մեծամասնութեան, ուրիշ տեղ՝ բնականութիւն, նոյնինքն պարզու – թիւն:

Այն պահուն, երբ կը զրուին այս տո – ղերը, անորոշ է պատերազմին ելքը: Ադ – ղէն այս զրութիւնը ոչ մէկ կապ ունի ռազմավարական պատերիքներու հետ: Սիւպեր – էթճանտարներն ու ԱՄ – 39-ները կրնան նետի հայթայթել փիվոյական, ռազմական Ափոսթրոֆի մը ու պիտնք, թէ ինչ կը նշանակէ «վերք»ի մը համար մտանակցիլ այդ յայտագրին: Արդէն ընկղմած են Պելկրանօն ու Շեֆիլտը, ռմբակոծուած Սթանլիի օդակայանը ու կըզգիներուն չուրջ պլոքթիսին օղակը սեղմուած ...: կարեւոր չեն այս բոլորը:

ՄԱԿ-ը մէկդի, մէկդի նաեւ Եւրոպացիներուն նեցուկը, անոնց, որոմաթաններ – թիւնը, չէ՞յ Սողոմոն նոր իմաստուն մը, որուն ներկայանան երկու «մայր»երը ու վերջնականապէս վճռուի «մանուկ»ին պատկանելիութիւնը: Երկու երկիրներէն ո՞րը համամիտ պիտի գտնուի անոր կիր – սումին:

Մխիթարելի են մարդիկ երբ կը նատին հաշիւի: Կ'արժէ՞, կ'ըսեն անոնք, կ'արժէ՞ նման կղզիներու համար ու չուրջ մէկայն երկու հազար բնակիչ ունեցող հողամասի թեանը մէջ: Հազիւ 26 - 27 տարեկան, թիկնեղ, միջահասակ, աչխոյժ, աչխատող մէկն էր: Արհամարհոտ վերաբերում եւ հեգնանք ունէր զէպի նորերը, իրմէ նորերը եւ քիչ թէ չատ կրթուած – ները: Զինք ճանչցողները բոլորն ալ համաձայն են այս կէտի նկատմամբ իր անձնական փորձառութեանս:

Մեծ չէնք մըն էր մեր տունը, որու մէկ մասը վարձու էինք տուած Վանի պար – սիկ հիւպատոսին: Որով մեր տունը ենթակայ չէր խուզարկութիւններու թուրք կառավարութեան կողմէ: Օգտուելով այդ հանգամանքէն՝ վասպուրականի կեդր. կոմիտէն ինձ եւ Արսէնին էր յանձնած, երկու տարիէն աւելի, Վասպուրականի Դաշնակցական գրականութեան, թռուցիկներու եւ բազմաթիւ այլ թղթե – րու տպագրութիւնը՝ մեր տան մէջ կա – տարելու: Սկիզբները տպագրութիւնը կը կատարուէր լմորատիպ ձեւով: Վերջէն Վոսմեան Ամերիկայէն ուղարկած էր տիւփլիքաթէօր գլանաձեւ տպագրական մեքենայ մը, որով 2 - 300 օր. կարելի էր տպել: Կային հայերէն եւ թուրքերէն բազմաթիւ թռուցիկներ: Օրինակ – Տօ – նամոմա, Քաջ Ալի Բէկ, Հրամատութիւն, Փախիր Ալի Բէկ, եւ չատ ուրիշներ: Նոյնպէս կը տպէինք «Սադրահ Իւլ Խայր» թուրքերէն երկչարաթերթերի մը 12 և – րեանոց եւ 10×18 մատնաչափ մեծու – թեամբ: Ահագին աշխատանք էր, բայց կը տանէինք մեծ սիրով եւ խանդավա – ռութեամբ: Այս գործերու բերումով պէտք կը լինէր ինձ հանդիպելու կարգ մը պատասխանատու փախստական ըն – կերներու: Թէեւ կ. Կոմիտէի փախըս – տական ընկերները Դաւոյին եւ ուրիշ գոր – ծակատաբ ընկերներու պատուիրած էին որ, իմ գիմումին անմիջապէս իրենց տե – ղերը ինձ յայտնեն, բայց անկարելի կը լինէր ինձ համար Դաւոյէն խմանալ ա – նոնց թաղատոյները: «Ձեմ դիտեր այ – սօր, ես չեմ փոխադրած զինքը», եւլն. պատճառաբանութիւններով կը մերժէր յայտնել»: Կը հեգնէր մեզ՝ երիտասարդ – ներս՝ եւ քիչ թէ չատ մտաւորական – ներու ալ ինտելիգենտս ըսելով կը ծաղ – րէր:

*Երկրորդ դրդապատճառը. Դաւոն տե – ղորի պատճառաւ թուրք դատարանէն ամբաստանուած էր որպէս մարդասպան, եւ ի բացակայութեան դատապարտուած՝ 101 տարուան բանտարկութեան: Իր հօր – եղբայրը, որ կատածելի եւ մութ անց – եալ ունեցող անձնաւորութիւն մըն էր, կը կասկածուէր թէ դիտմամբ կազմա – կերպած էր որ թուրք կառավարու – թիւնը դինքն ու Դաւոյի հայրը բան – տարկէ: Այս միջոցաւ կառավարութեան կը հաւատացնէր որ թերեւս Դաւոն չանձ – նուէր: Բայց կառավարութիւնը չատ լաւ գիտէր թէ Դաւոն այդ կերպով ձեռք ձգել կարելի չէ, կ'ուզէին պատաղրու – թեամբ դրամ կորզել այս ձեւով: Դաւոյի հայրն ու հօրեղբայրը բանտէն լուր էին ղրկած իրեն՝ որ եթէ բաւական կովկի դրամ խաղցուի մէկտեղ, գործը կարելի պիտի լինի կարգադրել եւ Դաւոյի վճիռ ալ լեկանել: Դաւոն կը դիմէ կ. Կոմի – տէին եւ 150 ոսկի կ'ուզէ: Ցեղափոխու – թիւնը որ կազմուած էր այդ օրինակ չա – րիքներու եւ անարդարութեանց դէմ կռո – ւելու համար, կը մերժէ Դաւոյի դի – ւելու համար, կը մերժէ Դաւոյի դի – մումը, բայց կը խոստանայ ծանօթ ե – րիտասարդ թուրք բարեկամներու մի – ջոցաւ կարգադրել խնդիրը: Մինչ այս, մինչ այն բանտէն կ'արձակուին հայրն ու հօրեղբայրը: Բայց նախապէս կը նեղուի Դաւոն՝ մերժուելուն պատճառաւ եւ կո – մովին զինաթափ կ'ըլլայ, ըսելով որ այսքան տարուան իր հաւատարիմ ծա – ռայութեան փոխարէն այս փոքրիկ դա – մարը կը մերժեն իրեն:

(Շար. 3)

«PLACE D'ARMÉNIE» ՄԸ
ԷՔՍ-ԱՆ-ՓՐՈՎԱՆՍԻ ՄԷՋ

Ապրիլ 24-ի օրը, ժամը 18-ին, տեղի ունեցաւ Էքս - Ան - Փրովանսի մէջ, հանդիսաւոր բացումը «Արմենի» հրապարակի մը եւ պատին վրայ կնքուած պրոնզէ յուշատախտակի մը, հետեւեալ արձանագրութեամբ.-

Par les cimes inviolées de l'Ararat
Par la croix de St.Grégoire l'Illuminateur
Par la glaive de Vartan
PATRIE souvent meurtrie,parfois crucifiée
Mais toujours RENAISSANTE...
ETERNELLE ARMENIE
Le 24 Avril 1915,
le gouvernement turc décide
l'extermination du peuple arménien.
Hommage aux martyrs du
PREMIER GENOCIDE DU XXe SIECLE

Ահատասիկ գարձեալ Թուրքիոյ համար «ծանրակշիռ եւ պետութեան հարց մը» նամանաւանդ որ արձանագրութիւնը հրապարակի վրայ է եւ ոչ «բրիվէ» չրջափակի մը մէջ: Բայց, այս անգամ, այս, Ֆրանսական կառավարութեան պաշտօնական ներկայացուցիչ չկար: Էքս - Ան - Փրովանսի քաղաքապետը՝ Ալէն Ժուպոն (Հ. Հ. Հ.) ինքն է որ քօղազերծեց յուշատախտակը, ներկայութեամբ տեղական քաղաքական անձնաւորութիւններու, Յակոբ Եպիսկ. Վարդանեանի եւ Հայերու հոծ բազմութեան մը: Արձանագրութիւնը ծածկուած էր Ֆրանսական եւ հայկական (կարմիր - կապոյտ - նարնջագոյն) եռագոյններով: Հայկական եռագոյնին գոյները կը չեշտենք, քանի անհամ մէջադիպ մը պատահեցաւ, որուն մասին լուռ կ'անցնինք չնեմադնելու համար յիշատակի այս արարողութիւնը, որ ըստ կըսաւ Էքս – Ան - Փրովանսի Հայկական ու Մշակութային Միութեան նախագահ՝ Համբարձումեանի արտասանած խօսքեր – րով՝ «Հայը այս աշխարհի վրայ եկած չէ ֆանդելու համար, այլ կառուցանելու եւ բերելու համար իր նպաստը քաղաքակրթութեան: Հայոց ազգի, սիրելի զաւակներ, մնա՛նք հաւատարիմ մեր նախնիք – ներուն, ապրի՛նք եւ մնա՛նք Հայ»:

Միութեան անունով օրուան պատշաճ ճառը կարդաց՝ Ժաքի Շամանճեան: Շնորհակալութեան խօսքերէն յետոյ ուղղուած քաղաքապետին ընդդծեց Ապրիլ – մը համար զոհել աւելի մեծ թիւով նահատակներ, բոլորն ալ առողջ, բոլորն ալ դեղեցիկ, բոլորն ալ սիրելի: Բայց, բայց այդ մարդիկ ինչո՞ւ նկատի չեն առներ նաեւ այն վեց հարիւր հազար ոչխարները, որոնք կ'արածեն հոն ...: Դրօշակի մը արժէքը զայն կազմող լաթի որակո՞վ կը պայմանաւորուի ...:

Կարելի՞ է Հայ ըլլալ ու ...

Մ. ՊԶԱՔՃԵԱՆ

Մայիս 10, 1982

ԴԱՒՈՅԻ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԻՆՉՊԷՍ ՍՊԱՆՆԵՑԻ ԶԻՆՔԸ
Գրեց՝ ՏԱՃԱՏ

Բ.- ԴԱՒԱՃԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մեր յեղափոխական պատմութեան մէջ չտեսնուած դաւաճանութիւն մըն էր տեղի ունեցածը: Պատճառներ եւ պատասխանատուներ անշուշտ գոյութիւն պիտի ունենային: Թէեւ 34 տարի է անցեր վրայէն, բայց դէպքերը, դէմքերը, եւ պատճառները չարժապատկերի մը պէս մտքիս առջեւ կը պատկերանան: Թերեւս գտնուին այնպիսիները որ թերահաւատ վերաբերում մը ունենան պատմածներուս մասին: Բայց ինչպէս զրութեանս սկզբին ալ ըսած եմ, նպատակս է անաչառ կերպով ներկայացնել իրականութիւնը: Ես առիթ եմ ունեցեր վերջէն ալ ատոր – գել՝ խնդրին չատ մօտէն կապ ունեցող անձնաւորութիւններէ:

Ամենաառաջին պատճառը փնտռելու է Դաւիթի իր խիստ ամբարտաւան, գոռոզ, փառասէր, յամառ ու կոպիտ բնաւորու – թեան մէջ: Հազիւ 26 - 27 տարեկան, միջահասակ, աչխոյժ, աչխատող մէկն էր: Արհամարհոտ վերաբերում եւ հեգնանք ունէր զէպի նորերը, իրմէ նորերը եւ քիչ թէ չատ կրթուածները: Զինք ճանչցողները բոլորն ալ համաձայն են այս կէտի նկատմամբ իր անձնական փորձառութեանս:

Մեծ չէնք մըն էր մեր տունը, որու մէկ մասը վարձու էինք տուած Վանի պարսիկ հիւպատոսին: Որով մեր տունը ենթակայ չէր խուզարկութիւններու թուրք կառավարութեան կողմէ: Օգտուելով այդ հանգամանքէն՝ վասպուրականի կեդր. կոմիտէն ինձ եւ Արսէնին էր յանձնած, երկու տարիէն աւելի, Վասպուրականի Դաշնակցական գրականութեան, թռուցիկներու եւ բազմաթիւ այլ թղթերու տպագրութիւնը՝ մեր տան մէջ կատարելու: Սկիզբները տպագրութիւնը կը կատարուէր լմորատիպ ձեւով: Վերջէն Վոսմեան Ամերիկայէն ուղարկած էր տիւփլիքաթէօր գլանաձեւ տպագրական մեքենայ մը, որով 2 - 300 օր. կարելի էր տպել: Կային հայերէն եւ թուրքերէն բազմաթիւ թռուցիկներ: Օրինակ – Տօ – նամոմա, Քաջ Ալի Բէկ, Հրամատութիւն, Փախիր Ալի Բէկ, եւ չատ ուրիշներ: Նոյնպէս կը տպէինք «Սադրահ Իւլ Խայր» թուրքերէն երկչարաթերթերի մը 12 և – րեանոց եւ 10×18 մատնաչափ մեծու – թեամբ: Ահագին աշխատանք էր, բայց կը տանէինք մեծ սիրով եւ խանդավա – ռութեամբ: Այս գործերու բերումով պէտք կը լինէր ինձ հանդիպելու կարգ մը պատասխանատու փախստական ըն – կերներու: Թէեւ կ. Կոմիտէի փախըս – տական ընկերները Դաւոյին եւ ուրիշ գոր – ծակատաբ ընկերներու պատուիրած էին որ, իմ գիմումին անմիջապէս իրենց տե – ղերը ինձ յայտնեն, բայց անկարելի կը լինէր ինձ համար Դաւոյէն խմանալ ա – նոնց թաղատոյները: «Ձեմ դիտեր այ – սօր, ես չեմ փոխադրած զինքը», եւլն. պատճառաբանութիւններով կը մերժէր յայտնել»: Կը հեգնէր մեզ՝ երիտասարդ – ներս՝ եւ քիչ թէ չատ մտաւորական – ներու ալ ինտելիգենտս ըսելով կը ծաղ – րէր:

Երկրորդ դրդապատճառը. Դաւոն տե – ղորի պատճառաւ թուրք դատարանէն ամբաստանուած էր որպէս մարդասպան, եւ ի բացակայութեան դատապարտուած՝ 101 տարուան բանտարկութեան: Իր հօր – եղբայրը, որ կասկածելի եւ մութ անց – եալ ունեցող անձնաւորութիւն մըն էր, կը կասկածուէր թէ դիտմամբ կազմա – կերպած էր որ թուրք կառավարու – թիւնը դինքն ու Դաւոյի հայրը բան – տարկէ: Այս միջոցաւ կառավարութեան կը հաւատացնէր որ թերեւս Դաւոն չանձ – նուէր: Բայց կառավարութիւնը չատ լաւ

ԱՊՐԻԼԵԱՆ ՈՒԵԿՈՉՈՒՄՆԵՐԸ

ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՄԷՋ

ՍՈՖԻԱ

Ապրիլ 24-ին «Երեւան» կազմակերպութեան նախաձեռնութեամբ հայկական ցեղասպանութեան զերեզմանատունը հաւաքուած է հոծ բազմութիւն մը, յարգելու համար եղեռնի նահատակներու յիշատակը: 1915-ի դէպքերու եւ ներկայ Հայաստանի վերելքի մասին խօսած է «Երեւան»ի կեդր. վարչութեան անդամ Գրիգոր Պարագեան: Ներկաները մէկ վայրկեան ծնրադիր լռութեամբ յարգած են հայ նահատակներու յիշատակը եւ եղեռնի յուշարձանին ծաղիկներ դրած: Ուեկոչումը վերջ գտած է «Երեւան» երգչախումբի մեկնաբանած երգերով:

×

ՊԼՈՎԴԻՒ

Ապրիլ 25-ին, «Երեւան»ի վարչութեան կազմակերպութեամբ հոծ բազմութիւն մը հաւաքուած է Հայոց ցեղասպանութեան, եղեռնի յուշարձանին չուրջ: Մ. Չամիչեանի բանախօսութենէն ետք ներկաները մէկ վայրկեան ծնրադիր լռութեամբ յարգած են Ապրիլեան նահատակներու յիշատակը: Պարոյր Սեւակէն եւ Հրայր Խինէն բանաստեղծութիւններ արտասանուած են: Ապա ծաղիկներ դրուած են եղեռնի յուշարձանին:

×

ՎԱՌՆԱ

«Երեւան»ի ակումբին մէջ, Ապրիլ 22-ին, ոգեկոչուած է եղեռնը: Բանախօսած է Վերժին Մեհրաբեանեան: Ջաւէն Տէրտէրեան խօսած է Կոմիտասի ողբերգութեան մասին:

Déclaration du Bureau politique du P.S.U.

« Victime du génocide perpetré par le Gouvernement turc en 1915, le peuple arménien vit, aujourd'hui dispersé à travers le monde et demeure depuis, spolié de ses droits nationaux en Arménie turque.

Aucun des moyens pacifiques uitilisés depuis 60 ans par le peuple arménien n'ont pu permettre d'aboutir à un quelconque règlement de la question arménienne.

Or, depuis 6 ans, le peuple arménien, au travers de ses organisations combattantes, est entré dans une phase de luttte active qui a enfin brisé le silence imposé depuis 60 ans au peuple arménien, et permis l'expression de ses revendications nationales sur la scène internationale.

Guidé par le principe de la défense des libertés et du droit des peuples à disposer d'eux-mêmes, le P.S.U. reconnait la légitimité de la revendication nationale arménienne en Arménie turque. Il soutient le peuple arménien dans sa lutte contre l'Etat fasciste turc et l'impérialisme, pour une solution juste et durable du problème arménien.

Dans l'immédiat, conformément aux engagements pris par le Président Mitterrand, le P.S.U. demande que le gouvernement français reconnaisse et condamne de façon claire et résolue le Génocide de 1915. Le P.S.U. entend intervenir afin que le gouvernement socialiste s'engage à faire condamner dans les Instances Internationales l'Etat fasciste turc qui persiste à nier la vérité historique du Génocide, ignore le fait national arménien et perpétue sa domination sur les territoires arméniens occupés.

BUREAU POLITIQUE
DU PARTI SOCIALISTE UNIFIE

Paris, le 5 Mai 1982

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՒԱՆԻ ՓՈՂԱՅԻՆ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԸ ԼԱՏՎԻՈՅ ՄԷՋ

Երեւանի պետական փողային նուագախումբը չրջագայութի ելած է Լատվիա: Վալմիէրի քաղաքի մշակոյթի տունը տեղի ունեցած երեկոյթի նուագախումբը, ղեկավարութեամբ Հայկազ Մեսիայեանի, հնչեցուցած է հայ եւ լատվիացի երաժիշտներու գործեր: Լատվիոյ արուեստական հասարակութիւնը ծանօթ է նաեւ Հայաստանի Փիլհարմոնիայի սենեկային նուագախումբին, որ յաճախ հնչեցուցած է Եդուարդ Միրզոյեանի, Տիգրան Մանսուրեանի եւ այլ հայ երաժիշտներու գործերը:

×

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒՍ

Երեւանի մէջ մեծ տպաքանակով լոյս տեսած է ամերիկացի գրող Շերուուտ Անտերսընի «Զախարդ սպիտակամօրթը» վէպը, հայերէն: Ներկայիս թարգմանիչները կ'աշխատին անոր պատմուածքներու «Ուայնսպուրկ, Օհայօ» ծանօթ գիրքին վրայ: Վերջին ժամանակներուն ամերիկեան արձակէն վեց հատորներ հրատարակուեցան հայերէն: Ակէ առաջ լոյս տեսած էին Ճոն Սթէյնպէքի, Ֆրենկա Սքոթ Ֆիցճերըլտի, Ուիլեըմ Սարոյեանի, Ճերոմ Սելինճըրի եւ Թրումըն Քափոթի ընտիր երկերու հաւաքածոները:

×

ՄԷԹՐՕՆ ԿԸՆԴԼԱՑՆԷ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Լենինգրադի մէջ պատրաստուած հրատման նոր թէքնիքի օգնութեամբ, Երեւանի մէթրոյի չինարարութեան մէջ, ամէն ամիս մինչեւ 40 մեթր ստորերկրեայ ուղի կը բացուի: Ջրերկրաբանական բարդ պայմաններու համար հորատանցումի այդ «արագութիւնը» չատ բարձր կը համարուի: Այս ձեւով կարելի կը դառնայ արագօրէն մեծցնել ստորերկրեայ մայրուղիներու երկարութիւնը: Նոր գիծը կ'երկարի դէպի Երեւանի արդիւնաբերական չրջանը՝ հարաւ-արեւելք: Հոս կառուցուող վերերկրեայ կայարանը ստացած է «Գործարանային» անունը:

ԿԱՐԴԱՑԷՔ «ՅԱՌԱՋ»Ը ՏԱՐԱԾԵՑԷՔ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԷՍԱՍԵԱՆ - ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ Միութեան տարեկան Ընդհ. ժողովը գումարուեցաւ, Շաբաթ, Մայիս 8, 1982, Ափք Մանուկեան Մշակութային Կեդրոնը:

Գործունէութեան եւ հաշուական տեղեկագրերը վաւերացուեցան միաձայնութեամբ: Մեծապէս գնահատուեցան Միութեան կրթանպաստ յատկացումները հայ վարժարաններուն, որոնց գումարը, երեք տարուան ընթացքին, կը հասնէին երեսունեւվեց հազար երկու հարիւր ֆրանքի:

Վարչական կազմը վերընտրուեցաւ հետեւեալ կերպով.-

Նախագահութիւն՝ Հ. Գալուստեան, Ա. Կիւլխտան եւ Ա. Կարապետեան: Ատենապետուհի՝ Շ. Ժամկոչեան, Ատենադպրուհի՝ Ս. Սերոբեան, Գանձապահ՝ Զ. Սարեան, Հաշուակալ՝ Թ. Կեվշէհեան, Խորհրդականներ՝ Ի. Գահինեան, Հ. Զէփիրեան եւ Վ. Պամպաճեան:

ՎԱՐԶՈՒԹԻՒՆ
(կնիք)

ԳՆՂԱԹՔ ԳՆՂՈՒԹ

ՍՊԱՀԱՆԻ չրջանի Շահին - Շահր քաղաքի «Սասուն» Միութեան կազմակերպութեամբ տեղի ունեցած է տարազներու յուցահանդէս մը, ուր Նոր Ջուղայի «Սասուն» Միութեան անդամները ներկայացուցած են հայկական ժողովրդական, զինուորական եւ փեսայական տարազներ, որոնք մեծ տպաւորութիւն ձգած են աւելի քան վեց հարիւր ներկաներու վրայ: Ցուցադրութիւնը տեղի ունեցած է Շահին - Շահրի հայկական «Վարդանանց» վարժարանի սրահին մէջ:

×

ՆԻՒ ԵՈՐՔԻ «Ուոլտորֆ Աստորիա» պանդոկին մէջ, Ապրիլ 18-ին, տեղի ունեցած է Անթիլիասի Դպրեվանքի յիսնամեակի ծննդեան տարեվերջի հանդիսութիւնը, որուն ներկայ եղած են չուրջ 300 հայ եւ օտար հիւրեր որոնց մէկ մասը՝ զանազան քաղաքներէ: Ցայտաթիւրը վարած է Մգր. Վարչութեան ատենապետը՝ Սարգիս Թըշոյեան: Խօսք առած են վերապատուելի Սաթըն, Քոռեպ. Րիչըրտ Ցովհաննէսեան, Քոռեպ. Վարդան Գրիգորեան եւ Տոքթ. Հրանդ Մարգարեան: Թեմին առաջնորդը՝ Մեսրոպ Եպիսկ. Աշճեան, հայերէն եւ անգլերէն խօսք առնելով Կիլիկեան Իշխանի չքանչաններ յանձնած է Նիւ Իոթ Ըլլիֆի բազմամեայ նախագահ Քլիվլէնտ Տաճի, Տիկին Տոլորէս Զօհրապ - Լիփմանի եւ Տոքթ. Արա Տումանեանի ու իր կնոջ: Մեսրոպ Եպիսկ. յայտարարած է, թէ ցարդ Դպրեվանքին 252 հազար տոլար նուէրները եւ խոստումները կատարուած են Աւետեաններ Ամերիկայի եւ Քանատայի թեմէն:

ՍՊԻՏԱԿ ՋԻԱՒՈՐԸ

= ՀԱՄԱՍՏԵՂ =

ՄԱՍ ՁՈՐԲՈՐԴ

ԴԷՊԻ ԳԱՐԱՏԱՂԻ ԼԵՌՆԵՐԸ

- Դուք կորնոցուցած էք կռիւը, եթէ Թուրքերը պաշարուած պահեն լեռը, առանց նոյնիսկ հրացան մը արձակելու: Ձեր մեծագոյն թշնամին ձմեռն է, որ կուգայ: Ինչքա՞ն ալ ուժեղ ըլլաք, չէք կրնար պայքար տանիլ այդ դաժան ուժին դէմ եւ լերան վրայ: Ուզէք թէ չուզէք, պիտի գտնէք ելք մը եւ կամ ջարդուելու գնով պիտի կարէք չրթիան: Այն 300 հոգին, որ ճամբայ ելած է Պարսկաստանէն, բաւարար պիտի չըլլայ, թէեւ, կրնաս էֆէնտի, ձեր ֆէտայիներու համար չրթայ կարելը դժուար չէ:

- Առայժմ երեք ամիսէն աւելի ունինք առաջին ձիւնին: Մեզի համար վտանգաւորը նաեւ զէնքի ու ռազմանիւթերու պակասն է: Երբ բաւարար չափով զէնք ունենանք, կը հաւատամ, որ կարելի պիտի ըլլայ չրթիան ճեղքել եւ ժողովուրդը ապահով անցընել Պարսկաստանի սահմանը, նորէն ապաւինելով լեռներու պաշտպանութեան:

«Դուն ան ըսէ, տղաս», խօսեցաւ Կիւրոս աւելի ծանրացնելով իր բառերը, երես աչքը, որ Գարապուռնարի մէջ խումբ ունիք եւ քու անձնական բարեկամը այնտեղ Թրքական պաշտօնեայ է: Հետաքրքիր է դիտնալ թէ ի՞նչ է պաշտօնը:

- Ան հարիւրապետ է էնտեղ:

- Էդ չատ լաւ, հիմա բաւական մօտ եանք: Բարեկամդ ոեւէատեն պիտի ուզէ՞ Վարդաճորի կռուին օգտակար ըլլալ: Կը վստահեցնեմ, որ կեանքի վտանգ չկայ:

- Ան չատ լաւ մէկն է, եթէ բացատրենք, չատ լաւ կը հասկնայ, ու չի խնայեր: Անշուշտ լաւ պիտի ըլլար, որ անոր պաշտօնը չվտանգուէր, որովհետեւ որպէս զինուորական պաշտօնեայ՝ մեզի բաւական օգտակար պիտի ըլլայ:

– Նայէ, Յակոբ, տղաս, ա՛յս առաջին փորձը պիտի ըլլայ մեր գործակցութեան: Ցետոյ պիտի տեսնես, որ այս ծառայութեան փոխարէն հարիւրապատիկը աւելի օգտակար պիտի ըլլանք ձեզի: Հայրդ կախաղան չէր բարձրանար, եթէ մտիկ ընէր մեզի: Մերինները կ'ուզէին հայրդ փախցնել բանտէն, հակառակ ծանրը վտանգներու: Ցաջողութեան առաջին գաղտնիքը, տղաս, նայէ որ թշնամիդ լաւ ճանչնաս: Հայրդ մխամտութիւնն ունէր հաւատալու, որ զինք կախաղան չեն բարձրացներ: Կախաղանի վճռէն յետոյ, արդէն անկարելի եղաւ զատել: Բանտի պարիսպներուն վրայ, փողոցը, բակին մէջ զօրքերով լեցուցին, երբ իմացան, որ հայրդ բանտէն փախցնելու չչուկներ կան: Ըսել կ'ուզեմ, մենք միշտ ալ մեր լաւագոյնը ուզած ենք բերել ձեր չարժման եւ այդ նկատած ենք նաեւ մեր չարժումը, ինչքան ատեն որ Թուրքին դէմ է: Մենք վաղը կ'իջնենք Գարապուռնար. հոն կը տեսնենք բարեկամդ ու միասին կը խորհրդակցինք:

– Չգիտեմ թէ ի՞նչ է միտքդ: Պէտք չունիմ ըսելու, որ այնտեղ, մերինները տակաւին անփորձ են:

- Չէ, չատ գժուար չէ: Նորէն մերին ներն են որ պիտի կատարեն գլխաւոր գործը. միայն թէ, եթէ պէտք ըլլայ, ինձ կը տրամադրես վեց - եօթը Ղորի եւ երկու մարդ: Ըսեմ, ըսեմ, Սենեքերիմին խօսած եմ արդէն: Գարապուռնարի պահեստանոցէն պէտք է զէնք հանել եւ վարդաճոր հասցնել:

- Մի՞թէ կարելի է, կիրա էֆէնտի: Մենք մեր հնարաւոր միջոցները կը տրամադրենք քեզի, քանի որ դուն լինքդ այդ գործին մէջն ես: Իմ խումբին համար նոյնպէս պէտք ունիմ թուրք բանակի զէնքերուն:

– Իմ այս գործին մէջ ըլլալը այնքան կարեւոր չէ, որքան երեւանցի Մալխասին մասնակցութիւնը:

- Ըսել կ'ուզես, այդ մարդը տահա ո՞ղջ է, - հարցուց Յակոբ զարմացած:

- Անշուշտ, անշուշտ. ան հազիւ 62 տարեկան է:

Յակոբին համար տահա ուրիշ հերոսի մը անունը, որ առնելին մեծ աղմուկ բարձրացուց Կովկասի փոխարքային սպանութիւնով. ան յաջողած էր սպաննել եւ ապահով, երբ փոխարքան կ'անցնէր օր ցերեկով, 20 թիւնապահներով եւ կառքին չորս ձիեր լծած:

(Շար. 565)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

ՄԱՐՍԷՅԼ.- Տէր եւ Տիկին Տոքթ. Զաւէն Գաբրիէլեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Գառնիկ Տէրոյեան եւ զաւակը կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի իրենց հօր՝

ՍԱՀԱԿ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ, կիրակի, Մայիս 23, Սէն - Լուի Ս. Գէորգ եկեղեցին:

Ի դիտումին ողբացեալին յիշատակը յարգողներուն:

U. G. A. B. - MARSEILLE

Lundi, 24 Mai — à partir de 18 h.

Présentation de:

« L'HISTOIRE DES ARMENIENS »

Paru aux Editions PRIVAT

Sous la Préidence d'Honneur de

M. NAPOLEON BULLUKIAN

(Président de l'UGAB - France)

En présence de

M. GERARD DEDEYAN

(Directeur de l'ouvrage)

M. PHILIPPE WOLFF

(Membre de l'Institut)

et de l'Editeur

U. G. A. B. — MARSEILLE

33, Rue Pierre Puget — 13006 Marseille

MAISON DE LA CULTURE ARMENIENNE

9, Rue de Madrid — 94140 Alfortville

Conférence - Débat

avec

SERGE AFANASYAN

Auteur de l'ouvrage:

«L'ARMENIE, L'AZERBAIDJAN ET LA GEORGIE DE L'INDEPENDANCE A L'INSTAURATION DU POUVOIR SOVIETIQUE 1917 - 1923»

Sur le thème:

« LES RELATIONS TURCO - SOVIETIQUES ET L'ARMENIE DE 1919 - 1921 »

L'AUTEUR SIGNERA SON OUVRAGE LE VENDREDI, 21 MAI — A 21 H.

U. G. A. B. - PARIS

PRESENTE

JANET MAFIAN-ALTOUNIAN

RECITAL DE PIANO

CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN

118, Rue de Courcelles — 75017 Paris

Le Samedi, 22 Mai — à 21 h.

Au Programme:

BACH — HAYDN — RAMEAU — FAURE

RAVEL — JONGEN — KHATCHADOURIAN

Réservation de places:

U. G. A. B. — Tél.: 520. 03. 18

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

կը կազմակերպէ

ԳՐԱԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ ՄԸ

նախագահութեամբ՝

ՄԱՌԻ ԱՐՄԱՃԵԱՆԻ

նուիրուած՝ բանաստեղծները՝

ԱՇԱՐՈՆԻ ԵՒ ՉԱՆԳՈՒԻ

կը խօսին՝

ՎԱՐԴԱՆ ԵՂԻՇԷԱՆ (Ախարոն)

եւ

ՍԵՐՈՎԲԷ ՄԽԻԹԱՐԵԱՆ (Զանգու)

Մայիս 23, կիրակի, ժամը՝ 16-ին

au Centre Culturel Alex Manoogian

118, Rue de Courcelles - 75017 Paris

Կ'արտասանեն՝

Ա.ԱՄԵՆՈՒՀԻ ԲԱԼՈՒԵԱՆ: Պ. Պ. Ն. ՊԸՇՏԻԿԵԱՆ, Վ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ:

Մուտքը ազատ է:

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի նպաստ Լիոնի Հայոց եկեղեցւոյ նորոգութեան եւ հովանաւորութեամբ տեղւոյս հոգեւոր հովիւ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՋԱՔԱՐԵԱՆԻ

Լիոնի հայերէն խօսուն թատրոնը կը ներկայացնէ Ուրբաթ, Յունիս 4-ին երեկոյեան ժամը՝ 8·45-ին՝ «Տայը կարապետ»ը կամ «Ամերիկահայ փեսացուն» Սիկալ սրահին մէջ:

60 Ավրնիւ տը Սաֆս, Լիոն 6-րդ

Տոմսերը ապահովելու համար դիմել՝ Լիոնի Հայոց Եկեղեցին, կամ խաղացող անդամ, անդամուհիներուն:

EN SOUSCRIPTION

Հայոց Պատմութիւն

Histoire des Arméniens

Sous la direction de GERARD DEDEYAN

Maître - Assistant à l'Université Paul - Valéry de Montpellier

Un volume, 700 pages, au format 180 x 230 mm.

Imprimé sur vélin et comportant 32 planches d'illustrations en hors-texte, relié toile.

PRIX DE SOUSCRIPTION JUSQU'AU 24 MAI

169 F. au lieu de 197 F. à Parution

Toute souscription donne droit à une magnifique reproduction rehaussée de couleur d'une carte du XVIII^e siècle de l'Arménie et de la Géorgie publiée en 1766, par les géographes du Roy.

Bulletin de Souscription

NOM: .....

ADRESSE: .....

Code Postal: . . . . . .

A RETOURNER

Accompagné d'un chèque de 169 F. + 30 F. (frais d'envoi)

à LA LIBRAIRIE ORIENTALE — H. SAMUELIAN

51, Rue Monsieur - le - Prince — 75006 Paris — Tél.: 326. 88. 65

ԿԱՊՈՑՏ ԽԱՉ

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Փարիզաբնակ մանուկներուն արձանագրութիւններուն համար, դիմել Տիկին Լ. Ֆորլանի.-

Հեռաձայն՝ 254 - 81 – 79

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ Պանեէօ - Քաչանի մասնաճիւղի ընդհ. ժողովը երկուշաբթի, Մայիս 24, ժամը 20·30-ին Տիկին Փափազեանի բնակարանը:

Diapositives

Շաւիլի Եկեղեցւոյ Հոգաբարձութեան Մշակութային Յանձնախումբը կը կազմակերպէ՝

ՅՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Շաբաթ, Մայիս 22, ժամը 20·30-ին

Շաւիլի Եկեղեցւոյ կից սրահին մէջ:

4, Rue de Trois - Champtiers — Chaville

LES DIAPOSITIVES

de l'Organisation Terre et Culture

et le Film: «SAINT THADÉE» (16 mm.)

OPERA DE MARSEILLE

VENDREDI, 4 JUIN, A 20H.45

CONCERT DE GALA

AU PROFIT DE LA

Fondation Aram Khatchatourian

SOUS LA PRESIDENCE DE

GASTON DEFFERRE

(Maire de Marseille, Ministre d'Etat, Ministre de l'Intérieur et de la Décentralisation)

L'ORCHESTRE DE L'OPERA DE MARSEILLE

Sous la direction de

JANOS FURST

Avec la participation de

MYRIAM BIRGER (Pianiste)

JEAN TER-MERGUERIAN (Violoniste)

au Programme:

Mascarade	**A. KHATCHATOURIAN**
Concerto N° 1 pour piano	**TCHAIKOVSKI**
Concerto en Ré-Majeur pour violon	**BEETHOVEN**

LOCATION A L'OPERA — A PARTIR DU VENDREDI 28 MAI

CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN

118, Rue de Courcelles — 75017 Paris

(Métro: Courcelles)

Tél.: 520. 03. 18 — 227. 12. 26

ACTIVITES PERMANENTES

— TOUS LES MERCREDIS:

Cours d'Arménien

(pour les jeunes de 7 à 12 ans)

Enseignant: Mme KARAKAYAN Anna

Cours de Danse Folklorique

Enseignant Mr. PEHLIVANIAN

(pour les jeunes de 7 à 12 ans)

A partir de 14 h.

— TOUS LES VENDREDIS:

CHORALE

Dirigée par Mr. YANBEKIAN

U.G.A.B. — PORTE OUVERTE

Caféteria et Jeux de Reflexion

A partir de 20 h

— TOUS LES SAMEDIS:

Cours d'Arménien (Adultes)

Enseignant Mr. KARAKAYAN Garabed

de 12h.30 à 14h.30

Cours de Photo

Labo, Chasse d'image, Composition

Eneignant Mr. NOUBARIAN Ochine

de 14 à 16 h.

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կեսաթիոյ եւ չրջանի Հայրենակցական Միութեան՝ Ապրիլ 18, Ճաշին (տարեց հայրենակիցներու ի պատիւ) հետեւեալ նուէրները եղան.- Տոքթ. Խաչիկ Տամլամեան և Տիկին Պախթիարեան 1500 Ֆ., Պ. Տօրք Տէր – Յակոբեան, Պ. Վահրամ Մոսուիչեան, Պ. Գէորգ Սաատէթեան, Տիկին Հելէն Տամլամեան 1000-ական Ֆ., Պ. Մխիթար Եփրեմեան, Տիկին Աբշալոյս Մխիթէվէլեան 2000-ական Ֆ., Տիկին Նորա Տամլամեան - Տէր - Յակոբեան 1000 Ֆ., Տիկին Աբշակուհի Դաւիթեան, Պ. Սարգիս Թէքեան 200-ական Ֆ.:

Imprimé sur les Presses du Journal «Haratch»

83, Rue d'Hauteville — 75010 Paris

Commission Paritaire: N° 55935

Cours et Atelier d'Art - Dramatique

Eneignant Mr. ALTOUNIAN Alex

de 15h. à 18h.

Ping - Pong et Jeux de Reflexion

A partir de 20 h.

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Այրի Տիկին Մարգրիտ Լեւոն Տօնիկեան իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տիկին Վարդուհի Շերբինեանի, զաւակներուն, ինչպէս նաեւ Տակառեան ընտանիքին՝ Լեւոն Շիրինեանի մահուան առթիւ եւ փոխան ծաղիկի 250 Ֆ. կը նուիրէ «Ծառայ»ի բարգաւաճման:

Ուխտագնացութիւն դէպի ՀԱՅՐԵՆԻՔ

ե ւ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին

ՅՈՒԼԻՍ 19 – ՕԳՈՍՏՈՍ 1

Կազմակերպուած՝

ԱՌՆՈՒՎԻԼԻ

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Հոգաբարձութեան կողմէ:

Խումբին կ'ղեկավարէ՝

ՄԵՍՐՈՊ ՔՀՆՅ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Կը մասնակցի նաեւ՝

Առնուվիլի Քաղաքապետ

CLAUDE BIGEL

Արձանագրութեանց համար դիմել Եկեղեցւոյ Գրասենեակը.-

31 - 33, Rue Saint - Just

95400 — ARNOUVILLE-LES-GONESSE

Tél.: 985. 28. 77

Organisation Technique:

SABERATOURS

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

Հինգշաբթի, Մայիս 20

ՏՕՆ Է ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՕՐ

Այս առթիւ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Մայր Եկեղեցւոյ մէջ առաւօտեան ժամը 10-ին կը մատուցուի Պատարագ:

Նոյն օրը յատկացուած է նաեւ Հայ Մանուկներու Հաղորդութեան:

Փարիզի եւ չրջաններու բոլոր ղեկավարներու աշակերտներն ու Հաղորդութեան համար պատրաստուած մեր մանուկներն ու ծնողքները կը հրաւիրուին մասնակցելու պատարագին եւ Սուրբ Հաղորդութեան:

ԱՂՔԱՏԱԽՆԱՄԻ

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

ՅՈՒՆԻՍ 13-ԻՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի ՄԸ նամակալութիւնը չնորհակալութեամբ կը ծանուցանէ հետեւեալ նուիրատուութիւնները.- Ա. Բ. (Լիոն) 2000 Ֆ. եղեւնի զոհերու յիշատակին, Տէր եւ Տիկին Կ. Սարեան 200 Ֆ. իրենց քրոջ եւ քրոջորին՝ Տէր եւ Տիկին Բ. Քէչիչեանի յիշատակին, Տէր եւ Տիկին Վ. Շահինեան 200 Ֆ. իրենց մօր՝ Տիկին Պ. Նալբեանի յիշատակին, Պ. Կառավարեան ընտանիք 50 Ֆ.:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄՇԱԿ. ՄԻՈՒԹԻՒՆԸ ե ւ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԻՒՆԸ (ԺԱՅԾ)

Ուրբաթ, Մայիս 21, ժամը 20·30-ին Մշակոյթի եւ արուեստի կեդրոնին մէջ:

6, Cité Wauxhall — Métro: République

Կը կազմակերպեն

ՇԱՏ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Նիւթ ունենալով՝

ՄԱՇՏՈՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ

ե ւ

ՄԱՏԵՄԱՆԵՐՈՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Նկարներու ցուցադրութիւն

Բանախօս՝

ԲԱԲԳԷՆ ՉՈՒՔԱՍԶԵԱՆ

Մաշտոց Մատենադարանի Տնօրէնի տեղակալ:

Կը նախագահէ ու բանախօսը կը ներկայացնէ՝

ՓՐՈՖ. ԺԱՆ - ՓԻԵՌ ՄԱՇԷ

Արեւելեան լեզուներու ամպիոնի վարիչ:

Մուտքը ազատ է:

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ
19
MERCREDI
19 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա: Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ: 180 Ֆ.
Արտասահման: Տար. 400 Ֆ. - Հատը: 2.50 Ֆ.

57րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.174 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 57e ANNÉE — No 15.174

ԼՈՍ - ԱՆՃԼԼԷՍ

ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ԴԱՏԻՆ ԹՈՒԱԿԱՆԸ ԿՈՐՈՇՈՒԻ ՄԱՅԻՍ 21-ԻՆ

Մայիս 7-ի եւ 8-ի մեր թիւերով հա - ղորդած եւ անկատար առաջին տեղեկութիւնը տուած էինք Համբիկ Սասունեանի նախնական դատավարութեան մասին, որ տեղի կ'ունենար Մայիս 5-ին եւ 6-ին: Մայիս 7-ի մեր պաշտօնակից՝ «Ասպարէզ»ի մօրեւ մեր պաշտօնակից՝ «Ասպարէզ»ի Մայիս 8-ի թիւէն կ'արտատպենք այդ անկնդրուկութեան մանրամասնութիւնները: Ըստ ամերիկեան օրէնսդրութեան այս նախնական դատը կամ ունկնդրութիւնը (ընթրիկ) նպատակ ունի ճշդելու ձերբակալուած անձին ամբաստանութիւնը կամ ապաստանութիւնը: Համբիկ ամբաստանուած է:

×

Համբիկ Սասունեանի նախնական դատավարութեան աւարտին, Հինգշաբթի, Մայիս 6-ի կէսօրէ առաջ ժամը 11-ին, Լոս - Անճըլըսի քաղաքային դատաւոր Մարկըլ Լ. Պըրք, հիմնուած դատախազութեան ներկայացուցած վկաներուն ապացոյցներուն վրայ, որոշեց Համբիկը պաշտօնապէս ամբաստանել Լոս - Անճըլըսի Թուղք հիւպատոս Քեմալ Արըքանի ահաբեկութեամբ: Մայիս 21-ին, Համբիկ պիտի ներկայանայ դատարան, ուր պիտի ճըշդուի դատավարութեան թուականը:

Համբիկի նախնական դատավարութիւնը սկսած էր Զորեքշաբթի, Մայիս 5-ի առաւտեան ժամը 8·30-ին, Մխիթեալ - Նահանջներու Ոճրային Ատեանի չէնքին մէջ: Նոյն ժամուն, չէնքին առջեւ հայ երիտասարդներու բազմութիւն մը հաւաքուած էր ցոյց կատարելու՝ Համբիկի ազատ արձակումը պահանջող պաստառներ պրգած:

Դատախազ Տէնիս Զոթ վկայութեան կանչեց Համբիկի բանտախուցի ղեկացուցիչ մարդասպանութեամբ դատապարտուած Մանուէլ Թ. Քորթէզը, որ երդուելէ յետոյ Համբիկի խոստովանութիւնը, Արըքանը ահաբեկելու կապակցութեամբ: Քորթէզ յայտնեց, թէ ուրիշ բանտարկեալի մը՝ Ճոն Հոլմզի հետ, ազգային ցեղասպանութեան մասին խօսած պահուն, Հոլմզ անդրադարձած է այն իրողութեան, որ Թուրքիա պատասխանատուութիւն չէ ստանձնած իր ջարդարար արարքներուն: Ըստ Քորթէզի, Հոլմզ շարունակած է, ըսելով. «Կ'երեւակայեմ, թէ այդ է պատճառը, որ մղեց Համբիկը ընելու ա՛յն, ինչ որ ըրաւ»: Աւատեան ժամը երեքի առիւները ըլլալով, իբրեւ թէ Քորթէզ կարծած է, որ բոլոր բանտարկեալները քնացած են: Սակայն, Հոլմզի արտայայտութենէն յետոյ, իբրեւ թէ Համբիկ «չատ ճիշդ է, այդ պատճառով էր որ արարքը ըրի», բացագանչած է: 26 ամեայ Մանուէլ Քորթէզ ցկեանս բանտարկութեան դատապարտուած է, երախաներ սպաննած ըլլալու յանցանքով:

Ապա, դատախազ Զոթ վկայութեան կանչեց երեք անձեր, որոնք Հինգշաբթի, 1982, Յունուար 28-ին, Քեմալ Արըքանի հարեւանի վայրին չրջակայքը կը դիտէին եւ իբրեւ թէ ականատես եղած էին ահաբեկիչներու փախուստին:

Նու. Սք. Էյ·ի աւարտական դատաւարանի աշակերտուհի ձէնիի Կոթզ վկայեց, որ դէպքին օրը, կէսօրէ առաջ ժամը 9·20-ին, դպրոցի ճամբուն վրայ, կարմիր լոյսին պատճառով, ինքնաշարժը կանգնեցուցած էր Քոմմոթօք եւ Ուիլշըր պողոտաներու խաչմերուկին վրայ: Ձէնիի նաեւ արագահաւաքածի կրակոցի ձայներ լսած է, ապա երկու երիտասարդներ տեսած է, որոնք վազելով կը փախչէին

ԵՐԵՒԱՆ ↔ ՓԱՐԻԶ ՀԵՌԱՏԵՍԻԼ

ԵՐԵՒԱՆ (ԱՐՄԷՆՓրԷՍ ՄԱՅԻՍ 11 - 13)

ՎՐԱՑԱԿԱՆ ԹԷՅԻ ՇԱՒԱՔ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Երեւանի մէջ տեղի ունեցած է վրացական թէյի չաթթի մը: Վրաստան աշխարհի թէյի մեծագոյն հայթայթողներէն է, որ ծանօթ է իր թէյի տեսակներով: Թիֆլիսէն եկած մասնագէտներ ծանօթացած են վրացական թէյի արժանիքներուն, անոր պահպանման ու պատրաստութեան գաղտնիքներուն:

դէպքին վայրէն: Ձէնի Համբիկը մատնանշելով հաստատեց, որ ան էր փախչողներէն մէկը: Ցաջորդ վկան, Ձէյմս Ձէֆֆս, տնտեսագէտ մը, դէպքին վայրը հասած է աւելի ուշ եւ տեսած է երկու անձեր, որոնք կը վազէին: Ձէյմսի համաձայն, վազողներէն մէկը, որ ձեռքին մէջ սարճանակ մը ունէր, «չատ հաւանաբար» Համբիկը ըլլալու էր:

Երրորդ վկան, իրաւաբան Ուէյզ Ուտհլանտ, Ձէֆսի հետ միաժամանակ հասած էր դէպքին վայրը: Ան ինքնաշարժով հետեւած էր երկու վազող երիտասարդներուն, բայց յստակօրէն չէր կրցած տեսնել անոնց դէմքերը: Ուտհլանտ չարունակած է հետեւիլ վազողներուն, մինչեւ որ անոնք ինքնաշարժ մը մտնեն եւ հեռանան: Ինքնաշարժին թիւը առնելով, Ուտհլանտ տեղեկացուցած է ոստիկանութեան, որ ինքնաշարժներու արձանագրութեանց բաժանմունքէն երեւան բերած է անոր տէրը՝ Համբիկ Սասունեանը:

Համբիկ Սասունեանի պաշտպան փաստաբան Փօլ Կիրակոս դատաւորին յայտնեց, թէ յաջորդ օրը, Հինգշաբթի, Մայիս 6-ին, մտադիր է վկայութեան կանչել Ճան Հոլմզը եւ այլ բանտարկեալներ, ապացուցանելու համար որ Մանուէլ Քորթէզ սուտ կը խօսի:

Ցաջորդ օրը, Հինգշաբթի, Մայիս 6-ի կէսօրէ առաջ ժամը 10·30-ին, պաշտպան փաստաբան Փօլ Կիրակոս յայտարարեց, որ նախորդ դիչեր (Զորեքշաբթի, Մայիս 5-ին) իր կատարած քննութեանց իրբեւ արդիւնք, յարմար չի տեսներ այսօր վկայութեան կանչել Հոլմզը եւ միւս բանտարկեալները:

Կիրակոս դատաւորին յանձնեց Քալի - Ֆորնիոյ նահանգապետ Էմըլնտ Ճ. Պըրաունի կողմէ ստորագրուած յայտարարագիր մը, իբրեւ փաստաթուղթ: Ցայտարարութիւնը կը հաստատէր, որ Թուրք կառավարութիւնը Հայեր Ջարդած է 1915-ին: Դատախազը առարկեց, ըսելով որ յայտարարութիւնը փաստաթուղթ կարելի չէ նկատել եւ որ ան բնաւ կապ չունի դատավարութեան հետ: Կիրակոս պատասխանելով, ըսաւ որ դատախազը Համբիկին հայ ըլլալը նկատած էր իբրեւ արարքը կատարելու մղող «յատուկ պարագայ» եւ, հետեւաբար, նահանգապետին յայտարարագիրը անպայման առընչուած կ'ըլլայ դատավարութեան հետ:

Դատաւոր Պըրք անհրաժեշտ չգտնելով յայտարարագրին ընդունումը դատարանին կողմէ, վերադարձուց պաշտպան փաստաբանին:

Դուրս գալով դատարանէն, Փօլ Կիրակոս ձայնասփիւռի, պատկերասփիւռի եւ թերթերու թղթակիցներուն հետ խօսելով, յայտնեց թէ ինք կը հաւատայ, որ Քորթէզ սուտ խօսեցաւ եւ որ այլ բան - Քորթէզ սուտ խօսեցաւ եւ որ այլ բան - տարկեալ վկաներ կրնան հաստատել իր համոզումը: «Մենք յարմար գտանք, որ վկաները կանչուին բուն դատավարութեան ընթացքին եւ ոչ հիմա», յայտարարեց Կիրակոս»:

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՄՈՒԹ ՊԱՍՏԱՒԼ ԵՒ ՇՈՒԼՇՈՂՈՒՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ

=———=———=

Հեռատեսիլի պաստառը լի՞նչ մտածումներու, ի՞նչ ներշնչումներու կը տանի մարդը: Եթէ հեռատեսիլ դիտելու ժամանակ ունիք - եւ արդէն անպայման ունիք, - եթէ բան մը դիտելու ընթացքին ունիք նաեւ ձեր դիտածին մասին մտածելու, խորհրդածութիւններ ընելու սովորութիւն մը, ամէն վայրկեան հազարումէկ հրաշալի հորիզոններ կը բացուին ձեր դիմաց: Քաղաքական լուրերէն սկսեալ մինչեւ վաւերագրական ուսումնասիրութիւններ, չարժանկարի ժապաւէններէն մինչեւ մանկական ու մարզական յայտագիրներ, լի՛նչեր լինչեր կը տողանցեն սպիտակ ու լուսաւոր պաստառին վրայէն, լի՛նչ գունագեղ պատկերներ, լի՛նչ հակեան դէմքեր կուգան կը խօսին, կը պատմեն ու յետոյ կ'երթան իրենց տեղը ուրիշներու ձգելով: Կարծես թէ ուղղակի մեր դիմացը գտնուէին, որքա՛ն կանքատ են անոնք, որքա՛ն իրական, որքա՛ն համոզիչ: Հոյակապ պատկերներ, որոնք կը հասնին անեւեւակայելի հեռաւորութիւններէ ու յանկարծ կը վերակազմուին մեր սենեակին մէջ, հիւրընկալուելով միւս այդ նոյն սպիտակ ու փոքրիկ լուսաւոր պաստառին կողմէ:

Երէկ, երբ տակաւին չէր լուսաւորուած, երբ տակաւին մութ էր եւ ոչ ոք կը նայէր անոր, ակնարկս հանդիպեցաւ այդ ապակեայ պաստառին ու խղճահարեցայ: Աչխարհի վրայ կա՞յ արդեօք ուրիշ բան մըն ալ որուն վրայ այնքան շատ նայուածք կեդրոնանայ, որ սակայն այնքան քիչ տեսնուի նայողներուն կողմէ: Արդարեւ, չէ՞ որ երբ հեռատեսիլին կը նայինք, բուն պաստառը չէ՛ որ կը տեսնենք, այլ անոր վրայէն սահող պատկերները: Ի՞նչ անփառունակ ճակատագիր է այդ, մտածեցի այդ պահուն, պաստառը մեզի համար գոյութիւն չունի, պաստառը մեր ուշադրութեան մէկ վայրկեան իսկ չարժանանար, ինք կը չքանայ եւ իր գոյութեան ամբողջ իրաւունքը կը փոխանցէ այն պատկերներուն, որոնք կը չողչողան իրմով, որոնք կը փառաւորուին իրմով, ու իրմով մեր գնահատանքին առարկայ կը դառնան առանց յիշեցնելու որ գոյութիւն չէին ունենար, եթէ չըլլար սա խորհրդաւոր պաստառը:

×

Նոյնը պատահեցաւ երէկ դիշեր ալ: Երբ ժամը հասաւ ու պաստառը լուսաւորուեցաւ, ամբողջ աչխարհ մը ծնունդ առաւ անոր վրայ: Քաղաքական դէմքեր քաղաքական դէպքեր, ծանուցումի հեռուններ, փութպոլի աստղեր եւ դեռ ին - չե՛ր ինչեր մեր ուշադրութիւնը լարուած պահեցին իրենց վրայ: Դիտեցինք մերթ հաճոյքով, մերթ սարսափով, մերթ հիացմամբ եւ մերթ ալ անտարբերութեամբ: Ցետոյ վերջացաւ օրուան յայտագիրը եւ կոխեցինք կոճակին վրայ: Աչխարհը սըրբուեցաւ մէկ անգամէն, անհետացաւ:

×

Այն առեն ակնարկս կրկին հանդիպեցաւ մութ պաստառին, որուն ոչ ոք կը նայէր այլեւս: Ցանկարծ զարմացայ: Ինծի այնպէս կը թուէր որ պաստառը բան մը ըսել կ'ուզէր ինծի, այս անգամ մութ ու անգոյ պատկերով մը, այս անգամ առանց ձայնի ու երաժչտութեան: Ան կ'ըսէր հետեւեալը.

«Քիչ առաջ կը խղճահարէիր վրաս, բայց կը սխալէիր: Ես աչխարհի բոլոր վաղանցուկ դէմքերուն ու դէպքերուն մնայուն հայելին եմ: Ի՞նչեր սահեցան վրայէս, առանց հետք մը ձգելու, մինչդեռ ես կը շարունակեմ մնալ: Իմ վրայէս ի՞նչ պատգամներ արձակուեցան, որոնք օդին մէջ ցնդեցան գացին, կարճ արձագանգ մը միայն ձգելէ վերջ: Ո՞ւր են անոնք հիմա, մինչ ես կը շարունակեմ գոյատեւել: Ճիշդ անգամ մը քաղաքական այն մարդիկը, որոնք օրուան հեռուներն էին եւ կը կարծէին որ այդպէս պիտի մնան միշտ: Ճիշդ կռիւները, բախումները, պատերազմները, որոնք մրրեցան գացին յումպէտս հոսեցնելով անհաչիւ արիւն: Ճիշդ երգերն ու պարերը, խաղերն ու յաղթանակները, որոնք խանդավառեցին ձեզ եւ որոնցմէ ոչինչ կը յիշէք հիմա: Ո՞ւր են անոնք հիմա, մինչ ես կը շարունակեմ ու միշտ պիտի շարունակեմ գոյատեւել: Մի՛ խարուիր լուսաչող պատկերներէս, անոնք պահ մը ինձմէ կ'առնեն իրենց լոյսն ու չողչողանքը, յետոյ կը մարին կ'երթան: Դուք զիս չէք տեսներ, որովհետեւ ես անտեսանելի յաւերժութիւնը կը խորհրդանչեմ»:

×

Կը կարծեմ որ մօտաւորապէս այսպէս խօսեցաւ ինծի հեռատեսիլը հետաքրքիր ու մութ պաստառը, ու ես երէկ դիշերուընդ ի վեր քիչ մը աւելի ուշադրութեամբ կը նայիմ անոր:

Ռ. Հ.

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՄՈՎ

Ա.Թ.Ը.Ի.Ն անցնելէ առաջ զօր. Հէյկ, երկար խօսած է զօր. Էվրէնի հետ ապա յայտնած Ա.Մերիկայի այն վստահութիւնը թէ զինուորական պարագլուխները երկիրը ժողովրդավարութեան պիտի վերադարձնեն մարի կամ 1984-ի սկիզբը: Ռեկընէն ալ նամակ մը յանձնած է, ուր նախագահը կը չեշտէ կարեւորութիւնը զոր Միացեալ - Նահանգները կուտան Թուրքիոյ հետ ու լաւ յարաբերութիւններու: Նոյն անոյշ հովը չէ փչած, սակայն, Ա.Թ.Ը.Ի.Ն, ուր մանաւոր չերմութիւն մը չէ զգուած:

Ռումանիոյ մէջ ամէնէն լայնածաւալ մաքրագործումը ծայր տուած է, Սթալինէն ի վեր: Տնտեսական դրդապատճառներու հիման վրայ, աննախընթաց պաշտօնազրկումներ (1000 պատասխանատու) նախարարներէ սկսելով, կը մտահոգէ չատեր:

Նախագահ Միթերան, Համպուրկէն եաք, ուր տեսնուեցաւ Շմիտի հետ, Լոնտոն գնաց Երկուշաբթի եւ կրկնեց թէ Ֆրանսա զօրավիզ է Անգլիոյ: Տիկին Թաչըր, սակայն, տասը Եւրոպացիներուն բռնած դիրքին փոխարէն զիջում ընելու տրամադիր չէ Հասարակաց Շուկայի մէջ, դոնէ հրապարակաւ ոչինչ ըսած է այդ առընչութեամբ: Եւրոպացիք տասը օրով երկարաձգեցին Արժանթինի նկատմամբ ազապարկօն: Միւս կողմէն, համաչխարհային նախարար՝ Ֆիթըրման քննադատեց Իւ - մանիթէ-ի կարգ մը խմբագրականները (Իվ Մոռօ), ուր չափազանցուած կը գըտնէ հականգլիական արտայայտութիւնները... Բուն հարցին կապակցութեամբ, Տիկին Թաչըր երկար կը դտնէ Միացեալ Ազգերու բանակցութիւնները եւ հաւանական է որ վճռական քայլ մը առնէ: Գալով Արժանթինի, տրամադիր է 40 հազար հոգի զոհել...:

Ցրանսական մամուլի Գործակալութեան թղթակից մը, Մոսկուայի մէջ, արտաքսման սպառնալիքի տակ է: Անմէկնականին համար մայրաքաղաքէն դուրս ելլելու իրաւունք չունի եւ կրնայ նաեւ ամբաստանուիլ «հակախորհրդային քարոզչութեան եւ գործունէութեան» համար: Կը թուի որ հարցը կապ ունի ռուս հաւատամատնացուի մը՝ Բուրդիուկի ձերբակալութեան հետ: Այս վերջինը ըսած կ'ըլլայ, որ Ֆրանսացի լրագրողը կարգ մը հակախորհրդային նկատուած գրքոյկներ տուած է իրեն, օրինակ՝ «Ռուս կրօնական մտքի պատմութիւնը»:

Կիրակի, Մայիս 16-ին, Ֆրանսայի Ազգային Ժողովի ընտրութիւնները տարած յաղթանակէն ետք, Ֆրանսուա Միթերան եւ Փիեռ Մոռուա կառավարութիւնը կազմելու համար, Ֆրանսայի Սոցիալիստական Կուսակցութեան առաջնորդը հանդիպեցաւ Ֆրանսայի Կոմունիստական Կուսակցութեան առաջնորդ Ժորժ Մարշէի հետ, որ ներկայացուցիչներ ունի կառավարութեան մէջ: Ֆրանսայի Կոմունիստական Կուսակցութիւնը կը պահանջէ որ Ֆրանսա դադրեցնէ Ա.Մ.Ն.ի հետ ռազմական համագործակցութիւնը եւ դուրս գայ Հիւսիսատլանտեան Դաչնակցութենէն:

Կ ԳԱՐ
Ս ՊԱՏՄԱՑ Հ ՅԱՅՐԻ
Ս ՊՏՈՒԹԻՒՆ ԿԱՏԱՐԱԾ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Ա.

Ծանօթ է, որ Ս Պատարագ Տէրունական արարողութեան մէջ հացն ու գինին, որոնք խորհրդանշանաբար կը ներկայացնեն Յիսուս Քրիստոսի մարմինն ու արիւնը, կը բաշխուին հաւատացեալներուն։ Ս Պատարագի ներկայ կարգը, որ կը կատարուի Հայ Եկեղեցւոյ մէջ, հաստատուած է 1690 թուականին։ Ան կը գործածուի նաեւ Կաթողիկէ եւ Բողոքական Եկեղեցիներու մէջ։ Ս Պատարագի ծագումը կը հետեւի մինչեւ Յիսուսի ժամանակները։ Ան հաստատած է Յիսուս Քրիստոս, երբ Վերջին Ընթրիքի ատեն հացը եւ գինին բաշխեց իր աշակերտներուն եւ ըսաւ. «Առէք, կերէք, այս է իմ մարմինս, որ ձեզի համար կը տրուի։ Արէք, խմեցէք, այս է իմ արիւնս, որ նոր ուխտի համար կը թափուի»։ Ս Պատարագի ծագումը կը հետեւի մինչեւ Յիսուսի ժամանակները։ Ան հաստատած է Յիսուս Քրիստոս, երբ Վերջին Ընթրիքի ատեն հացը եւ գինին բաշխեց իր աշակերտներուն եւ ըսաւ. «Առէք, կերէք, այս է իմ մարմինս, որ ձեզի համար կը տրուի։ Արէք, խմեցէք, այս է իմ արիւնս, որ նոր ուխտի համար կը թափուի»։

Ս Պատարագի ներկայ կարգը, որ կը գործածուի Հայ Եկեղեցւոյ մէջ, հաստատուած է 1690 թուականին։ Ան կը գործածուի նաեւ Կաթողիկէ եւ Բողոքական Եկեղեցիներու մէջ

ՅԱՍՎԱԾ ԿՈՏՎԱԾՈ

= ՀԱՏՈՒԱԾ =

ՊԱՏՄՎԱԾՔ ՎԵՊԻ ՅՈՒՅԺՅՈՑ ՎԱՆՏՈՒԺՈՎ ՎԵՊԻ

Ասիկիտա դիմեսամա մոտաս դիսամիա ամա մեզ ամա ամա մեզ ամա ամա մեզ ամ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Օր. Գեղանոյշ Աղապէկեան, Տիկին Լուիզ Աղապէկեան - Լը Ռուա, Պ. Հրանդ Աղապէկեան կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի երեքշաբթի, Մայիս 23-ին իրենց եղբօր՝

ՀԱՅԿ ԱՂԱՊԷԿԵԱՆԻ

մահուան Գ. եւ իրենց հարսին՝

ՎԷՐԺՀԱՅԻՄ ԱՂԱՊԷԿԵԱՆԻ

մահուան 7-րդ տարելիցներուն առթիւ, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ Եկեղեցին։

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

Այս առթիւ հետեւեալ նուէրները կ'ընեն.

- Աղքատախնամ	1.000 Ֆ.
- Մարի - Նուպար Հաստ. Բարեկամներ	1.000 Ֆ.
- Հայ Նախկին Ռազմ. Միութ.	1.000 Ֆ.
- Կարմիր Խաչ	500 Ֆ.
- Կապոյտ Խաչ	500 Ֆ.
- Դպրոցասէր (Աշխատակիցներ «Յառաջ»էն)	500 Ֆ.
- «Յառաջ»	500 Ֆ.

=——✝——=

ՄԱՐՍԷՅԼ.- Տէր եւ Տիկին Տոքթ. Զաւէն Գաբրիէլեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Գառնիկ Տէրոյեան եւ զաւակը կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի իրենց հօր՝

ՍԱՀԱԿ ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ, կիրակի, Մայիս 23, Սէն - Լուի Ս. Գէորգ Եկեղեցին։

Ի գիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ Պանեէօ - Քաշանի մասնաճիւղի ընդհ. ժողովը երկուշաբթի, Մայիս 24, ժամը 20·30-ին Տիկին Փափազեանի բնակարանը։

ՀԱՅ ԱՐԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ

=——=——=

Կազմակերպուած՝ Փարիզեան Շրջանի Արենոյշներու եւ Թեւիկներու կողմէ։

Կիրակի, Յունիս 6, ժամը 11-էն իրիկուն

Եկէք պատուելու հայ մայրերը, միաժամանակ հաճելի օր մը անցնելով։

Հայկական ճաշեր, տաք եւ պաղ պիւֆէ, խորոված եւ անուշեղէն։

Խաղերու եւ մրցումներու հաճելի յայտագիր, սկաուտական գործունէութեան նկարներու ցուցադրութիւն։

Մուտքը 15 Ֆ. եւ այդ տոմսը կրնայ բերել նաեւ չատ հաճելի անակնկալ մը։

DOMAINE DE MORFONDE
77270 — Villeparisis

En cas de pluie, des salles sont prévues.
Communications:
— **Autobus:** de la Place Jean-Jaurès
— **En voiture:** prendre à la Porte de Pantin la route de Meaux, jusqu'au Domaine de Morfondé.
Pour tous renseignements plus détaillés téléphoner à midi ou le soir:
534. 22. 43

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

կը կազմակերպէ

ԳՐԱԿԱՆ ՅԵՐԵԿՈՅԹ ՄԸ

—×—

Նախագահութեամբ՝
ՄԱՌՒ ԱՒՄԱՃԵԱՆԻ
Նուիրուած՝ բանաստեղծներ՝
ԱՇԱՐՈՆԻ ԵՒ ՋԱՆԳՈՒԻ
Կը խօսին՝
ՎԱՐԴԱՆ ԵՂԻՇԷԵԱՆ (Ահարոն)
եւ
ՍԵՐՈՎԲԷ ՄՈՒՐԱԹԵԱՆ (Զանգու)

Մայիս 23, կիրակի, ժամը՝ 16-ին
au Centre Culturel Alex Manoogian
118, Rue de Courcelles - 75017 Paris

Կ'արտասանեն՝
Արմենուհի Բալուեան։ Պ. Պ. Ն. Պըշտիկեան, Վ. Նաւասարդեան։

Մուտքը ազատ է։

TRANSTOURS

ORGANISE PLUSIEURS VOYAGES POUR L'ANNEE 1982

Spécial ARMENIE

Une semaine en avion à Erevan
et une semaine en CROISIÈRE à bord du LITVA

du 29 JUILLET au 14 AOUT (aller Avion, — retour Bâteau)
29 Juillet: Paris - Moscou par avion — du 30 Juillet au 6 Août EREVAN
7 Août ODESSA — 8 et 9 Août ISTANBUL — 10 Août MYKONOS — 11 Août HERAKLION
12 Août en mer — 13 Août NAPLES — 14 Août TOULON

du 14 au 31 AOUT (Bâteu - Avion)
14 Août TOULON — 15 Août en mer — 16 Août PALERME — 17 Août en mer
18 Août MYKINOS — 19 Août MUDANYA — 20 et 21 Août ISTANBUL
22 Août ODESSA - KICHNIEV — 23 Août KICHNIEV — 24 Août ODESSA - EREVAN
24 au 30 Août EREVAN — 30 Août EREVAN - MOSCOU — 31 Août MOSCOU - PARIS

PRIX PAR PERSONNE (Croisière et Séjour en ARMENIE)
Cabine à 4 personnes (Catégorie 1): 5.990 F.
Cabine à 4 personnes (Catégorie 2): 6.280 F. — Cabine à 2 personnes (Catégorie 4): 7.440 F.

ԱՊԱՀՈՎԵՑԷՔ ՁԵՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԵՐ 6 ԱՅԼ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ

ԱՆՄՈՌԱՑԵԼԻ ԳԻՆԵՐ

(Երթուդարձ Օդաճամով)

«Արմենիա - Հիւրասէրը» - Ա. Կարգի Սպասարկութիւն
Օգոստոս 7-21 Փիես—Երեւան 4·500 Ֆ. Սեպտեմբեր 4-18 Փիես - Երեւան 4·500 Ֆ.
Հոկտեմբեր 4-19 Մոսկուա-Երեւան 4·400Ֆ
Դեկտեմբեր 20 - Յունուար 4 Մոսկուա - Երեւան 4·500 Ֆ.
Մեկնում Մարսէյլէն (երթուդարձ օդաճամով)
Օգոս. 7-20 Մոսկուա—Երեւան 4·750 Ֆ. Սեպտ. 4—17 Մոսկուա-Երեւան 4·750 Ֆ.

Արձանագրութեանց համար դիմել՝ Կ. ՈՒՆՃԵԱՆԻ

TRANSTOURS
25, Rue d'Argenteuil — 75001 Paris — Téléphone: 261. 58. 28
ուր կարելի է ներկայանալ ամէն օր, կէսօրէ ետք, ժամը 15 - 18

ՄԱՐՍԷՅԼ.- Դիմել՝ Զ. Ալիքսանեանի
11, Rue du Bassin, Saint Julien — Téléphone: 93. 04. 90 — (42) 83. 31. 55


ՎԱԼԱՆՍ.- Դիմել Ն. Գասպարեանի — **9, Rue Sully**

ԼԻՈՆ.- Դիմել՝ Շէմտիբեանի
16, Rue Chardonnet — 69120 Vaulx-en-Velin — Téléphone: 868. 53. 05

Meubles Ghazarian

4.000 m² de mobiliers présentés en ambiance

Z.I. Vitrolles
à 20km de Marseille
tél. (42) 89.27.47
ouvert le dimanche après-midi



visitez
une des plus belles expositions
de France

"Բացառիկ զեղչ «Յառաջ»ի բաժանորդներուն"

SAMEDI, 29 MAI — A 20 H. 30

UNIQUE RÉCITAL A PARIS
DU CHANTEUR ARMENIEN

NORAIR

Avec son ORCHESTRE (8 exécutants)

En Première Partie: Crown Production présente un Opéra - Film (1954)

ANOUSH

Théâtre de l'Empire — 41, Avenue de Wagram

Location:
— **Librairie PALOUYAN;** 9, Rue de Trévise, Paris 9e — Tél:. 523. 24. 97
— **Restaurant HAGOP;** 9, Rue du Nil, Paris 2e — Tél.: 296. 37. 41
— **AZAD;** 136, Rue d'Aboukir Paris 2e — Tél.: 233. 87. 87
— **Retaurant EREVAN;** 29, Rue Bergère, Paris 9e — Tél.: 523. 44. 75
— **Restaurant SASSOUN;** Issy - les - Moulineaux — Tél.: 638. 78. 58
— **VIDEO - SON;** 49, Rue Victor Hugo, 94140 Alfortville — Tél.: 375. 26. 89
— **VIDEO - SON;** 21, Rue Jules Michelet, 92700 Colombes
— **Mme. DJEKNAVORIAN;** Paris, Tél:. 501.98. 89

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՓԱՐԻԶ.- Բ. Հ. 300 Ֆ. կը նուիրէ։

ՌՈՒԹՐԻԻՆ.- Տէր եւ Տիկին Հայկակ Մաւուբեան 160 Ֆ. կը նուիրեն Շուարթ Միսաքեանի յիշատակին։

MAISON DE LA CULTURE ARMENIENNE
9, Rue de Madrid — 94140 Alfortville

Conférence - Débat

avec
SERGE AFANASYAN
Auteur de l'ouvrage:
«L'ARMENIE, L'AZERBAIDJAN ET LA GEORGIE DE L'INDEPENDANCE A L'INSTAURATION DU POUVOIR SOVIETIQUE 1917 - 1923»
Sur le thème:
« LES RELATIONS TURCO - SOVIETIQUES ET L'ARMENIE DE 1919 - 1921 »
L'AUTEUR SIGNERA SON OUVRAGE
LE VENDREDI, 21 MAI — A 21 H.

Diapositives

—×—

Շաւիլի Եկեղեցւոյ Հոգաբարձութեան Մշակութային Յանձնախումբը
կը կազմակերպէ՝
ՅՈՒՅԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ
Շաբաթ, Մայիս 22, ժամը 20·30-ին
Շաւիլի Եկեղեցւոյ կից սրահին մէջ։
4, Rue de Trois - Champtiers — Chaville
LES DIAPOSITIVES
de l'Organisation Terre et Culture
et le Film: «SAINT THADÉE» (16 mm.)

ԿԱՊՈՅՏ ԽԱՉ
ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՆ

Փարիզաբնակ մանուկներուն արձանագրութիւններուն համար, դիմել Տիկին Լ. Փորլանի.-
Հեռաձայն՝ 254 - 81 - 79

REPAS

—=—

En l'Honneur du
Révérend Père ZABARIAN
Le 25 Mai, à 20h.
UN REPAS D'AMITIE
sera donné par l'Association Arménienne Catholique de Lyon

au Retaurant DELTA — 90 cours La Fayette
en l'Honneur du
Révérend Père GEORGES ZABARIAN
(Recteur de la Communauté Arménienne Catholique et Directeur du Centre St. Grégoire de Nareg)

à l'occasion de son départ
et de sa nomination à Rome.
Pour participer au repas bien vouloir s'inscrire au plus tard le 20 Mai au soir en téléphonant au Centre Saint Grégoire
847. 28. 65

U. G. A. B. - PARIS

PRESENTE
JANET MAFIAN-ALTOUNIAN
RECITAL DE PIANO
CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN
118, Rue de Courcelles — 75017 Paris
Le Samedi, 22 Mai — à 21 h.

Au Programme:
BACH — HAYDN — RAMEAU — FAURE
RAVEL — JONGEN — KHATCHADOURIAN

Réservation de places:
U. G. A. B. — Tél.: 520. 03. 18

U. G. A. B. - MARSEILLE

Lundi, 24 Mai — à partir de 18 h.
Présentation de:
« L'HISTOIRE DES ARMENIENS »
Paru aux Editions PRIVAT
Sous la Préidence d'Honneur de
M. NAPOLEON BULLUKIAN
(Président de l'UGAB - France)
En présence de
M. GERARD DEDEYAN
(Directeur de l'ouvrage)
M. PHILIPPE WOLFF
(Membre de l'Institut)
et de l'Editeur
U. G. A. B. — MARSEILLE
33, Rue Pierre Puget — 13006 Marseille

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ
20
JEUDI
20 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՅԱՌԱՋԱԿ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R. C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ : 180 Ֆ.
Արտասահման : Տար. 400 Ֆ. - Հատը : 2.50 Ֆ.

57րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.175 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 57e ANNÉE — No 15.175

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՐՈՂՈՎ

ՅՈՒՆԻՍ ՄԻԿԻՆ սկսեալ Ֆրանսայի ճիշտառի սակերը կը բարձրանան: Ապիս սովորական նամակներու դրոշմը 1,60-էն 1,80-ի կ'անցնի եւ թղթակալ սակով նամակները 1,40-էն 1,60-ի: Ընդհանուր ձեւով յաւելումները 13 առ հարիւր համեմատութեամբ կ'ըլլան:

ԽՈՐԱՁԿԻԻ հանրային կարծիքի հետազօտութեան մը կատարած հանրային կարծիքի քննութեան մը արդիւնքին համաձայն, գրաւեալ հողամասերու բնակչութեան 88 առ հարիւրը կողմնակից է ազգութիւնեան անկախ Պետութեան մը ստեղծման:

ՍԻԹՐՈԷՆԻ 3 գործատուներու գործադուլը կը չարունակուի եւ բանակցութիւնները բոլորովին խզուած են: Նոյն կացութիւնը կայ Սոսիէթէ Ժենեռալ գործատան մէջ, ուր չաբաթներէ ի վեր մարդ մը չղտնուեցաւ եւ գործադուլի չարժումը նոյն ծառայն ունի:

ԼԻՒԱՆԻ մէջ 74 մեռեալ եւ 250 վիրաւոր կայ, իբրեւ հետեւանք վերջին 12 օրերու բախումներու: Ամէնէն աւելի Տրիպոլիի մէջ է, որ զոհերու թիւը մեծ եղած է (56 մեռեալ եւ 177 վիրաւոր):

ՖՐԱՆՍԱԳԻ մէջ Էոյֆիլի սպառումը 65,77 առ հարիւր յաւելում կրած է տարւոյ սկիզբէն ի վեր, մտահոգիչ աստիճան մը հասնելով: Այս առընչութեամբ թղթեցուցիչի մոլութեան դէմ պայքարելու ֆրանսական յանձնախումբին նախագահ Տիւ առած մամուլի ասուլիսը բաւական թանձրացնող տեղեկութիւններ տուած է: Ըստ էս, 1982-ի առաջին եռամսեակին ընթացքին 441 զողութիւն կատարուած է թիւիներու կամ դեղարաններու մօտ եւ 291 ալ զրահակորզութիւն սպառնալիքի տակ: Գործածողներու մեծամասնութիւնը անզործներ են, ապա՝ բանուորներ եւ հուսկ՝ ուսանող եւ դպրոցական:

ԱՆԳԼԻԱ կը չարունակէ գլուխ բռնել Եւրոպայի իր ընկերներուն եւ մերժել իր «ցնդող»ը, հակառակ եղած առաջարկներուն: Եւ քանի որ իր ուզածը չկրցաւ ձեռք ձգել այդ հարցին մէջ, վերջին դրաւ գիւղատնտեսական գիներու գործադրութեան, սպիսկելով միւս երկիրները, որ այդ անուն բախում մը, որպէսզի այդ գիները անպայման կերարկուին: Արդարեւ, որպէսզի միաձայնութեան կանոնը փոխարինուի մեծամասնութեան մը կանոնով, ինչպէս վճռեց գիւղատնտեսութեան նախարարներու խորհուրդին նախագահը (Գլէժ մը, ներկայիս) Անգլիոյ հետ բախումը անխուսափելի կը դառնայ: Անգլիոյ ընկերները, ինչ կը վերաբերի, անոր մասնակցութեան եւրոպական պիւճէին 6 միլիառ Ֆ. հատուցում առաջարկած էին, ինչ որ անբաւարար էր Տիկին Թաչըրի համար, որ կը նախընտրէ, յամառաբար, նոյնիսկ դադարի մը ընթացքին, միացեալ ճակատ մը դոյց տալ Եւրոպայի ծոցը, քէչ - շատ աւելի արամաբանական երեւոյթ մը տալու համար անոնց համերաշխութեան Մալուինեներու հարցին նկատմամբ:

ԲՐԵԺՆեի համաձնավար երիտասարդութեանց (կոմսոմոլ) 19–րդ համագումարին բացման առթիւ իր խօսած ճառին ընթացքին, բոլորովին մերժեց նախագահ Ռեկընի առաջարկները ռազմագիտական զէնքերու մասին: Երեք նախապայման ունի, նախ խօսելու համար.- նախ իսկապես նպատակ ունենալ զինաթափել, ապա երկու կողմերը նկատի առնեն փոխադարձ չափերը, հուսկ՝ ինչ որ եղած է դրական, պահպանուի:

ԹՈՒՐՔԻԱ

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿԱԾ Է ՀԱՅԿ. ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆԸ

ՈՄԱՆՔ ՓՈԽԱԴԱՐՁԵԼ Կ'ՈՒԶԵՆ...

Պոսթընի պատուակալ հիւպատոսին մահափորձեն ետք, Թուրքիոյ Խորհրդակցական ժողովը յատուկ նիստով մը ուզած է քննել հայկ. ահաբեկչութիւնը: Ստացեր նիստին պատկերը, յետագային ալ՝ զանազան տեսակէտներ փոխադարձելու կամ չփոխադարձելու մասին:

×

Խորհրդակցական ժողովի Ընդհանուր Ժողովը Մայիս 7–ին յատուկ նիստ գումարեց քննելու համար հայկական ահաբեկչութիւնը: Ժողովի ընթացքին մինիստրները պարբերաբար ձգտուեցաւ եւ Խորհրդակցական ժողովի կարգ մը անդամները բարձրաձայն ազդակեցին «փոխադարձութիւն» պահանջելէն հայկական ահաբեկչութեան դէմ:

Անդամները լսեցին Արտաքին նախարար Իլմէյը Թուրքմէնի զեկուցումը: Թուրքմէն այն կարծիքը արտայայտեց թէ հայ ահաբեկիչները հիմա Ամերիկայի մէջ գործել սկսած են, հաւատալով որ Եւրոպայի մէջ այլեւս բաւականաչափ հանրային կարծիք պատրաստել յաջողած են: «Հիմա ալ Ամերիկայի մէջ իրենց քարոզչութիւնը ընել կ'աշխատին դիմելով վայրագ եւ արիւնոտ արարքներու» ըսաւ Թուրքմէն, յայտնելով որ բազմաթիւ երկիրներ ալ նեցուկ կը կանգնին այդ ահարեկչութեանց կամ քաջալեր կը հանդիսանան անուղղակի ճամբաներով:

Արտաքին նախարարը կրկնեց որ Հայկական Հարցը պատմութեան խեղաթիւրումն է եւ կը յենու սուտի եւ զրպարտութեան վրայ: Կարելի չէ որ որոշ նպատակի մը հասնին, որեւէ յաջողութիւն մը արձանագրեն եւ ի վերջոյ յուսախաբութեամբ մը պիտի վերջանայ այս արիւնոտ արկածախնդրութիւնը, ըսաւ ան:

Աւելի վերջ խօսք առաւ Խորհրդակցական ժողովի անդամներէն Փրոֆ. Համզա Էրօղլու, որ յիշեցուց թէ պատմութիւն քննողները իսկոյն կրնան հասկնալ որ պատմութեան ամէնէն արիւնալի ոճիրները գործուած են հայ հրոսախումբերու կողմէ:

- Մեռնող իւրաքանչիւր Թուրքի դէմ կարելի է Հայ մը սպաննել: Անոնց ըրածը մարդկութեան դէմ յանցանք է, ըսաւ Էրօղլու:

Ակէ ամէնէն շատ վնաս պիտի կրէ անմեղ հայ մարդը: Բայց Թուրք ժողովուրդին վայել է դատարաններով, միջազգային կազմակերպութիւններով պայքարիլ այս խնդրին դէմ, փոխանակ դիմելու փոխադարձութեան:

Երբ Էրօղլու այս միտքը կ'արտայայտէր, զանազան անդամներ սկսան պոռալ. «Ո՞ր դատարանները, ո՞ր կազմակերպութիւնները: Փոխադարձութիւն, փոխադարձութիւն պէտք է ընենք: Իսրայէլի պէս պէտք է չարժինք»:

Ուրիշ անդամ մըն ալ, Պէշիր Համիտօղուլլարը սպէս արտայատուեցաւ.

«Վախը օգուտ մը չունի ճակատագրին: Արտաքին նախարարութիւնը այլեւս ոչ մէկ բանէ պէտք է վախնայ, ճշմարտութիւնները պէտք է ազազակէ: Իրական զարձել զէնքով»:

վերջ: Բարդոյթներու պէտք չկայ: Ամայլայի 200 ահարեկիչները իրական փոխադարձութեամբ է որ պէտք է հասկնան թէ ինչպէս գլուխ կ'ելլուի իրենց հետ:

Իսմայիլ Աբար ըսաւ որ այս հաւաքոյթը ցոյց կուտայ թէ այլեւս թուրք ժողովուրդին համբերութիւնը հատնելու վրայ է, իսկ Այտըն Թուղ յայտնեց թէ թուրք ժողովուրդը սաեւութիւն չի սը - նուցաներ հայ ժողովուրդի հանդէպ, բայց աշխարհակալ երկիրներ կը չնան միշտ վառ պահել հայկական հարց մը:

Ուրիշ անդամ մը, Նամըք Եօլկա ըսաւ որ հայկական հարցին մէջ մենք միշտ պանուած ենք օրինական ինքնապաշտպանութեան դիրքի մէջ:

Ապպաս կէօքչէ խօսք առնելով ըսաւ հետեւեալը. «Ափ մը Հայեր թուրք պետութեան քթին կը խնդան: Գացինք, գացինք, քայլ մը առաջ չկրցանք երթալ: Հասկցուեցաւ որ բաւարար չէ միայն պախարակելը, զէնքին պէտք է փոխադարձել զէնքով»:

×

ՀԱՐԻՒՐԱՄԵԱՑ ՃԷԼԱԼ ՊԱՅԱՐ ԵՒ ՀԱՅԿ. ՀԱՐՑԸ ...

Հանրապետութեան անկեալ նախագահ Ճէլալ Պայար, որ այս օրերս կը տօնէ իր հարիւրամեակը, հարցազրոյց մը տուած է «Կիւնայտըն» թերթին, ուր կ'արտայայտուի նաեւ հայկ. հարցին մասին: Պայար հակառակ անոր, որ տարիքով եւ իբթահատականի իր անցեալով, ֆաշ տեղեակ է Հայերու ջարդին, նման իր հայրենակիցներուն կ'ուրանայ...: Մնացեալը՝ ծանօթ է, Հայերն են որ թուրք ջարդած են:

×

«Հայկական գրգռութիւններու աղբիւրը Համայնավարներու մէկ խաղն է եւ Ռուսերը կը չնան տկարացնել Թուրքերը»:

«Ռուսիան է որ խամաճիկ դարձուցած է Հայերը: Այս բանը ապացուցանելու համար թէեւ ձեռքս փաստաթուղթեր չունիմ, սակայն այս պարագան իւրաքանչիւր հետաքրքրուողի համար ծանօթ իրականութիւն մըն է»:

Ճէլալ Պայար անդրադառնալով նաեւ անցեալի դէպքերուն իր խօսքերը կը չարունակէ հետեւեալ ձեւով.

«Հայերը, Մուսուլէ զատ, Արեւելեան նահանգներու մէջ մեր շատ մը գիւղերուն վրայ յարձակումներ կատարած են: Կրակի տուած եւ ջարդեր կազմակերպած են: Ամէն տեսակ զէշութիւն խորհած են մեր երկիրը տկարացնելու համար: Նոյնիսկ ծովեզերեայ քաղաքներու մէջ անոնք ըռռեստութիւն ըրած են Յոյներուն հետ միասին: Այդ թուականներէն ի վեր Հայերը մեզի դէմ կը գրգռուին Ռուսերու կողմէ»:

Ճէլալ Պայար, այս առթիւ բացատրութիւններ տուած է իր այն դատավարութեան մասին, ուր Հայ, Յոյն եւ Հրեայ դատաւորներ կը գործէին իր դէմ:

«Ծագկաւոր դէմքով Հայ դատաւորը ինծի կը հարցնէր, կ'ըսէ Ճէլալ Պայար:

- Ձեր կազմակերպութիւնը պայքարի ընթացքին հրահանգ տուած է ձեզի, որպէսզի սպաննէք Հայերը:

Ուսոի ինձմէ հաշիւ կը պահանջէին, այս հրահանգը գործադրած ըլլալու ամբաստանութեամբ:

Պատասխանս հետեւեալը եղաւ.

- Այսպիսի հրահանգ մը գոյութիւն չէ ունեցած:

Եթէ տրուած ըլլար անշուշտ պիտի կատարէի առանց վարանելու, քանի որ մեր միութիւնը (հատնաբար կ'ակնարկուի Իթթիհատ վէ Թէրաքքիի) խիստ կարգապահ կազմակերպութիւն մըն էր: Սակայն այսպիսի հրահանգ մը չէր տրուած եւ այդպիսի արարքներ չէին կատարուած:

Մեր խօսակցութիւնը լրանալէ յետոյ, Հայ դատաւորին հարցուցի.

- Ձեր արդարութիւնը անկողմնակա՞լ է:

- Ի՞նչ ըսել կ'ուզէք, ըսաւ Հայը:

Խօսքերս չարունակեցի եւ ըսի.

- Որքան գիտեմ, երբ մենք Ռուսերու հետ կը պայքարէինք Հայերը մեզ կռնակէն դաշնակահարեցին: Նոյնպէս ամէն առիթով մեր գիւղերը կրակի տուին եւ տակնուվրայ ըրին: Բայց այս մասին բըսնաւ չէք արտայայտուիր դուք: Այս պատճառաւ է որ կը հարցնեմ, որ Ձեր արդարութիւնը կրնա՞յ անկողմնակալ ըլլալ:

Եւ աւելցուցի.

- Եթէ գիտնայի որ այս մասին պիտի հարցաքննուիմ, թղթածրարներս միասին կը բերէի եւ կը բացատրէի թէ Հայերը դեռ ինչե՛ր ըրած են մեզի:

Խօսքերս աւարտելէ յետոյ դատաւորներուն հարցուցի.

- Ուրեմն, հիմա պիտի ձերբակալէ՞ք զիս...

Իմ յայտնած իրականութիւններուն դէմ հայ դատաւորը անգամ համոզուած էր եւ ինծի իրաւունք կուտար: Ուսոի ան պատասխանեց.

- Ո՛չ, չենք ձերբակալեր:

- Ուրեմն, մնաք բարով, ըսի եւ հեռացայ:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մայր Աթոռս Ի գիտութիւն Հայաստանեայց Եկեղեցեաց եւ ժողովրդեան հաղորդում է թէ յառաջիկայ Հոկտեմբեր 10–ին Ս. Էջմիածնում նշուելու է վեհափառ Հայրապետի Գահակալութեան 28–րդ տարեդարձը եւ տեղի է ունենալու նորակառոյց «Ալեք եւ Մարի Մանուկեան» թանգարանի բացման հանդիսութիւնը:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ
(ԿՆՔԱ)

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ
Մայիս 5, 1982 թ.

ՄԱՐԶԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

×

ԿՈՓԱՄԱՐՏ

Մոսկուա տեղի ունեցած կոփամարտի պատանեկան համամիութենական մրցաշարքին, որուն մասնակցած են 12 խումբեր, Երեւանի պատանի կոփամարտիկներու դպրոցի խումբը երրորդ հանդիսացած է, իսկ անոր եօթը մարզիկները արժանացած են զանազան մրցանակներու:

×

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Երեւանցի դինամոյական, միջազգային կարգի մարզանքի վարպետ Բենիւր Փաշայեան, որ վերջերս Պուլկարիա տեղի ունեցած Եւրոպայի ախոյեանութեան (52 քիլօ ծանրութեան դասակարգին)՝ երկրորդ անգամ ըլլալով, նուաճած էր ամէնէն ուժեղ ըմբշամարտիկի կոչումը, Խորհ. Միութեան Նախարարաց Խորհուրդին առընթեր Մարզանքի Կոմիտէին կողմէ պարգեւատրուած է Խորհ. Միութեան մարզանքի վաստակաւոր վարպետի կոչումով: Իր մարզիչը՝ Ալբեր Մնացականեան, նոյն կոմիտէին կողմէ պարգեւատրուած է վաստակաւոր մարզիչի կոչումով:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ տօնին առթիւ, «Յառաջ» վաղը լոյս չի տեսներ: Մեր յաջորդ թիւը՝ Շաբաթ - Կիրակի Մայիս 22/23 :

Կ. ՉԱՐԻ
ՄԱՏՏԱՅԻ ՀՅՈՒՐԸ
ԴԻՊՎԱԾՔԻ ՄԱՍԻՆ ՊԱՏՄՎԱԾՔ

(Ի. Եր. վերջին մաս)

Որչափ փոքր ասպետին մեր մտիկ տալիս և նրան հարգանք, որովհետև նա ամենայն ինչ ձգտում էր անել ի պատիվ իր տիրուհու և ոչ ի պատիվ իր անձին։ Ասպետական այդ զգացմունքը ամենից լավ կերևի նրանից, որ նա ոչ միայն չէր ուզում իր անունը հայտնի անել, այլև ամեն կերպով ջանում էր, որ ոչ ոք չիմանա նրա մաս

ՆՈՐԱԿԵՍԻ ՕՊԵՐԱՅԻ ԴԵՐԱՍՏԱՆԸ

Ե Ր

«ԱՇԱՆՑՎԱԾ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ» ԿՈՄԻՏԷԻ ՄՈՒՏՔԸ

ԱՐՏԱՍՈՎԱԶԻ ՎՃԻՌԸ

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ա. ՍԱՐԳՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ՏԱՐՈՆԵՑԻ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ

Այրի Տիկին Խորէն Քոչեան, Պ. Ար - թիւր Քոչեան, Տէր եւ Տիկին Առնօ Լա - ծառինի եւ զաւակը, Տէր եւ Տիկին Գնել Կօշկարեան, Պ. Գէորգ Հաճիպօղոսեան, Տէր եւ Տիկին Արթին Տատուբեան, Տի - կին Գազանճեան և զաւակները, Տէր և Տի- կին Թորոսեան եւ զաւակները, Օր. Օր. Այտէմեան, Տիկին Հաճի զաւիթեան եւ զաւակները, Տիկին Օհանեան եւ զաւակ- ները, Տիկին Նազիկեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Պարոնեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Կօշկարեան եւ աղջիկը, Տէր եւ Տիկին Տէր - Գալուստեան եւ զա- ւակները, Տէր եւ Տիկին Պօյաճեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Պետրոսեան եւ զաւակը, Պ. Հաճի - Պօղոսեան եւ աղ- ջիկը, Տէր եւ Տիկին Փափազեան եւ աղ- ջիկը ինչպէս նաեւ՝ Լածարինի, Ներսէս- եան, Թէրզեան, Մխիթարեան, Տեփան - եան, Շէյթանեան, Պետեան, Զաօնա ըն- տանիքները ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ - հօր, քեռայրին, մօրեղբօր եւ ազգականին՝

ԽՈՐԷՆ ՔՈՉԵԱՆԻ

մահը:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Ուրբաթ, Մայիս 21, ժամը 11-ին Շաւիլի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին, եւ մարմինը կը փոխադրուի Վիրոֆլէյ գե- րեզմանատունը:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

ARMENIE 82

CIRCUIT DE 14 JOURS, DONT 2 JOURS A MOSCOU et 12 JOURS A EREVAN

Départs: Les 3 Juillet, 14 Août, 4 et 25 Septembre

SEJOUR EN LOGEMENT EN CHAMBRES DOUBLES EN HOTEL 1re CATEGORIE

EN PENSION COMPLETE et EXCURSIONS COMPRISES

PRIX: 4500 F.

FRAIS DE VISA 50 F.

INSCRIPTIONS A L'AGENCE

VALADOU - MOTTET

73 - 75, LA CANEBIERE — 13001 MARSEILLE

TEL.: 39. 77. 11

Licence A - 258

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Պ. Մարտիկ Տակառեան՝ ողբացեալ Լեւոն Շիրինեանի մահուան առթիւ փո - խան ծաղկեպսակի հետեւեալ նուէրները կ'ընէ.- Դպրոցասէր վարժարանին 500, Սամուէլ - Մուրատեան վարժարանին 250 Ֆ., Կապոյտ Խաչի Կայանին, Կար - միր Խաչի Կայանին, եւ «Ցառաջ»ին 150-ական Ֆ.: (Տառանալ «Ցառաջ»էն):

×

Անի Կուրպէթեանի մահուան առթիւ Տիկին Մարի Գարանֆիլեան 200 Ֆ. կը նուիրէ «Ցառաջ»ին, փոխան ծաղիկի:

×

Լեւոն Շիրինեանի մահուան առթիւ Տիկին Ժիւլիէթ Զապուքեան 100 Ֆ. կը նուիրէ «Ցառաջ»ի բարեսիրաց:

×

Լեւոն Շիրինեանի մահուան առթիւ, Տիկին Արփիկ Մխիթարեան փոխան ծա - ղիկի 300 Ֆ. կը նուիրէ Սամուէլ - Մու- րատեան վարժ-ին (տառանալ «Ցառաջ»էն):

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Իսի.- Ազատեան ընտանիքը իր խոր ցաւակցութիւնները կը յայտնէ Կուրպէթ- եան ընտանիքին, Անի Կուրպէթեանի կսկծալի մահուան առթիւ եւ անոր յիշա- տակին 100 Ֆ. կը նուիրէ «Ցառաջ»ին:

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԷ

Փորձառու չարժավար մը գործ կը փնտռէ:

Դիմել.- Հեռաձայն.- 893 - 77 - 99

ՊԱՏԱՐԱԳ

ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ ՄԱՏՈՒՌԻՆ ՄԷՋ

Մոնմորանսիի Հանգստեան Տան Մատու- ռին մէջ, Պատարագ կը մատուցուի՝ Շա- բաթ, Մայիս 22, ժամը 10·30-ին:

Կը պատարագէ՝

ՄԵՍՐՈՊ Ք.ՀՆԾ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Կը հրաւիրուին Հանգստեան Տան բո - նակիչներուն ընտանեկան պարագաներն ու բարեպաշտ հաւատացեալները:

DÉBAT

Dans le cadre de ses activités

L'UNION DES ETUDIANTS

ET DE LA JEUNESSE ARMENIENNE

Organise

LE SAMEDI 22 MAI — A 15 H.

à L' A. G. E. C. A.

177, Rue de Charonne — 75011 Paris

Métro: Alexandre Dumas

UN DEBAT

dont le sujet sera:

«LE ROLE DES PUISSSANCE EUROPEENNE DANS LE GENOCIDE DU PEUPLE ARMENIEN»

U. E. J. A.

B.P. 175 — 95105 ARGENTEUIL

Հ. Յ. Դ. ՌՈՍՏՈՄ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԽՆՃՈՅՔ

Կիրակի, Մայիս 23, ժամը 16-էն սկսեալ

Տէսինի Հայ Մշակոյթի Տան մէջ:

Կը մասնակցի «ԱՆԻ» Նուագախումբը:

FETE DE L'ASSOCIATION DES ADOLESCENTS ARMENIENS F. R. A. «BADANI»

Section «ROSTOM» de Décines

A LA MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE DECINES

LE DIMANCHE 23 MAI — A PARTIR DE 16 H.

AVEC L'ORCHESTRE «ANI» Buffet Arménien

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԱՏԻՕՁԱՄ

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՄԱՐ

ՄՈՆԹԷ - ՔԱՐԼՕ

P.O. - O.M. - M.W. - 205 m. — 1466 Khz.

Ամէն կիրակի իրիկուն - ժամը 10·30-ին:

ECOUTEZ TOUS LES DIMANCHES

EMISSION ARMÉNIENNE

POUR L'EUROPE (Bilingue)

— à 20h. 30

MONTE - CARLO

P.O. - O.M. - M.W. - 205 m. — 1466 Khz.

B. P. 141 Monte - Carlo, MONACO

MAISON DE LA CULTURE ARMENIENNE

9, Rue de Madrid — 94140 Alfortville

Conférence - Débat

avec

SERGE AFANASYAN

Auteur de l'ouvrage:

«L'ARMENIE, L'AZERBAIDJAN ET LA GEORGIE DE L'INDEPENDANCE A L'INSTAURATION DU POUVOIR SOVIETIQUE 1917 - 1923»

Sur le thème:

« LES RELATIONS TURCO - SOVIETIQUES ET L'ARMENIE DE 1919 - 1921 »

L'AUTEUR SIGNERA SON OUVRAGE

LE VENDREDI, 21 MAI — A 21 H.

Imprimé sur les Presses

du Journal «Haratch»

83, Rue d'Hauteville — 75010 Paris

Commission Paritaire: N° 55935

Forum-Radio-Ararad

TOUS LES DIMANCHES — DE 10H. A 12H.

Une émission destinée aux Communautés Arméniennes de la Région Parisienne.

M. F. 98 Mhz.

Այս կիրակի, Մայիս 23, հարցազրոյց՝ իվ Թերնոնի հետ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ Պանեէօ - Քաշանի մասնա- ճիւղի ընդհ. ժողովը երկուշաբթի, Մա- յիս 24, ժամը 20·30-ին Տիկին Փափազ - եանի բնակարանը:

ԿԱՊՈՑ ԽԱՉ

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Փարիզաբնակ մանուկներուն արձանա- գրութիւններուն համար, դիմել Տիկին Լ. Ֆորլանի.-

Հեռաձայն՝ 254 - 81 - 79

Radio-Trait-d'Union

« ARMENIE — MAGAZINE »

RADIO ARMENIENNE

Région Lyonnaise

Tous les Dimanches — de 10h. à midi

Sur FM. 89.50 Mghz.

Programme du Dimanche 23 Mai — de 10 à 12h.

— En direct avec l'Association des BADANI.

— Interview avec le Père René BEAUPERE. Responsable du stage «A la rencontre de l'Arménie millenaire», organisé par l'Association des «Chrétiens en Marche».

— Entretien avec l'equipe de football de la M.C.A. Décines.

— Informations en langue arménienne.

— Interview avec le danseur Michel HALLET - EGHAYAN.

Programme arménien également les Lundi et Vendredi — de 9 h. à 10 h.

Հ Ա Ց

ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆԵՐ

Ամստիյիի, Մոնմորանսիի եւ Սէն - Ռափայէլի մէջ:

Երբորդ Տարիի Աշակերտ Համար:

Հանգստաւէտ պայմաններու մէջ, Ընտանեկան հարազատ մթնոլորտ, Բժշկական տեւական հսկողութիւն եւ խնամք: Քաղաքներու ժխորէն եւ ապա- կանած օդէն հեռու՝ բնութեան ծոցին մէջ, հաճելի եւ մաքուր միջավայր:

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE

Maisons de Retraite

à Andilly, Montmorency et St. Raphaël

Pour les Personnes du Troisième-Age

Confort moderne, Ambiance familiale, Surveillance et soins médicaux permanents, Cadre paisible, dans la nature, loin de la pollution et des bruits de la ville.

S'adresser à l'A.A.A.S

77, Rue La Fayette — 75009 Paris

Tél.: 878. 02. 99 et 281. 17. 80

REPAS

En l'Honneur du

Révérend Père ZABARIAN

Le 25 Mai, à 20h.

UN REPAS D'AMITIE

sera donné par l'Association Arménienne Catholique de Lyon

au Retaurant DELTA — 90 cours La Fayette

en l'Honneur du

Révérend Père GEORGES ZABARIAN

(Recteur de la Communauté Arménienne Catholique et Directeur du Centre St. Grégoire de Nareg)

à l'occasion de son départ et de sa nomination à Rome.

Pour participer au repas bien vouloir s'inscrire au plus tard le 20 Mai au soir en téléphonant au Centre Saint Grégoire

847. 28. 65

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄՇԱԿ. ՄԻՈՒԹԻՒՆԸ Ե Ւ ՖՐԱՆՍԱՀԱՅ ԵՐԻՏ. ՄԻՈՒԹԻՒՆԸ (ԺԱՖ)

Ուրբաթ, Մայիս 21, ժամը 20·30ին Մշակոյթի եւ արուեստի կեդրոնին մէջ:

6, Cité Wauxhall — Métro: République

կը կազմակերպեն

ՇԱՏ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Նիւթ ունենալով՝

ՄԱՇՏՈՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ Ե Ւ ՄԱՏԵԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Նկարներու ցուցադրութիւն

Բանախօս՝

ԲԱԲԳԷՆ ՋՈՒՔԱՋԵԱՆ

Մաշտոց Մատենադարանի Տնօրէնի տեղակալ:

կը նախագահէ ու բանախօսը կը ներկայացնէ՝

ՓՐՈՖ. ԺԱՆ - ՓԻԷՌ ՄԱԶԷ

Արեւելեան լեզուներու ամպիոնի վարիչ:

Մուտքը ազատ է:

RESTAURANT

EREVAN

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԵՒԱՆ

Իր աւանդական ճաշացուցակով եւ սովորական հաճելի մթնոլորտով՝ կը սպասարկէ Ձեզի:

RESTAURANT EREVAN

26, RUE BERGÈRE - 75009, PARIS

TÉL. 770. 85. 81

ՄԻԱՑՆ ՇԱԲԱԹ ԻՐԻԿՈՒՆՆԵՐԸ

Վ Ի Գ Է Ն

Ընկերակցութեամբ՝ ՍԻՄՈՆԻ

ժամը 21·30-էն սկսեալ կը ներկայանայ իր հայկ. ժողովրդական երգերով, զուարթացնելով ձեր երեկոյթը:

Fermé le Mardi — Փակ է Երեքշաբթի

TRAITEUR EREVAN

29, RUE BERGÈRE — 75009 PARIS

TÉL.: 523. 44. 75

U. G. A. B. - MARSEILLE

Lundi, 24 Mai — à partir de 18 h.

Présentation de:

« L'HISTOIRE DES ARMENIENS »

Paru aux Editions PRIVAT

Sous la Préidence d'Honneur de

M. NAPOLEON BULLUKIAN

(Président de l'UGAB - France)

En présence de

M. GERARD DEDEYAN

(Directeur de l'ouvrage)

M. PHILIPPE WOLFF

(Membre de l'Institut)

et de l'Editeur

U. G. A. B. — MARSEILLE

33, Rue Pierre Puget — 13006 Marseille

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՄԱՅԻՍ
22-23
SAMEDI-DIMANCHE
22-23 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R. C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ : 180 Ֆ.
Արտասահման : Տար. 400 Ֆ. - Հատը : 2.50 Ֆ.

57Դ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.176

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

57e ANNÉE — No 15 176

ԹՈՒՐՔԻԱ

ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ՔՆՆԱՐԿԱԾ Է ՀԱՅԿ. ԱՀԱԲԵԿՉՈՒԹԻՒՆԸ

=——=——=

ՓՈԽԱԴԱՐՁԵԼ - ՉՓՈԽԱԴԱՐՁԵԼՈՒ ՀԱՐՑ ՄԸ ...

ԱՄԲ.- Մեր նախորդ թիւով (Մայիս 20) տուած էինք Թուրքիոյ խորհրդակցական ժողովի հայկական ահաբեկչութեան նը - վիրուած նիստին պատկերը: Ատկէ ետք գանազան կարծիքներ յայտնուած են փո - խադարձելու կամ չփոխադարձելու մա - սին: Ստորեւ՝ ևմոյշներ.-

Խորհրդակցական ժողովի Ատենապետ Փրոֆ. Սաադ Ըրմաք, որ յատուկ հրա - ւիրով մը ներկայիս Գերմանիոյ Միւնիխ քաղաքին մէջ կը գտնուի, հայկական ա - հաբեկչութեան մասին կատարած իր յու - արանութեան մէջ չեչտած էր որ «հայ - կական ահաբեկչութիւններու առիթով փոխադարձութիւն մը չենք կրնար խոր - հիլ:

Փրոֆ. Սաադ Ըրմաք, Խորհրդակցա - կան ժողովի մասնաւոր նիստին մէջ ան - դամներէն մանաւանդ հայկական ահաբեկ - չութիւններուն առիթով փոխադարձու - թիւն պահանջած ըլլալու մասին իր տե - սակէտները յայտնած է հետեւեալ ձե - ւով.

«Մեզի համար այդպիսի բան մը խոր - հիլ կարելի չէ: Ես կը հաւատամ որ մեր ազնիւ ժողովուրդը երբեք պիտի չուզէ պատասխանատուները պատժել ապօրէն եւ անարդար սկզբունքներով: Կրնան ու - րիշներ իրենց քննախնդրութեան ազդե - ցութեան տակ չարժիլ: Երբեք կողմնա - կից չենք կրնար ըլլալ փոխադարձութեան չարժումներու:

Խորհրդակցական ժողովի Պարտիոյ անդամ Տոչ. Պէշիր Համիթ - օղլուլլը լուսաբանութիւն մը բերաւ եւ - րաւ որ կարելի չէ հայկական ահարեկ - չութիւնը կասեցնել ճառերով եւ բերա - նագի յայտարարութիւններով, պէտք է փոխադարձել անոնց հասկցած լեզուով:

Համիթօղուլլարը ըսաւ որ Թուրք ժո - ղովուրդը պիտի հանդուրժայ, եթէ ի - րենց ցոյց տրուի թէ ինչպիսի միջոցներ ձեռք պիտի առնուին:

«Միայն փոխադարձութեամբ է որ կա - րելի է կասեցնել այս ոճրագործ ֆա - շիզմը, ցեղապաշտ եւ մոլեռանդ հայ ա - հաբեկիչները, ըսաւ ան: Թուրք ժողո - վուրդին համբերութիւնը, որ սպառելու վրայ է, այս ձգտումը ցոյց կուտայ: Ալլպէս բաւարար չեն արտասանուած նատերն ու արտայայտուած ցաւերը»:

Պէտք է ազդարարուին նաեւ, ըսաւ Համ - իթօղուլլարը, այն երկիրները որոնք նեցուկ կը կանգնեն հայ ահաբեկչու - թեան, երկիրներ՝ ինչպէս Սուրիա, Լիպիա, Կիպրոսի յունական Պետութիւ - նը եւ Ֆրանսա: Այս դէպքերը միայն մի - ջազգային ահաբեկչական դէպքեր չեն: Աշխարհակալ Պետութիւններու կողմէ կազմակերպուած եւ Թուրքիան պատակ - ծելու ու փլցնելու համար սարքուած յարձակումներ են:

×

«Կիւնէշ»ի մէջ Կիւնէրի Ճիվաօղլու կը գրէ.-

«Այսօր եթէ հանրաքուէ մը կատարուի եւ հարցուի թէ «հայկական ահաբեկչու - թեան ի՞նչ ձեւով պէտք է պատասխանել» բովանդակ ժողովուրդի իբրեւ մէկ ձայն տալիք պատասխանը հետեւեալն է. «Փո - խադարձութիւն»:

Այսինքն «արիւնի դէմ արիւն»:

Ոչ մէկը պէտք է կասկած ունենայ այս մասին:

Համբերութիւնները սպառած են այլեւս: Բայց, կարելի՞ է միթէ այսպիսի վա - տուկ հարց մը, ներկայացնել հանրային կարծիքի:

Այսինքն, Պետութիւնը կրնա՞յ հան - րային կարծիքի նիւթ դարձնել սա կամ նա երկրին մէջ գտնուող հայ ոճրագործ - ները ոչնչացնելու հարցը:

Ըլլալիք բան չէ...

Ինչպէս որ ըլլալիք բան չէ ասիկա, նոյնպէս կարելի չէ խորհիլ նաեւ թէ «յատուկ կամ դռնփակ» նիստի մը մէջ Խորհրդակցական Ժողովը այս փափուկ նիւթին վիճաբանութիւնը կատարէ, ո - րուն մասին ամբողջ աշխարհ կը հետա - քրքրուի եւ որ նոյնպէս յարմար է ամէն տեսակ շահագործութեան:

Այս մէկն ալ ըլլալիք բան չէ.

Բայց մեզք որ պատահեցաւ...

Իրականութեան մէջ, ճառախօսելու առեն չէ, այլ շարժման անցնելու ժա - մանակ է: Այսինքն խօսքի տեղ չարժում: Այլեւս առեն է որ ամպհիմններու վիճա - բանութիւններուն տեղ, կարենանք այն - պիսի յաջող լօպիներ ստեղծել, որոնց ար - դիւնքներով յաջողինք չարժման անցընել Արեւմտեան հանրային կարծիքը պատ - րաստող ձայնասփիւռի, հեռատեսիլի, մամուլի, պարբերաթերթերու նման հան - րային հաղորդակցութեան միջոցները:

Փրոֆ. Համզա Էրօզլու Խորհրդակցա - կան ժողովին մէջ ողջմտութեան հրաւէր մը կատարած եւ առաջարկած է, որպէս - զի Թուրք ժողովուրդին վայել ընթաց - քով մը հարցի լուծումը բերուի միջազ - գային ատեաններու առջեւ:

Մինչդեռ, միւս անդամները «փոխա - դարձութիւն» պոռացեր եւ պահանջեր են Իսրայէլի նման շարժիլ:

Արտաքին նախարար Թիւրքմէն ալ իր կարգին կը յայտնէ, որ հայ ահաբեկիչ - ները եւրոպական հանրային կարծիքը չահելէ յետոյ, հիմա իրենց ոճիրները Ամերիկա կը փոխադրեն եւ կը չանան ազ - դել ԱՄՆ-ի հանրային կարծիքին:

Խորհրդակցական Ժողովին մէջ պատա - հած այս վիճաբանութիւններու ցաւալի մէկ կողմն ալ այն էր, որ արտասահմանի յայտնի կ'ընէինք թէ «հայկական ահա - բեկչութեան մասին յստակ ու լաւ պատ - րաստուած բաղաքականութիւն մը չու - նինք տակաւին:

51 յարձակումներէ եւ 21 դիւանագէտ - ներու սպանութենէն ետք, դեռ «ի՞նչ ը - նելու» մասին վիճաբանիլ:

Նոյնպէս ցաւալի է տեսնել, թէ այն ինչ որ մեր ամբողջ ժողովուրդը, իբրեւ մէկ սիրտ ու մէկ ձայն անհրաժեշտ կը տեսնէ եւ կ'ուզէ որ կատարուի, տակա - ւին վիճաբանութեան օրակարգին կը դառնայ:

Իսկ մխիթարականը, այն պարագան է որ մենք վստահ ենք թէ գոյութիւն ու - նին պատասխանատուութեան եւ հաստա - տամտութեան տէր շրջանակներ, որոնք պէտք եղած առեն կը գործադրեն անհր - աժեշտ եղած ամէն բան:

«Անհրաժեշտ եղածը պէտք եղած առեն կատարել»ու խօսքն ու փաստը դեռ չատ թարմ է մեր յիշողութիւններուն մէջ:

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ՓԻՉ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

=——=——=

Տուր ինծի, Տէ՛ր, որախութիւնն անանձնական...

Ո՛րքէ՜ ուր, Մեծարենցի այս աքանչե - լի տաղը կը հնչէ այս առաւօտ ականջնե - րուս մէջ: Ու կը յիշեմ բոլոր այն բախ - տաւոր կամ տարաբախտ բանաստեղծներն ու հանրային մարդիկը, մշակոյթի կամ ընկերային ապրումներու այն նուիրեալ - ները, որոնք իրենց ամբողջ կեանքին մէջ իրենց տագանդն ու կարողութիւնը լ սպառ դրին իրենց նմաններուն ուրախու - թիւն պարգեւելու, իրենց նմաններուն ուրախութիւնը բաժնելու համբուրելի դործին:

Ո՞ր ժողովուրդը, ո՞ր ընկերութիւնը չունի իր այդ անմոռանալի զաւակները: Եւ ո՞ր ժողովուրդը չի գուրգուրար ա - նոնց վրայ, յուշարձան չի դարձներ ա - նոնց յիշատակը: Անոնց՝ որոնք փնտռե - ցին անանձնական ուրախութիւնը, այ - սինքն ուրիշին ուրախութիւնը, հասարա - կան ուրախութիւնը: Անոնց՝ որոնք փնտ - ռեցին ուրիշը ուրախացնելու ուրախու - թիւնը, ուրախութեան այն տեսակը՝ որ ստիպուած է իրեն ճամբայ բանալ հա - զարամեկ զրկանքներու ու զոհողութիւն - ներու մէջէն, որ գոյութիւն կ'առնէ ա - փական ուրախութեան եւ հաճոյքին նը - ւիրաբերութէն, ողջակիզումէն, կարծես թէ պէտք է հրկիզուի անհատական ու - րախութիւնը, որպէսզի անոր մոխիրէն յարութիւն առնէ ընկերային ուրախու - թիւնը:

Միշտ զարմացած եմ եւ կը զարմանամ, թէ ո՞րն է այն օրէնքը, որու համաձայն բնութիւնը կ'ընտրէ իր բացառիկ զաւակ - ները: Ե՞րբ է, ի՞նչէն է, ի՞նչպէս է որ ապրելու կոչուած այս կամ այն մար - դուն ճակատագրին մէջ կը խառնուի ըն - կերային բռնկումի թթխմորը: Ո՞վ կը տնօրինէ, որ աշխարհի ամէնէն եսասէր ու այլամերժ մարդու մը զաւակը ինք - զինք յանկարծ նուիրաբերէ ուրիշներու երջանկութեան ու բարիքին: Ո՞ր ուժին հրաշալի միջամտութեամբն է որ մարդը կ'ընդունի ինքզինք նուիրաբերել ընկե - րային ստեղծագործութեան եւ երկունքի մը ցաւատանջութեան, գիտնալով հան - դերձ որ, Դանիէլ Վարուժանեան հոյա - կապ տողերով՝

... քանաստեղծին նման, Աստուած ալ, որպէսզի ստեղծէ, հարկ եղաւ որ լայ:

Միշտ զարմացած եմ եւ երբեք պիտի չդադրիմ զարմանալէ, թէ ինչո՞ւ այդ - քան քաղցր է արցունքի այդ չիթը, երբ կը սահի ընկերային ստեղծագործութեան թաւիի մը մէջ: Ո՞ր հաւաքականութիւնը չունի մարդկային սա երկու տեսակները. այն առաջինը, որ գիշերը նստած իր դրամարկղին ոսկիները կը համրէ, եւ այն երկրորդը՝ որ գիշերը կը տագնապի մարդկութեան, կամ ուղղակի իր ժողո - վուրդին գանձարանէն ներս ոսկի մը տա - հեցնելու համար: Ո՞ր ուժն է որ այդ երկրորդին սրտին մէջ առաւօտ մը կը դնէ անանձնական սիրոյ, համամարդկա - յին անշահախնդիր սիրոյ կայծը: Երբեք պիտի չլուծենք այս խորհուրդը: Ոչ մէկ գիտնական հաւանաբար պիտի կարենայ գտնել ու ճանչնալ մարդկային բջիջնե - րուն մէջէն այն մէկը, որ օր մը կը զատ - ւի միւսներէն, կ'ուռճանայ, կ'աղնուա - նայ, կը մեծնայ ու մարդուն մէջ կը դառնայ գլխապիր Նուիրում, գլխապիր Զոհաբերում, գլխագիր Սէր, որուն փոխ - արինակ կը չգտնան աշխարհի բոլոր փոք - րիկ հաշիւներն ու սէրերը: Ասկէ վերջ ոչ մէկ ուժ պիտի կարենայ կասեցնել անոր գնացքը, արգելք դնել անոր պոռթ - կումին դիմաց: Եւ ան է դարձեալ որ առաւօտ մը, երբ պիտի փորձեն գինքը համոզել դէպի փոքրիկ ու եսակեդրոն սե - րէը, մարդուս յուսահատօրէն գոչել պի -

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԱԼՈՒԻՆՆԵՐՈՒ պատերազմը անխու - սափելի կը նկատուէր այլեւս Ուրբաթ առաւօտ, քանի Միացեալ Ազգերու ընդհ. քարտուղարին Ջանքերը ձախողած էին: Տիկին Թաչըր արդէն ցամաքահանման հրահանգը տուած էր եւ ամէն ինչ կախում ունէր միայն օդերեւութաբանական պայմաններէն, որոնք անյապաղ էին:

ԹՈՒՐՔԻՈՅ վարչապետը Պիւլէնթ Ու - լուսու չորս օրուան այցելութիւն մը կը կատարէ Կիպրոսի հիւսիսային մասը, զոր Թուրքերը զրաւած են ութ տարիէ: Թուրք Կիպրացիները չաս խանդավառ ընդունելութիւն մը ըրած են, բայց այս այցելութիւնը խիստ քննադատութեան նիւթ եղած է Կիպրոսի եւ Յունաստանի կառավարութեանց կողմէ: Յունաստանի կառավարութեան բանբերը յայտարարած է այս առթիւ որ Կիպրոսի միակ օրինա - ւոր կառավարութիւնը Կիփրիանուի կա - ռավարութիւնն է եւ ան միայն նախա - րարապետեր հրաւիրելու իրաւունքն ու - նի: Անգարա - Աթէնք մթնոլորտը չաս ձգտուած է կրկին, այս պատճառաւ:

ԵՐԼՄԱՋ ԿԻՒՆԻԳԻ յանձնումը պա - հանջած է Թուրքիա Ֆրանսայէն, այն պատճառաբանութեամբ որ բեմադիրը քրէական յանցանքի համար դատապար - տուած է 18 տարի բանտարկութեան եւ ձերբակալման միջազգային հրամանագիր կայ իրեն դէմ: Կիւնէյ, որ բանտէն փա - խած էր եւ զաղտնի կեանք մը կը վարէր Եւրոպա, յանկարծ հրապարակ ելաւ Քաննի փառատօնին, ուր իր «Եոլ» չար - ժանկարը ցուցադրուեցաւ, մեծ յաջողու - թիւն գտնելով: Մամուլի ասուլիս մըն ալ տուաւ եւ հարցազրոյց մըն ալ Ֆրանսա - կան հեռատեսիլէն, երբ Հինգշաբթի օր, կը մեկնէր Քաննէն, անծանօթ ուղղու - թեամբ:

ՆԱԽԱԳԱՀ ՄԻԹԵՐԱՆ կը շարունակէ ափրիկեան իր շրջապտոյտը եւ Նիժերէն Քոթ տ'Իվուար անցաւ: Նիամէյի մէջ, ուր ստիպած է նախագահին դեղահատ մը առնել եւ գլխարկ դնել: Միթերան իր առնել եւ գլխարկ դնել, Միթերան իր ճառին մէջ վստահեցուցած է, որ Ֆրան - սան տէր կը մնայ իր յանձնառութեանց:

տի տայ, Ռուբէն Սեւակի խոկ բառե - րով.

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,
Փոքրիկ աղջիկ, էջգի մեղմ էր...
Քեզի փոքրիկ սէր մը պէտք էր,
Դուն Սէր - Աստուածը սիրեցիր...:

×

Ո՛րքէ՜ ուր, այս առաւօտ երեւակայու - թիւնս խոյս կուտայ իր ազդեւարանէն ու դէպի անհուն կը սլանայ, յիշելու համար պատմութեան բոլոր Սէր - Աստուածնե - րը: Գիտեմ, մարդկային ընկերութիւնը երբեք պիտի չզրկուի բացառիկ զաւակ - ներէ: Եւ երեւակայութիւնս ահա համ - բոյր մը կը գտնայ, կը չրջի ամբողջ աշխարհը, եւ կ'երթայ դրոշմուիլ յիշա - տակին վրայ բոլոր անոնց, որոնք Մարդ - կութիւնը նախընտրեցին մարդէն: Եւ ա - կանջներուս մէջ կրկին կը հնչէ.

Ճամբաներէն, ու գետերէն, ու
դաշտերէն,
անտառներէն, ու լեռներէն, ու
ձորերէն,
տանիքներէն, ու տուներէն, ու
դուռներէն,
Տուր ինծի, Տէ՛ր ուրախութիւնն
անանձնական:

Ռ. Հ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ԼԵՆԻՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

«ԻՄ ՀՈՂՈՎՐԴԻՆ ՎԱՂԱՄԱՀԻՑ ՆՄԱՆՅԱԼ ՉԻ...»

Ա.

«Ես Հովհաննես Թումանյան, ծնվել եմ 1869 թվականի հունվարի 19-ին (նոր տոմարով՝ փետրվարի 1-ին) Լոռի-Պամբակ գավառի Դսեղ գյուղում, հոգևորական ընտանիքում։ Հայրս՝ Տեր-Թադևոս Թումանյանը, ավարտել է Թիֆլիսի հոգևոր ճեմարանը։ Մայրս՝ Մարիամ Հակոբյանը, ծնվել է Ախալքալաքի գավառի Ծամկոտ գյուղում, հոգևորական ընտանիքում։ Ես ավարտել եմ Թիֆլիսի գիմնազիան։ Ծառայել եմ Թիֆլիսի գավառական կառավարությունում։ Ունեցել եմ ութ զավակ, որոնցից ողջ են մնացել հինգը։ Ապրում եմ Թիֆլիսում, Ավլաբարում, սեփական տանը։ Ունեցվածքս՝ 1000 ռուբլի։ Ընտանեկան դրությունս՝ միջակ։ Կրոնական հավատքով՝ քրիստոնյա։ Կուսակցական չեմ։ Ոչ մի կուսակցության անդամ չեմ եղել։ Ոչ մի կուսակցության չեմ պատկանել։ Ոչ մի կուսակցության չեմ աջակցել։ Ոչ մի կուսակցության չեմ ենթարկվել։ Ոչ մի կուսակցության չեմ հետևել։ Ոչ մի կուսակցության չեմ հավատացել։ Ոչ մի կուսակցության չեմ հավատում։ Ոչ մի կուսակցության չեմ հավատալու։ Ոչ մի կուսակցության չեմ պատկանելու։ Ոչ մի կուսակցության չեմ աջակցելու։ Ոչ մի կուսակցության չեմ ենթարկվելու։ Ոչ մի կուսակցության չեմ հետևելու։

Ես ոչ մի կուսակցության չեմ պատկանել, ոչ մի կուսակցության չեմ աջակցել, ոչ մի կուսակցության չեմ ենթարկվել, ոչ մի կուսակցության չեմ հետևել, ոչ մի կուսակցության չեմ հավատացել, ոչ մի կուսակցության չեմ հավատում, ոչ մի կուսակցության չեմ հավատալու, ոչ մի կուսակցության չեմ պատկանելու, ոչ մի կուսակցության չեմ աջակցելու, ոչ մի կուսակցության չեմ ենթարկվելու,

ՅԱՍՈՎԱԾ ԿՈՏՈՐԱԾ

= ՀԱՏՈՒԱԾՈՒ =

ՀԱՅԿԱԿԱՆ ՎՆՏՈՒԱԾՈՒ ՎԻՃԱԿ

ՊՈՅԱՃԱՆ ՈՒՆ

Նկար 9. Շուրջառնական լճի հարավային ափին Մ. Նշանեանցի կողմից կառուցուած ամառանոցը (տես էջ 3, սիւն 1)։

Ամէն տարի, ամառուան ամիսներուն, Ամերիկայի տարբեր նահանգներէն հազարաւոր զբօսաշրջիկներ կ՚այցելեն Եղեռնի ժամանակ ապաստանած հայերուն ապաստանած վայրերը։ Ասոնցմէ շատերը կ՚ուզեն տեսնել նաեւ Շուրջառնական լիճը, որ ամէն տարի կը գրաւէ 11.000 ձեռնարկներ ու կը գրաւէ մեծ թիւով զբօսաշրջիկներ։

Ամէն տարի, ամառուան ամիսներուն, Ամերիկայի տարբեր նահանգներէն հազարաւոր զբօսաշրջիկներ կ՚այցելեն Եղեռնի ժամանակ ապաստանած հայերուն ապաստանած վայրերը։ Ասոնցմէ շատերը կ՚ուզեն տեսնել նաեւ Շուրջառնական լիճը, որ ամէն տարի կը գրաւէ մեծ թիւով զբօսաշրջիկներ։

Նկար 9. Շուրջառնական լճի հարաւային ափին Մ. Նշանեանցի կողմից կառուցուած ամառանոցը (տես էջ 3, սիւն 1)։

«LE CHYPRIOTE»

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Ed.: Presses de la Cité

Ս. Ծ.

ՏԻԳՐԱՆ ՀԱՄԱՅԵՆ

Ֆրանսերէն գրած է Ա. Ալպերա

Թարգմանեց Ս. Ս.

Ամէն ինչ կայ հոս։ Զօրեղ զգացումներ, խոր-հրդաւոր հոգեբանական վերլուծումներ, ներքին պայքարներ, ուժեղ կիրքեր, ինչպէս նաեւ ամէն տեսակ ոճրագործութիւններ։ Հեղինակուհին ամէն ինչ ներկայացուցած է այնպիսի վարպետութեամբ, որ ընթերցողը ամբողջ ժամանակ կը մնայ լարուած։ Ան կը հետեւի հերոսներուն, կը տառապի անոնց հետ, կը ցաւակցի անոնց, կը զայրանայ անոնց վրայ, կը ներէ անոնց, կը դատապարտէ զանոնք։ Ամէն ինչ կայ հոս։ Ամէն ինչ, բացի ձանձրոյթէ։ Ան չկայ հոս։

Ինչպէ՞ս կրնայ ձանձրոյթ ըլլալ գրքի մը մէջ, որ կը սկսի սպանութեամբ մը, կը շարունակուի ոճրագործութեան մը հետեւանքներով, եւ կը վերջանայ ոճրագործութեան մը բացայայտումով։ Ոճիրներ, ոճիրներ, ոճիրներ։ Ան ոճիրներ կան, որոնք կը գործուին ոճրագործներու կողմէ, որոնք ոճրագործ չեն, բայց ոճրագործ կը դառնան հանգամանքներու բերումով։ Ոճիրներ կան, որոնք կը գործուին ոճրագործներու կողմէ, որոնք ոճրագործ չեն, բայց ոճրագործ կը դառնան հանգամանքներու բերումով։ Ոճիրներ կան, որոնք կը գործուին ոճրագործներու կողմէ, որոնք ոճրագործ չեն, բայց ոճրագործ կը դառնան հանգամանքներու բերումով։

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԻՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

ՄԱՐՍԷԼ.- Ֆրէնկեան ընտանիքը 60 ֆրանք իր անթաղ մեռելներու յիշատակին: Տիկին Մարի Անտոնեան 160 Ֆ., Տէր եւ Տիկին Ասիկ Աշճեան 200 Ֆ յաւէտ ողբացեալ աննման խմբագրապետ եւ ուսուցիչ մեծ «Շ»ին անմոռանալի յիշատակին:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Լքա - ան - Փրովանսէն Գր. Լուսիկեան 100 Ֆ. կը նուիրէ «Յառաջ»ին, Տիվրիկի կիւրասին զիւղէն, աքսորի սերունդէն Սահակ Գաբրիէլեանի մահուան քառասունքին առթիւ:

MARBRERIE FUNÉRAIRE

CHARLES GAMAIN

Tél.: 389. 72. 61

CIMETIERE DE LA FONTAINE

Saint Martin — 94460 Valenton

ՀԱՅԵՐԷՆ ԿԸ ԽՕՍՈՒԻ

ՊԱՏԱՐԱԳ

ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏԱՆ ՄԱՏՈՒՌԻՆ ՄԷՋ

Մոնմորանսիի Հանգստեան Տան Մատուռին մէջ, պատարագ կը մատուցուի՝ Շաբաթ, Մայիս 22, ժամը 10·30-ին:

Կը պատարագէ՝

ՄԵՍՐՈՊ ՔՀՆԾ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Կը հրաւիրուին Հանգստեան Տան բնակիչներուն ընտանեկան պարագաներն ու բարեպաշտ հաւատացեալները:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄԾԱԿ. ՄԻՈՒԹԻՒՆԸ ՄԱՐՍԷԼԻ

կազմակերպած է

Զորեքշաբթի, Մայիս 26, ժամը 21ին:

CENTRE CULTUREL DE LA J.A.F.

65, Allées Léon Gambetta - 13001 Marseille

ՇԱՏ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ

Նիւթ ունենալով՝

ՄԱՇՏՈՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՏԵԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Նկարներու ցուցադրութիւն

Բանախօս՝

ԲԱԲԳԷՆ ԶՈՒՔԱՍԶԵԱՆ

Մաշտոց Մատենադարանի Տնօրէնի տեղակալ:

ՀԱՑ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԱՆԿԱՆՑ ԲՈՑՆԻՆ ՄԷՋ

Յ Օր Մանչի ախերուձ

Մայիս 29, 30 եւ 31:

Արձանագրուիլ հեռաձայնելով՝

985 - 36 - 53:

Մեկնում՝ Շաբաթ առաւօտ ժամը՝ 6·30–ին:

Ժամադրավայր՝

GARE SAINT - LAZARE

Au départ des Grandes - Lignes

U. G. A. B. - PARIS

PRESENTE

JANET MAFIAN-ALTOUNIAN

RECITAL DE PIANO

CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN

118, Rue de Courcelles — 75017 Paris

Le Samedi, 22 Mai — à 21 h.

Au Programme:

BACH — HAYDN — RAMEAU — FAURE

RAVEL — JONGEN — KHATCHADOURIAN

Réservation de places:

U. G. A. B. — Tél.: 520. 03. 18

ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Պանեէօ - Քաչանի մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ ընկերուհի Վարդուհի Շիրինեանի եւ զաւակներուն, նոյնպէս ընկերուհի Թօզա Տակառեանի եւ բոլոր ընտանեկան պարագաներու իրենց ամուսնոյն եւ քեռայրին՝ Լեւոն Շիրին - եանի մահուան առթիւ:

LA GRÈCE A LA CARTE

VOUS PROPOSE

PARIS - ATHÈNES - PARIS

1150 F.

DEPARTS DU: - 23/5 - 30/5 - 13/6 - 20/6

1390 F.

DEPARTS:
06/6 - 27/6
SEPTEMBRE

1490 F.(*)

JUILLET - AOUT
(+) SUPPLEMENT 200 F.
DU 31/7 AU 10/8

AINSI QUE TOUTES PRESTATIONS
(HOTELS - CIRCUITS - CROISIERE)
AU DEPART D'ATHENES

Pour tous Renseignements:
ARPI BODURYAN — ANITA TACHDJIAN

V. V. S.

5, Place A. Malraux - 75001 Paris

Tél.: 296. 37. 70

LIC.: 1539

Հ. Յ. Դ. ՌՈՍՏՈՄ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ԽՆՃՈՅՔ

Կիրակի, Մայիս 23, ժամը 16-էն սկսեալ
Տէսիճի Հայ Մշակոյթի Տան մէջ:

Կը մասնակցի «ԱՆԻ» Նուագախումբը:

———×———

FETE DE L'ASSOCIATION DES ADOLESCENTS ARMENIENS F.R.A. «BADANI»
Section «ROSTOM» de Décines
A LA MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE DECINES
LE DIMANCHE 23 MAI — A PARTIR DE 16 H.
AVEC L'ORCHESTRE «ANI» — Buffet Arménien

OPTIMA Tours

PROCHAINS VOYAGES EN ARMÉNIE

DU 15 AU 29 MAI — DU 12 AU 26 JUIN — DU 14 AU 31 JUILLET
DU 4 AU 17 AOUT VOL SPECIAL DIRECT EREVAN

Nouvauté! Réduction importante pour les jeunes de 16 à 35 ans.

LA MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE DECINES Organise 2 Voyages Directs:

a) LYON / EREVAN / BAKOU / TBILISSI / EREVAN / LYON
b) LYON / EREVAN / LYON
DU 4 AU 17 AOUT

Nouvauté! Réduction importante pour les jeunes de 16 à 35 ans.

SONIA COUMRYANTZ
OPTIMA Tours

Renseignements et Inscriptions:

à Paris:
OPTIMA TOURS
67, Rue Quincampoix
75003 - PARIS
Tél.: 274. 27. 20

à Décines:
Maison de la Culture Arménienne de Décines
15, Rue du 24 Avril 1915 - 69150 DECINES
Tél.: (7) 849. 42. 97
Tous les jours, sauf Lundi,
de 10 à 12h. et de 14 à 19h.

VOYAGE ORGANISE PAR LE FOYER CULTUREL DE NICE
AVEC UN VOL DIRECT NICE / EREVAN
DU 25 SEPTEMBRE AU 9 OCTOBRE

Renseignements et Inscriptions:

Pour Nice et les Alpes - Maritimes:
— Monsieur IKEDJIAN Arthur
29, Avenue St. Augustin — 06200 NICE
Tél.: (93) 83. 35. 03 ou (93) 88. 76. 08
— Monsieur GEDIKIAN Vasken
Tél.: (93) 88. 06. 41

Pour le Var:
Monsieur KASSIGUIAN Raffi
8 ,Rue des Ecoles
83710 - MONTAUROUX
Tél.: (94) 76. 44. 23

Lic. A 946 (Agence Agréé INTOURIST)

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿի

Լեւոն Շիրինեանի մահուան առթիւ, Տէր եւ Տիկին Վազգէն Սէրէնկիւլեան 300 Ֆ. կը նուիրեն «Յառաջ»ին, փոխանակ ծաղիկի:

×

Լեւոն Շիրինեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի Տէր եւ Տիկին Վարդգէս Տակառեան 500 Ֆ. նուիրած են Փարիզի Հայ Մշակոյթի Տան եւ 200 Ֆրանք «Յառաջ»ի բարգաւաճման:

×

Նոյն առթիւ, Տէր եւ Տիկին Զօհրապ Մուրատեան 200 Ֆ. կը նուիրեն «Յառաջ»ի բարգաւաճման:

Vahé Katcha
Arlen
Papazian

Le Chypriote



Pour se procurer des armes l'avocat Alexis Mavros est prêt à tout, même à une prise d'otage... Un suspense haletant qui pose une question essentielle : le "Chypriote" est-il un maniaque, un gangster ou bien un révolutionnaire inspiré ?

PRESSES DE LA CITE

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

———=———=———

Ի նպաստ Լիոնի Հայոց Եկեղեցւոյ նորոգութեան եւ հովանաւորութեամբ տեղւոյս Հոգեւոր Հովիւ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՋԱՓԱՐԵԱՆի

Լիոնի հայերէն խօսուն թատրոնը կը ներկայացնէ Ուրբաթ, Յունիս 4-ին երեկոյեան ժամը՝ 8·45–ին՝ «Տայը կարապետ»ը կամ «Ամերիկահայ փեսացուն» Սկսել արահին մէջ:

60 Աւրընիւ տը Սաֆա, Լիոն 6-րդ

Տոմսերը ապահովելու համար դիմել Լիոնի Հայոց Եկեղեցին, կամ խաղացող անդամ, անդամուհիներուն:

ՊՏՈՑ

Կաթ. Խաչի Կրթնպալի վարչութիւնը «Մայրերու տօն»ին առթիւ պատրաստ է իր երեց ընկերուհիներուն համար Շաբաւիւ, Մայիս 28-ին, Ուրբաթ օր:

Օթեւանը կը մեկնի 9·30–ին:

Ճաշերու մասնակցութիւն 50 Ֆ.:

Հեռաձայնել.- 44 – 45 - 27:

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՈՒԻ

Փորձառու չարժավար մը գործ կը փնտռէ:

Դիմել.- Հեռաձայն.- 893 - 77 - 99

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ Պանեէօ - Քաչանի մասնաճիւղի ընդհ. ժողովը երկուշաբթի, Մայիս 24, ժամը 20·30-ին Տիկին Փափազեանի բնակարանը:

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ
25
MARDI
25 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՅՐԱՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ : 180 Ֆ.
Արտասահման : Տար. 400 Ֆ. - Հատը : 2.50 Ֆ.

57Դ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.177

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

57e ANNÉE — No 15.177

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՄԱԼՈՒԻՆ
ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԵՐԿՈՒՍՏԵՔ ԶՈՀԵՐ
ՐԱՑԱ ՀԱԿԱՍԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրբաթ առաւօտ էր, որ Մեծն – Բրիտանիա, ինչպէս կը սպասուէր, յարձակման անցաւ եւ առաջին ցամաքահանումը գործադրեց Սան Գարլոս նաւահանգիստը: Այս գործողութենէն սկսեալ, ոչինչ կարելի է ճշդրիտ դիտնալ, քանի ըստ աղբիւրին (Լոնտոն թէ Պուէնոս - Այրէս) զոհերը կը տարբերին: Անգլիացիք, հետզհետէ, Տիկին Թաչըր գինուորական ուժերը կը նկատէ «աշխարհի ամէնէն դաշալիները», որոնց քաջութիւնն ու ճարպիկութիւնը նոր հպարտութիւն մը առած են երկրին եւ հասկցուցած թէ խակապէս միայն մէկ ընտանիք են:

Անգլիական հաշուեկշիռը ցամաքահանումէն ի վեր հետեւեալն է, ըստ բրիտանական աղբիւրներու.- 48 մեռեալ կամ անհետացած, 55 վիրաւոր, երկու թռան վար առնուած են, Առտնին ֆրէկաթը ընկղմած է եւ չորս ուրիշ նաւեր՝ վնասուած:

Աւժանթինեան կորուստները են՝ 20 օդանաւ վար առնուած, մէկ նաւ ալ ծանր վնաս կրած է: Այս ալ անգլիական աղբիւր է: Պուէնոս - Այրէս իր վնասներուն համար, հետեւեալ հաշուեկշիռը կուտայ՝ 6 օդանաւ եւ 3 թռան, թիւ չի տար սակայն զոհերու մասին:

Անաւասիկ պատերազմ մը, որու ոչ ոք կը պատկր և սկիզբէն իսկ բուռն բնոյթ առած է: Ինչ որ ալ ըլլայ արդիւնքը և նոյնիսկ եթէ Անգլիա յաղթէ, այդ յաղթանակը առժամեայ բնոյթ պիտի ունենայ: Ինչ որ ըլլան Աւժանթինի «պատմական» իրաւունքները կամ «իրաւական» պատճառաբանութիւնները, կը մնայ որ ինք է յարձակողը, ընդունելով հանդերձ թէ Անգլիա տասնեւեօթը տարի է կը ձգձգէ խօսակցութիւնները: Ուշ կամ կանուխ Անգլիա պիտի ստիպուի կղզին Թոզուլ լաւին ամերիկեան պետութեան մը, թանկն՝ պատմութեան եւ աշխարհագրութեան: Ամէն պարագայի մէջ, կացութիւնը շատ փափուկ է, օրքան ալ Եւրոպան եւ Միացեալ - Նահանգները Անգլիոյ կողքին ըլլան, պէտք է նաեւ զգոյշ ըլլան, որ կապը չխզեն լատին - Ամերիկայի հետ, որ կրնայ Մոսկուայի դիրկն իյնալ, այս առթիւ: Քանի մը երկիրներ արդէն յայտարարած են թէ պատրաստ են կռուելու Աւժանթինի կողքին:

Ներկայիս, ուրեմն, եռանիքն ձէֆը (Անգլոյ դրօշակը) կը ծածանի Սան - Գարլոս, որ կամրջագլուխ մըն է ներկայիս, Մալուինները արեւելեան կողմը, փորթ - Սթանլիէն 80 քիլոմեթր հեռաւորութեամբ: Բնակչութիւնը՝ 30 հոգի, բաժնուած ութ տուներու մէջ:

× Վնասեցուելա, որ ուխտիի աշխարհի մեծագոյն ներածողներէն մէկն է, արդիլած է այդ ըմպելին պաշտօնական ընդունելութեանց եւ կառավարական ապասարկութեանց մէջ, Մալուինները պատերազմին պատճառով: Տեղը պէտք է ռոմ կամ գարեջուր խմել...:

×

ՊԷՅՐՈՒԹ

ԵԼԵՒՆԱՓՈՐՁ
ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ԴԷՄ
ԲԱԶՄԱԹԻՒ ԶՈՀԵՐ

Երկուշաբթի, Մայիս 24, առաւօտեան 8-ի շուրջ, երբ բազմաթիւ անձեր պոչ բռնած էին Ֆրանսական վիզայի համար, կառք մը պայթած է դրան առջեւ: Ժամը 11-ին կարելի չէր տակաւին ճշդրիտ բան մը գիտնալ մեռեալներու թիւին մասին (որ 10-է շատ աւելի է կ'ըսուէր սակայն) ոչ ալ վիրաւորներու, քանի հրդեհ մըն ալ ծագած էր եւ դժուար էր զոհերը փնտռել: Արեւմտեան - Պէյրութ կը պատնուի Ֆրանսական դեսպանատունը, եւ ծանօթ է որ հակաֆրանսական արարքները, որոնք սկսան դեսպանին սպանութեամբ, չեն դադրիր Պէյրութէն՝ փարիզ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՄՈՎ

ՖՐԱՆՍԱՑԻ արտաքին առեւտուրը «պատմական» բաց մը արձանագրեց Ապրիլին՝ 10 միլիառ: Համապատասխան նախարարն ալ՝ Մ. Ժոպէռ «նողկալի» որակեց այս արդիւնքը: Միւս կողմէ, Ֆրանսայի առաւելագոյն բացերը կ'արձանագրուին Արեւմտեան Գերմանիոյ եւ Միացեալ - Նահանգներու հետ:

ԹՈՒՐՔԻՈՅ Հանրապետութեան նախկին նախագահ՝ ՃԷվտէթ Սունայ մեռաւ 82 տարեկանին, Պոլիս: Պաշտօնավարած էր 1966-էն 1973:

Հ. ՍԱՍՈՒՆԵԱՆԻ
ԴԱՏԸ՝ ՅՈՒԼԻՍ 14-ԻՆ

=———=———=

Լոս - Անճըլըսէն կը հաղորդեն, որ Ուրբաթ օր, Մայիս 21-ին, Լոս - Անճըլըսի դատարանին կը ներկայանար կրկին Համբիկ Սասունեան, թուրք հիւպատոսի սպանութեան որպէս հեղինակ:

Հ. Սասունեան ինքզինքը ոչ - յանցաւոր յայտարարեց (նոք - կիլթի): Դատաւորը՝ Ճուլիուս Լիթամ յայտնեց թէ Սասունեան բանտը պիտի մնայ (այսինքն չի կրնար երաշխաւորագրինով դուրս ել - լել) մինչեւ իր դատավարութեան թը - ւականը, որ ճշդուեցաւ՝ Յուլիս 14:

ՈՒԻԼԵԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ
ԱՃԻՒՆՆԵՐՈՒՆ ԿԷՍԸ
ԵՐԵՒԱՆ ԿԸ ՓՈԽԱԴՐՈՒԻ

=———=———=

Ինքնրնէշընըլ Հերըլտ Թրիպիւն Շաբաթ, Մայիս 22-ի իր թիւին մէջ կը հաղորդէր, որ Ուիլիըմ Սարոյեան Հիմնարկութեան պաշտօնական բանբերները յայտարարած են թէ գրագէտին ճաիւննե - րուն կէսը Երեւան պիտի փոխադրուի: Այս առթիւ, ամերիկեան օրաթերթը կը յիշատակէ որ «հայ գաղթականներու դաւակը՝ Սարոյեան փուլիցըը մրցանակաւոր, վիպագիր եւ թատերագիր մե - ռաւ իր ծննդավայր՝ Ֆրէզնօ, 1981 Մայիս 18-ին, 72 տարեկանին: Ալըն Ճենսեան, Սարոյեան հիմնարկութենէն ըսած է թէ պատուիրակութիւն մը, գլուխն ունենալով Սան - Ֆրանսիսքոյի փառատրաններէն՝ Ռոպըրթ Տէմիր եւ Ֆրէզնոյի պետական համալսարանէն Փրոֆ. Տիվ - րան Գուլումճեան ճաիւննները Հայաստան պիտի փոխադրեն:

ՓԱՐԹԱՄԱՀ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ 45-ՐԴ ԱՄՈՑԵՆՈՒԹԻՒՆ

—×—

«Արարատ»՝ Մ'իյնս Գլուխը

Մայիս 23-ի մրցումներու արդիւնք - ները են.-

Արարատ - Տորպեդօ	3 – 1
Դինամօ (Մինսկ) - Շախտեոր	3 – 0
Դինամօ (Մ) - Պախտակոր	3 – 1
Ջէնիթ - Կուբան	1 - 2
Ջերնոմորեց - Մետալիստ	1 – 2

Դասաւորման գլուխն է Արարատ 16 կէտով եւ 12 խաղէ եռք: Իրեն կը հետեւին Դինամօ (Մինսկ) եւ Պախտակոր, որոնց սակայն երկու խաղ կը պակսի:

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ
ՓՈԽԱԴԱՐՁԵԼՈՒ
ՋՓՈԽԱԴԱՐՁԵԼՈՒ
ՀԱՐՑԸ

«Ուշադրութիւն» խորագրին ներքեւ է, որ Սոն Հաւաոխի մէջ, խմբագրապետը՝ Ճիհաք Պապան կ'անդրադառնայ խորհրդակցական ժողովին մէջ արտայայտուած կարծիքներուն փոխադարձելու - չփոխադարձելու մասին, հայկ. ահա - բեկչութեան:

Քանի հայկական փամփուշտները կը չարունակեն ծակծկել մեր հայրենակից - ները, Թուրքիոյ մէջ բարկութիւնը զայ - րոյթի կը փոխակերպուի: Այս պատճա - ռաւ է, որ Պոսթընի մեր պատուակալ հիւպատոսի սպանութենէ ետք, Խորհր - դակցական ժողովի մէջ կատարուած խօ - սակցութիւններու ընթացքին կարգ մը անդամներ «այլեւս մենք ալ պէտք է վր - էժ լուծենք», դոչելով պահանջած են որ յանցաւորները եւ պատասխանատուները նոյն ձեւով պատժուին, այսինքն փոխադարձութիւն կատարուի:

Մենք այսպիսի ճամբու մը դէմ ենք, որուն պատճառները կուտանք ստորեւ.

1.- Անոնք մեր արժէքաւոր տարրերն են որ կը սպաննեն: Եթէ մենք ալ փոփոխադարձութեան սկսինք եւ անոնցմէ ոեւէ մէկն ալ սպաննենք, չենք կրնար անոնց մեզի հասցուցած վնասը փոխարինել:

2.- Գործուած յանցանք մը փոխադարձելու եւ վրէժ լուծելու եղանակը վերջ չունենար քնաւ: Կարելի չէ խորհիլ, որ Հայերը պիտի դադրեցնեն իրենց ոճրագործութիւնները, տեսնելով, որ իրենք ալ սպանուղներ սկսած են ըլլալ:

Անոնք, որոնք այս ոճիրներուն կը մղեն Հայերը, կրկին հին չէրննաներուն նըման սկսած են գործածել այդ անմիտ - ները: Դրամը վճարողներ, միշտ կրնան վարձու ոճրագործներ գտնել:

3.- Եթէ հարկ կը տեսնուի որ փոխադարձենք եւ եթէ կ'ուզենք որ մեր այս փախադարձութիւնները ազդու ըլլան, ինչո՞ւ համար այն տեղն ելլենք ու այդ վարձու հայ ոճրագործները սպաննենք: Անոր տեղ պէտք է սպաննենք այն որ կը խրախուսէ, քաջալերէ կ'ըլլայ ոճրագործութիւններուն եւ կը հովանաւորէ զանոնք: Այսինքն եթէ մենք ալ ոճիրներով պիտի փոխադարձենք, այն տեղն այդ ոճիրներուն ամենալաւ տեսակին կը պատմենք: Բայց այս պարագան ալ համաշխարհային կացութեան վատթարացումէն զատ ուրիշ բանի մը չի ծառայեր:

4.- Եթէ մենք ալ սկսինք ապօրինի ճամբաներու դիմել, կրնանք առանց ուզելու չափը կորսնցնել, չենք կրնար չափաւորել ոճրագործները եւ դէպքերը մեր հակակշիռէն դուրս կ'ելլեն:

5.- Հայկական ոճիրները բնականաբար հանրայէն կարծիքի վրայ ազդեցութիւն կը գործեն: Այս ազդեցութեան իրը հետեւանք, պիտի սթափին բնականաբար անոնք որոնք կը հաւատան որ Թուրքիոյ կողմէ Հայոց դէմ ցեղասպանութիւն մը կատարուած է 1915-ին: Այսօր իւրաքանչիւր հայկական փամփուշտ, ոչ միայն այդ զէնքը իր ձեռքերուն մէջ բռնող անձին, այլ ամբողջ Հայ ցեղին նզովումին պատճառ կը դառնայ:

Հետեւեալ հարցումն ալ ուզենք ուղղել.

- Այս վարնոց յարձակումներուն դեմ ո՞րքան թիւրախ պիտի ըլլանք: Դեմ ո՞րքան ատեն պիտի լռենք:

Արդարեւ երբ Խորհրդակցական ժողովի մէջ յարդելի Փրոֆ. Համզա Էրօղլու կը մերժէր վրիժառութեան փոխադարձումը, վարչն արդարացիօրէն պոռացող - ներ եւ հարցնողներ կային, թէ «տակաւին ո՞րքան ատեն պէտք էր սպասել»:

Մեր երկիրը չահագրգռող որեւէ չարժումի առթիւ զգայականութեամբ եւ ջղագրգռութեամբ կարելի չէ որոշում տալ: Մեր նետելիք իւրաքանչիւր քայլի, օգտակար կամ վնասակար կողմերը ստիպուած ենք նկատի առնել: Եթէ մեր անձնական զգացումները, մեր սրտին մէջ վառող կրակը չահի մը նման բովանդակ երկրի մէջ պտըտցնենք, այդ կրակը այնպիսի հրդեհ մը կը ստեղծէ զոր չենք կրնար մարել: Նոյնիսկ չենք կրնար նախատեսել անոր վնաս հասցուցած տարածութեան սահմանը:

Հաւաքական կեանքի մէջ բարկութեամբ ոտքի ելլողները յետոյ վնասով կը նստին իրենց տեղը: Ուստի պէտք է որ մեր բարկութիւնը պահենք մեր սրտերուն մէջ, քանի որ խելքի ճամբէն միշտ ընթանալու մէջ է մեր օգուտը»:

×

Կիւնէշ Թրքական Թերթը կը հաղորդէ Մայիս 19-ի իր թիւով թէ Ապրիլ 1-ին, Անդարայի ոստիկանութիւնը ձերբակալած է Ժոզէֆ Գանլարեան անուն Հայ մը, որու համար կ'ըսուի թէ Ասալա–ի հետ կապեր ունի: Իր վրայ գտնուեր է Ապրիլ ամսուան օրացոյց մը...:

×

Մանուէլ վարդապետի դատավարութիւնը սկսած է եւ իրեն դէմ կը պահանջուի նուազագոյն 10 տարի բանտարկութիւն: Ներկայիս Պոլսոյ արուարձաններէն՝ Հաստալի զինուորական բանտը կը գտնուի:

ՊԱՐԱՃԱՆՈՎԻ ՇՈՒՔԸ

ՔԱՆՆԻ ՓԱՌԱՏՈՂ

=———=———=

Խորհրդային ոչ մէկ ժապաւէն կը ներկայացուի ոչ պաշտօնական յայտագրին մէջ, ոչ ալ՝ քովընտի: Սովեթ-փորթի Ֆրանսական ճիւղին «ընկեր - նախագահը» ինչպէս կը դրէ Լիպերասիոն, յայտարարած է թէ ինչ որ ներկայացուցած են ընտրող յանձնախումբին, մերժուած է: Եղածն այն է որ ինչ որ Քաննի փառատօնի ուզած է՝ Պարաճանով, գոնէ Տարտովսկի չէ տրուած: Պարաճանովի մասին, ահա թէ ինչ կը պատասխանէ «ընկեր - նախագահը» երբ իրեն հարց կը տրուի անոր մասին.-

«Այդ հարցը դիս բնաւ չի ջղագրգռեր, հակառակ անոր որ այդ անձը դիս շատ չի հետաքրքրեր: Անճնապէս, երբ մարդ մը անհաճոյ է, ինչ որ ընէ անհաճոյ է ինծի: Կ'ըսուի թէ կրկին դատապարտուելու վտանգին տակ է, մեր երկրին օրէնքներուն դէմ գործած արգիլուած ապրքներու համար, բայց ճշդրիտ ոչինչ գիտեմ: Անճնապէս կը խորհիմ որ իւրաքանչիւր անձ իրաւունք մը թէ մանկավարժ է եւ թէ բժիշկ: Մանկավարժ մը չի կրնար դասարան մտնել ախտաւոր զգալիարներով: Բժիշկ մը չի կրնար գործողութեան սրահ մտնել աղտոտ ձեռքերով: Ատոր համար, կը խորհիմ որ Սերգէյ Պարաճանովի չի կրնար լաւ սինեմա ըստեղծել»...:

×

Նման խօսքեր, անշուշտ ոչ մէկ խորհրդածութեան կրնան դուռ բանալ: Հինդշաբթի օր, սակայն, փառատօնի պալատին առջեւ ցոյց մը տեղի կ'ունենար պաշտօնապէս Պարաճանովի եւ «Արտայայտութեան ազատութեան օրեր»ու առթիւ ալ կը ներկայացուէին իրմէ երկու ֆիլմեր՝ Այս աշխարհի մէջ եւ Սայաթ - Նովա:

ԿԱՆԱՉ ՄԸ ԱՆՑՆԱԼ

Կանչ մը անցնալ, որ Մեծն – Բրիտանիա, ինչպէս կը սպասուէր, յարձակման անցաւ եւ առաջին ցամաքահանումը գործադրեց Սան Գարլոս նաւահանգիստը: Այս գործողութենէն սկսեալ, ոչինչ կարելի է ճշդրիտ դիտնալ, քանի ըստ աղբիւրին (Լոնտոն թէ Պուէնոս - Այրէս) զոհերը կը տարբերին: Անգլիացիք, հետզհետէ, Տիկին Թաչըր գինուորական ուժերը կը նկատէ «աշխարհի ամէնէն դաշալիները», որոնց քաջութիւնն ու ճարպիկութիւնը նոր հպարտութիւն մը առած են երկրին եւ հասկցուցած թէ խակապէս միայն մէկ ընտանիք են:

Անգլիական հաշուեկշիռը ցամաքահանումէն ի վեր հետեւեալն է, ըստ բրիտանական աղբիւրներու.- 48 մեռեալ կամ անհետացած, 55 վիրաւոր, երկու թռան վար առնուած են, Առտնին ֆրէկաթը ընկղմած է եւ չորս ուրիշ նաւեր՝ վնասուած:

Աւժանթինեան կորուստները են՝ 20 օդանաւ վար առնուած, մէկ նաւ ալ ծանր վնաս կրած է: Այս ալ անգլիական աղբիւր է: Պուէնոս - Այրէս իր վնասներուն համար, հետեւեալ հաշուեկշիռը կուտայ՝ 6 օդանաւ եւ 3 թռան, թիւ չի տար սակայն զոհերու մասին:

Անաւասիկ պատերազմ մը, որու ոչ ոք կը պատկր և սկիզբէն իսկ բուռն բնոյթ առած է: Ինչ որ ալ ըլլայ արդիւնքը և նոյնիսկ եթէ Անգլիա յաղթէ, այդ յաղթանակը առժամեայ բնոյթ պիտի ունենայ: Ինչ որ ըլլան Աւժանթինի «պատմական» իրաւունքները կամ «իրաւական» պատճառաբանութիւնները, կը մնայ որ ինք է յարձակողը, ընդունելով հանդերձ թէ Անգլիա տասնեւեօթը տարի է կը ձգձգէ խօսակցութիւնները: Ուշ կամ կանուխ Անգլիա պիտի ստիպուի կղզին Թոզուլ լաւին ամերիկեան պետութեան մը, թանկն՝ պատմութեան եւ աշխարհագրութեան: Ամէն պարագայի մէջ, կացութիւնը շատ փափուկ է, օրքան ալ Եւրոպան եւ Միացեալ - Նահանգները Անգլիոյ կողքին ըլլան, պէտք է նաեւ զգոյշ ըլլան, որ կապը չխզեն լատին - Ամերիկայի հետ, որ կրնայ Մոսկուայի դիրկն իյնալ, այս առթիւ: Քանի մը երկիրներ արդէն յայտարարած են թէ պատրաստ են կռուելու Աւժանթինի կողքին:

Ներկայիս, ուրեմն, եռանիքն ձէֆը (Անգլոյ դրօշակը) կը ծածանի Սան - Գարլոս, որ կամրջագլուխ մըն է ներկայիս, Մալուինները արեւելեան կողմը, փորթ - Սթանլիէն 80 քիլոմեթր հեռաւորութեամբ: Բնակչութիւնը՝ 30 հոգի, բաժնուած ութ տուներու մէջ:

× Վնասեցուելա, որ ուխտիի աշխարհի մեծագոյն ներածողներէն մէկն է, արդիլած է այդ ըմպելին պաշտօնական ընդունելութեանց եւ կառավարական ապասարկութեանց մէջ, Մալուինները պատերազմին պատճառով: Տեղը պէտք է ռոմ կամ գարեջուր խմել...:

×

Մանուէլ վարդապետի դատավարութիւնը սկսած է եւ իրեն դէմ կը պահանջուի նուազագոյն 10 տարի բանտարկութիւն: Ներկայիս Պոլսոյ արուարձաններէն՝ Հաստալի զինուորական բանտը կը գտնուի:

ԶՐՈՑՑՆԵՐ ՀԱՑ ԹՈՂՈՎՈՒՐԴԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

«ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՊՐԵԼՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ ԱՊԱՀՈՎԵՑ...»

(Բ. եւ վերջին մաս)

Այս բոլորէն կը պարզուի, որ Տիգրան Բ.ի 10 - 15 տարիներուն նուաճումներուն չնորհիւ բաւական ընդարձակուած էին Մեծ Հայքի թագաւորութեան քաղաքական ազդեցութեան շրջանները: Եթէ նկատի առնենք, որ հիւսիսը Տիգրանին ենթակայ էին Վիրքն ու Ալուանքը, ապա դժուար չէ պատկերացնել սահմանները այն հզօր իշխանութեան, որ կ'ներկայէր Կովկասեան լեռնաշղթային մինչեւ Ցոր - դանան գետ եւ Կասպից ծովու հարաւային ափերը ընդգրկող Ատրպատականէն մինչեւ Միջերկրականի ափերը: Այս ընդարձակ տարածութեան զանազան կէտերուն անհրաժեշտ էին արքայանիստներ, որոնք ստեղծուեցան: Կը բաւէ նշել, որ բացի Մեծ Հայքի մայրաքաղաք Արտաշատէն, զոր ժառանգած էր իր նախորդներէն եւ Անտիոքէն, որ չուրջ երկու տասնամեակ գահանիստն էր նուաճուածներու բարի կամքով, արքայից արքայ Տիգրան բուն Հայաստանի մէջ կառուցանեց չորս քաղաքներ, նոյն Տիգրանակերտ անունով: Առանցմէ ամէնէն մեծն ու ամէնէն բարգաւաճը կը դառնար Աղձնիք նահանգը, Տիգրիսի վտակ Նիկեփորիոնի հովիտը: Միւսները՝ Արցախ, Ուտիք եւ Գողթն: Հարաւային Տիգրանակերտը, հաւանաբար, նախատեսուած էր դարձնել Հայոց գլխաւոր արքայանիստը եւ ոչինչ կը խնայուէր անոր համար՝ ոչ հարստութիւն, ոչ մարդկային ուժ: Այս առթիւ յոյն մեծ աշխարհագէտ Սարաբոն կը տեղեկացնէ, թէ Տիգրան «այնքան զօրացաւ, որ քաղաք հիմնեց ... զայն կոչելով Տիգրանակերտ: Ան հոն վերաբնակեցուց իր իսկ ազերած հելլենական 12 քաղաքներու բնակիչները»: Ծանօթ է, որ Տիգրանի օրով Հայաստանի հին ու նոր քաղաքներուն մէջ կը վերաբնակէին ոչ միայն հելլէն - յոյները, այլեւ նուաճուած երկիրներու ասորի, հրեայ եւ զանազան այլ խումբեր ներկայացնող տասնեակ հազարաւոր բնակիչներ, որոնցմով Հայոց արքան նպատակ ունէր իր երկրին մէջ զարգացնել արհեստները, առեւտուրը, տնտեսութեան ու մշակոյթի տարբեր կալուածները: Այս բոլորի չնորհիւ ալ առաւել թափով Մեծ Հայք կը թափանցէ հելլէն մշակոյթը, որ իր խոր ազդեցութիւնը պիտի տարածէր հայկական կեանքի լայն շրջանակներուն վրայ՝ ապրելակերպէն մինչեւ թատրոն եւ արուեստի միւս ճիւղերը: Կարեւոր է նշել, որ Տիգրան այդ բանը չէր ընել նուաճուած երկիրներու մէջ նոյն ճիւղերը խթանելու կամ յետամնացութեան դատապարտելու զնով, ինչպէս անոր մասին յաճախ կը գրէին հելլէն ժամանակագիրները: Կը բաւէ յիշել թէկուզ նոյն հեղինակներու ակամայ այն խոստովանութիւնը, զոր կատարած են Սելեւկիա - Ասորիքի վերաբերեալ: Կ'ըսեն՝ Տիգրան, Անտիոքի դահին տիրանալով, պահպանեց սելեւկեան քաղաքներու անկախ վիճակը: Իսկ Լաոդիկիան եւ Պէրիթը (Պէյրութ) Տիգրանի տիրապետութեան ժամանակ ստացան «ազատութիւն» կոչուող այն լայն ինքնավարութիւնը, որմէ անոնք զրկուած են Սելեւկեաններու օրով: Եւ, ի նշանաւորումն Ն. Ք. 81-ին Տիգրանէն ստացած ազատութեան, Պէրիթ եւ Լաոդիկիա ըստեղծեցին իրենց քաղաքային տոմարը, որուն սկիզբը ընդունուեցաւ այդ 81 թուականը: Այնուհետեւ այդ տոմարով կը թուագրուէին երկու քաղաք - պետութիւններու կարած դրամները:

Մեծն Տիգրան, այսպէսով, ժամանակի մեծագոյն պետական գէմքերէն մէկն էր, հայկական Պետութեան հզօր վերելքի հեղինակը: Ան ոչ միայն ամրապնդեց իր նախորդներու ստեղծած միասնական հայկական Պետութիւնը, այլեւ անոր քաղաքական ազդեցութեան տակ առաւ դրացի երկիրները: Եւ հասկնալի է, որ այս բոլորը պէտք չէ հանդիսատ ձգէին Հռոմէական տիրապետութիւնը, որ հետզհետէ զօրանալով ու ծաւալելով, նպատակ ունէր աւելի ծանր նստելու Փոքր Ասիա եւ արեւելքի միւս երկիրները:

Հռոմի ու Տիգրանի բախման առիթ տրուեւ այն՝ որ Հռոմի դէմ կռուող Միհրդատ Պոնտացի՝ Տիգրանի աներհայրը, պարտուելով հռոմէական բանակներէն, ապաստանած էր Հայաստան, եւ Տիգրան զինք չէր յանձներ թշնամիին, որ կ'ուզէր յանդուգն Պոնտացին տանիլ Հռոմ՝ ցուցադրելու համար կազմակերպուելիք յաղթանակի հանդէսին: Այսքանը կատարուած էր մինչեւ Ն. Ք. 69 թուականը: Եւ ահա 69-ի գարնան, երբ Տիգրան կը դանուէր իր իշխանութեան հարաւը, ուր իր զէրքերը կ'ամրապնդէր, կը հասնի հռոմէացի զօրավար Լուկուլլոսի Հայաստան արշաւելու լուրը: Անկասկած, Լուկուլլոսէն առաջ անոր մարդիկը թափանցած էին Մեծ Հայք եւ Տիգրանին ենթակայ երկիրները: Անոնք կաշառքով ու դաւերով իրենց կողմը քաշած էին Կապադովկիոյ, Ծովքի ու յարակից չրջաններու տէրերը եւ նախապէս ապահոված հռոմէական զօրքի անարգել երթը դէպի Մեծ Հայքի սիրտը: Եւ պատահական չէր այն պիւրին ընթացքը, որով Լուկուլլոս հասաւ Տիգրանակերտ ու պաշարեց Հայոց նորակերտ թագաւորանիստ քաղաքը:

Աւելի քան վեց ամիս տեւեց պաշարումը: Այս ընթացքին Տիգրան յաջողեցաւ փոքր բանակով մը ճեղքել Հռոմէացիներու չղթան, մտնել քաղաք եւ ապահովել հոն գտնուող իր կանանոցն ու արքայական գանձերը: Ցետոյ քաղաքէն դուրս տեղի ունեցած ճակատամարտին ան տարաւ բազմաթիւ զոհեր ու հեռացաւ Ար - տաշատ՝ երկրի բոլոր ուժերը հաւաքելու եւ նոր ու վճռական մարտի նետուելու համար:

Տիգրանկերտը ինկաւ վեցամսեայ հե - րոսական պաշտպանութենէ ետք: Ժամանակակից պատմիչները կը վկայեն, որ Լուկուլլոսին առջեւ քաղաքին դռները բացած էին դատաճան օտարները եւ Հռոմի անապարհ զօրավարը նախ կողոպտած, ապա քանդած է Տիգրանի պերճաշուք քաղաքը:

Իսկ Արտաշատի մէջ այդ ժամանակ Տիգրանի հետ խորհրդակցութեան նստած էր անոր քոյր ու փորձառու աներհայրը՝ Միհրդատ Եւպատոր: Անոնք որոշեցին մեծ զօրահաւաքով երկիրը ոտքի հանել ընդդէմ հռոմէական բանակներու: Տիգրան յաջողեցաւ պատերազմի հանել ոչ միայն բուն Հայաստանի, այլև Վիրքի, Ալուանքի, Ատրպատականի ու միւս ենթակայ դրացիներու ուժերը: 66 թուականին ընդառաջ ելլելով Արտաշատը նուաճելու նպատակով Մծբինէն դէպի հիւսիս չարժուող Լուկուլլոսին, Տիգրան ճակատամարտ մղեց Արածանիի վրայ եւ թշնամիին ստիպեց բռնել նահանջի ճամբան: Այնուհետեւ Տիգրան յաջողեցաւ Հռոմէացի - ները դուրս հանել իր երկրի հարաւային չրջաններէն: Նոյնիսկ վերադրաւեց Կապադովկիան: Անոր բանակներուն օժանդակութեամբ Միհրդատն ալ Պոնտոսը ազատագրած էր թշնամիներէ:

66 թուականին Հայաստան եկաւ հռոմէական բազմահազարանոց նոր բանակ մը՝ զօրավար Պոմպէոսի գլխաւորութեամբ: Տիգրանի հետ չէր այլեւս Միհրդատ Պոնտացին: Պոմպէոսի բանակը դէպի Ար - տաշատ կ'առաջնորդէր Հայոց թագաւորի դաւաճան որդին՝ Տիգրան կրտսեր, որ նախ Պարթեւաց թագաւորի գիրկը նետուած էր՝ անոր օժանդակութեամբ հայրը տապալելու եւ Հայոց գահին տիրանալու համար: Եւ հիմա ալ նոյն նպատակով իր ծառայութիւնը կը մատուցանէր հռոմէացի նուաճողին:

Այս պայմաններուն մէջ Տիգրան Բ. կը նախընտրէ հաշտութիւնը եւ բանակցութիւնները կը սկսի Պոմպէոսի հետ: Կընքուեցաւ հաշտութիւնը, որով Հայաստանի թագաւորութիւնը կը զրկուէր նուաճած երկիրներու մեծ մասէն (Ասորիք, Փիւնիկիա, Կիլիկիա), սակայն կը պահպանէր իր ամբողջութիւնը՝ դառնալով, ինչպէս դաշնագրին մէջ նշուած էր, «Հռոմէական ժողովուրդի դաշնակից ու բարեկամ», որ նոյն ժամանակի տիրող - ներու լեզուով կը նշանակէր, թէ Հայաստան իր արտաքին քաղաքականութեամբ մասամբ պէտք է հետեւէր Հռոմի:

Այնուհետեւ Մեծն Տիգրան չուրջ տասնամեակ մըն ալ գահակալեց՝ ապահովելով երկրին կերպով կը զօրացնէին: Պարսկական ահռելի սպառնալիքին ալ կը զօրացնէին: Վաղ պատրաստելով Պարսկաստանի ահռելի բանակին, ամէն չաթիռ երդնակ - չէն եւ Էրզրումէն նոտրան զինուորներ կը հաւաքէին Վան, եւ կ'ուզարկուէին մանագլուխ: Եզաւ ժամանակ մը որ Վանի մէջ հաւաքուած էին 10.000-է առնի զօրքեր:

Դաշնակցութիւնն ալ ամէն կերպ պատրաստութիւն կը տեսնէր ինքնապաշտպանութեան համար, որպէսզի յանկարծակիի չգար: Ռազմական զինուորներ, զինավարժութեան, նշանառութեան, դիրքապահութեան եւ այլ զինուորական մարզանքներով: Մատթէոսի հետ կ'այցելէին խումբերուն: Նա անոնց զինուորական մարզանքներ կուտար: Ինքը եղած էր ռուս բանակի զինուոր:

(Շար. 7)

ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ

Ընդհանրապէս, քէչ մը դիպուածները շատ կը խօսին, իսկ շատ դիպուածները քէչ կը խօսին:

ՌՈՒՍՕ

ԳԱՂՈՒԹԻՔ ԳԱՂՈՒԹ

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ «Ցակոբ Ծէր - Մեքքոնեան» սրահին մէջ, Մայիս 2-ին, տեղի ունեցած է Համազգայինի Պէյրութի մասնաճիւղին կազմակերպած դեղարուեստական մրցումին առաջին բաժինը: Բացումը կատարելով Բարեգ Թոփճեան յայտնած է, թէ օրուան մրցումը յատկացուած է հանդիսաւարութեան, արտասանութեան, պարի, պատրաստութեան եւ բանաստեղծութեան յօրինումի: Դատական կազմը ոչ մէկ բաժնի մէջ ոսկէ մետալի արժանի թեկնածու չնկատելով, արծաթէ եւ պրոնզէ մետալներով պարգեւատրած է մրցանակները:

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ «Ցակոբ Ծէր - Մեքքոնեան» սրահին մէջ, Մայիս 2-ին, տեղի ունեցած է Համազգայինի Պէյրութի մասնաճիւղին կազմակերպած դեղարուեստական մրցումին առաջին բաժինը: Բացումը կատարելով Բարեգ Թոփճեան յայտնած է, թէ օրուան մրցումը յատկացուած է հանդիսաւարութեան, արտասանութեան, պարի, պատրաստութեան եւ բանաստեղծութեան յօրինումի: Դատական կազմը ոչ մէկ բաժնի մէջ ոսկէ մետալի արժանի թեկնածու չնկատելով, արծաթէ եւ պրոնզէ մետալներով պարգեւատրած է մրցանակները:

ԴԱՒԻԹԻ
ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ԻՆՉՊԷՍ ՍՊԱՆՆԵՑԻ ԶԻՆՔԸ
Գրեց՝ ՏԱՃԱՏ

Ե.- ՓԱԽՍՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Մենք իրական տեղեկութիւն ունէինք որ թուրք զեկավարներ իրենց գաղտնի ժողովներու մէջ որոշած էին Հայերը կոտորել՝ յանկարծակիի բերելով զանոնք: Որոշած էին որ «երբ ազգանչան տրուի՝, Թուրքերը կարեն չուկայի ճամբան եւ յարձակելով չուկայի մէջ գտնուող տղամարդկանց վրայ կոտորեն զանոնք, իսկ Այդեհանի ժողովուրդի հաշիւը մաքրել աւակէ վերջ դիւրին պիտի ըլլար: Օրը չէր որոշուած, այլ ինչպէս ըսի, «տրուած ազգանչանի վրայ» պիտի ըսկսէին: Տեղեակ այս լրտղութեան՝ Հայերը զգուշութիւններ էին ձեռք առած: Փոքր խմբերով կ'երթեւեկէին գաղտնի զինուած տարճանակներով եւ զանազան տեսակի պաղ զործիքներով (սրրուիա) կօմփիլ, գաշոյն եւայլն:

Դաշնակցութիւնը տեղեկացուցած էր օտար հիւպատոսներուն Թուրքերու մը - տադրութեան մասին: Ռուս հիւպատոսը ամէնէն շատ հետապնդում կատարեց այս մասին: Այդ ժամանակները լուրեր կային ռուս - տաճկական պատահելիք պատերազմի մը հաւանականութիւններու մասին: Ռուսերը կ'ուզէին սիրաշահիլ Հայերը: Լաւ կը յիշեմ թէ իրիկուն մը՝ երբ Պարսից հիւպատոսը հիւրեր ունէր իր յարկաբաժնի մէջ, ես դաղտնի պահ - ուած մոիկ կ'ընկէի զիրենք՝ օգնութեամբը հիւպատոսի կաւազ Պետրոսին: Ներկայ էին բոլոր հիւպատոսները, կուսակալը, զօրքերու հրամանատարը: Ռուս հիւպատոսը հարց բարձրացուց պատահելիք կոտորածներու մասին, յայտնելով որ ինք տեղեակ է տրուած գաղտնի որոշումի մասին: Կուսակալը բացարձակապէս ուրացաւ, իսկ զինուորական հրամանատարը լուռ մնաց: Ռուս հիւպատոսը ընդհարեցաւ եւ ուզեց հեռանալ, բայց պարսիկ հիւպատոսը միջնմտեց, իսկ զինուորական հրամանատարն ալ խոստացաւ զինուորական խիստ հսկողութիւն կատարել որ որեւէ դէպք տեղի չունենայ: Զինուորականութիւնը ժամանակի փափուկ կացութիւնը նկատի առնելով՝ կը զգուշանար միջադէպեր առեզծելէ:

Մարտ 10-ին զաւաճանի սպանութեան առթիւ իմ վրաս տեղի ունեցած հարատարաւոր հրացանաձգութիւնները, թուրք խուժանին մոռածել կուտան որ «ազգանչանը» գտնուած է արուած», որով ճանապարհին կը սկսին կոտորել Հայերը:

Ռուս հիւպատոսը անմիջապէս կը փութայ զօրքերու հրամանատարին ծօտ, որ արդէն զինուորները դուրս էր բերած եւ արդիլած՝ կռիւը: Իրիկունը զիշերով հայ տղամարդիկ զօրքերու շղթաներով չըրջապատուած, ռուս հիւպատոսն ալ ետեւէն երթալով, կ'ուղեւորուին Այգեհան.

Ես փախստական կը պարտէի խումբերու հետ: Ամէն իրիկուն մեր գտնուած տունը կը փոխէինք: Մատթէոսը գիս իր հսկողութեան տակ էր առած եւ գիս եղբօր պէս կը սիրէր: Մեր այցելած տուները երբ բարեկեցիկ էին, մեզ կը հիւրասիրէին չատ լաւ, եւ ամէն հոզածութիւն կ'ընէին մեր հանգստին համար: Իսկ այն ընտանիքները որ ազքատ էին, մենք կուսակցութեան միջոցներով կ'ապրէինք: Մատթէոս չատ զգայուն եւ բարի սիրտ ունէր: Երբ որ հարուստի տուն կը գտնուէինք, այդ օրերու իրեն եւ ինձ հասնելիք դոմարները կը հաւաքէր եւ կուտար աղքատ ընտանիքներու:

Ինչպէս ըսի, պատերազմի չրուխներու պատճառաւ Թուրքեր զինուորական պատրաստութիւններ կը տեսնէին: Ռեվալի տեսակցութիւնը նոր էր տեղի ունեցեր եւ գիտէին որ իրենց գլխին փոթորիկ պիտի փրթէր: Ռուսական ճակատը տենդա-

ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

ՊԵՅՐՈՒԹ

Ապրիլ 24-ի ոգեկոչման առթիւ զոյ - ացած են հայկական բոլոր վարժարաննե - րը, գործադիրները եւ ղադրած է ամէն կարգի աշխատանք ու ժողովուրդը վու - շացած է եկեղեցիները: Ապրիլ 23-ին, հայկական բոլոր վարժարաններուն մէջ տեղի ունեցած են աշակերտական հան - դիսաւոր եւ գեղարուեստական յայտա - գիրներ: Լ. Ե. Մխիթեան անդամ - ան - հրամոհիները Ապրիլ 23-ին հսկում - հա - մաքով մը կատարած են «Լեւոն եւ Սո - ֆիա Յակոբեան» քոլէժի բակին մէջ: Ե - րիտասարդներ խօսք առած են, երգած եւ արտասանած հայրենասիրական ու յե - ղափոխական երգեր եւ բանաստեղծու - թիւններ:

ՅուլսիսանԷՏ

Հ. Ը. Դ. Լիբանանի Երիտասարդաց Միութեան «Հրայր Դժոխք» մասնաճիւ - ղի կազմակերպութեամբ յուշահանդէս մը բացուած է Հայաշէնի ժողովրդային Տունը, ուր ներկայացուած են Եղեռնի մասին փաստաթուղթեր, դծագրութիւն - ներ, պիրքեր, նկարներ, քարտէզներ եւ - այլ նիւթեր: Ապրիլ 23-ին, բացման օրը, յուշադրուած են լուսապատկերներ պատ - մական Հայաստանէն եւ Կիլիկիայէն: Ապրիլ 24-ի երեկոյեան ցուցադրուած է Հանսցիներու կողմէ պատրաստուած փաստանկար մը, որ կը ներկայացնէ Ե - ղեռնը, անկախութեան համար Հայոց ազգ պայքարը, մշակութային արժէք - ները, ինչպէս նաեւ Հայութեան ներկայ վիճակը: Ապրիլ 25-ի երեկոյեան, նախ ցուցադրուած է «Սրարատի ժողովուրդը» անդիերէն ժապաւէնը, ապա՝ գերմաներ - էն խօսուն փաստանկար վիտէօ մը:

Հսկում՝ Պիէֆիայայի

ՅուշարձանիՆ առջեւ

Ապրիլ 23-ի երեկոյեան, Պիէֆիայայի Ապրիլեան Ցուշարձանին առջեւ տեղի ու - նեցած է Հսկումի արարողութիւն մը, նախաձեռնութեամբ Դպրեվանքի տեսչու - թեան: Մասնակցած են նաեւ Հ. Մ. Ը. Մ. Միութեան խմբապետական կազմէն 35 գոյրեր ու եղբայրներ: Ցու - շարձանին տակ գետեղուած խաչքարը վերծուած է խորանի, ուր պատարա - գած է տեսուչը՝ Տաթեւ Աբք. Սարգիս - եան: Ցաւարտ եկեղեցական արարողու - թեան, խօսք առնելով Հ. Մ. Ը. Մ. Միու - թեան ընդհանուր խմբապետ եղբ. Ներսէս Տիրիկեան անդրադարձած է սկաուտու - թեան գերին հայ կեանքին մէջ: Գարե - գին Բ. Աթոռակից Կաթողիկոս իր խօս - քին մէջ նշած է. «Ամէն անգամ, երբ այս Ցուշարձանին կը նայիք, անդրադարձէ՛ք որ ասիկա նահատակներու յուշարձան չէ: Ասիկա, ողջերու հաւատարմութեան նը - շանն է: Նահատակներու յուշարձանը Ան - թիլիասին է: Անթիլիասի մէջ, 42 տա - րիներ առաջ, մեր հայրերը ոսկորները թաղեցին, որպէսզի մենք՝ իրենց զա - ւակները, այս ժայռի բարձունքին՝ վե - րակենդանութեան, վերածագկումի, վե - րազարթօնքի այս արձանը կանգնենք: Այս ձերն է. ձեզ յիշեցնող այն հրամա - յական պարտաւորութիւնը, որ այս ժո - ղովուրդը չի թաղուիր, այլ այսպէս կան - գնուն՝ դէպի երկինք եւ դէպի ապագայ կը նայի»: Հսկումի աւարտին Դպրեվանքի ուսանողները մեկնաբանած են «Կի - լիկիա», «Տալորիկ», «ով Հայոց աշ - խարհ» եւ «Ցառաջ նահատակ» երգերը:

Ուսանողական հաւաքոյթներ

Ապրիլ 23-ին տեղի ունեցած են ուսա - նողական հաւաքոյթներ Պէյրութի Ամե - րիկեան Համալսարանին եւ Հայկազեան Քոլէժին մէջ: Ժամը 10-ին, շուրջ 300 հայ ուսանողներ հաւաքուած են Ամերիկ - եան Համալսարանի մուտքի աստիճան - ներուն վրայ եւ արդարութիւն պահան - ջող կոչերով ուշադրութիւնը գրաւած են անօրէնութեան, դաշնախօսներուն եւ զա - նազան ազդութիւններէ հազարաւոր ու - սանողներուն: Ցօսք առած են հայ թէ օտար ուսանողներ եւ արտայայտուած ի նպաստ հայ ժողովուրդի ազգային եւ մարդկային պահանջներուն: Ցատկանշա - կան եղած է Ամերիկեան Համալսարանին մէջ ուսանող թուրք երիտասարդի մը խօսքը, ան յայտնած է, թէ «հարիւր առ հարիւր թիկունք կը կանգնի Հայկ. Դա - տին» եւ թէ պատրաստ է հրապարակաւ յայտնելու իր այդ կեցուածքը: Ուսա - նողները պաստառներով եւ կոչեր արձա - կելով ցոյց մը կատարած են Համալսա - րանին մէջ եւ ուղղուած «Ուեսթ Հոլ» սը - րահը, ուր դասախօսութիւն մը տուած է Համալսարանի ամերիկացի փրոֆէսէօր - ներէն Ճոն Մ՚նրօ, որ համառօտ ակնարկ մը նետելէ ետք հայ ժողովուրդի պատ - մութեան վրայ խօսած է Հայերու դէմ Թուրքերու կատարած ցեղասպանութեան մասին:

Հայկազեան քոլէժին բակը տեղի ու - նեցած հաւաքոյթը կազմակերպած են Հ. Ց. Դ. Ջաւարեան Ուսանողական Միութիւնն ու Հնչակեան Կուսակցու - թեան Ուսանողական Միութիւնը: Հըն - չակեան Ուսանողութեան ներկայացուցի - չը տուած է պատմականը Թրքական հա - յոյնչ քաղաքականութեան, անդրա - դարձած է Իթթիհատ կուսակցութեան դաղտնի որոշումներուն եւ անոնց գոր - ծադրութեան: Ցօսելէ ետք մեծ Պետու - թիւններու եւ ՄԱԿ-ի ցուցաբերած ան - տարբերութեան մասին՝ Հայկ. Դատին նկատմամբ, նշած է, թէ «Հայկ. Դատ հետապնդելու ճամբուն վրայ, հայ երի - տասարդութիւնը ամբողջ սիրտով տա - րածքին արդիական եւ գիտական նոր ու - ղիներ կ՚որոնէ: Ծրագրուած նման աշխա - տանքներուն, անկասկած կ՚ընկերանայ նուիրումի, զոհողութեան եւ յեղափոխա - կան ոգին: Ազգային ազատագրական պայքարի բովէն անցած մեր ժողովուրդը այսօր եւս վճռած է պայքարիլ անկա - խանջ»: Հ. Ը. Դ. Ուսանողներու ներկա - յացուցիչը անդրադառնալէ ետք ցեղաս - պանութեան հետեւանքով կազմուած ըս - փիւռքին եւ անոր ներկայ վիճակին, ը - սած է. «Գաղափարական մեր ուղին կ՚ա - ռաջնորդուի առանձնաբար հայ մարդու ազատ եւ բազմակողմանի զարգացման ու մեր ժողովուրդի ազգային թէ միջազգա - յին ազատագրութիւնը նուաճելու ներ - չնչումով: Աւելի քան 90 տարիէ ի վեր գաղափարական պայքարի մեր դրօշին վրայ արիւնով գրուած վճիռ է արդէն, որ միայն իր պատմութեան մայր հունը վերանուաճելով՝ հայ ժողովուրդը կրնայ ապահովել իր ազգային քաղաքական ինք - նուրոյն զարգացման ենթահողը, միայ - եալ ու անկախ հայրենիքի եւ մէկ ու վե - րամիաւորեալ Հայութեան պատասանե - նին վրայ»: Լիբանանի հեռատեսիլը անդ - րադարձած է զոյգ ձեռնարկներուն:

Պատարագ եւ հոգեհանգիստ

Լիբանանի հայկական բոլոր եկեղեցի - ներուն մէջ Ապրիլ 24-ին կատարուած են պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն: Անթիլիասի Մայր Տաճարին մէջ պատա - րագած է Տաթեւ Աբք. Սարգիսեան: Նա - հատակաց Մատուռին մէջ, ուր կը գըտ - նուին նահատակներու աճիւնները, հոգե - հանգստեան պաշտօնէն ետք պատգամ մը տուած է Գարեգին Բ. Աթոռակից Կաթո - ղիկոս: Ցաւարտ եկեղեցական արարո - ղութեանց զանազան միութիւններու ներ - կայացուցիչներ ծաղկեպսակներ դրած են նահատակներու աճիւններուն մօտ, Հ. Մ. Ը. Մ.ի նուագախումբի հնչեցու - ցած սուգի մեղեդիներուն առընթեր: Ներկայ եղած է հազարաւոր բազմութիւն մը:

Ոգեկոչում

Պուրճ Համուտի «Ցակոբ Տէր - Մելքոն - եան» սրահին մէջ Ապրիլ 24-ին տեղի ու - նեցած է ոգեկոչման ցերեկոյթը, կազ - մակերպութեամբ Հ. Մ. Ը. Մ.ի Շրջ. Սկաուտական Խորհուրդին: Բացումը կա - տարած է եղբ. Կարօ Թիւթիւնճեան: Գե - ղարուեստական յայտագիրը ամբողջու - թեամբ նուիրուած է Կոմիտասի գործե - րուն եւ Պարոյր Սեւակի «Անտեղի Զան - գակատուն»ին, հատուածներ զոր ար - տասանած է (2 ժամ) Ցակոբ Կիւլոյեան: Փակման խօսքը արտասանած է եղբ. Երուանդ Տէմիրճեան:

Հայկ. Դատի շուրջ ընդհանուր զարգացման մրցում

Ապրիլ 30-ին, «Ցակոբ Տէր - Մելքոն - եան» սրահին մէջ տեղի ունեցած է ընդ - հանուր զարգացման մրցում մը՝ «Հայկ. Դատը ԺԲ. դարէն մինչեւ մեր օրերը» նիւթին շուրջ, կազմակերպութեամբ Հ. Ց. Դ. Լ. Ե. Միութեան: Մասնակցած են հայկական ութ վարժարաններէ աշա - կերտներ, որոնց լեցուցած 22 հարցում - ներէ բաղկացած հարցարանը ընդգրկած է Զէյթունի առաջին ապստամբութիւնը, Սան Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագը - րերը, կուսակցութիւններու կազմութիւ - նը, ազգային ազատագրական պայքարը, Հայաստանի Հանրապետութեան ստեղծու - մը, կնքուած դաշնագրերը, Սեւրեւդի կա - ցութիւնը եւ հայկական ահաբեկչութիւ - նը: Մրցումը տեւած է երկու ժամ, որու աւարտին բաժնուած են մրցանակները: Առաջին հանդիսացած է Այնճարի «Ցա - ռաջ» քոլէժը, երկրորդ՝ Սուրէն Ցանա - միրեան» եւ երրորդ՝ «Լեւոն եւ Սոֆիա Ցակոբեան» վարժարանները:

Եղեռնի ոգեկոչումը Ճիպէյլի մէջ

Ճիպէյլի ծովեզերքը ծուարած հայկա - կան գաղութը, որ կը հաշուէ շուրջ 60 ընտանիքներ, այս տարի ոգեկոչած է Ապրիլեան Նահատակաց յիշատակը: Հա - յերը բոլորուած են Թռչնոց Բոյնին, Հ. Մ. Ը. Մ.ի, Լ. Օ. Ցաչի եւ Հ. Ց. Դ. Լ. Ե. Միութեան «Արարատ» կոլիզին շուրջ: Ապրիլ 22-ին, «Հայ Կեդրոն»ին մէջ տեղի ունեցած է ցեղասպանութեան նուիրուած ցուցահանդէս մը, ուր ներ - կայացուած են հայկական յեղափոխա - կան թենդէ մինչեւ մեր օրերուն վերաբերող նիւթեր՝ նկար, փաստաթուղթ, ազդ եւ - այլն:

Ապրիլ 23-ի երեկոյեան հաւաքոյթին բացումը կատարած է Թորոս Մանուչ - եան, ձեռնարկը նկատելով անկիւնադարձ մը Ճիպէյլի Հայութեան կեանքին մէջ: Բանախօսած է Ցակոբ Բազբասունի անդ - րադառնալով Եղեռնի քաղաքական պատ - ճառներուն, եղանակին եւ ներկայացու - ցած է հայ ժողովուրդի ներկայ կացու - թիւնը եւ անոր պարտաւորութիւննե - րը:

ՄԵՐ ՆԱԽՆԵԱՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՕՐԷՆՔՆԵՐԷՆ

ԱՄԷՆ ԿԱՐԳԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐՈՒ ԽԱՐԴԱԽՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Ամէն կարգի արհեստաւորներ, ինչ ար - հեստով ալ որ զբաղին, հատի գլուխ աշխատող ըլլան թէ գործատէր, երբ պա - հանջքին համապատասխան չպատրաս - տեն կամ նիւթը փճացնեն, ըստ օրէնքի, պէտք է տիրոջ ուշած ձեւով գարձեալ պատրաստեն կամ պատճառած վնասը ամբողջովին հատուցանեն, յետոյ միայն իրենց լրիւ աշխատավարձքը առնեն, այլապէս՝ իրենց վարձքէն համապատաս - խան չափով պէտք է հասցուցած վնասի դումարը հանել: Դատաւորները ինչպէս որ յարմար կը գտնեն, թող այդպէս ալ ընեն:

Իսկ եթէ նիւթը գողնան, օրէնքին հա - մապատասխան, պէտք է հատուցանեն եւ կորսուած չափով վճարեն:

կերտներ, որոնց լեցուցած 22 հարցում - ներէ բաղկացած հարցարանը ընդգրկած է Զէյթունի առաջին ապստամբութիւնը, Սան Սթեֆանոյի եւ Պերլինի դաշնագը - րերը, կուսակցութիւններու կազմութիւ - նը, ազգային ազատագրական պայքարը, Հայաստանի Հանրապետութեան ստեղծու - մը, կնքուած դաշնագրերը, Սեւրեւդի կա - ցութիւնը եւ հայկական ահաբեկչութիւ - նը: Մրցումը տեւած է երկու ժամ, որու աւարտին բաժնուած են մրցանակները: Առաջին հանդիսացած է Այնճարի «Ցա - ռաջ» քոլէժը, երկրորդ՝ Սուրէն Ցանա - միրեան» եւ երրորդ՝ «Լեւոն եւ Սոֆիա Ցակոբեան» վարժարանները:

Եղեռնի ոգեկոչումը Ճիպէյլի մէջ

Ճիպէյլի ծովեզերքը ծուարած հայկա - կան գաղութը, որ կը հաշուէ շուրջ 60 ընտանիքներ, այս տարի ոգեկոչած է Ապրիլեան Նահատակաց յիշատակը: Հա - յերը բոլորուած են Թռչնոց Բոյնին, Հ. Մ. Ը. Մ.ի, Լ. Օ. Ցաչի եւ Հ. Ց. Դ. Լ. Ե. Միութեան «Արարատ» կոլիզին շուրջ: Ապրիլ 22-ին, «Հայ Կեդրոն»ին մէջ տեղի ունեցած է ցեղասպանութեան նուիրուած ցուցահանդէս մը, ուր ներ - կայացուած են հայկական յեղափոխա - կան թենդէ մինչեւ մեր օրերուն վերաբերող նիւթեր՝ նկար, փաստաթուղթ, ազդ եւ - այլն:

Ապրիլ 23-ի երեկոյեան հաւաքոյթին բացումը կատարած է Թորոս Մանուչ - եան, ձեռնարկը նկատելով անկիւնադարձ մը Ճիպէյլի Հայութեան կեանքին մէջ: Բանախօսած է Ցակոբ Բազբասունի անդ - րադառնալով Եղեռնի քաղաքական պատ - ճառներուն, եղանակին եւ ներկայացու - ցած է հայ ժողովուրդի ներկայ կացու - թիւնը եւ անոր պարտաւորութիւննե - րը:

ՍՊԻՏԱԿ ՁԻԱՒՈՐԸ

= ՀԱՄԱՍՏԵՂ =

ՄԱՍ ՁՈՐԲՈՐԴ

ԴԷՊԻ ԳԱՐԱՏԱՂԻ ԼԵՌՆԵՐԸ

Կիրոս, իր փորձառութիւնով աւելի ապահով գտած էր ոեւէ գաղտնի բան, աղմուկին, ժողովուրդին մէջ, քան ամա - լի ու առանձին վայրերը: Կը հաւատար, որ քուրջին մէջ ծրարուած ոսկին աւելի ապահով է քան գեղեցիկ տաւարին մէջ դրուած: Կիրոս յաճախ տեսած էր հոն, ծառերուն տակ, առանձինն խումբեր կ՚ապահովէր մարդիկ զրոյց կ՚ընէին ասոդերուն տակ եւ կամ հէք - նաթ կը պատմէին: Եթէ լաւ երգող մը ըլար՝ անոր շուրջ կը հաւաքուէին:

- Ինչ կ՚ըսես, Ցալիլ, գիտե՞ս ինչքա՜ն վտանգաւոր է գինարանը մտնել: Մեզի համար տակաւին չատ կանուխ է նման արկածախնդրութեան մէջ իյնալ: Նոր սկսած չարժում մը արդէն խեղդել կ՚ուզենք, - կը խօսէր Ալին, երբ Ցալի - լին հետ առանձինն մնացին ու Ցալիլ պարզեց Կիրոսի գործակցութեան բնոյ - թը:

- Բայց ես կը զարմանամ Ալի: Մէկ կողմէն կ՚ընդունիս, որ գործակցութիւ - նը անհրաժեշտ է: Ֆէտայիները նման վտանգներու մէջ է որ կը գործակցին: Այո՛, այո՛, մենք դեռ պէտք եղած ուժը չունինք: Գարափունարի մէջ մեր թիւը հազիւ 10 հոգի է:

«Ինչո՞ւ չես ուզեր հասկնալ, որ ան մեր աջակցութիւնը կ՚ուզէ: Դուն լաւ գիտես, որ անոնք գլուխ կը բերեն գործ մը երբ մտքերնին դնեն: Կրնա՞ս երե - ւակայել, Ալի, որ Կիրոսին պէս մէկը ուզէ գաղտնի աշխատանքներուն մէջ մե - զի օգտակար ըլլալ: Իրականին մէջ մենք չատ գործ չունինք ընելիք, երբ այս գործին մէջ պիտի մտնէ նաեւ երե - ւանցի Մալխասը»:

Ալին ինչքա՜ն ալ առարկէր, արդէն կը զգար որ ինք եւս կարեւոր մէկը կը դառնար երբ գործին մէջ կային Չէրչի Կիրոսն ու երեւանցի Մալխասը:

- Զգիտեմ, Ալի, մանրամասնութիւն - ները ինծի ծանօթ չեն տակաւին, Չէրչին խորհրդաւոր ձեւով մը ըսաւ, որ կը - նայ սանձել Սասօն եւ խօսիլ Հաճի Մու - սայի հետ:

- Հաճի Մուսային հետ խօսիլը խելքի բան չէ, Ցալիլ, երբ դեռ երէկ ան Թուր - քերուն հետ միասին Վարդաճորի կռուին մէջն էր:

- Բայց ան կ՚ուզէ տեսնուիլ անոր հետ: Այդ իր գիտնալիք գործն է որ մեզի ծա - նօթ չէ դեռ: Վերջապէս, Ալի, պէտք է ընդունինք, որ թշնամիներով չրջապատ - ուած ենք: Քիւրտ ցեղապետները կրնան ոեւէ տեսն մեզի դէմ գէնք վերցնել եւ մեզ կառավարութեան մատնել: Մէկ տարր կայ, որ մեզի համար վստահելի է, Հա - յերն են, եւ տեսն պիտի գայ, որ պէտք պիտի ունենանք նոյնիսկ հայ գիւղերու պաշտպանութիւնը:

ՍՏԱՑԱՆՔ

« ԿԵԱՆՔԻՍ ՄԱՏԵԱՆԸ »

Գրեց՝ ՑԱԿՈԲ Ս. ՎԷՋԻՐԵԱՆ

Փարիզ - 1982

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Լեւոն Շիրինեանի մահուան առթիւ, Տէր եւ Տիկին Ժիրայր Մուրատեան փոխան ծաղկեպսակի 500 Ֆ. կը նուիրեն «Ցառաջ»ի բարգաւաճման:

×

Պետրոսեան եւ Քնեազեան ընտանիք իրենց սիրելի բարեկամին Լեւոն Շիրինեանի յիշատակին 500 Ֆ. կը նուիրեն «Ցառաջ»ին:

×

Նոյն տխուր առթիւ Պ. Նուպար Նիկողոսեան փոխան ծաղկեպսակի 250 Ֆ. կը նուիրէ Սամուէլ - Մուրատեան վարժարանին (ստանալ «Ցառաջ»էն):

ՈՒԽՏԻ ՕՐ

ՔԱՄԲ ՖՐԻՋԻ

Ս. ԿԱՐԱՊԵՏ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՄԷՋ

Կիրակի, Մայիս 30, Հոգեգալուստին, Ուխտի Օրն է Ս. Կարապետ Եկեղեցւոյ:

Այս առթիւ ՅԱԿՈԲ ԵՊԻՍԿ. ՎԱՐԴԱՆԵԱՆ կը մատուցանէ հանդիսաւոր պատարագը եւ կը քարոզէ օրուան խորհուրդի մասին ու կը նախագահէ Ուխտաւորի սեղանին:

Սկիզբ. ժամերգութեան 9·00
Ս. Պատարագ 10·30 :

CENTRE D'ENSEIGNEMENT U.G.A.B.
SAINTS SAHAK - MESROB
MARSEILLE
339, Avenue du Prado-Eglise Arménienne
Tél.: 77. 84. 70
33, Cours Pierre-Puget — U.G.A.B.
Tél.: 37. 75. 97

COLONIE DE VACANCES

du Jeudi 1er Juillet au Mercredi 21 Juillet
TROIS SEMAINES A ANCELLE
A L'HOTEL DE L'ARCHE
Etablissement de grand confort

— **Prix par enfant:** Pension complète et transport — **2.100 F.**
— **Prix spécial:** Pour un enfant d'une école arménienne — **1.900 F.**

DATE LIMITE D'INSCRIPTION: 10 JUIN
Le nombre des places étant très limité, veuillez vous adresser au plus tôt à:
L'EGLISE SAHAK - MESROB ou U.G.A.B.

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Ֆրանսահայ կապոյտ Խաչի Պանեէօ - Քաչանի մասնաճիւղը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Պ. Գրիգոր Կուրպէթեանի, իր զաւակներուն Եւա եւ Ժաք Կուրպէթեանի եւ բոլոր ընտանեկան պարագաներու իրենց աղջկան եւ քրոջ՝ Սիրանոյշ Կուրպէթեանի կսկծալի մահուան առթիւ:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ. ԽԱՉԻ Լիոնի մասնաճիւղի վարչութիւնը ընդհանուր ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերուհիները Շաբաթ, Մայիս 29, կէսօրէ վերջ ժամը 3-ին, Ազգ. Տան դպրոցի սրահը:

Կարեւոր օրակարգ.- կը խնդրուի բոլոր ընկերուհիներէն ներկայ գտնուիլ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Սէն-Ժէռմէն Ս. Սահակ - Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ թաղականութիւնը շնորհակալութեամբ առացած է, փոխան ծաղկեպսակի, հետեւեալ նուէրները, ողբացեալ Զարուհի Սէֆիլեանի մահուան առթիւ.- Տէր եւ Տիկին Գաբրիէլ Ալիքեան 400, Տէր եւ Տիկին Գարեգին Թաշճեան, Տէր եւ Տիկին Սարգիս Թաշճեան, Այրի Տիկին Վարդուհի, Ժիրայր Թաշճեան, Փաստրմաճեան ընտ., Տէր եւ Տիկին Սեդրակ Սամուէլեան 100-ական, Տէր եւ Տիկին Օննիկ Քէօսէյեան 50, Տէր եւ Տիկին Վռամ Պօղեան 200 եւ 100 դպրոցին:

Տիկին Զուրիկեանի մահուան առթիւ.- Յովհաննէս Զուրիկեան, Քաչեան ընտ., Սահակ Աւետեան, Տէր եւ Տիկին Ուլուեան 300-ական, Տէր եւ Տիկին Աւետեան, Ժաք Համալեան 200-ական, Տէր եւ Տիկին Պօղոս Թուրիկեան, Ովսաննա Թուրիկեան, Բարգէն Խժտահարեան, Խժտահարեան ընտ. Բակլոյեան ընտ., Ժիլպէռ Օյնոյեան, Փառանձեմ Օյնոյեան, Ժան Կարիկեան Տէր եւ Տիկին Օտապաչեան, Տէր եւ Տիկին Տօնօ, Զինիճեան ընտ., Ժորժ Քաչեան 100-ական, Տէր եւ Տիկին Միհաքեան 100 եւ 100 դպրոցին, Յարութիւն Քէօսէյեան 50, Մարտիրոս Թուրիկեան 100 Ֆ. դպրոցին:

×

Կապ. Խաչի Փարիզի մասնաճիւղը շնորհակալութեամբ առացած է Տէր եւ Տիկին Գրիգոր Եսիգապարաշեանէ 150 Ֆ. Բարգէն Թէրզեանի մահուան առթիւ, փոխան ծաղկեպսակի:

LA F.R.A. - NOR SEROUND

APPELLE LA COMMUNAUTE ARMENIENNE
A SE MOBILISER ET A REVENDIQUER SES DROITS NATIONAUX
A L'OCCASION DU 64ème ANNIVERSAIRE
DE LA DECLARATION DE L'INDEPENDANCE DE L'ARMENIE

RASSEMBLEMENT

LE VENDREDI, 28 MAI, à 16h.30 précises
PLACE SAINT FARGEAU — Métro: Saint - Fargeau - Paris 20ème
DEFILE
En direction du Cimetière du Père - Lachaise,où sera déposée une gerbe sur la tombe de:

AVĒDIS AHARONIAN

ՀԱՅ ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

Կիրակի, Յունիս 13, ժամը 11 – 22

ՄՈՆՄՈՐԱՆՍԻԻ ՀԱՆԴՍՏԵԱՆ ՏԱՆ ԴԱՐԱՍՏԱՆԻՆ ՄԷՋ

- *Արեւելեան եւ եւրոպական ճաշեր՝ արագ սպասարկութեամբ:*
- *Վիճակահանութիւն՝ մեծ պարգեւներով:*
- *Ընտանեկան հաճելի եւ ջերմ մթնոլորտ:*
- *Զանազան հետաքրքրական խաղեր ու ժամանց:*

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՃՈԽ ՑԱՑՏԱԳԻՐ

Մուտքը ազատ է:

Մոնմորանսի երթալու համար.-
Prendre le train de la Gare du Nord,descendre à Enghien - les - Bains et puis prendre l'autobus N° 6 et et decendre à l'arrêt Groslay.

SAMEDI, 29 MAI — A 20 H. 30

UNIQUE RÉCITAL A PARIS
DU CHANTEUR ARMENIEN

NORAIR

Avec son ORCHESTRE (8 exécutants)
En Première Partie: Crown Production présente un Opéra - Film (1954)

ANOUSH

Théâtre de l'Empire — 41, Avenue de Wagram

Location:
— **Librairie PALOUYAN;** 9, Rue de Trévise,Paris 9e — Tél:. 523. 24. 97
— **Restaurant HAGOP;** 9, Rue du Nil, Paris2e — Tél.: 296. 37. 41
— **AZAD;** 136, Rue d'Aboukir Paris 2e — Tél.: 233. 87. 87
— **Retaurant EREVAN;** 29, Rue Bergère, Paris 9e — Tél.: 523. 44. 75
— **Restaurant SASSOUN;** Issy - les - Moulineaux — Tél.: 638. 78. 58
— **VIDEO - SON;** 49, Rue Victor Hugo, 94140 Alfortville — Tél.: 375. 26. 89
— **VIDEO - SON;** 21, Rue Jules Michelet,92700 Colombes
— **Mme. DJEKNAVORIAN;** Paris, Tél:. 501.98. 89

OPERA DE MARSEILLE
VENDREDI, 4 JUIN, A 20H.45

CONCERT DE GALA

AU PROFIT DE LA

Fondation Aram Khatchatourian

SOUS LA PRESIDENCE DE

GASTON DEFFERRE
(Maire de Marseille, Ministre d'Etat, Ministre de l'Intérieur et de la Décentralisation)

L'ORCHESTRE DE L'OPERA DE MARSEILLE
Sous la direction de

JANOS FURST

Avec la participation de

MYRIAM BIRGER (Pianiste)
JEAN TER-MERGUERIAN (Violoniste)

au Programme:

Mascarade	**A. KHATCHATOURIAN**
Concerto N° 1 pour piano	**TCHAIKOVSKI**
Concerto en Ré-Majeur pour violon	**BEETHOVEN**

LOCATION A L'OPERA — A PARTIR DU VENDREDI 28 MAI

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի նպաստ Լիոնի Հայոց Եկեղեցւոյ նորոգութեան եւ հովանաւորութեամբ տեղւոյս հոգեւոր հովիւ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՋԱՔԱՐԵԱՆԻ

Լիոնի հայերէն խօսուն թատրոնը կը ներկայացնէ Ուրբաթ, Յունիս 4-ին երեկոյեան ժամը՝ 8·45–ին՝ «Տայը կարապետ»ը կամ «Ամերիկահայ փեսացուն» Սկզբալ սրահին մէջ:

60 Ավրնիւ տը Սաֆս, Լիոն 6-րդ Տոմսերը ապահովելու համար դիմել Լիոնի Հայոց Եկեղեցին, կամ խաղացող անդամ, անդամուհիներուն:

ՊՏՈՅՏ

Կապ. Խաչի Կոլոնպէլի վարչութիւնը «Մայրերու տօն»ին առթիւ պտոյտ մը կազմակերպած է իր երեց ընկերուհիներուն համար Շառավի, Մայիս 28-ին, Ուրբաթ օր:

Օթօգառը կը մեկնի 9·30–ին:
Ճաշերու մասնակցութիւն 50 Ֆ.:
Հեռաձայնել.- 44 – 45 - 27 :

ՖՐԱՆՍԱՀԱՅ ՄԵՇԱԿ. ՄԻՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԷյԼ

կազմակերպած է

Շորեքշաբթի, Մայիս 26, ժամը 21ին
CENTRE CULTUREL DE LA J.A.F.
65, Allées Léon Gambetta - 13001 Marseille

ՇԱՏ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ՄԸ Նիւթ ունենալով՝

ՄԱՇՏՈՑ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՁԵՌԱԳԻՐՆԵՐՈՒ ԵՒ ՄԱՏԵԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Նկարներու ցուցադրութիւն Բանախօս՝

ԲԱԲԳԷՆ ՋՈՒՔԱՍՋԵԱՆ

Մաշտոց Մատենադարանի Տնօրէնի տեղակալ:

ՀԱՑ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԱՆԿԱՆՑ ԲՈՑՆԻՆ ՄԷՋ

Յ Օր Մանկի ափերուն

Մայիս 29, 30 եւ 31 :
Արձանագրուիլ հեռաձայնելով՝
985 - 36 - 53 :
Մեկնում՝ Շաբաթ առաւօտ ժամը 6·30–ին :
Ժամադրավայր՝
GARE SAINT - LAZARE
Au départ des Grandes - Lignes

CENTRE CULTUREL
ST. MESROB
10 bis, Rue Thouin - 75005 PARIS
Հինգշաբթի, Մայիս 27, ժամը 20·45ին
Տիկին ԴԱՍՊԱՐԵԱՆ - ՓՐԻՓՈՒ
կը ներկայացնէ Ֆիլմ մը, զոր պատրաստած է արեւմտեան Հայաստան՝ Ախալքալաքի, Վան, Մուշ, Պիթլիս, Ախթամար:

Հ Ա Յ
ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ
ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆԵՐ

Ամուիլիի, Մոնմորանսիի եւ Սէն – Ռաֆայէլի մէջ:
Երրորդ Տարիքի Անձերու Համար:
Հանգստաւէտ պայմաններու մէջ, Ընտանեկան հարազատ մթնոլորտ, Բժշկական տեւական հսկողութիւն եւ խնամք: Գաղափարներու ժխորէն եւ ապահանած օդէն հեռու՝ քնութեան ծոցին մէջ, հանգիստ եւ մաքուր միջավայր:

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
Maisons de Retraite

à Andilly, Montmorency et St. Raphaël
Pour les Personnes du Troisième-Age
Confort moderne, Ambiance familiale, Surveillance et soins médicaux permanents, Cadre paisible, dans la nature, loin de la pollution et des bruits de la ville.
S'adresser à l'A.A.A.S
77, Rue La Fayette — 75009 Paris
Tél.: 878. 02. 99 et 281. 17. 80

ԿԱՊՈՑՏ ԽԱՉ

ՕԴԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԿԱՑԱՆ

Փարիզաբնակ մանուկներուն սրժանդրութիւններուն համար, դիմել Տիկին Լ. Ֆորլանի.-
Հեռաձայն՝ **254 - 81 – 79**

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R.C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա: Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ: 180 Ֆ.
Արտասահման: Տար. 400 Ֆ. - Հատը: 2.50 Ֆ.

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
ՄԱՅԻՍ
26
MERCREDI
26 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

57ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.178

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

57e ANNÉE — No 15 178

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՊԷՅՐՈՒԹ

ՀԱԿԱՖՐԱՆՍԱԿԱՆ ԵՂԵՌՆԱՓՈՐՁԸ

ԱՆՇԱՐԺ ՄԵՌԵԱԼ, 25 ՎԻՐԱՒՈՐ

Ո՞վ է հեղինակը այս նոր եղեռնափորձին: Հաւանաբար ոչ ոք կրնայ ստոյգ պատասխան մը տալ այս հարցումին, քանի ահաբեկչութիւնը հոն հասած է, ուր ոեւէ մէկը կրնայ որեւէ ռումբ դնել որեւէ տեղ, իր կամ ուրիշի հաշուոյն, ինք դնել, ապա արարքը ստանձնել տալ ուրիշ կազմակերպութեան մը անունով, եւ ոչ ոք կայ իրեն համար: Այս անոր յատկութիւնը ալ աւելի կը չեշտուի Լիբանան, մանաւանդ՝ արեւմտեան - Պէյրութ ուր ամէն վայրկեան ռումբեր կը պայթին եւ այլեւս ոչ ոք կը հետաքրքրուի թէ գնողը ով է: Անոնք որոնք եօթը տարի է «վարժուած» են Պէյրութի կեանքին, աւելի հակամէտ են մտահոգուելու լուրջներէն, քան պայթող ռումբերէ...:

Ով որ ալ ըլլայ հեղինակը, մէկ բան յստակ է, այն որ «արհեստաւոր»ի գործ է: Դիապանատան քարտուղարուհիի մը կառքին մէջ է որ դրուած է, առանց իր գիտակցութեան անշուշտ, 50 քիլօ հրդեհաբեր ռումբ մը, հեռուէն ղեկավարուած եւ որ պայթած է երբ կառքը դեսպանատան բակը կը մտնէր: Ահաւոր պայթումէն եռք, հրդեհ ալ կը ծագէր եւ խուճապը փոքր չէր: Բայի քանի մը պաշտօնեայ, զոհ կ'երթային նաեւ վիզայի բաժնողներ: Երկ, ինչպէս դրեցինք դեռ չպրիտ թիւ չկար, Երեքշաբթի կ'բացէր թէ մեռելներու թիւը 11 է, (ոմանք 14 կ'ըսեն), եւ 25 վիրաւոր կայ, որոնց մէջ 5 - 6 հոգի շատ ծանր վիճակի մէջ են:

Մէկ տարուան ընթացքին 6-րդ արարքն է Ֆրանսայի դէմ: Առաջինը՝ Սեպտ. 4ին պանութիւնն իսկ էր դեսպանին՝ Լուի Տլամառ, ապա յաջորդաբար՝ Ապրիլ 15-ին երկու պաշտօնեայ (այր ու կին), Ապրիլ 25-ին ԱՖՓ.ի գրասենեակը, Մայիս 9-ին չէնքի մը վրայ ուր Ֆրանսացիներ կ'ապրին, եւ Մայիս 24-ին՝ վերոյիշեալ արարքը: Լիպերասիոն, Մայիս 25-ի իր թիւին մէջ կ'անդրադառնայ նաեւ ԱՄԱԱյի ահաբեկչական արարքներուն Ֆրանսական հաստատութեանց դէմ, Օրլի ձերբակալուած իր մէկ անդամին ազատ արձակման համար:

Կայ նաեւ ռիւ Մարպէօֆը եւ ընդհանրապէս Սուրիան է, որ պատասխանատու կը նկատուի, հակառակ անոր որ վերջին ատեն Սուրիոյ հետ Լիբանանի երկուշաբթի գիշերը, Անգլիոյ անդամավաճարին չուրջ: Ծանօթ է որ Մեծն Բրիտանիա շատ բարձր գտած էր իր ձայնը եւ կը պահանջէր մէկ միլիառ տոլարէն աւելի նուազագոյն հատուցում մը հինգ տարուան վրայ: Ձեռք ձգեց 850 միլիոն տոլար մէկ տարուան վրայ:

ՄԱԼՈՒԻՆՆԵՐՈՒ մէջ կռիւները կը շարունակուին եւ Արժանթին կ'ընդունի, որ բրիտանական ցամաքահանումը բառական կարեւոր է: Գալով Լա Նատիոն Թերթին, բառերը չի ծամծմեր եւ ուղղակի «խնթր» կը գրէ Մարկարէթ Թաչըրի համար, որ պէտք է յիմարանոց իսկ մըտնէ: Բայց, ճշդենք, որ ասիկա կ'ըսուի անհատի մը կողմէ, ու մեծ ծանուցումով մըն է, որ ըսելիքը կ'ըսէ Մեծն – Բրիտանիոյ նախարարապետին մասին...: Կառավարութիւնը, կ'ըսէ նաեւ թէ Տիկին Թաչըր պէտք է դատուի պատերազմական ոճիրներու համար, ինչպէս՝ Նիւրնպերկ: Ցիշենք որ քանի մը օր առաջ ալ, Արժանթինցիք «հում - հում ուտել» կ'ուզէին Տիկին Թաչըրը:

ԻՐԱՆԵԱՆ ուժերը վերադրաւած են Խորրամշահր, ըստ Թեհրանի տուած լուրերուն:

ՑՈՒՇԱՏԵՏՐ

ԲԱԺԻՆԻՒԼ ՀԱԶԱՐ ՀՈԳԻԻ ՄԻՋԵՒ

Արտասահմանէն ժամանած հիւր մը ունէինք, գրպիտուհի մը, մանաւանդ գրասէր հոգի մը: Իրեն ի պատիւ հաւաքուած էինք գրասէր ուրիշ բարեկամի մը տունը: Գրական կտորներ կը կարդացուէին, քերթուածներ կ'արտասանուէին: Եւ ամէն անգամ որ մեր տաղանդաւոր ջոջերէն մէկը բանաստեղծութիւն մը կ'արտասանէր Մեծարենցէն, Վահան Թէքէեանէն կամ Դանիէլ Վարուժանէն, մեր հիւրն ալ իսկոյն կը սկսէր մեզմ ձայնով ընկերանալ անոր, մի առ մի արտասանելով բոլոր բառերը, եւ հիացմամբ ճօճելով իր գլուխը: Կարծես թէ անգիր գիտէր մեր բոլոր քերթողներուն բոլոր բանաստեղծութիւնները:

Ինչպէս ջերմեռանդ հաւատացեալ մը, որ պատարագի կամ կրօնական արարողութեան մը ընթացքին սրտին խորերէն կը մրմնջէ պատարագին կամ շարականի մը բառերը, կան անշուշտ գրասէրներ ալ, որոնք աղօթքի նման գոց գիտեն մեր քերթողական գրականութեան գեղեցկագոյն էջերը, եւ զանոնք յանպատրաստից կ'արտասանեն ամէն անգամ որ առիթ մը կը ներկայանայ: Ի՞նչպէս կը յաջողին իրենց մխաքը պահել այդքան կատարեալ կերպով, ի՞նչպէս չեն մոռնար անոնց չարաչարումը: Ենթադրութեամբ կարելի է գտնել այս հարցումին պատասխանը. չեն մոռնար, որովհետեւ աղօթքի նման յաճախ կը կրկնեն զանոնք, աւելին, որովհետեւ զանոնք աղօթք դարձուցած են իրենց համար, աղօթք՝ զոր կ'արտասանեն իրենց ուրախ վայրկեաններուն, փառք տալու համար նախանմամութեան, աղօթք՝ զոր կ'արտասանեն նաեւ իրենց տխուր վայրկեաններուն, մխիթարութիւն գտնելու համար անով:

Բայց մեր հաւաքականութեան մէջ ի՞նչ է համեմատութիւնը այդպիսի գրասէրներու: Քանի՞ տան մէջ, թէկուսեզանի կամ ճաշասեղանի մը վրայ, երանութեան պահու մը, բաժակաճառի նման քերթուած մը կ'արձակուի գրասէր հոգիի մը սիրտէն, եւ կ'ողջունուի բարձրացող բաժակներու վերկընդխառնումով:

Մինչդեռ այսպէս է որ կրնայ ապրիլ գրականութիւնը, նաեւ լեզուն որ իր մարմինը փոխ կուտայ գրականութեան: Գրականութիւնը կ'ապրի այն ատեն մի - այն երբ կենդանի ձայն կը դառնայ, երբ կը հնչէ ականջներու մէջ, թռչէք առնելով զիրքի մը անկենդան ու լուռ էջերէն: Գրականութիւնը կ'ապրի այն ատեն մի - այն երբ պատարագի նման կը մատուցուի մեր գեղարուեստական ապրումներու ամէնօրեայ սեղանին վրայ, անոր հատուցող բազմութեան մը քաղցը մրմունջներուն ընկերակցութեամբ:

Այս բոլորը պիտնալէ վերջ, ատ՛ող, որքան դառն է հաստատել, որ մեր գրականութիւնը տակաւ կը հեռանայ մեր հաւաքոյթներէն ու մեր թէյասեղաններէն, բռնելով իր բանտին ճամբան, որ է գիրքը, կամ գրադարանը: Ցիւանոս բանտարկութեան դատապարտեալ մը ահաւասիկ, որ իր խցիկին երկաթեայ ձողերուն արանքէն կարօտով կը սպասէ այն ցան - ցառ բարի հոգիներուն, որոնք պարբերաբար գինքը դուրս պիտի հանեն իր արգելարանէն եւ քիչ մը պիտի պտըտցնեն ապրող մարդոց աշխարհին մէջ:

Երբեմն տխրօրէն կը խորհիմ. գիրքերը հեռահեռ որքա՞ն անգոր կը մնան ապրեցնելու մեր գրականութիւնն ու լեզուն: Անոնք ստեղծուած չէին միայն աչքով կարդացուելու համար: Անոնք ստեղծուած էին կարդացուելու համար նաեւ շրթներով: Ոչ թէ միայն առանձին սենեակի մը խորը, այլ նաեւ բազմութիւններով լեցուն սրահի մը մէջ:

Պատարագը միշտ պատարագ է, նոյնիսկ եթէ ոչ իսկ մէկ հաւատացեալ կայ տաճարին մէջ: Բայց պատարագը որքան տարբեր է, երբ հազար հոգի կը հաղորդուի անով, երբ ան կը բաժնուի հազար հոգիի միջեւ:

Ռ. Հ.

ԵՐԵՒԱՆ ⇔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՑՈՒՅՑ

ԵՐԵՒԱՆ (ԱՐՄԷՆՓՐԷՍ ՄԱՑԻՍ 14/18)

ԼԻԲԱՆԱՀԱՅ ՆԿԱՐԻՉԻՆ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի Գրողներու Տունը հաւաքուած Երեւանցիները հետաքրքրութեամբ դիտած են լիբանանահայ լուսանկարիչ Յովհաննէս Ճէրճեանի (Շերազ) գունաւոր լուսապատկերները, որոնք ներկայացուցած են պատմական Հայաստանի ճարտարապետական յուշարձանները եւ Լիբանանի Հայութեան կեանքը: Յովհաննէս Ճէրճեան, որ երեք շաբաթ հիւրը եղած է Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի, նոր նկարներ առած է Ապրիլ 24-ին՝ Մխիթեռնակաբերդի յուշարձանի այցելութենէն, Մայիս 1-ի տօնախմբութենէն, տեսարժան վայրերէն, նոր կառոյցներէն եւ մշակութային կեանքի նուաճումներէն:

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ԱԶՆԻՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Քանի մը օր է տպագրական մեքենայի խանգարումներ պատճառ եղան որ թերթին տպագրութիւնը հարկ եղածին չափ մաքուր չըլլայ, երբեմն ալ ներսի էջերը ճերմակ մնացած ըլլան: Կը խնդրենք որ մեր ընթերցողները ներողամիտ ըլլան: Ամէն ջանք կը թափենք բարելաւելու համար կացութիւնը:

ՆԱՄԱԿ ԳԵՐԵԶՄԱՆԷՆ ԱՆԴԻՆ

ՄԵՂԱՒՈՐ «ԱՆՄԵՂՈՒԹԻԻՆ»

Անիրաւ վերաբերում ցոյց տուի քու հանդէպ, սիրելի Երուանդ Օտեան, ուրիշին յանձնելով՝ ինչ որ քեզի կը պատկանէր: Անկասկած, յիշողութեան պակսի անմեղ արարք էր այդ, բայց սպասեցի որ դուս եւ ապտակես զիս: Չեկա՛ր եւ պիտի չգաս ... ես է որ քեզի պիտի գամ՝ արդարութիւնը հաստատելէ ետք միայն:

Այո՛, «Զարշելը Արեւին Ազա»ն գուկէ եւ Կիւրճեանի՞ գործ էր (*) (հոս ալ յիշողութիւնս կը ծուլանայ) եւ ո՛չ թէ Պարոնեանի եւ եթէ ձեր երկուքի դիմացը գտնուէի, վաստհօրէն առաջին ապտակը պիտի ըլլար «Մեծապատիւ Մուրացկաններ»ու հեղինակը՝ սաստելով զիս.- «Օտեան էֆէնտիի սեփականութիւնը վերադարձուր երեն: Ես անօթի մնացած եմ, բայց երբեք ձեռք չեմ երկարած»:

Իրականին մէջ, անհանգիստ ըլլալու պատճառ ալ չունիք, քանի ընթերցողներ կան, որոնք արեւուն կը հակեն հայ մշակութային ժառանգին վրայ, որքան ալ զանգատինք թէ՝ ընթերցող չունինք: Այնքան լուրջ եւ խելացի կեն անոնք, որ երբեք թոյլ չեն տար խեղաթիւրել եւ կեղծել իրողութիւնները:

Գիտե՛ս Օտեան, չատ լաւ պիտես, որովհետեւ դուն ալ մեր բախտը ունեցար, թէ որքա՜ն սառնամանիքներու ու խոր չակներու բռնուեցանք, թէ որքա՜ն ռումբեր պայթեցան մեր գլխուն վերեւ որ կիզեցին եւ մոխրացուցին մեր մէջ պիտանի ուժեր եւ չնորհներ, - կուրցուցին մեր աչքերը, խլացուցին ականջները, ուղեղները վերածեցին մաշած մեքենայի վիճակին: Ի՞նչու զարմանալ, ուրեմն, որ յիշողութիւնն ալ դառնայ ժանգոտած «գործիք»:

Միակ յիշատակը որ չի՛ ժանգոտիր, այլ թանձրացած, կարծրացած «տունտեղ» կ'ըլլայ մեր ուղեղներուն մէջ, մեր հայրերու ու մայրերու ցաւագին ճիչերն են, մեր հարսներու ու մանուկներու ողբ ու կոծը, զազանային կիրքերու բնաջնջման տեսարաններու պարզած ահաւորութիւնը:

Արեւելքի եւ Արեւմուտքի բարբառնեբու ու բարբանջանքներու չաղախ, մեր մխքն ու հոգին՝ ներկան կ'ապրեցնեն մեզ անցեալին մէջ եւ անցեալը՝ ներկային մէջ: Երէկն ու այսօրը լրարու մէջ ձուլուած, ծնունդ են տուած ապագային ուր, եթէ փորձենք մտածել «Մեծապատիւ Մուրացկաններ»ու թէ «Զարշելը Արեւին Ազա»յի մասին, մի՛շտ յիշողութեան ներկայացողն է ժողովուրդի մը դէմ կատարուած չարդը, ամբողջ ազգի մը կոտորածը, ուր, բարեբախտաբար, հպարտօրէն կը գծադրուի՝ դէպի ապագան սլացող մեր երիտասարդութեան խոյանքը:

Կը անուցանինք հիւլէներու մթնոլորտին մէջ. մեր ընչաոութիւնը կազի եւ միքրոպներու բաղադրութիւն կը հոտի. կ'ապրինք ահազանգներու տեւական հընչոմին տակ: Կորնցուցած ենք ժամանակի ու տեւողութեան տարողութիւնը. մոռցած՝ լայնքի ու երկայնքի տարածութեան սահմանը եւ մեր յիշողութիւնը չարատեւ տեղատուութեան մէջ է: Այլեւս ի՛նչպէս յիշել տունի եւ հեռաձայնի թիւերը...:

Բայց, սիրելի Օտեան, լա՛ւ որ պատահեցաւ սխալը: Այսօր, չատ զոհ եմ, այլապէս ի՞նչպէս, ե՞րբ, ո՞ր առիթով պիտի անդրադառնայի թէ՝ դուն գոյութիւն ունեցած ես. թէ՝ Պոլիս է գոյութիւն ունեցած, ուրկէ կայծերու պէս դուրս են ժայթքած Զարդարեան, Դուրեան, Սիամանթօ, Ինտրա, Մեծարենց, Զօհրապ, Պարոնեան եւ բազմաթիւ ուրիշներ, որ հայ մշակոյթի վառարանը արծարծելով, էթնուալի բոցին պէս յաւիտենականացուցին մեր մշակոյթն ու արուեստը, երբ օր մըն ալ յանկարծ, անոնց դրան չեմին տնկուեցաւ սեւազգեստ դահիճը:

Թէ՝ անոնք ո՞ր «գաշտէն» եւ քանի՞ թոն հունձք հաւաքած եւ սնած են իրենց հայրենակիցները, մեր խանդարուած ուղեղները ի վիճակի չեն հաշիւը գտնելու: Աւտր համար անհրաժեշտ է այցելել մատենադարանները, - մինչ իմ յոգնած ոտքերս այդ համարձակութիւնը չեն տար ինծի, այլ միայն պիտի մօտեցնեն քու գերեզմանիդ, վերադարձնելու համար քեզմէ գողցած «ապրանքը»...:

Երանի՛ թէ՝ նոյն արտօրանքով եւ յօժար կամքով, Թուրքն ալ վերադարձնէր մեզմէ գողցածը...:

ԼԵՒՈՆ ՍՈՓՈԿԼԵԱՆ

(*) «Ծառայ»ս- Մեր աշխատակիցը կ'ակնարկէ «Եթէ փրանսացի ըլլայի» յօդուածին (Ապրիլ 27) ուր «սահած» էր այս սրխալը: Բուն պատասխանատուն կը մնայ, անշուշտ, թերթիս խմբագրութիւնը, որու ուշադրութենէն վրիպած էր:

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՁԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՁԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

ԱՊՐԻԼԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐԸ

ԼԻՈՆԻ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Ապրիլ 27-ի մեր թիւով հակիրճ տեղեկութիւններ տուած էինք ապրիլեան ոգեկոչումի հանդիսութեանց մասին Լիոնի մէջ: Ստորեւ մանրամասնութիւններ բաղուածք մեզի ղրկուած Հայ Դատի տեղւոյն յանձնախումբի մանրամասն տեղեկագրէն.-

Ա. ՀԱՒԱՔՈՅԹ ԹԷՐՈՅԻ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Ապրիլ 24-ին, ժամը 16-ին, չուրջ 3000 հոգի հաւաքուեցան Լիոնի քաղաքապետարանին առջեւ՝ Թէրոյի հրապարակը, ուր Տէսթնի Հայ Մշակոյթի Տան անօրէնուհին՝ Հելոտա Զոպոյեան, խօսք առնելով յանուն Հայ Դատի Յանձնախումբին անդրադարձաւ Հայերու դէմ կատարուած ցեղասպանութեան, անոր պատասխանատուութիւնը բարդելով ոչ միայն 1915-ի Թուրք կառավարութեան վրայ, վրայ, այլեւ ներկայի, իրրեւ ժառանգորդ իր նախորդներուն դրական թէ բացասական գործերուն: «Թուրքիոյ համրաւութեան եւ ցեղասպանութիւնը ուրանալուն առջեւ, - ըսաւ Հելոտա Զոպոյեան, - միայն մէկ ընտրութիւն ունինք՝ դիմադրել կամ ենթարկուիլ դանդազ մահուան: Մեր ընտրութիւնը կատարուած է՝ պայքարիլ ցեղասպանութեան ճանաչումին եւ Հայ ժողովուրդին եղած վնասուց հատուցման համար: Հայ ժողովուրդին կը մնայ միջոցներու ընտրութիւնը, Ֆրանսայի ժողովրդավարական ուժերու աջակցութեամբ»: Ապա խօսք առնելով Լիոնի ծերակուտական - քաղաքապետ Ֆրանսիոզ Կոլոմպի ներկայացուցիչը՝ Միռիօ, ըսաւ. «Կը միանանք ձեզի պահանջելով Թուրքիայէն ճանաչումը Հայերու ցեղասպանութեան պատմական իրականութեան, սկսած 1915 Ապրիլ 24-ին: Ջերմօրէն կը յուսամ, որ ձեզի նեցուկ ըլլալու համար Ֆրանսական իշխանութիւնները պիտի կրկնապատկեն իրենց ջանքերը միջազգային ատեաններու մօտ: Լիոնի քաղաքապետը եւ իրեն հետ մեր թաղապետութիւնը, ինչպէս նաեւ արդարութեան հաստատացող Լիոնցիները կը մաղթեն, որ Սփիւռք եւ Խորհ. Հայաստան ծնած Հայերը ձեռք ձգեն արդարութիւնը»:

ՅՈՅՑ ԴԷՊԻ ՓԱԼԷ ՏԷ ՔՈՆԿՐԷ

Ապա, թափօրը կազմուեցաւ եւ ճամբայ ելաւ դէպի Փալէ տէ Քոնկրէ, բարձրաստիճան անձնաւորութիւններու առաջնորդութեամբ: Ճամբուն վրայ, Ռոնի Որդինեռու Ցուշարձանին երեք ծաղկեպսակներ դրուեցան՝ Հայ Դատի Յանձնախումբին եւ Լիոնի ու Վիլէօրպանի քաղաքապետութեանց կողմէ: Թափօրը այնուհետեւ՝ չարունակեց իր ճամբան մինչեւ Փալէ տէ Քոնկրէ, ուր տեղի ունեցաւ Ֆորում մը:

ՖՈՐՈՄ

Քաղաքական չորս անձնաւորութիւններ մասնակցեցան Ֆորումին՝ Ժան Փուերէն (Ընկերվարական), Ժան Քաքիէվիք (համայնավար), Միշել Նուար (Ն. Հ.) եւ Էմմանուէլ Ամէլ (Իւ. Տէ. Էֆ.): Հայ Դատի Յանձնախումբը կը ներկայացնէին Ռոպէր Այտապէրեան, որ կը նախագահէր աստուհսին, Փիւլ Մարտիրոսեան, Վահէ Մուրատեան, Միհրան Ալթապլեան եւ Գէորգ Քէվիկեանեան:

Ռ. Այտապէրեան աստուհսը բանալով պարզեց Հայ Դատի Յանձնախումբին ներկայ դիրքը, նշելով. «Որոշած ենք ազգային ազատագրութեան մեր պայքարը մենք տանիլ: Հասած ենք մեր պատմութեան զգայուն մէկ կէտին եւ պիտի չենք կրնար հանդուրժել անհանդուրժելին. ամէնուրեք ճնշումը կ'աւերէ մեր Սփիւռքը: Սպասողական վիճակէն դուրս գալով՝ Հայ Դատի Յանձնախումբերը կոչեցին պիտի պայքարինք ազգային մեր իրաւունքներուն համար: Գալով ձեզի, Ֆրանսացի բարեկամներ, չէ՞ք կարծեր որ ժամանակը եկած է մեզի օգնելու լուծելու համար Հայկ. Հարցը: Հարցը: Չէ՞ք խորհիր, որ Հայկ. Հարցը կոտակցութեանց պայքարներէն եւ ընտրական նկատառումներէ վեր է: Իրրեւ խորհրդարանականներ, ի՞նչ պիտի ընէք գործնականօրէն, որպէսզի մեր բարձր հիմնարկութիւնները յատակ դիրք բռնեն եւ յառաջ մղեն Հայկական Հարցը 1982-ին»:

Ռոպէր Այտապէրեանի կատարած քանի մը առաջարկներէն հետ խօսք առնելով Փիւլ Մարտիրոսեան կը պարզէ Հայկ. Հարցին լուծում մը՝ որն է Թուրքիոյ մէջ ստեղծել երեք Պետութիւններ, Թրքական, քրտական եւ Հայկական. այս վերջինը միացած Խորհ. Հայաստանի, Ղարաբաղի, Նախիջեւանի եւ Ախալքալաքի (Սեւրի Դաշնագրի ուիլսոնեան սահմաններու հիման վրայ): «Եթէ Թուրքիա չարունակէ մերժել ճանչնալ Հայկ. Հարցը, Հայ ժողովուրդի կամքը եւ վճռականութիւնը իր իրաւունքներուն տիրանալու համար նեղացուցիչ պիտի դառնան, - ըսաւ Փիւլ Մարտիրոսեան, աւելցնելով որ, - Հայ ժողովուրդը ամէն միջոց ի գործ պիտի դնէ Հայկական Հարցը լուծելու համար»:

Théâtre de l'Empire — 41, Avenue de Wagram

Location:

— **Librairie PALOUYAN;** 9, Rue de Trévise,Paris 9e — Tél:. 523. 24. 97
— **Restaurant HAGOP;** 9, Rue du Nil, Paris2e — Tél.: 296. 37. 41
— **AZAD;** 136, Rue d'Aboukir Paris 2e — Tél.: 233. 87. 87
— **Retaurant EREVAN;** 29, Rue Bergère, Paris 9e — Tél.: 523. 44. 75
— **Restaurant SASSOUN;** Issy - les - Moulineaux — Tél.: 638. 78. 58
— **VIDEO - SON;** 49, Rue Victor Hugo, 94140 Alfortville — Tél.: 375. 26. 89
— **VIDEO - SON;** 21, Rue Jules Michelet,92700 Colombes
— **Mme. DJEKNAVORIAN;** Paris, Tél:. 501.98. 89

OPERA DE MARSEILLE

VENDREDI, 4 JUIN, A 20H.45

CONCERT DE GALA

AU PROFIT DE LA

Fondation Aram Khatchatourian

SOUS LA PRESIDENCE DE

GASTON DEFFERRE

(Maire de Marseille, Ministre d'Etat, Ministre de l'Intérieur et de la Décentralisation)

L'ORCHESTRE DE L'OPERA DE MARSEILLE

Sous la direction de

JANOS FURST

Avec la participation de

MYRIAM BIRGER (Pianiste) — JEAN TER-MERGUERIAN (Violoniste)

au Programme:

Mascarade	A. KHATCHATOURIAN
Concerto N° 1 pour piano	TCHAIKOVSKI
Concerto en Ré-Majeur pour violon	BEETHOVEN

LOCATION A L'OPERA — A PARTIR DU VENDREDI 28 MAI

LE GALA SERA SUIVI D'UN BANQUET au SOFITEL - VIEUX - PORT

Réservation: Mr. Hagopion — Tél.: (91) 60.07.61 ou 51.31.51

Présentation de «Histoire des Arméniens»

LA MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE PARIS

Vous invite à venir nombreux à la présentation,à l'occasion de sa parution,de l'ouvrage

« HISTOIRE DES ARMENIENS »

L'ouvrage, rédigé sous la direction du Prof. GERARD DEDEYAN, est un grand livre de référence couvrant l'ensemble de l'Histoire du peuple arménien.

700 pages, publié aux Editions Privat.

Seront notamment présents, parmi les autres — Le Prof. Gérard Dédéyan, Mme. Anahide Ter-Minassian, Mme. Claire Mouradian, M. Frédéric Feydit, M. Marc Ferro, Le Dr. Yves Ternon.

Les auteurs signeront l'ouvrage, que l'on pourra se procurer sur place.

JEUDI, 3 JUIN, A 20 H.

A la Maison de la Culture Arménienne de Paris, 17, Rue Bleue, 75009 Paris - Métro: Cadet

RESTAURANT **EREVAN** ՀԱՑԱՏՈՒՆ **ԵՐԵՒԱՆ**

Իր աւանդական ճաշացուցակով եւ սովորական հաճելի մթնոլորտով՝ կը սպասարկէ Ձեզի:

RESTAURANT EREVAN

26, RUE BERGÈRE - 75009, PARIS

TÉL. 770. 85. 81

ՄԻԱՁՆ ՇԱԲԱԹ ԻՐԻԿՈՒՆՆԵՐԸ

Վ Հ Գ Է Ն,

Ընկերակցութեամբ՝ ՍԻՄՈՆԻ

ժամը 21·30-էն սկսեալ կը ներկայանայ իր հայկ· ժողովրդական երգերով, զուարթացնելով ձեր երեկոյթը:

Fermé le Mardi — Փակ է Երեքշաբթի

TRAITEUR EREVAN

29, RUE BERGÈRE — 75009 PARIS

TÉL.: 523. 44. 75

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՄԱՐՍԷյԼ.– Տէր եւ Տիկին Գուրգէն Փերանեան կը նուիրեն 200 Ֆ. «Յառաջ» բարեգործական, Սահակ Գաբրիէլեանի մահուան քառասունքի հոգեհանգստեան առթիւ:

×

Այրի Տիկին Ծնկաբեր Թորոսեան, Տէր եւ Տիկին Տիգրան Թորոսեան եւ զաւակները իրենց ամուսնոյն եւ հօր՝ Յակոբ Ծնկաբեր Թորոսեանի մահուան 2-րդ տարելիցի է յիշատակ կը նուիրեն.. 300 Ֆ. Կապոյտ Խաչի կայանին, 200 Ֆ. Ազգ. Փոքրվիլի Ս. Մեսրոպ կրթարանին (առնալ «Յառաջ»էն) եւ 100 Ֆ. «Յառաջ»ին:

Ռեստավրատորական դէպի ՀԱՅՐԵՆԻՔ եւ Ի Մայր Աթոռ Ս. Էջմիածին

ՅՈՒԼԻՍ 19 – ՕԳՈՍՏՈՍ 1

=——✠——=

Կազմակերպուած՝
ԱՌՆՈՒՎԻԼԻԻ
ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Հոգաբարձութեան կողմէ:

Խումբին կ'ընկերանայ՝
ՄԵՍՐՈՊ ՔՀՆՅ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Կը մասնակցի նաեւ՝
Առնուվիլի Քաղաքապետ
CLAUDE BIGEL

Արձանագրութեանց համար դիմել Եկեղեցւոյ Դիւանատունը.–
31 - 33, Rue Saint - Just
95400 — ARNOUVILLE-LES-GONESSE
Tél.: 985. 28. 77

Organisation Technique:
SABERATOURS

ԹԱՏԵՐԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

=——=——=

Ի նպաստ Լիոնի Հայոց Եկեղեցւոյ նորոգութեան եւ հովանաւորութեամբ տեղւոյս Հոգեւոր Հովիւ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՉԱՔԱՐԵԱՆԻ

Լիոնի հայերէն խօսուն Թատրոնը կ'ներկայացնէ Ուրբաթ, Յունիս 4-ին երեկոյեան ժամը՝ 8·45–ին՝ «Տայը կարաւտը» կամ «Ամերիկահայ փեսացուն» Սրահին մէջ:

60 Ամբիւր տը Սաֆս, Լիոն 6-րդ

Տոմսերը ապահովելու համար դիմել Լիոնի Հայոց Եկեղեցին, կամ խաղավանդամ, անդամուհիներուն:

ԹԷՅԱԹԵԱՏՐՈՆ

Ֆրանսահայ Կապոյտ Խաչի Պանէգիւռեան Քաշանի մասնաճիւղը կը կազմակերպէ Մայրերու տօնին առթիւ թէյասեղան մը Կիրակի, Յունիս 6-ին, ժամը 15-ին:

Annexe de la Mairie

Salle Avenue Pasteur — Bagneux

գեղարուեստական բաժին: Կը մասնակցի Փեհլիվանեան երգեհակը:

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊ ԽԱՉԻ վարժուհիներու մասնաճիւղի վարչութիւնը իր անդամ – անդամուհիները կը հրաւիրէ ընդհ· ժողովի, Հինգշաբթի, Յունիս 3, ժամը 20·30-ին Ս. Մշակոյթի Տան մէջ:

Imprimé sur les Presses du Journal «Haratch»
83, Rue d'Hauteville — 75010 Paris
Commission Paritaire: N° 55935

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Լիոնի Հայ Առաք· Եկեղեցւոյ Սրբ. Մխիթեան վարժուհիները հոգատարութեամբ սուրճ-թեամբ սուացած է հետեւեալ նուէրները.– Ժան, Փիէր, Գրիգոր Եաղուպեան հարազատներ Հարսանիքի առթիւ, Ս. Տիկին Եաղուպեան Եկեղեցւոյ 3,000, Դպրոցին 500, Կապոյտ եւ Կարմիր Խաչերուն 300ական, Լիոնի Տիկնանց Մխիթեան 300, Լիոնի Աղքատախնամին 200 Ֆ., Տիկին Աստղիկ Աստամեան, Օր. Զարուհի Նահապետեան 100-ական Ֆ. Եկեղեցւոյ, Ոմն եւ Ք. Գրապետեան Փափազեան 100-ական Ֆ. Եկեղեցւոյ: Պօղոս Գօշգօշեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի Եկեղեցւոյ, Ճ. Պահատուրեան 100 Դպրոցին, Մխալիճեան ընտանիք, Տէր եւ Տիկին Գալուստեան ընտանիք եւ Տիկին Հայկուհի Զալըքեան 100-ական Ֆ. Եկեղեցւոյ, Տէր եւ Տիկին Գօրթոչեան 50 Ֆ. Եկեղեցւոյ:

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՄԱՅԻՍ
29-30
SAMEDI-DIMANCHE
29-30 MAI
1982

LE NUMERO 2 F. 50

ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE - OCCIDENTALE
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
DIRECTRICE: ARPIK MISSAKIAN

TÉL.: 770. 86. 60 — C.C.P. PARIS 15069-82 E
FONDÉ EN 1925 — 51027317 A R. C. PARIS

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա: Տար. 340 Ֆ. - Վեցամսեայ: 180 Ֆ.
Արտասահման: Տար. 400 Ֆ. - Հատը: 2.50 Ֆ.

57ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 15.181 | Fondateur : SCHAVARCH MISSAKIAN | 57e ANNÉE — No 15.181

ԵՐԵՒԱՆ ⇔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱԽՕՍ

ԵՐԵՒԱՆ (ԱՐՄԷՆՓԼՅՍ ՄԱՅԻՍ 19 - 26)

«ԱՐԱՐԱՏ» - «ՏՈՐՊԵԴՕ» ԽԱՂԸ (*)

Մորտրպային 45-րդ ախոյենութեան երջաւարքի Մայիս 23-ի խաղերուն, «Արարատ» 1-ի դէմ 3 կէտով յաղթեց Քուպայիսի «Տորպեդո»ի: Խաղը տեղի ունեցաւ Երեւանի «Հրազդան» մարզադաշտին վրայ: «Արարատ»ի տղաքը դաշտ իջած են առանց իրենց գլխաւոր կազմակերպիչ Մորէն Յովհաննիսեանի, որ Մորմ. Միութեան խումբին մաս կազմելով կը պատրաստուի Սպանիոյ Մունտիալին: Մանաւորապէս աչքի զարկած է Անդրանիկ Աչառեան, որ ամբողջ 90 վայրկեանները ընթացքին անընդհատ պայքարած է ուղիները փնտռելով հակառակորդին բերդը ղբաւելու համար: Եւ երբ անգամ հասած է իր նպատակին: Առաջին կոլը նշանակած է գլուխի սքանչելի հարուածով մը, արդիւնաւորելով Նազար Պետրոսեանի «ոսկերչական» ճըշդութեամբ կատարած փոխանցումը, երկրորդը՝ զօրաւոր հարուածով գնդակը ցանցած է բերդին անկիւնը: Իսկ խաղին առաջին կոլը նշանակած է Սամուէլ Ղասաբօղլեան: Հակառակորդներէն ալ կոլ մը նշանակած են եւ խաղին արդիւնքը վերածած 3 - 1-ի, ի նպաստ «Արարատ»ի:

Ասպէսով, 12 խաղերէ ետք «Արարատ» 16 կէտով միչտ կը գլխաւորէր դասաւորումը, արձանագրելով 7 յաղթանակ, 2 հաւասարութիւն եւ 3 պարտութիւն:

(*) Խաղին արդիւնքը տուած էինք «Ցառաջ»ի Մայիս 25-ի թիւով:

×

ՆԿԱՐԻԶ ՀՐԱԶԵԱՅ ՌՈՒԽԿԵԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Երեւանի Նկարիչներու Տան մէջ բացուած է Հրաչեայ Ռուխկեանի անհատական ցուցահանդէսը, ուր ներկայացուած երկու հարիւր դործերը կը ցոլացնեն վարպետին քառասնամեայ վաստակը եւ ստեղծադործական ուղին: Այցելուներ հետաքրքրութեամբ կը դիտեն «Մեր նախնիների հանճարը» նկարաշարքը, ուր տեղ գտած են հայ մշակոյթի մեծերու դիմանկարներ՝ սկսած Մեսրոպ Մաշտոցէն եւ Մովսէս Խորենացիէն մինչեւ Սայաթ-Նովա: Ուշադրութիւն կը գրաւեն այն կտաւները, ուր պատկերացուած են հայկական հին ճարտարապետութեան յուշարձանները:

×

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆԴԵՐՔԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ

Երկրաբանները Հայաստանի հիւսիսը յայտնաբերած են եղիգնաքարէ մարմարի հանքավայր մը: Այդ մարմարը կ'օգտագործուի առաւելաբար չէնքերու ներսը յարդարելու համար: Սքանչելի զարդաքարեր ունեցող այդ քարի բազմատեսակ հանքաւորութեամբ հանքաչերտը կը գրաւէ քանի մը քառակուսի քիլոմեթր տարածութիւն: Հայաստանի քարի հանքայրերու հարստութիւնն ու այլազանութիւնը հիմք ծառայած է չինանիւթերու արդիւնաբերութեան բուռն զարգացման համար: Մեր երկրի յարաբերաբար փոքր տարածութեան մէջ կը հանդիպինք չինարարութեան մէջ օգտագործուղ լեռնապարներու գրեթէ բոլոր տեսակներուն՝ տուֆ, պազալթ, կրանիւթ, մարմար եւայլն:

ԻՐԱՆԱՀԱՅ ԼՈՒՐԵՐ

ՏՀԱՃ ՄԻՋԱԴԷՊԵՐ՝ ՀԱՅՈՒՀԻՆԵՐՈՒ ԴԷՄ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏԻ ԵՒ ՈԳԵԼԻՑ ԸՄՊԵԼԻԻ ՀԱՐՑԵՐ

Իրանցի կանանց իսլամական հագուստի հարցը նոր չէ: Ծանօթ է, որ նոր կարգերու հաստատումով Իրանի կանանց դուրս գահեն Հայուհիներէն եւս կը պահանջէր «գոց հագուստ», նոյնիսկ չատոր պարծածել: Երկար բանակցութիւններ անհրաժեշտ եղան ի վերջոյ միջին եղր մը դտնելու համար, այն է՝ խուսափիլ «բաց» հագուստները կրելէ, չնայած յարգել իսլամ օրէնքները, պատշաճ զգեստաւորումով եւ նոյնիսկ գլխակապով ներկայանալ դործի եւ հանրային վայրերը: Սակայն, հակառակ այս ուղղութեամբ Հայուհիներու ցուցաբերած դրական եւ պատշաճ վերաբերումին, վերջերս արշաւ մը ծայր առած է մանաւորաբար Թեհրանի հրապարակներուն եւ պողոտաներուն վրայ՝ իսլական սեռի, այդ կարգին նաեւ Հայուհիներու դէմ: Այդ ապօրէն արշաւի (քանի որ խորհրդարանական ոչ մէկ օրէնք պոյութիւն ունի հագուստի համար) եւ հետզհետէ (անոնք՝ որոնք Մոմէյնիի եւ իսլամի պատուիրանները կը պարտադրեն) բիրտ ու մերթ վիրաւորական վերաբերումի հետեւանքով, որոշ տհաճ միջադէպեր տեղի ունեցած են Թեհրան: Ուստի, Թեմին առաջնորդը՝ Արտակ Արք. Մանուկեան, ընդառաջելով հայ կանանց մտահոդութիւններուն եւ առաջարկին, նամակ մը դրկած է Խորհրդարանի նախագահ եւ Թեհրանի Ուրբաթօրեայ աղօթքի առժամեայ առաջնորդ Հաշեմի Ռաֆսանճանիի, որպէսզի ան իր քարոզներուն մէջ անդրադառնայ նաեւ Հայուհիներու պատշաճ եւ մերթ տոհմիկ ազգային զգեստաւորման, յորդորելով իսլամները, որ յարգեն Հայերը, մանաւանդ Հայուհիները, բիրտ ու կոպիտ վերաբերում չունենան եւ ապօրէն պահանջներ չներկայացնեն անոնց:

Խորհրդարանի հայ երեսփոխան Հրայր Խալաթեան, Հինդշաբթի, Մայիս 13-ին, յիշեալ նամակը յանձնած է Ռաֆսանճանիի, լուսաբանութիւններ տուած այդ մասին եւ առաջարկած ժամադրութիւն մը նշանակել, որպէսզի Արտակ Արք. եւ Ազգ. Իչխանութեանց ներկայացուցիչներ հանդիպում մը ունենան եւ միասնաբար քննելով հարցը դիմեն համապատասխան միջոցներու:

Թեհրանի մեր պաշտօնակից «Ալիք»ի Մայիս 16-ի թիւէն քաղելով կուտանք Առաջնորդին նամակը (արեւմտահայերէն):

«Ատուծոյ ճամբուն վրայ ինկած պարսիկ եւ հայ բոլոր նահատակները ողջունելով եւ իրաքի կողմէ պարտադրուած պատերազմի ճակատներուն ձեռք ձըգուած յաղթանակներու առթիւ չնորհաւորութիւն եւ ուրախութիւն յայտնելով՝ հետեւեալ կէտերը կը յանձնենք ձեր ուշադրութեան:

«Այժմ որ իսլամական յեղափոխութեան նպատակներու իրագործման համար քայլերու հաղուելու կապակցութեամբ կարգադրութիւններ եղած են, հայ բնակ կարգադրութիւններ եղած են, հայ փոքրամասնութեան համար որոշ դըժուարութիւններ եւ հարցեր յառաջացած են:

«Պարզ է որ բոլոր հայ քոյրերը իսլամի օրէնքները յարգելով՝ հանրային վայրերու, հիմնարկութիւններու, ճամբաներու եւ ոչ հայկական միջավայրերու մէջ անհրաժեշտ ծածկոցով եւ պատշաճ հագուստով կ'երեւան, նոյն նպատակով նոյնիսկ անոնցմէ ոմանք յատուկ ծածկոցի գործածուին, որ կը համապատասխանէ Հայոց կրօնական եւ ազգային աւանդական տարազին, որ աւելի քան կը նպաստէ հետապնդուած նպատակի իրագործման ու կանանց բարոյականի առաւել պահպանման ու հասարակութեան մէջ յարդանքի ապահովութեան:

«Ներկայիս, նկատի առնելով որ Իրանի իսլամական Հանրապետութեան Սահմանադրութեան 13-րդ եւ 15-րդ յօդուածներու տրամադրութեամբ՝ ճանչցուած կրօնական փոքրամասնութիւնները ըստ իրենց կրօնական, ազգային աւանդութիւններու եւ սովորութիւններու եւ մշակոյթի կը վարուին, նկատի ունենալով որ իմ կողմէ եւս դիտողութիւն կատարուած է, որ հայ քոյրերը եթէ փափաքին կրնան օգտուիլ յիշեալ տարազէն եւ նկատի ունենալով որ կանանց ծածկոցի եւ հագուստի կապակցութեամբ խորհրդարանին մէջ ոչ մէկ օրինագիծ վաւերացուած է, պատասխանատու շրջանակները եւ ժողովուրդը պարզապէս Գուրանի հրահանգներու գործադրութեան գծով կը պահանջեն քոյրերու իսլամական ծածկոցի գործածութիւնը, կը խնդրեմ, որ կարելի եղած պարագային, ուրբաթօրեայ հատուածական աղօթքի ձեր քարոզներէն մէկուն մէջ յիշեալ հարցին անդրադառնաք ու նշէք որ պատասխանատու կամ անպատասխանատու տարրեր խուսափին հայ քոյրերու հետ սուր եւ արտառոց բախումներ ունենալէ, որոնք կրնան յառաջանալ անոնց հագուելու տարբերութենէն»:

Միւս կողմէ, «Ալիք»ի Մայիս 18-ի թիւէն կ'իմանանք, թէ ոգելից ըմպելիի վաճառքի հարցը հայկական շրջանակներու մէջ զարձեալ սուր բնոյթ ստացած է: Այդ առթիւ Թեմին առաջնորդը մամուլով կոչ մը ըրած է ժողովուրդին, անոր ուշադրութեան յանձնելով ոգելից ըմպելիներու պատրաստութեան եւ վաճառքի հարցը եւ յորդորելով, որ «Հայերը խուսափին իսլամ եղբայրներուն ոգելից ըմպելի վաճառելէ եւ այդ հարցին մէջ յարդանքով վերաբերին իսլամական օրէնքներու հետ»: Առաջնորդը յիշեցնելէ ետք, որ «պետական պատկան հիմնարկները պիտի խստացնեն իրենց վերաբերումը ն մ ա ն անճնաւորութիւններու նկատմամբ», կոչ ըրած է ժողովուրդին որ «խուսափի նման գործերէ եւ իր այս արարքով Իրանահայութեան վարկին եւ անունին սուուր չձգէ· յարգէ երկրի իսլամական օրէնքը եւ պարկեշտ ընթացք ունենայ», որպէսզի Իրանահայութիւնը «մխայն խմիչք ծախողի անունով չճանչցուի»:

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏԻ տօնին առթիւ, «Ցառաջ» լոյս չի տեսներ երկուշաբթի (երեքշաբթի, Յունիս 1-ի թիւ) եւ խմբ. բագրատունը փակ է շաբաթավերջին:

ՈՒՐԱԽ ԵՐԳ, ԴՈՂ - ՋՈՒՌՆԱՅՈՎ ԵՒ ՑԱՒԱԼԻ ՎԵՐՋԱԲԱՆՈՎ...

Ձթողնե՞մ հիմա ամէն ինչ ետքից
ու գոռ տամ յանցին – վանկին զօրաւոր,
քող ինչ ուզում են մտածեն ու ինձ
կարծիքներն իրենց յայտնեն գրաւոր:
Դէ, դուռս բաց է, թռէք սոխակներ,
ձեր բնարներով համեցէք իմ տուն,
էլ կօշիկ հանել պէտք չէ, ներս անցէք,
ձեզ ենապատում օդին ու քթուն:
Եւ վարդեր դուբ էլ եկէք զոյգ առ զոյգ,
պճնուած շքեղ զանգուլակներով,
չորսդին տարածէք զանազան բուրմունք
եւ զբաղուեցէք ձեր սոխակներով:
Եւ սիրահարներ դալուկ ու տրտում,
ձեզ համար ճոյնպէս իմ դուռը բաց է,
առանց բաշուելու համեցէք իմ տուն,
նստէք անկիւնում, ձեզ համար լացէք:
Եւ ուտող խմող տղերքն էլ քող գան,
երգելով մտնեն իմ տան բացդռնով,
հին սիրածներին յիշեն ու ողբան,
յետոյ ամէն ինչ վերջանայ կռուով:
Եւ աշուղները քող գան սազերով
ու ճորից լուծեն հարցը նագելու,
գինին պտըտուի կաւէ թասերով
եւ կարմիր խնձոր՝ ոսկէ վազերում:
Երկար մազերով աղջիկներ քող գան
եւ հեզանկուն քող պարեն ճորից
եւ իգիթները ճորից խենթանան,
կատաղած բռնեն թրերի կոթից:
Ու մի տխուր երգ քող փչէ զուռնէն
եւ ես լաց լինեմ գլուխս բռնած,
խփուեմ պատէպատ ու ռռնամ ուժեղ···
ու դուրս վռնտեմ բոլորին յանկարծ···

ՑՈՎՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՄՈՎ

ՊԱՊԸ Լոնտոն հասաւ Ուրբաթ օր, Մայիս 28-ին, թէեւ կը կարծուէր որ այս այցելութիւնը կրնայ ընդհատուիլ պատերազմին պատճառով, ան ալ լատին, կաթողիկէ երկրի մը հետ: Ցովհ. Պօղոս Բ. առաջին պապն է, որ ոտք կը դնէ մեծն Բրիտանիա, չորսուկէս դար ետք որ դումէն, երբ Հանրի Ը. հիմնեց անկլիքան եկեղեցին, ինքզինքն անոր գերագոյն պետն հռչակելով, քանի որ կղեմէս Է. պապը մերժած էր ընդել իր ամուսնու – թիւնը Քաթրին ա'Առակոնի հետ, կարենալ ամուսնանալու համար Անն Պոլէյնի հետ: Այս այցելութիւնը առաւելաբար էկիւմենիք բնոյթ ունի: Անգլիոյ մէջ, ներկայիս հինգ միլիոն կաթողիկէ կայ: Պապը կ'ընդունուի թագուհիին կողմէ եւ զանազան հանդիպումներ կ'ունենայ:

ԳՈՆԻԱՑԻ մէջ է որ Թուրքիա, որպէս անդամ Ատլանտեան Ուխտի Առաւմս լըրտեսական օդանաւերու կայան մը պիտի հաստատէ:

ԱՐՏԱԿԱԳ ՆԻՍՏԷՆ ետք, որ դուռմարուեցաւ Մայիս 27-ին, Լը Մոնտի տօնօրէնը վերջնապէս ճշդուեցաւ, յանձին Անտրէ Լօրանտի: Ժաք Ֆօվէ իր պաշտօնը կը փոխանցէ ուրեմն Յուլիս մէկին: Մայիս 2-ին խմբագիրներն էին որ, մեծամասնութեամբ ընտրած էին Լօրանտը, հարկ էր, ընդհ. արտակարգ ժողովն ալ իրաւատէրերու վաւերացնէ, ինչ որ ըրաւ 1000-ի վրայ 960 իրաւաթուղթով:

ԽՈՐՀՐԴԱՑԻՆ պետական ոստիկանութեան – Ք. Կ. Պ.ի դլուխը նշանակուեցաւ Վիտալի Ֆեդորչուք, փոխարինելու համար Անդրոպովը:

ՖՐԱՆՍԱՑԻ ըմպելի Ջուրը խմուելիք չէ եղեր, ինչպէս կը փաստէ առողջապահութեան նախարարութեան հրապարակած տեղեկագիրը, 87 նահանգներու մէջ, քննութիւն կատարելէ ետք: 600 հազար Ֆրանսացիներ ուղղակի կսկածելի Ջուր մը կը խմեն, որ վարակիչ հիւանդութիւններ կը պատճառէ:

ԽՈՐՀ· ՄԻՈՒԹԻՒՆ

«ՊՐԱՒԴԱ»Ի 70-ԱՄԵԱԿԸ

Պրաւդայի այժմու տպաքանակը ներկայիս չուրջ 11 միլիոնի կը հասնի:

Հիմնուած է 1912, Ապրիլ 22-ին, Նոր Տոմարով՝ Մայիս 5-ին:

Այս առթիւ, Սով· Հայաստան օրաթերթը խմբագրականով եւ երկար յօդուածով մը դրուատիքը հիւսած է «կուսակցութեան եւ ժողովրդի տիբրուն»ին հասցէին, յիշատակելով Թերթին կատարած կարեւոր դերը լենինեան գաղափարներու տարածումին մէջ, ինչպէս նաեւ կուսակցութեան քաղաքական - անտեսական ծրագիրներուն, առաջադրութիւններուն ուղղութեամբ իր ստանձնած պարտաւորութիւններուն մէջ:

Մանրամասնութիւններու յիշատակութեանց ճամբուն մէջ, Սով· Հայաստան կարդ մը անտեսումներ կատարած է, որոնց ճշդումը եւ Պրաւդայի դերին մասնանշումը չահեկան կրնան նկատուիլ «Յառաջ»ի ընթերցողներուն համար:

Թերթին անունը: Լենին 1912-ին կ'որոշէ օգտագործել նախապէս մեծ ժողովրդականութիւն ստած եւ բանուորական շրջանակներուն մէջ չահեկանութիւն ներկայացուցած համանուն խորագիրը Մենշեւիկեան Թերթին, հրատարակուած 1905-ին, Ուկրէնները կողմէ: Տրոցկի 1908-ին, Հոկտեմբերին, կը ստանձնէ Ուկրէն Մենշեւիկներու օրկանին խմբագրութիւնը:

Լենինի որոշումին վրայ, Տրոցկի բուռն կերպով կը բողոքէ անունին վերագործածութեան դէմ: Լենին կ'անտեսէ:

Հիմնադիրները: Խորհրդային գրիչները ժամանակ մը է վեր Պրաւդայի միակ հիմնադիրը կը նկատեն Լենինը: «Լենինի կողմից հիմնադրուած» բացատրութիւնը կուտան: Զեւով մը ճիշդ է, եթէ նկատի առնենք միտքին յղացումը եւ Լենինի կատարած կարեւոր դերը Պրաւդայի բովանդակութեան ճոխացումին եւ տարածումին մէջ: Այս այսպէս ըլլալով հանդերձ, հիմնադիրներու անուններուն մատնանշումին մարզին մէջ անտեսումը կը մնայ ցայտուն: Խորհրդային պատմագրութիւնը երկար ժամանակ Պրաւդայի հիմնադիրներ նկատած էր, Լենինի ցուցմունքով, նաեւ Օլմինսկի, Պոլետաեւ եւ Ստալին: Այս վերջին անունը կարելի է խնդրոյ առարկայ դարձնել, երբ դիտենք, թէ Ստալին, իր մենաիրութեան ժամանակաշրջանին կը ճգնէր իր անունը որեւէ ձեւով եւ ճամբով կապել Լենինի հետ, այնպէս ցոյց տալով, թէ Առաջնորդին ամէնէն մօտ եւ սերտ գործակիցը եղած է: Մինչդեռ փաստն այն է, որ Լենինի մօտիկ գործակիցները եղած են չատերու կարգին Տրոցկի, Կամենեւ, Զինովիեւ Բուխարին եւ ուրիշներ:

Դեռ 1902-ին Իսկուտսկէն կեծղ անցագիրով փախուստ տալէ ետք, Տրոցկի Վիէննա - Լոնտոն - Ցիւրիխ ճամբով կը հանդիպի Վլադիմիր Իլիչ Ուլիանովին, ապագայ Լենինին: Կ'աշխատակցի սոցիալ - դեմոկրատ Իսկրային (կայծ) հիմնը - ած Լենինի, Պլեխանովի եւ ուրիշնե - րու կողմէ 1900-ին, Դեկտեմբերին: Խմբագրութեան մաս կը կազմեն Ակսելրոդ, Զասուլիչ, Մարտով:

Այս միջանկեալ մատնանշումը անոր համար, որ ներկայիս կ'անտեսուին կարգ մը իրողութիւններ եւ անուններ ծանօթ պատճառներով:

Աւելցնենք, իրրեւ պատմութեան նիւթ, որ Պրաւդային առաջ լոյս կը տեսնէ Զվեզդա շաբաթաթերթը:

Այսուհանդերձ, Պրաւդայի հիմնադրութեան թուականն է Ն· Տ· Մայիս 5, որ կը նկատուի խորհրդային մամուլի օր: Նախապէս՝ կը նկատուէր եւ կը յիշատակուէր բանուորական մամուլի տօն:

Ցարական Ռուսիա դրաքննութեան եւ ճնշումներու ճամբով բազմաթիւ փորձեր կը կատարէ արգիլելու համար հրատարակութիւնը Պրաւդայի: Սով· Հայաստան օրաթերթը այս ուղղութեամբ կը դրէ.- Ցարական իշխանութիւնները դաժանօրէն հետապնդում էին թերթին ... Բայց թերթն ամէն անգամ վերածնւում էր նոր անունով ... Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեակին՝ 1914 թուականի Յուլիսին, ցարական ժանդարմաները ապերեցին թերթի խմբագրութիւնը, նրա հրատարակումը արգելուեց»:

Վերհրատարակութեան այլ եւ այլ անուններէն մէկ քանին քաղելով «Համամիութենական Կոմունիստական (Բոլշեւիկների) Պարտիայի Պատմութիւն» հարցէն, Հայպետ հրատ· 1946, ներկայացնենք.- Զա Պրաւդու, Պուտ Պրաւդի, Տրուդովայա Պրաւդա եւայլն.:

Ցարական վարչակարգին տապալումը, Փետրուարեան ծանօթ յեղափոխութեան հետեւանքով, առիթ կ'ընծայէ թերթին վերհրատարակութեան 1917, Մարտ 5-ին (18):

Նոյն թուականի Հոկտեմբեր 27-էն (Նոյեմբեր 9) Պրաւդա կանոնաւոր կերպով լոյս կը տեսնէ նախ Պետրոգրատ, ապա Մոսկուա, 1918 Մարտէն սկսեալ:

Թ· ՄԻՐԻՃԵԱՆ

LIVRES RECUS:

« LES CHANTS D'UNE FILLE D'EDESSE »

BARKEVOUHI ORFA-BEDROSSIAN

Illustration par l'auteur

Paris — 1982

«ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ» ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ

Երաժշտական աշխարհի մէջ, ներկայ ժամանակներու առաջնակարգ եւ մեծագոյն վարպետներէն մին:

Դաստիարակուած ու կազմուած ռուսական երաժշտական մեծ դպրոցի չունչով եւ երգարուեստով, սակայն իր երաժշտութեան աղբիւրը եղաւ հայկական: Հարազատ ու ինքնատիպ: Իր մշակած բոլոր սեռերուն մէջ ալ դուրս կը ցայտէ հայկական ժողովրդական մեղեդիներու քնքշութիւնը: Հայ ազգային ու ժողովրդական երգն ու պարը անսպառ աղբիւր եղան ներշնչումի եւ յղացքի Արամ Խաչատուրեանի համար:

Այսպէս Արամ Խաչատուրեան անուղղակի դարձաւ դեսպանը՝ հայ երգին ու երաժշտութեան, զուտ ազգային մակարդակէ մը բարձրացնելով զայն միջազգային մակարդակներու:

Իր ամէնէն ծանօթ կտորը, որով փառքի տիրացաւ, հռչակաւոր «Սուրերու Պար»ն է, 1942-ին «Գայեանէ» պարանոցին համար դրուած էջ մը:

Ուտի, Մարսէյլի մէջ ստեղծուած «Արամ Խաչատուրեան Հիմնարկութիւն» մեծարանք, ձօն մըն էր երաժշտական ասպնդին:

Գնահատելի այս ձեռնարկը նախաձեռնութիւնն է կարգ մը երաժշտասէր եւ ազգանուէր Հայերու որոնք Արամ Խաչատուրեանի եղած մեծարանքին ընդմէջէն ծառայութիւն մըն է որ կը բերեն հայ մշակոյթին. երաժշտութիւնը, մանաւանդ Արամ Խաչատուրեանի երաժշտութիւնը, ըլլալով կենդանի խորհրդանիշը, յատկանշական արտայայտութիւններէն մին այդ մշակոյթին:

Արամ Խաչատուրեան այս հիմնարկութիւնը որ պաշտօնապէս մարմին առած է կը վայելէ պատուոյ նախագահութիւնը Մարսէյլի քաղաքապետ եւ նախարար՝ Կաթրն Տըֆէռի: Պատուոյ անդամներն են.- մեծ Մարսէլ Փաուլի՝ գեղարուեստի կցորդը Մարսէյլի քաղաքապետարանին, Փիէռ Պարպիզէ՝ անօրէն Մարսէյլի երաժշտանոցին, Ժան Սոլէռ՝ մշակութային հարցերու շրջանային անօրէն:

Հիմնարկութիւնը, երկու տարին անգամ մը ժիւռիի մը միջոցաւ, պիտի բաշխէ «Արամ Խաչատուրեան Մեծ Մրցանակ»ը դասական երաժիշտի մը առաջին սաղմին եւ կը ստեղծէ «Արամ Խաչատուրեան կրթաթոշակ» մը երիտասարդ երաժիշտի մը համար:

Ժիւռիին մաս կը կազմեն երաժշտական աշխարհին պատկանող յայտնի անձնաւորութիւններ - Մօրիս Ռաւէլ՝ փոխադահար, Փիէռ Պարպիզէ՝ դաշնակահար, Սերժ Պոսօ՝ նուագախումբի ղեկավար, Մինօ Ֆրանչեսքաթի՝ չուխակահար, Եանուս Ֆիւրաա՝ նուագախումբի ղեկավար, Սիւզանա Միլտոնեան՝ տաւիղահարուհի, Ժան Փիէռ Ռամբալ՝ արձագահար, Ալեքսանտր Սիրանոսեան՝ նուագախումբի ղեկավար: Նոյնպէս 2 երաժիշտներ եւ մաքուր կերակուրներ սկսան բերել: Նախապէս ալ երեւի կը բերէին, բայց մեղմ էին տար ամբողջովին: Շղթանները եւ տանջանքները քաղաքավարի եւ փաղաքշող դարձան: Մէկ երկու օր վերջ փոքրիկ դրութիւններ երեւցան թաշկինակներու եզերքներուն դրուած. «Մի՛ մտածէք, չուտով կ'ազատիք», «Սահմանադրութիւն է», «ներում բանտարկեալներուն», եւայլն, եւայլն: Մուցերու մէջ արգելափակուածներս նախապէս լրտու հետ կը յարաբերէինք պատի վրայ դարնելով եւ բառեր կազմելով, այսպէս ա-ի համար մէկ հարուած, բ-ի համար երկու հարուած եւայլն: Այժմ գիրար կը կանչէինք բարձր ձայնով եւ կը յայտնէինք մեր ստացած ուրախալի լուրերը: Ձիտէչեան Գէորգ իմ խուցիս ճիշդ քովն էր: Իմս, ինչպէս նախապէս գրած եմ, ամենապէշ տեղն էր, յայտորդը Գէորգն էր որ արդէն տկարակազմ լինելով հիւանդացաւ եւ սկսաւ արիւն թքել: Ա՛խ Տաճատ, կ'ըսէր, անգամ մը որ դուրս ելնեմ տակէ, տես թէ ինչե՛ր պիտի ընեմ այս անպիտաններու դլխին: Եւ իսկապէս ալ 1915-ի Վանի ինքնապաշտպանութեան կռիւներուն իր կազմակերպած հրթիռ խումբերով կրցած էր այրել մի քանի թրքական դիրքեր, այրելով Թուրքերն ալ մէջերնին:

Պոլսէն եկած հրամանին վրայ Օգոստոս 1-ին բանտի դռները կը բանան եւ դրեթէ բոլոր քաղաքական հայ բանտարկեալները ազատ կը թողուն. դրեթէ բոլոր կ'ըսեմ, որովհետեւ մեզմէ մի քանին չեն դասեր քաղաքական յանցագործներու կարգը, այլ կ'ուզեն որպէս ոճրագործ բանտը պահել:

(Շար.- 11)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԳԷՈՐԳ ԱՐՇԱԿԵԱՆԻ ՆԿԱՐԱԶԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ

Երեւանի ժողովրդական ստեղծագործութեան թանգարանին մէջ բացուած է կաթսայագործ Գէորգ Աբշակեանի անհատական ցուցահանդէսը, ուր ներկայացուած են սիրող նկարիչին կտաւները: Ցուցադրուած նկարչական եւ գծագրական 50 գործերու մէջ կը ցոլանան Հայաստանի բնութիւնը, ժողովուրդին աշխատանքային կեանքը իր տարեհաւայեցքը, ղիւղական կանոքը իր այլազան երեսներով, ճարտարապետական յուշարձանները եւ այլն: Գէորգ Աբշակեան աւարտած է Մոսկուայի պետական ժողովրդական համալսարանի հատուցային նկարչութեան երիտասարդ դասընթացքը, թղթակցութեամբ: Իր գործերը շատ անգամ ցուցադրուած են նաեւ Խորհ· Միութենէն դուրս: Պարգեւատրուած է վկայականներով եւ մեծարներով:

Հայաստանէն մաս կը կազմեն ժիւռիին խուսարդ Միրզոյեան՝ երգահան եւ Հայաստանի Կոմպոզիտորներու նախագահ, Յովհաննէս Չեքիճեան Հայաստանի Պետական երգչախումբի դեկավար:

Հիմնարկութիւնը կը հաշուէ հիմնադիր անդամներ, որոնք կը մասնակցին քսան հազար ֆրանքով, բարերար անդամներ որոնք կը մասնակցին հինգ հազարով եւ նուիրատու անդամներ՝ որոնք կը բերեն երկու հազար ֆրանք: Այս մասնակցութիւնը անուշտ մէկ անգամ եւ վերջնական է: Դրամագլուխը կը մնայ անձեռմխելի: Գոյացած տոկոսներն է որ պիտի տրուին եւ Արամ Խաչատրեանի Մրցանակը եւ Արամ Խաչատրեան կրթաթոշակը կը ուն նաեւ հիմնարկութեան մատակարարումը: Մատակարարման Խորհուրդը բաղկացած վարչութիւնը պիտի վարէ հիմնարկութիւնը: Մատակարարման Խորհուրդը կը կազմեն հիմնադիր անդամները, ահատասիկ ցանկը - Տօքթ· Ռոպէր Ատուռեան, Գասպարեան Շարլ, Թաւիթեան Արիս, Իօքսիւեան Մատլէն, Թորնեան Գէորգէն, Ղազարեան Փիէռ, Ճէլալեան Մատլէն, Ճիէրճեան Մուրատ, Յակոբեան Ժոզէֆ, Ջրբաշեան Էլիզ, Պապայեան Աբշամ, Պապայեան Ժէռար եւ Ժան Շարլ, Պօղոսեան Տարօն, Պօղոսեան Վարուժան:

«Արամ Խաչատրեան Հիմնարկութիւնը» կուսայ իր առաջին ելոյթը, Ուրբաթ, Յունիս 4-ին, Մարսէյլի օփերային մէջ: Համերգ մը ի նպաստ հիմնարկութեան նպատակին: Նորաստեղծ այս հիմնարկութեան կը մաղթենք յաջողութիւն, յարատեւութիւն, լաւագոյնս իրագործելու համար իր ծրագիրները, յաջողելու նպատակներուն մէջ:

ԿԱՐՕ ՑՈՎՍԷՓԵԱՆ

ԴԱՒՈՅԻ ԴԱՒԱՃԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԻՆՉՊԷՍ ՍՊԱՆՆԵՑԻ ՋԻՆԴԸ

Գրեց՝ ՏԱՃԱՏ

Զ.- ԲԱՆՏԻ ՄԷՋ

Չիս ալ երկու անգամ տարին հարցաքննութեան: Ամէն մեքենայութիւն կ'ընէին դաղանիքներ կորզելու համար: Եւ իմ պատասխանները պրոպագանդայի ձեւին կը դարձնէի: Թէ մենք ապստամբներ չէինք, թէ զէնքերը միայն ինքնապաշտպանութեան համար էին, թէ մենք պիտի օգնէինք երիտասարդ Թուրքերուն՝ տապալելու համար ապիկար սուլթանականը կառավարութիւնը, եւ հաստատելու լաւ կարգեր բոլոր ժողովուրդներու համար անխտիր: Երբ անգամ մը հարցաքննիչը ըսաւ թէ Թուրքերը չատ գոհ են Սուլթանէն, ըսի թէ անցեալ ամռան Էրզրումի եւ Քաղթէմունիի դէպքերը այդ չեն ապացուցաներ, եւ յանձնարարեցի իրեն կարդալ Սապահ Իւլ Խայր: Երբ հարցուց թէ ուրկէ՞ կրնայ ձեռք բերել, ըսի թող դիմէ կուսակալին: Իսկապէս ալ երբ ամէն անգամ այդ թերթը կը տպէինք ժամանակին, առաջին օրինակները թուրք յեղափոխականներու կողմէ գաղտնի կը. հասցնէին կուսակալին եւ կառավարական այլ բարձրաստիճան պաշտօնեաներու:

Երբ Արամը կը տանէին հարցաքննութեան նա զուտ քարոզչական ընոյթ կուտար իր խօսուածքներուն: Ունէր խիստ դրաւիչ դիմագիծ եւ խօսակցութեան ձեւ, ու իր թաթար թուրքերէնով կը դրաւէր բոլոր ներկաները, որոնք յափշտակուած դինքը մտիկ կ'ընէին: Կը բացատրէր Թուրքիոյ ապագայ ազատ կարգերը, ժողովուրդներու համերաշխ գործակցութիւնը եւ յառաջդիմութիւնը: Կը բացատրէր Փարիզի Համաձայնական Քոնկրէսի բնոյթի մասին որ քիչ առաջ էր տեղի ունեցեր: Մեր եւ Թուրք գաղտնի թերթերը լեցուն էին նման գաղափարներով: Յուլիս 11-ը չատ մօտ էր եւ անոր ազդեցութիւնը օդի մէջէն կարծես կը զգացուէր նոյնիսկ դատարանի մէջ: Ազատ բանտի մէջ եղած ատեն ընթերցանութեան համար դիրք կ'ուզէ, ու իրեն կուտան Ատտուածաչունչ: Կը պատմէր որ ժամանակ անցընելու համար 2 անգամ ծայրէ ծայր կը կարդայ:

*Երկու ամիս բանտն էինք: Օր մըն ալ յանկարծ ամէն ինչ փոխուեցաւ: Բանտարկեալներուս տուներէն ամէն օր լուրեր կը ստանայինք: Ամէն օր կ'ըսէին թէ պիտի ազատուինք: Ամէն օր կը սպասէինք: Ամէն օր կը յուսախաբ ըլլայինք: Ամէն օր կը տեսնէինք որ ուրիշներ կ'ազատուին, մեզ կը մոռնան: Ամէն օր կը մտածէինք որ մեզ ալ պիտի ազատեն

Ցեղասպանութեան Յուշարձանին Բացումը Վիեննի մէջ

Վիէն («Յառաջ»).- Մայիս 16-ը յիշատակելի օր մը պիտի մնայ Վիէննի հայ գաղութի պատմութեան մէջ: Արդարեւ, ընդառաջելով հայ համայնքի բաղձանքին, Ազգային Միութիւնը յաջողած էր ապահովել հողամաս մը «Ապրիլ 24, 1915» փողոցին վրայ, ուր կառուցուած էր Ցեղասպանութեան յուշարձան մը, որուն բացումը կը կատարուէր Մայիս 16-ին, ներկայութեամբ եւ պատուոյ նախագահութեամբ Լուի Մերմազի՝ Ապր. Ժողովի նախագահ եւ երեսփոխան - քաղաքապետ Վիէննի:

Առաւօտեան, Սէն Անտրէ լը Հօթ Եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ քարոզեց Լիմնի եւ չրջակայից հոգեւոր հովիւը՝ Նորվան Եպիսկ. Զաքարեան:

Յառաջ պատարագի տեղի ունեցաւ ճաշ մը, որու ընթացքին խօսք առին Միհրան Մամլեան (Փարիզէն, որ ի մէջ այլոց իր մէկոյով հատաքուած դրամներ յանձնեց Ազգ. Միութեան), կարապետ Տէրտէրեան (Մարսէյլէն, Նախկին Թաղմիկներու Միութեան նախագահ), Թադեր Թադեռեան (Կաիէն) եւ նկատի առ Տէր - Մարգարեան: Ճաշին ներկայ էր նաեւ Մոնթէ - Քարլոյէն բարեբար Մուշեղ Ձիէշճեան, որ քանի հազար Ֆրանքով մասնակցած էր յուշարձանի կառուցման համար եղած հանգանակութեան: Ազնիւ բարերարին տրուեցաւ կրնքահայրութեան պատիւը:

Ժամը 16-ին տեղի ունեցաւ յուշարձանի բացման հանդիսութիւնը, մօտ երկու հազարի հասնող բազմութեան մը ներկայութեան: Ազգ. Միութեան նախագահը՝ Ասդ. Լուսարեւեան, խօսք առնելով (Փըրանսերէն) դրուագներ ոգեկոչեց 1915-ի ցեղասպանութենէն: Երեսփոխան - քաղաքապետ Լուի Մերմազ իր խօսքին մէջ դատապարտեց Թուրք կառավարութեան կողմէ կատարուած Ի. դարու առաջին ցեղասպանութիւնը:

Ցուզիչ էր պահը, երբ տարեց սերունդի ներկայացուցիչներէն Աստուր Քղելեան, երկու մանուկներու ընկերակցութեամբ, ծաղկեպսակներ կը դնէր յուշարձանին առջեւ: Վայրկեանի մը լռութենէն ետք Նորվան Եպիսկ. աղօթքով մը օրհնեց յուշարձանը, զոր քանդակած է Թորոս Ռաստկէլէնեան:

Կեդրոնական Ֆրանսայի զանազան չըրջաններէ՝ Լիոն, Փոն տը Շէրի, Սէն Շամոն, Տէսին, Սէն Թիթիէն, Կրընոպլ, Նաս, եկած էին ազգային միութիւններու ներկայացուցիչներ: Հանդիսութիւնը մեծ տպաւորութիւն թողուց բազմութեան վրայ: Ցուշարձան մը եւս բարձրացաւ իբրեւ վկայութիւն հայ ժողովուրդի դէմ կատարուած անարդարութեան եւ իբրեւ խորհրդանիշ մեր ապրելու եւ գոյատեւելու կամքին:

ՄԱՄԲՐԷ ԱԼԹՈՒՆԵԱՆ

ԱՊՐԻԼեԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐԸ ՔԱՆԱԱՏԱՅԻ ՄԷՋ

Ապրիլ 24-ին Օթաուայի մէջ տեղի ունեցած են քաղաքական հաւաքոյթ մը եւ ցոյց մը Թրքական դեսպանատան առջեւ: Մոնրէալէն, Թորոնթոյէն, Համիլթընէն, Քեմպրիճէն, Սէնթ Քաթրինզէն եւ Վան: գումըրէն չուրջ 2·500 Հայեր մասնակցած են քանատական Ծորհրդարանին առջեւ Հ. Ց. Դ. Հայ Դատի Յանձնախումբի կազմակերպած հաւաքոյթին, ուր խօսք առած են Արամ Այվազեան (անգլերէն), Օնթարիոյի Հայ Դատի Յանձնախումբին կողմէ Յակոբ Սեւակեան (անգլերէն), Քէպէքի Հայ Դատի կողմէ՝ Զարեհ Սուրուզեան (Ֆրանսերէն) եւ Քանատայի Հայ Դատի Յանձնախումբին կողմէ Խաչիկ Յակոբեան (հայերէն) արտայայտելով Հայութեան պահանջները Թուրքիայէն եւ Քանատայի Հայութեան ակնկալութիւնները քանատական կառավարութենէն:

Ասպա Թափօրը ուղղուած է դէպի Թրքական դեսպանատուն, ոստիկանութեան խիստ հսկողութեան տակ: Բազմութիւնը ունեցած է բողոքի արտայայտութիւններ, կոչեր արձակած է եւ յեղափոխական երգեր մեկնաբանած: Դեսպանատան առջեւ յանուն Հ. Ց. Դ. Երիտասարդացի խօսք առած է Վիդէն Սարգիսեան:

Զայն - հեռատեսիլն ու մամուլը արձագանգած են ցոյցին եւ հաւաքոյթին:

Հ. Ց. Դ. Հայ Դատի Յանձնախումբին կազմակերպութեամբ Ապրիլեան ոգեկոչումներ տեղի ունեցած են նաեւ Մոնրէալ, Թորոնթօ, Համիլթըն եւ Վանգուվըր: Մոնրէալի մէջ խօսած է Մարգար Շարապխանեան, Թորոնթօ՝ Մուրատ Թոփալեան (անգլերէն) եւ Մարգար Շարապխանեան (հայերէն), Համիլթըն՝ Շաքէ Մինասեան (հայերէն) եւ Մուրատ Թոփալեան (անգլերէն), իսկ Վանգուվըր՝ Վարդգէս Քիւրքեան (Հ. Ց. Դ.), եւ Յակոբ Ալթունեան (Ռ. Ա. Կ.):

Թորոնթոյի Հ. Բ. Ը. Մ.ի նորակառոյց կեդրոնին մէջ եւս, Ապրիլ 25-ին, նըշուած է եղեռնի 67-րդ տարեդարձը: Բանախօսած է Արսէն - Նուպար Մամուրեան: Խօսք առած է նաեւ Նահանգային նախարար Մարկրէթ Պըրչ:

×

Ապրիլեան ոգեկոչումներ տեղի ունեցած են Մոնրէալ, Ապրիլ 23-ին եւ 24-ին, Հ. Բ. Ը. Մ.ի Մարի Մանուկեան սրահին մէջ:

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՀԱԼԷՊի հայահոծ մէկ չրջանին մէջ տեղի ունեցած է Հայ կեդրոնի մը հիմնարկէքի հանդիսութիւնը: Ներկայ եղած է մեծ բազմութիւն մը: Ժամը 12ին ժամանած է թեմին առաջնորդը՝ Սուրէն Եպիսկ. Քաթարոյեան եւ դիմաւորուած ազգային եւ եկեղեցական անձնաւորութիւններու կողմէ, Հ. Մ. Ը. Մ.ի նուագախումբի հնչեցուցած նուագներուն ատրճեաններ: Խօսք առած է Տոքթ. Մանուկ Իսկենտէրեան եւ չեչառած կարեւորութիւնը Հայ կեդրոնին՝ իբրեւ մեր ազգային կեանքի մէկ ամուր խարիսխը: Շինարարական Յանձնախումբի ատենապետ Յովհաննէս Մուշեղեան ներկայացուցած է (արաբերէն) Հայ կեդրոնի չինութեան նպատակը: Սուրէն Եպիսկ. դեռեղած է հաստատութեան առաջին քարը, մինչ նուագախումբը հնչեցուցած է «Դարձեալ փայլեց»ը եւ «Զարթիր լաո»ն եւ պատշգամներէն տեղացող ծաղիկները ողողած են բազմութիւնը: Տըպաւորիչ այդ մթնոլորտին մէջ խօսք առնելով Առաջնորդը ներկայացուցած է Հայ կեդրոնի չինութեան ծրագիրը եւ չեչառը դնելով ժողովուրդին ալակերտութեան վրայ, մէջբերած է Ռուբէն Զարդարեանի «Բազինին փառաբանութիւնը»ի առաջին պարբերութիւնը, որ կ'ըսէ.- «Ահա մենք վառեցինք խարոյկը, որպէսզի խաւար աշխարհին մէջ անոր բոցերը ճարճատելով լոյս տան բոլոր անոնց՝ որ անմխիթար են եւ մոլորած դերութեան համբաւներուն վրայ: Մենք վառեցինք բազինը՝ որպէսզի հայրենի դեղերն ու քաղաքները անոր նային, որպէսզի տանջուողները իրենց բռունցքները սեղմելով՝ դէպի հոն բարձրանան: Մենք վառեցինք կրակը՝ որպէսզի ազատութեան ճամբան լուսաւորենք»: Բազմութիւնը մխրճուած երդած է «Կիլիկիա»ն:

Կէսօրէ ետք տեղի ունեցած է ժողովրդային ընդունելութիւն մը, որու ընթացքին եղած նուէրներէ գոյացած է մէկ միլիոն եօթը հարիւր հազար սուրիական ոսկի ի նպաստ Հայ կեդրոնի ֆոնտին:

×

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏի «Յակոբ Տէր - Մելքոնեան» սրահին մէջ, Ապրիլ 18-ի առաւօտեան, տեղի ունեցած է Լեւոն Շանթի նուիրուած յարդանքի հանդիսութիւն մը, կազմակերպութեամբ Համազգայինի Շրջ. Վարչութեան: Առաջին բանախօսը՝ Գրիգոր Շահինեան, ներկայացուցած է Լեւոն Շանթ դրագէտը համադրական մօտեցումով մը անդրադառնալով անոր վաստակին: Երկրորդ բանախօսը՝ Տոքթ. Բարսէղ Փափազեան, ներկայացուցած է Լեւոն Շանթի մնայուն արժէքը իբրեւ մանկավարժ - դաստիարակ եւ դրագէտ - թատերագիր: Գեղարուեստական յայտագրին մասնակցած են ջութակահար եւ դաշնակահար ամոլը՝ Յակոբ եւ Պելլա Էմմէրեան, երգչուհի Ժանկէթ Իլանճեան, որուն դաշնակով ընկերացած է Սաեվան Էմմիեան: Ժորժ Սարգիսեան արտասանած է «Ղեթեայուած»ին պատռտամը վիճասնդող Նաղաշի ճառը, իսկ Գ. Իփէկեան թատերախումբը ներկայացուցած է Լեւոն Շանթի «Հին Աստուածներ»էն պատկեր մը: Փակման խօսքը արտասանած է Շրջ. Վարչութեան ատենապետ Գէորգ Գանտահարեան:

ԿՐԸՆՈՊԼԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍԻ Հայկական Տաղաւարը

Ամէն տարի, Մայիսին, տեղի կ'ունենայ Կրընոպլի գարնանային ցուցահանդէսը, որուն կը մասնակցին նաեւ օտար երկիրներ:

Այս տարի Հայաստանի տաղաւարը կը գրաւէր 400 քառակուսի մեթր տարածութիւն մը: Կազմակերպութիւնը ստանձնած էր Կրընոպլի Հայ Ակումբը: Պատմական Հայաստանի վանքերու եւ այլ յուշարձաններու նկարներ, 1915-ի ցեղասպանութենէն զանազան տեսարաններ եւ փաստաթուղթեր, հայ եւ օտար հեղինակներու հայոց նուիրուած դիրքեր կը կազմէին հայկական տաղաւարի նիւթերը, որոնք մեծ հետաքրքրութիւն ստեղծեցին այցելուներու մօտ:

Առանձին բաժին մը յատկացուած էր հայկական խոհանոցի, ուր կը պատրաստուէին քանի մը տեսակ հայկական ճաշեր, աղանդերներ, անուշեղէններ՝ զանազան անհատներու սիրայօժար աշխատանքի արդիւնք:

Հինգշաբթի, Մայիս 20, տեղի ունեցաւ հայ երգի ու պարի նուիրուած երեկոյթ մը: Յայտադրի առաջին բաժնին մէջ հանդէս եկաւ Վարդգէս Վարդանեան, որ հրապարակ հանած իր սալէն տառնեակ մը երգեր մեկնաբանելով մեծ խանդավառութիւն ստեղծեց: Երկրորդ բաժնին հանդէս եկաւ «Արծիւ» պարախումբը, որ հաղիւ երեք տարուան անցեալ մը ունի: 48 անդամ - անդամուհիներէ բաղկացած խումբը մեկնաբանեց Բերդ պարը, Մանողները, Ձկնորսները, Լեռնականներու պարերը, Քոչարի եւ այլ տոհմիկ պարեր, միաճոյլ եւ ներդաշնակ չարժումներով: Խումբին ընկերացող նուագախումբին ալ իր յաջող մեկնաբանութիւնները ստացաւ ջերմ ու ցնծուն մթնոլորտի մը ստեղծումին: Տպաւորիչ էին դուդուկի վրայ նուագուած Տըլը եամանը եւ Ալ այլուղս մեղեդիները: Հետաքրքրական էին իւրաքանչիւր պարէ առաջ կատարուած արտասանութիւնները (Փըրանսերէն թարգմանութիւններ) նահատակ զրոյներու՝ Դանիէլ Վարուժան, Սիամանթօ եւ ուրիշներ, բանաստեղծութիւններէն:

Ցոյժ քաջալերելի է խումբին տարած աշխատանքը եւ մաղթելի՝ որ այլ հայաշատ չրջաններ հրաւիրեն «Արծիւ» պարախումբը, մասնակցելու իրենց ճեռնարկներու յայտագիրներուն:

ՎԱՐԴԱՆ ԲԱԲԱԽԵԱՆ



ՄԱՍ ՁՈՐՐՈՐԴ

Դէպի Գարատաղի Լեռները

Ալիին համար գժուար չէր մտնել Հայաստարի պաշտօնաեներակը՝ նեռուած Թուրքերուն մէջ գտնելու Հայաստարի կըլեզիով կնքուած ռեւէ Թուղթ: Երկու օրէն Կիրոս առացեր էր օրինակը ու մտած էր վճռագործ Դաւիթին մօտ, որ ան ալ իր կարգին պիտի տեսներ ոսկերիչ Մարտիրոսը: Նոյն Մարտիրոսին պատրաստել պիտի տար նաեւ երեք ժանտարմ - ներու ինքնութեան Թուղթերը, չատ չէ, մէկ չաթթին:

Կիրոս կ'ուճապարէր երեւանցի Մալխասը տեսնել: Մէկ օրուան ճամբայ ունէր: Ճամբու ընթացքին պիտի հանդիպէր մի քանի ծանօթ դիւղեր, պիտի տեսներ ծանօթ եւ վստահելի ընկերներ, ապահովելու համար այն հինգ անձնաւորութիւնները, որոնք Մալխասին հետ Գարատիւռնարի գինատունը պիտի մտնէին: Եւ անոնք այնքան վստահելի պէտք էր ըլլային, որ մատնութեան մը պարագային կռուով դուրս գային գինատունէն:

Ճամբու ընթացքին Կիրոս պիտի հանդիպէր Հալիմ խոճային՝ որուն մայրը հայ էր, բայց վախցուած Թուրք մտնեմիկի մը կողմէն: Ունեցած էր երեք զաւակներ: Հալիմ խոճան իր հայ մօր չընորհիւ ոչ միայն ժառանգած էր իր հայ մեծ հօր առագինութիւնները, այլեւ անդամ էր Ցեղափոխական կուսակցութեան: Ան մնաց Հալիմ խոճա եւ այդ ձեւով ապուելի օգտակար կ'ըլլար հայ յեղափոխականներուն չարժման: Ան Հալիմ խոճա էր, երբ նոյնիսկ օր մը, արդէն ճերմակ խնկած մօրուսին մէջ, որոչեց հայ քրիստոնեայ մկրտուիլ եւ ապրիլ քաղաքէն հեռու, անծանօթ վայրի մը մէջ, Թուրք ամբոխը իր դէմ չգրգռելու համար:

Կիրոս Հալիմ խոճան, իր քրիստոնեայ անունով՝ Սրսկնը, պիտի ղրկէր Հաճի Մուսային մօտ, որպէս զուգակող տէրվիշ: Զէրչի Կիրոս գիտէր, որ տէրվիշներու զուգակութիւնները կարեւոր դերեր կը կատարէին նոյնիսկ Թագաւորներու եւ - երկիրներու ճակատագրին հետ: Անոնք, որոնք երազներ կը մեկնէին, անոնք, որոնք աստղահմայութիւններով կը զբաղուէին, կարեւոր դերեր կը կատարէին ու խորհրդատուներն էին Շահերուն ու Սուլթաններուն:

Հալիմ խոճան, Սրսկնը, չատ լաւ պիտի կատարէր տէրվիշի դերը: Խալիլին տպաւորութիւնը գրեթէ յուսահատական էր Հաճի Մուսային մասին, որ ան կըտրուած էր կեանքէն ու կորսնցուցած էր իր բոլոր հետաքրքրութիւնները: Անոր խօսքերուն ու արտայայտութեան մէջ ցուրտէն գարնուած տունկի մը պաղութիւնը գտած էր Խալիլ: Կիրոս, Հաճի Մուսան նորէն կեանքին, Զէյնապին պիտի կապէր: Անոր առջեւ պիտի բանար յուսաչող ճամբայ մը:

Զէրչին մօտաւորապէս գիտէր, թէ Հազարան լերան ո՞ր մասին մէջն է Մալխասը: Վերջի ութ տարուան ընթացքին հեղ մը հանդիպած էր անոր, նոյնպէս յեղափոխական կարեւոր խնդրի մը առիթով: Մալխաս, այնտեղ, Հազարան լերան ծալքերուն մէջ կտոր մը հող ու վազան ջուր գտած, ստեղծած էր իր աշխարհը ու կ'ապրէր հոն ամառ թէ ձմեռ: Պատահական ու հեռաւոր մի քանի ճամբորդներուն համար ան ծանօթ էր «ճգնաւոր» անունով: «Ճգնաւոր» անունով դիտէին նաեւ մինչեւ այն կողմերը դնացող հովիւները: Կը հաւատային, որ Ալլահին Մարդն է, երբեք չէին տեսած անոր աղօթելը եւ նոյնիսկ չէին տեսներ, թէ ի՛նչ կրօնքի կը պատկանի, Մահմետական՞ն, Ալեվի՞ թէ՝ Նեստորական: Ան ոչ ոքի հետ կը խօսէր: Ունէր երկար մօրուս մը ու հագած էր քիւրտի տարազ եւ քիւրտի նման չատ խնամքով կը տանէր իր լշուն, որուն վրայ երբ հեծնելու ըլլար, երկար սրունքները գրեթէ գետին կը քաշուէին: «Ճգնաւորը» կը հասցնէր բանջար, սեխ, ձմերուկ, կարճ վարունգ: Ան նոյնիսկ փորած ու առատացուցած էր ջուրը, որ միչտ պօտանին մէջէն կը հոսէր: Եթէ ճգնաւորը գաշտին մէջ չըլլար, այնտեղ էր միչտ հսկայ խրտուիլակը, որ ճգնաւորի դէմքին դիծերն ունէր, նոյնպէս մօրուսաւոր ու բարձրահասակ: Ճամբաներէն բաւականին հեռու ըլլալով, ճգնաւորի պարապէդին չատ մարդ չէր մօտենար:

(Շար. 573)

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Առաուր (Ալֆորվիլ բնակավ.) 200 Ֆ. կը նուիրէ «Յառաջ»ի, փոխան ծաղկեպսակի Արամ Ակոբոսեանի մահուան առ - թիւ:

YAN'S CLUB

LE YAN'S CLUB
Présente l'Ouvrage collectif
« L'HISTOIRE DES ARMENIENS »
(des origines à 1980)
Le Mercredi, 2 Juin — à 20h.30 précises
Cette soirée sera amicalement parrainée par le Cinéaste **HENRI VERNEUIL**
Seront présents:
GERARD DEDEYAN
(Directeur du volume)
PHILIPPE WOLFF
(Membre de l'Institut)
ainsi que
Le Représentant des Editions Privat
Parmi les co-auteurs:
Mesdames: **Marie-Louise Chaumont Bernadette Martin-Hisard, Claire Mouradian, Anahit Ter- Minassian**
Messieurs: **Marc Ferro, Frédéric Feydit, Dickran Kouymjian, Yves Ternon**
DINER A 22 H. — SUR RESERVATION
5, Avenue Reille — 75014 Paris
Tél.: 589. 20. 48

ԹԷՅԱԹԵՂԱՆ

Ֆրանսահայ կապոյտ Խաչի Պանէօ - Ֆաչանի մասնաճիւղը կը կազմակերպէ Մայրերու ոճին առթիւ թէյասեղան մը Թաղին տարեցներուն համար, կիրակի, Յունիս 6-ին, ժամը 15-ին:
Annexe de la Mairie
Salle Avenue Pasteur — Bagneux
դէղարուեստական բաժին: Կը մասնակցի Փեհլիվանեան երբեակը:

EXPOSITION D'ART ARMENIEN

« Miniatures et Khatchkars »
Organisée par
LA MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE 'MARSEILLE
DU 3 AU 14 JUIN — DE 10 A 12 H. ET DE 14H.30 A 19H. (SAUF LE SAMEDI)
— Entréé libre —
A LA CHAMBRE DE COMMERCE DE MARSEILLE — MUSEE DE LA MARINE
Sous la Présidence d'Honneur de:
Gaston Defferre
(Maire de Marseille, Ministre d'Etat, Ministre de l'Interieur et de la Décentralisation)
Et le soutien de:
— **PAUL FABRE;** Président de la Chambre Commerce et d'Industrie de Marseille.
— **MICHEL PEZET;** Président du Conseil Regional.
— **MARCEL PADI;** Adjoint au Maire, Délégué aux Affaires Culturelles.
— **YVES BONNEL;** Président de l'Ordre des Arcchitectes Provence - Côte-d'Azur.
Avec la participation de:
CENTRO STUDI E DOCUMENTAZIONE DELLA CULTURA ARMENA — MILANO

Conférences - Débats

AVEC PROJECTION DE DIAPOSITIVES
Jeudi, 3 Juin, à 21h. - Maison de la Culture Arménienne, 12-14, Rue St.Bazile Marseille
« LES KHATCHKARS »
par A. ALPAGO NOVELLO; Architecte et Professeur à la Faculté d'Architecture de Milan.
— **Vendredi, 11 Juin, à 18h.30** — à la Chambre de Commerce de Marseille
« LES MINIATURES ARMENIENNES »
par ARPAG MEKHITARIAN; Secrétaire Général de la Fondation d'Egyptologie Reine Elisabeth, de Bruxelles.

Radio-Trait-d'Union

RADIO ARMENIENNE
Région Lyonnaise
Tous les Dimanches — de 10h. à midi
Sur FM. 89.50 Mghz.

Forum-Radio-Ararad

TOUS LES DIMANCHES — DE 10H. A 12H.
Une émission destinée aux Communautés Arméniennes de la Région Parisienne.
M. F. 98 Mhz.

MARBRERIE FUNÉRAIRE
CHARLES GAMAIN
Tél.: 389. 72. 61
CIMETIERE DE LA FONTAINE
Saint Martin — 94460 Valenton
ՀԱՅԵՐԷՆ ԿՐ ԽՕՍՈՒԻ

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՑ ՄԱՋի Վալանսի մասնաճիւղի վարչութիւնը իր անդամ – անդամուհիներուը կը հրաւիրէ ընդհ. ժողովի, Հինգշաբթի, Յունիս 3, ժամը 20·30-ին Հայ Մշակոյթի Տան մէջ:

BACUGABOUM

SAMEDI, 5 JUIN — A 22 H.
VENEZ AVEC NOUS VIDER UN BAC
DANSES et CUPIDON
Pour l'espoir des chansons
Vous recevront
Participation aux frais:
— 25 F. Membres - Etudiants.
— 35 F. Membres ou Etudiants.
— 50 F. Non - Membres.
Tenue correcte exigée.
CENTRE CULTUREL ALEX MANOOGIAN
118, Rue de Courcelles — 75017 Paris
(Métro: Courcelles)
Tél.: 520. 03. 18 — 227. 12. 26

Présentation de «Histoire des Arméniens»

LA MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE PARIS
Vous invite à venir nombreux à la présentation,à l'occasion de sa parution,de l'ouvrage
« HISTOIRE DES ARMENIENS »
L'ouvrage, rédigé sous la direction du Prof. GERARD DEDEYAN, est un grand livre de référence couvrant l'ensemble de l'Histoire du peuple arménien.
700 pages, publié aux Editions Privat.
Seront notamment présents, parmi les autres — Le Prof. Gérard Dédéyan, Mme. Anahide Ter-Minassian, Mme. Claire Mouradian, M. Frédéric Feydit, M. Marc Ferro, Le Dr. Yves Ternon.
Les auteurs signeront l'ouvrage, que l'on pourra se procurer sur place.
JEUDI, 3 JUIN, A 20 H.
A la Maison de la Culture Arménienne de Paris, 17, Rue Bleue, 75009 Paris - Métro: Cadet

ԼԻՈՆ - ՊԷՆՕ *ԼԻՈՆ - ՊԷՆՕ*

ՏԱՐՕՒԱՆ ԱՌԱՋԻՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍԸ

Կիրակի Յունիս 6-ին Մոնարուի զբօսայգիի պուրակին մէջ, Պէնոյի մուտքին:
Առաւօտեան ժամը 10էն մինչեւ իրիկուն:
Կ'երգէ՝ ՄԻՆԱՍ ՓԱԼԱՆՃԵԱՆ
ժողովրդային երգիչ, (Հալէպէն):
Ընկերակցութեամբ՝ Սայաթ - Նովա նուագախումբին:
Առատ պիւֆէ – խորոված, չի էօֆթէ, հայկական ուտելիքներ:
Վիճակահանութիւն - Առաջին պարգեւը՝
Ուր օր ճամբորդութիւն, Հայաստան:
Նուէրը՝ Սեւան ճամբորդական գրասենեակին կողմէ: Բազմաթիւ ուրիշ պարգեւներ:
Կազմակերպութեամբ՝ - Ֆրանսահայ կապոյտ Խաչէ Լիոնի մասնաճիւղին:
Լիոնի Հայ Մշակութային ընկերակցութեան:
Վիլէօրպանի Հայ Մշակութային Միութեան:
Անձրեւի պարագային դահլահանդէսը տեղի կ'ունենայ Ս. Մօրիսի վերանորոգուած «Սալ տէ Ֆէթ»ի սրահին մէջ:
Ինքնաշարժերը զետեղել դահլահանդէսի վայրին քով գտնուող Սանթր - Լըլեյրի բարբիճկը:

LA GRÈCE A LA CARTE
VOUS PROPOSE

PARIS - ATHÈNES - PARIS
1150 F.

DEPARTS DU: 30/5 - 13/6 - 20/6

1390 F.
DEPARTS:
06/6 - 27/6
SEPTEMBRE

1490 F.(*)
JUILLET - AOUT
(*) SUPPLEMENT 200 F.
DU 31/7 AU 10/8

AINSI QUE TOUTES PRESTATIONS
(HOTELS - CIRCUITS - CROISIERE)
AU DEPART D'ATHENES

Pour tous Renseignements:
ARPI BODURYAN — ANITA TACHDJIAN
V. V. S.
5, Place A. Malraux - 75001 Paris
Tél.: 296. 37. 70
LIC.: 1539

OPTIMA Tours

PROCHAINS VOYAGES EN ARMÉNIE

DU 12 AU 26 JUIN — DU 14 AU 31 JUILLET
DU 4 AU 17 AOUT VOL SPECIAL DIRECT EREVAN

Nouvauté! Réduction importante pour les jeunes de 16 à 35 ans.

LA MAISON DE LA CULTURE ARMENIENNE DE DECINES Organise 2 Voyages Directs:
a) LYON / EREVAN / BAKOU / TBILISSI / EREVAN / LYON
b) LYON / EREVAN / LYON
DU 4 AU 17 AOUT

Nouvauté! Réduction importante pour les jeunes de 16 à 35 ans.

SONIA COUMRYANTZ
OPTIMA Tours

Renseignements et Inscriptions:

à Paris:
OPTIMA TOURS
67, Rue Quincampoix
75003 - PARIS
Tél.: 274. 27. 20

à Décines:
Maison de la Culture Arménienne de Décines
15, Rue du 24 Avril 1915 - 69150 DECINES
Tél.: (7) 849. 42. 97
Tous les jours, sauf Lundi, de 10 à 12h. et de 14 à 19h.

VOYAGE ORGANISE PAR LE FOYER CULTUREL DE NICE
AVEC UN VOL DIRECT NICE / EREVAN
DU 25 SEPTEMBRE AU 9 OCTOBRE

Renseignements et Inscriptions:

Pour Nice et les Alpes - Maritimes:
— Monsieur IKEDJIAN Arthur
29, Avenue St. Augustin — 06200 NICE
Tél.: (93) 83. 35. 03 ou (93) 88. 76. 08
— Monsieur GEDIKIAN Vasken
Tél.: (93) 88. 06. 41

Pour le Var:
Monsieur KASSIGUIAN Raffi
8 ,Rue des Ecoles
83710 - MONTAUROUX
Tél.: (94) 76. 44. 23

Lic.: A - 946 (Agence Agréé Intourist)

Imprimé sur les Presses du Journal «HARATCH» — 83, Rue d'Hauteville - 75010 Paris
Commission Paritaire: N° 55935